Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1716

225
U-50

1879

225
Ա-50

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿԱԹՈՂԻԿԷ

ՀԱՅ ՏՂԱՅՈՑ ԵՒ ԱՂՋԿԱՆՑ ՀԱՄԱՐ

218

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Աշխատասիրեց Պ. Ս. Ղ. ԿԱՆԵԱՆ

ՀԱՏՈՐ Ը.

225
Ա-50

ԹԻՖԼԻԶ
Ի Տպարանի Յովհաննիսի Մարտիրոսեանց:
1879

2001

Дозволено Цензурою. 6 Февраля 1879 года. Тифлисъ.

Типографія Мартиросіанца на Орбеліановской ул. д. № 5.

Общ. Гос. Библиотека
ՀԱՍՄ
Ա. Ի. Ա. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

27395-11

Դրված է 4318-ակ.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

Աշխարհի արարչագործութիւնը:

Սկզբում ստեղծեց Աստուած երկինքն և երկիրը: բայց երկիրն էր անպատրաստ, ծածկած խաւարով և ջրով և Աստուծոյ Հոգին շրջում էր ջրերի վերայ:

Աստուած ասաց. «թող լինի լոյս» և երևեցաւ լոյսը: Աստուած անուանեց լոյսը օր և խաւարը գիշեր: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ առաջին օրը:

Աստուած ասաց. «թող լինի հաստատութիւնը և երևեցաւ հաստատութիւնը կամ երկինքը, որ տեսնում ենք: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր երկրորդ: Աստց Աստուած. «թող հաւաքվին ջրերը միասին և երևի ցամաքը», և ջրերը բաժանվեցան ցամաքից, կազմեցին լճեր, գետեր և աղբիւրներ, որոնք վազում են և թափվում ջրերի մեծ ժողովի մէջ: Աստուած անուանեց ջրերի այս մեծ ժողովը ծով և ցամաքը գետին կամ երկիր: Աստուած հրամայեց երկրին տալ իրենից տունկեր և նա ծածկվեցաւ խոտով, ծաղիկներով, թփերով և ծառերով, որոնք տալիս են պտուղներ, ամէնը իւր կերպով: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր երրորդ

Ասաց Աստուած. «Թող երևին լուսաւորները երկնային հաստատութեան վերայ, նոքա պէտք է լուսաւորեն և տաքացնեն երկիրը, բաժանեն օրը գիշերից և ցոյց տան ժամանակը՝ օրերը և տարիները»: Եւ փայլեցաւ արեգակը՝ օրուան լուսաւորը և գիշերը երեւեցան լուսինն և աստղերի անթիւ բազմութիւնը: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ օր չորրորդ:

Դեռ չկար երկրիս վերայ ոչ մի կենդանի, որ զուարճանար Աստուծոյ այս գեղեցիկ արարածներով: Այն ժամանակ ասաց Աստուած, «Թող լքվին ջրերը ձկներով և օդը թռչուններով, որոնք թռչում են հաստատութեան տակ»: Եւ ջուրը լքվեցաւ զանազան մեծ և փոքր ձկներով և թռչունները սկսան թռչել օդում: Աստուած օրհնեց նրանց, ասելով, «աճեցէք և բազմացէք, լքցրէք ջրերը և թռչունները թող բազմանան երկրիս երեսին»: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր հինգերորդ:

Ասաց Աստուած. «Թող լինին երկրիս վերայ կենդանիք» և զանազան անասուններ, սեռուններ և գազաններ երևեցան երկրիս վերայ: Սարերի ծայրին և ձորերի մէջ, ամէն տեղ յայտնվեցաւ կեանք և ուրախութիւն: Աստուած ասաց, «Ի՛ սակնծենք մարդուն մեր պատկերով և նմանութեամբ և թող տիրէ նա ծովային ձկներին, երկնային թռչուններին և ամէն արարածներին, որոնք կենում են երկրիս երեսին». և ստեղծեց Աստուած մարդուն: Եւ եղաւ երեկոյ և եղաւ առաւօտ՝ օր վեցերորդ:

Այսպէս ստեղծեց Աստուած աշխարհս ոչնչից, միայն իր ամենակարող խօսքով:

ԳԼՈՒԽ Բ.

Մարդու ստեղծագործութիւնը:

Երբ երկինք և երկիրը ամէն իր զարդերով պատրաստ էին,

Աստուած առաւ գետնից հող, ստեղծեց նրանից մարդուն, կենդանացրեց նրան իր Հոգւով՝ տուեց նորան հոգի անմահ և անուանեց նրան Ադամ: Աստուած դրաւ իւր ստեղծած մարդուն ամենագեղեցիկ Եդեմայ դրախտի մէջ, ժողովեց նորա մօտ ամէն կենդանիներուն և Ադամը տուեց նրանց անուն, ամենին համեմատ իր բնաւորութեան: Բայց բոլոր արարածների մէջ չկայ արարած նրան նման: Աստուած ասաց. «մարդուն համար լաւ չէ մենակ լինելը, եկ ստեղծենք նրան օգնական, իր նման: Աստուած գցեց Ադամի վերայ խորը քուն, առաւ նորա կողերից մէկը և ստեղծեց նրանից կին: Սրան տեսնելով Ադամ ասաց. «Սա է ոսկր իմ ոսկրներիցս և մարմին իմ մարմնիցս»: Նա անուանեց կնոջը Եւա, որ նշանակում է կենդանիների մայր: Աստուած օրհնեց նրանց ասելով. «աճեցէք, բազմացէք, լքցրէք երկիրը, իշխեցէք նրան. տիրեցէք ծովի ձկներին, երկնքի թռչուններին, երկրիս ամէն անասուններին, գազաններին և սեռուններին»:

Այսպէս Աստուած առաջին երկու մարդոց ձեռքով օրհնեց բոլոր մարդկութիւնը հայրական սիրով և կարգեց ամուսնութեան սուրբ կապը:

Վեց օրում վերջացնելով Աստուած իւր արարչագործութիւնը, տեսաւ որ ամէն բան բարի էր: Եօթներորդ օրը հանգստացաւ Աստուած իւր գործերից և սրբեց այս օրը: Այս ժամանակից դրած է պատուիրան, վեց օր աշխատել և եօթներորդ օրը նուիրել բարեգործութեան և մանաւանդ Աստուծոյ պաշտօնին:

ԳԼՈՒԽ Գ:

Ադամի մարդոց անմեղ կեանքը դրախտի մէջ.

Ադամ և Եւան էին անմեղ և պարզ ցաւերից և մահից,

Նոքա բնակուած էին դէղէցիկ պարտիզի մէջ, որ նոցա համար Աստուած ինքը տնկել էր և ոռոգանուած էին նրան չորս մեծ գետեր: Ամեն կենդանիները հպատակում էին մարդուն և նա չունէր պատճառ նոցա գազանութիւնից վախենալու: Զգիտեր նաև մեղք, Ադամ և Եւան չորերի կարօտութիւն էլ չունէին և չէին ամաչում բոլորովին իրենց մերկութիւնից, անմեղ երեխաների նման: Նոքա չէին դգում և արատութիւն: Վերջապէս երես երեսի խօսակցում էին նոքա իրենց արարչի և նորա հրեշտակների հետ, որ կրջանկութեան կատարելութիւնն է: Եդեմի երկրային դրախտին մէջ կային ամենկերպ ծառեր, որ դուրեկան էին աչքի համար և տալիս էին քաղցրահամ պտուղներ: դրախտի մէջտեղում էին երկու հրաշալի ծառեր՝ այն է կենաց ծառն և բարւոյ ու չարի դիտութեան ծառը: Աստուած ասաց Ադամին: «Կեր այս պարտիզի ամեն ծառերի պտուղներից. միայն մի՛ ուտեր բարւոյ և չարի դիտութեան ծառի պտղից. երբ կ՚ուտէք այս ծառի պտղիցը, իսկոյն անպատճառ կ՚մեռնիք»: Այս պատուիրանքով կամեցաւ Աստուած փորձել Ադամին և Եւային, որովհետև միայն անպայման խոնարհութեամբ և երեխայական հնազանդութեամբ նոքա կարող էին ցոյց տալ թէ իրենց կատարեալ հպատակութիւնը, թէ ճշմարիտ սէրն և թէ հաւատարմութիւնը դէպի երկնային Հայրը:

ԳԼՈՒԽ Դ.

Սատանայ մեղքի մէջ ընկնիլը:

Սատանան երկրիս կենդանիներից ամենից խորամանկի՝ օձի կերպարանքով յայտնվեցաւ Եւային և ասաց նրան. «Ինչո՞ւ Աստուած արգելից ձեզ ուտել դրախտի ամեն ծառերի պտուղներից»: Եւան պատասխանեց. «Աստուած հրամայեց մեզ այս պարտիզի ամեն պտուղները ուտել և միայն այն ծառի համար,

որ դրատի մէջտեղումն է, ասաց. «Մի ուտէք նորա պտուղներից և մի՛ մօտենաք նրանց, որ չմեռնի՛ք»:—«Դուք չէք մեռնիլ». ասաց օձը: «Աստուած գիտէ, որ եթէ դուք ուտէք այդ պտղից, ձեր աչքերը կ՚բացվին և դուք կ՚լինիք, ինչպէս աստուածներ, կ՚ճանաչէ՛ք բարին և չարը:

Եւան նայեցաւ ծառին ցանկութեամբ ուտելու. նորա պտղից և այսպէս մեղքը արդէն գործած էր նորա սրտում: Ովոր շարժվում է փորձութեան ժամանակը, գայթակղվում է և նայում է ցանկութեամբ և յօժարութեամբ արգելած բանի վերայ, նա արգէն մեղանչում է սրտում: Ա յսպէս արաւ Եւան էլ: Արհամարհելով Աստուծոյ պատուիրանը, նա կերաւ արգելած պտղիցը և տուեց նրանից իւր մարդուն էլ» որ նմանապէս կերաւ: Ա յն ժամանակ տեսան նոքա, որ մեղանչեցին, զգերկվեցան իրենց անմեղութիւնից և նորա հետ միասին դրախտի երջանկութիւնից և ամօթից թաքնվեցան թփերի մէջ: Աստուած ասաց. «Որ ես Ադամ»:—«Ես լսեցի Քո ձայնդ պարտիզում». պատասխանեց Ադամ «և թաքնվեցայ, որովհետև մերկ էի»:—«Ո՞վ կ՚յայտնէր քեզ քո վերկութիւնդ, թէ դու չէիր կերել արգելած ծառի պտղից», ասաց Աստուած. «ինչո՞ւ անցար դու իմ պատուիրանից»:—Ադամ պատասխանեց. «Կինն, որ դու ինձ տուիր, տուեց ինձ պտուղն և ես կերայ»: Կինն ասաց. «օձը ինձ խաբեց»: Ցանցանքին հետևեց պատիժն: Աստուած ասաց օձին. «Դու անիծածն ես երկրիս ամեն կենդանիներից, դու կ՚սողաս երկրի երեսին և ես կ՚դնեմ թշնամութիւն քո և կնոջ ծնունդների մէջ. դու կ՚խայթես նորա գարշապարը. բայց կնոջ ծնունդը կ՚ջախջախէ քու գլուխդ»: Կնոջը ասաց Աստուած. «կ՚շատացնեմ քո վշտերդ: Ցաւով կծնես որդիներ և ամենայն բանում պէտք է հպատակես մարդուդ»: Վերջապէս Ադամին էլ ասաց Աստուած. «որովհետև լսեցիր քո կնոջդ և չպահեցիր իմ տուած պատուիրանս, չարչարանքով կ՚գործես երկիրը,

որ անիծած է քո պատճառով. նա քեզ կ'բերէ քեզ տատասկ և փուշ և դու քո երեսիդ քրտինքով կ'ստանաս նրանից քո հացդ, մինչև որ կրկին հող կ'դառնաս, ընչից որ առած ես: Դու հող ես և հող կ'դառնաս»: Աստուած տուեց Ադամին և Եւային կաշիէ շորեր և արտաքսեց դրախտից: Աստուած դրեց դրախտում Քերովբէին, որ պահէ հրեղէն թրով կենաց ծառի ճանապարհը: Ադամ, աքսորած դրախտից, սկսաւ գործել երկիր, որից ինքը առած էր: Այսպէս ճանաչելով մեղքը, առաջին մարդիկ կորցրին իրենց առաջվան երջանկութիւնը: Միակ ուրախութիւնը նոցա և յոյսն էր Աստուծոյ խոստումն, թէ հնոջ սերմը կ'ջախջախէ օձի գլուխն, այսինքն Կոյսի Որդին կ'ջնջէ սատանայի իշխանութիւնը:

ԳԼՈՒԽ Ե.

Ադամի որդիք:

Ադամ և Եւա ունէին երկու որդի Կայէն և Աբէլ: Կայէնն էր երկրագործ և էր խիստ բնութեան տէր. ընդհակառակն Աբէլ, հեզ երիտասարդ, էր հովիւ: Երկու եղբայրներն էլ բերին Աստուծուն մատաղ. Կայէնը երկրի պտուղներից, իսկ Աբէլ իւր հաշների անդրանիկներից: Մատաղ բերելիս Կայէն նկատեց, որ իր մատաղը հաճելի չէ Աստծու, բայց բարեպաշտ Աբէլի մատաղը ընդունելի եղաւ Աստծուն: Կայէն շատ տրտմեցաւ: Բայց Աստուած ասաց նրան. «Ինչո՞ւ համար տրտմեցար: Թէ բարի կ'գործես, ուրախ կլինես, թէ չէ, գազանը կաց մեղքից. նա արդէն դրան մօտ է». բայց Կայէն, ուզվելու տեղ, կանչեց իր եղբօր գաշտը և սպանեց նրան: Այն ժամանակ Տէր աստուած ասաց Կայէնին. «Ո՞ւր է Աբէլ եղբայրդ»: Կայէնը պատասխանեց. «չգիտեմ. մի՞թէ ես նորա պահապանն

եմ»:—Այո ի՞նչ գործեցիր». ասաց նրան Աստուած. «քո եղբօրդ արիւնի ձայնը գոչում է ինձ: Դու անիծած ես այս երկրիս երեսին, որ քո ձեռովդ ծածկեցաւ եղբօրդ արիւնով. դու կ'տատանես: չգտնելով ոչ մի տեղ քեզ հանգիստ ապաստան:

Սրանից յետ Կայէն գնաց Նայիդ երկիրը, ուր միքանի ժամանակից շինեց առաջին քաղաքն, որ նորա Ենոք որդու անունով կոչվեցաւ: Նորա ամին յետագաներըը չար էին և սուրբ գրքում կոչվում են որդիք մարդկան: Երևելիները նոցանից էին Յովբալ, որ հնարեց երգ և քնար և Թոբէլ, որ էր ճարտարապետ դարբին պղնձի և երկաթի: Տէր Աստուած մեղքացաւ Ադամին և Եւային, և տուեց նրանց, Աբէլի տեղ, ուրիշ որդի, Սէթ անունով: Սորա որդիքն էին բարեպաշտ և սուրբ գրքի մէջ անուանվում են որդիք Աստուծոյ: Երևելիները նոցանից էին Ենոք, որ միշտ Աստուծոյ կամքին էր հետևում և կենդանի փոխվեցաւ երկինք ու Մաթուսաղա. որ ամին մարդիկներից աւելի երկար կեանք ունեցաւ՝ այսինքն իննհարիւր վաթսուն ինն տարի:

Բացի Սէթից Ադամ ունէր էլի շատ որդիք և աղջիկներ: Նա կեցաւ իննը հարիւր երեսուն տարի և մեռաւ, դառնալով հող, որից առած էր:

ԳԼՈՒԽ Զ.

Ջրհեղեղ:

Սէթի որդիներից մկը, նոյ անունով, կենում էր այն ժամանակ, երբ մարդիկ, բազմանալով երկրիս երեսին, բոլորովին զեղխեցան: Նոքա չէին մտածում Աստուծոյ վերայ, որ ամեն օր անում էր նրանց բարերարութիւն. մոռացան նորա պատուիրանները և մտածում էին միայն, որ ոչ թէ իւրեանց պարտաւորութիւնները կատարեն, այլ իրենց սրտի ցանկութիւն-

ները: Մինչև Սէթի բարեպաշտ յետագաներն անգամ, իրենց անմիտ կապակցութեամբ Կայէն յետագաների հետ, գեղեցացան և մոռացան ճշմարիտ Աստծուն: Այս ամէն չար մարդոց մէջ արդար էր միայն Նոյ: Սա բարեպաշտութեամբ մեծացրեց իւր բոլոր որդոց և աշխատում էր նրանց հեռացնել ամէն չար օրինակից, որով նոքա պատած էին: Աստուած վճռեց ջնջել մարդկային ցեղը ջրհեղեղով և պահել ընդհանուր մահից միայն բարեպաշտ Նոյին, իր ընտանիքով:

Աստուած հրամայեց Նոյին շինել տապան, այսինքն մի մեծ նաւ անփուտ փայտից և ծեփել այն նաւթով, որ կարողանայ կենալ ջրի երեսին: Այս տապանը երեք դասիկոն էր, որոնց ամէն մէկը շատ մասեր էր բաժանած: Պատուհանն էր վերևից և դուռը կողքից: Նոյ, Աստուծոյ հրամանով, առաւ տապանի մէջ մի մի զոյգ ամէն կենդանիներից և մի քանիսից, որ առաւել օգտաւէտ էին մարդոց, և որ չէին կարող կենալ ջրում, մինչև անգամ եօթն եօթն, որ պահպանվի նոցա ցեղը մահից և առաւ նոցա համար մի տարուան կերակուր էլ: Վերջապէս Աստուած հրամայեց Նոյին մտնել տապանը իւր երեք՝ Սեմ, Քամ և Յաբէթ որդիներով և նոցա կանանցով: Ամէնը միասին ութը հոգի էին: Աստուած փակեց նրանց տապանի մէջ, սրանից յետ երկինքը ծածկվեցաւ ամպերով, որոնցից եկաւ սաստիկ անձրև քառասուն օր և քառասուն գիշեր շարունակ. բացի սրանից ծովերն և գետերը բարձրացան իրենց ափերից և ջուրը այնքան շատացաւ, որ դաշտերը, ծառերը և մարդոց բնակութիւնները ծածկվեցան ջրով և տապանը լողալ: Մարդիկ և գազաններ փախչում էին դաշտերից բլուրների գագաթը, միայն ջուրը հասաւ նրանց այնտեղ էլ: Բլուրների վերայ էլ չդանելով ապաստան վեր եկան ամենաբարձր սարերի գագաթները, միայն այս տեղ էլ հասաւ նրանց ջուրը: Ջուրը բարձրացաւ ամենից բարձր սարերից էլ տասնուհինգ կանգուն աւելի: Ամէն բան ոչնչացաւ միայն տապանն ապահով լողում էր ջրի երեսին: Նոքա մէջն էին երկրագնդիս բոլոր բնակիչների՝ ութը հոգիք, որոնք Աստուծոյ ամենակարող պաշտպանութեան տակ էին:

Հարիւր հիսուն օր ջուրը ամենևին չէր փոքրանում երկրիս երեսից: Սրանից յետոյ փչեց հողմ, ցրեց ամպերն և փոքր առ փոքր ջուրը սկսաւ նստել: Տապանն, որ շրջում էր ջրի երեսին, կանգնեցաւ Մասիսի գլխին: Նոյ, կամենալով գիտենալ, որ արդեօք ցամաքել է երկիրը, թէ չէ, բայց թողեց ագռաւին, որ էլ յետ չդարձաւ և չբերաւ համբաւ երկրի դրութեան վերայ: Փոքր ժամանակից յետ թողեց աղաւնուն, որ երկրիս վերայ ցամաք տեղ չգտնելով, որ հանգստանայ փոքր ինչ, յետ դարձաւ և Նոյ ձգելով իր ձեռը առաւ նրան էլի ներս տապանի միջ: Եօթը օրից յետ Նոյ միւսանգամ բաց թողեց աղաւնուն, որ երեկոյեան դարձաւ տապան, կտցում ձիթենու ճիւղ բռնած: Ինչպէս ուրախացան տապանի բնակիչները, երբ այսպէս իմացան, որ ծառերը էլ ջրի տակ չեն: Եօթը օրից յետոյ Նոյ կրկին բաց թողեց աղաւնուն, որ էլ յետ չդարձաւ, որովհետև երկիրը արդէն ցամաք էր: Նոյ վեցհարիւր տարեկան էր, երբ Աստուած ասաց նրան. «դուրս ել տապանից բոլոր ընտանիքովդ և ամէն կենդանիներով, որոնք քեզ հետ միասին փակված էին այն տեղ: Աճեցէք և բազմացէք երկրիս վերայ»:

Տապանից դուրս գալից յետոյ, Նոյ շինեց սեղան և բերաւ Աստծու հնորհակալութեան մատաղ, որ այնպէս հաճոյ եղաւ Աստծու, որ այս երախտապիտութեանը համար նա օրհնեց երկիրը և մարդկութիւնը ասելով. «մինչև երկիրս կայ, անպակաս կ'լինի նորա երեսից ցանքն և հունձը. ամառը կ'հեւանէ ձմեռին և գիշերին կ'ըհեւանէ ցերեկը և այսպիսի ջրհեղեղ էլ չի լինիլ երկրիս վերայ»: Նոյ նայեցաւ երկինք և տեսաւ ամբերի մէջ փայլուն աղեղը. «Այս աղեղը ամպերի մէջ, ասաց Աստուած, է

նշան և գրաւական իմ ողորմութեանս մարդոց. երբ կ'հաւաքվեն երկնքում ամպերն և իմ աղեղս կ'երևի նոցա մէջ, թող մարդիկ չնորհակալութեամբ յիշեն իմ ուխտս՝ թէ ել չեմ խրկիլ ջրհեղեղ: Այսպէս աղեղը երևելով երկնքում միտերս է բերում մեզ մեր արարչի ողորմածութիւնն և մարդասիրութիւնը:

ԳԼՈՒԽ Է.

Նոյի որդիքը:

Նոյ, արարատից ցած գալեց յետ սկսաւ գործել երկիրն և անկեց խաղողի ծառ: Երբ պտուղը հասաւ, քամեց նորա ծուծը և որովհետև երբէք չէր փորձած նորա զորութիւնը, խմեց անչափ շատ նրանից, այնպէս որ հարբեցաւ: Թուլացած գինուց թմրեցաւ և պառկեցաւ տան մէջ ամենեին մերկ: Քամ, տեսնելով իւր հօրը այսպիսի անվայել դրութեան մէջ, սկսաւ ծիծաղել նորա վերայ և յայտնեց այն իր եղբայրներին էլ: Բայց Սեմ և Յաբէթ մտան վրանն և քամակով դէպի հայրը դարձած առան շորերն և ծածկեցին նրան, առանց տեսնելու նորա մերկութիւնը: Նոյ երբ զարթնեցաւ, իմանալով Քամի անպատիւ վարմունքը, ասաց. «Անիծած դու. քո յետագանիրդ, Քանանու որդիք, կլինին քո եղբայրների որդւոց ստրուկները. բայց Սէմին և Յաբէթին, որոնք պատուեցին իրենց հօր մինչև անվայել դրութեան մէջն էլ և ծածկեցին նորա վարմունքը, ասաց. «օրհնում եմ ձեզ, ձեր որդիքը կ'բազմանան երկրիս երեսին և կ'իշխեն Քամի յետագաների վերայ: Նոյի գուշակութիւնն իր որդւոց յետագանների վերայ կատարեցաւ:

Նոյի երեք որդիներից, Սեմից, Քամից և Յաբէթից, ծագեցան աշխարհիս ամեն մասերի բնակիչները: Ինքը Նոյ ջրհեղեղից յետոյ էլ երեք հարիւր յիսուն տարի ապրեցաւ:

ԳԼՈՒԽ Ը.

Բաբելոնի աշտարակաշինութիւնը:

Նոյի որդիքը բազմացան և ամենքը իրրև մի ազգ խօսում էին մի լեզուով: Բազմանալով սկսան նորա ցրվիլ երկրիս երեսին. բայց բոլորովին ցրվելից և մէկ մէկից հեռանալից առաջ վճռեցին շինել ընդարձակ քաղաք և բարձր աշտարակ, որի գլուխը հասնէր մինչև երկինք և երևէր հեռուից: Բացի սրանից նոքա ուզում էին, որ այս շինուածքը լինի նոցա յետագանների համար նշան իրենց ղօրութեան և իմաստութեան: Բայց Աստուած ջրհեղեղ նոցա այս հպարտ ձեռնարկութիւնը: Նա խառնեց նոցա մտքում բառերն և մոքերը. ուստի և աշտարակի շինողները չհասկանալով մէկ մէկու, չկարողացան շարունակել իրենց շինութիւնն և սփռվեցան ցրվելու զանազան կողմեր. իսկ սկսած և անկատար մնացած աշտարակը և քաղաքը մնացին յիշատակ մարդոց անմտութեան, որոնք ձեռք խփեցին մի գործքի առաջից Աստուծոյ օրհնութեան: Այս քաղաքը անուանվեցաւ Բաբիլոն. որ երբայեցերէն նշանակում է խառնակութիւն, որովհետև նորա շինութեան ժամանակ Աստուած խառնեց մարդոց լեզուն:

ԳԼՈՒԽ Թ.

Աբրահամ:

Մարդիկ ցրուելով երկրիս վերայ, բաժանեցան զանազան ազգեր և մոռացան ճշմարիտ Աստծուն, նոքա սկսան պաշտել իրենց շինած կուռքերը, զանազան կենդանիներուն, արեգակը, լուսինը և այս պատճառով կոչվեցան կռապաշտներ: Այս կռապաշտների մէջ էր Սէթի ցեղից մի բարեպաշտ մարդ Աբրա-

համ անունով: Աստուած, ձշմարիտ հաւատը հաստատ պահելու համար երկրիս վերայ, ընտրեց նրան և նորա ցեղը:

Աբրահամ Թարայի որդին էր և ունէր երկու եղբայր, Նաքովը և Առան անուանով: Այս վերջինը իր հօր Թարայից առաջ մեռաւ, թողնելով իրանից յետոյ մի որդի Ղովա անունով, որին Աբրահամ իր մօտ առաւ: Բայց որովհետև կռապաշտութիւնը տարածվեցաւ ոչ միայն Աբրահամի հայրենիքում այլ և նորա հօր ընտանիքի մէջ էլ, Աստուած ասաց Աբրահամին. «Հեռացի՛ր քո հայրենիքիցդ և ազգականներիցդ և գնա՝ այն երկիրը, որ ես քեզ ցոյց կ՚տամ: դու կ՚լինիս մեծ ազգի հայր: ես օրհնում եմ քեզ և քեզմով կ՚օրհնվին երկրիս բոլոր ազգերը:

Թէև յոյժ ցաւալի էր Աբրահամի համար իւր հայրենիքը թողնել. բայց նորա հաւատն Աստուծոյ վերայ այնպէս հաստատ էր, որ ոչ մի րոպէ չտատանեցաւ նա, այլ առաւ իր Սարա կնոջ, Ղովա եղբօրորդուն, իր ծառաներուն և աղախիններուն, հաւաքեց իր խաշները և ամեն իր ստացուածներով հեռացաւ հայրենիքից:

Աբրահամ գնաց Քանան անուանված գեղեցիկ և բերրի երկիրն և երբ հասաւ Սիքեմի պողպերը Հովիտը, Աստուած ասաց նրան. «ահա այն երկիրն, որ տալիս եմ քեզ և քո որդուդ»: Աբրահամ, շարժած շնորհակալութիւնից, կանգնեց Աստուծուն սեղան այնտեղ, ուր նա երևեցաւ իրեն:

ԳԼՈՒԽ Ժ.

Աբրահամ եւ Ղովա:

Աբրահամ և Ղովա բնակում էին միասին և երկուսն էլ ունէին բազմաթիւ խաշներ: Բայց Աբրահամ աւէր էր շատ մեծագին գանձերի, որոնք իր առաքինութիւններն էին: Նա էր Աստուածմէ երկնչող մարդ, արդար, մեծահոգի, ցաւակից խեղճերին, հիւրասէր, լիքը կենդանի հաւատով դէպի Աստուած, հպատակ Նորա կամքին և հաւատարիմ իր մերձաւորներին: Ինքը միշտ ձշմարտութեամբ վարվելով, կամենում էր ուրիշների մէջ էլ միշտ ձշմարտութիւն տեսնել: Իր հոգւոյ այս գեղեցիկ որպիսութիւնների համար հաճոյ էր նա Աստծուն, սիրելի մարդոց և բաւական ինքը իրմով: Քանանու բնակիչները խիստ սիրով ընդունեցին նրան: Բարեպաշտ մարդիկ ամեն տեղ Աստուծոյ պաշտպանութեան տակն են լինում: Աբրահամի և Ղովտի խաշները այնպէս բազմաթիւ էին, որ արածելու տեղը, ուր նոքա կենում էին, չէր բաւական: Նոցա հովիւների մէջ յաճախ ծագում էր վէճ. այս պատճառով Աբրահամ ստիպվեցաւ իր եղբօրորդուն ասելու. «մենք ազգականներ ենք և չըպէտք է վէճ ենք մէկ մէկու հետ ծառաներիս համար, աւելի լաւ է իրրև բարեկամներ հեռանալ մէկ մէկից: Տես ահա բոլոր երկիրն առջևդ է, ընտրիր, ուր կամենում ես կենալ. թէ դու կ՚երթաս ձախ, ես ձախ կերթամ»: Աբրահամը, թէև Ղովտից առաւել մեծ էր և դըրեղ, բայց ընտրութիւնը տուեց Ղովտին, որովհետև ամեն իր վարմունքի մէջ էր միշտ մեծահոգի: Ղովտ իր խաշների համար ընտրեց բերրի հովիտն, որ ոռոգանում էր Յորդանան գետն և ուր էին շինած հարուստ Սոդոմ և Գոմոր քաղաքները: Ես նա ինքը բնակեցաւ Սոդոմ քաղաքում: Իսկ Աբրահամ խփեց իր վրանները Մամբրէի մայրի մօտ, որ Քէբրոնի մօտ էր:

Բայց Ղովտի ընտրութիւնը յաջողակ չէր. Սոդոմի բնակիչները չար մարդիկ էին:

Շրջակայ երկիրները բաժանած էին փոքրիկ տէրութիւնների, որոնց ամեն մէկը իր առանձին թագաւորն ունէր: Այս թագաւորների մէջ սկսաւ պատերազմ, որին մասնակից էր Սոդոմի թագաւորն էլ: Սրան թշնամի կողմը յաղթեց, և Ղովտ

իր ընտանիքով, ծառաներով, ազախիներով, բազմաթիւ խաշ-
ներով, Սոդոմ և Գոմոր քաղաքների միւս բնակիչների հետ
միասին գերի ընկաւ։

Մէկ գերութիւնից ազատված մարդ գնաց և պատմեց Աբ-
րահամին, ինչոր նորա եղբօրորդուց գերին եկել էր։ Աբրահամ
շուտով ժողովեց իր ամեն ծառաներուն, որոնք ողջը երեք հա-
րիւր տասն և ութ հոգի էին։ Նորա դաշնակիցներն էլ քաղաղ, Աւ-
նան, Մամբրէ միացան նմանապէս նորա հետ իրենց մարդիկ-
ներով և շտապով գնացին գերիների հետևից։ Սոքա հասան
Թշնամիների հետևից գիշերով, ջարդեցին նրանց և քշեցին, ա-
պատեցին Ղովթին և ամեն միւս գերիներուն և խլեցին Թշնա-
միների տարած բոլոր աւարը։ Աբրահամ Ղովթի, նորա ընտա-
նիքի, բոլոր նորա մարդիկների և Սոդոմի բնակիչների հետ
միասին յետ դարձաւ։

Յս յաղթութիւնից յետ դառնալիս Աբրահամ անց էր կե-
նում Շաղէմ քաղաքի մօտով, ուր այն ժամանակ թագաւորում
էր բարեբաշտ Մէլքիսեդէկն, որ Ճշմարիտ Աստուծոյ քահա-
նայ էլ էր։ Սա Աբրահամին առաջը դուրս եկաւ և ասաց.
«օրհնած է Աբրահամ Բարձրեալ Աստծուն, որ երկինքն և
երկիրս ստեղծեց, և օրհնած է Աստուած, որ մատնեց Թշնա-
միներդ քո ձեռքդ»։ Այս ասելով տուեց նրան հաց և գինի։
Աբրահամ պատուելով Մէլքիսեդէկի քահանայութիւնն և Աս-
տուծոյ հոգուով նորա մէջ յայտնական քահանայապետի (Ձի-
ուս Քրիստոսի) օրինակը տեսնելով, տուեց նրան առած աւ-
արի տասանորդը։

Սոդոմի թագաւորն էլ դուրս եկաւ Աբրահամի առաջն և
ասաց նրան «յետ տուր ինձ միայն մարդիկս, որոնց դու գե-
րութիւնից ազատեցիր, իսկ ինացած Սոդոմից Թալանած հա-
րստութիւնները Թող քեզ մնա»։ Սոդոմի Թագաւորը չէր կար-
ծում, որ Աբրահամը իրեն մէկ բան յետ կ'դարձնէ. բայց Աբ-

րահամ պատասխանեց. «Աստուած չանէ, որ ես ուրիշի ստաց-
ուածքից շահվել կամենամ։ Ես յետ եմ դարձնում քեզ ամենը,
բացի նրանից, ինչ որ կերան մարդիկս և բացի դաշնակիցնե-
րիս բաժնից»։ Այս ասելով յետ տուեց Թագաւորին ամենը, ինչ
որ Թշնամին նորա տերութեան մէջ յափշտակել էր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Երեշտակների այցելութիւնը Աբրահամի մօտ։

Աբրահամ, ընակելով իր հարստութեան, տուն չուներ. այլ
բնակում էր վրանում, որ տեղափոխում էր իր հետ միասին
այնտեղ, ուր արածում էին նորա խաշները։ Մէկ անգամ կէ-
սօրին նա նստած էր իր վրանի դրանը մօտ և տեսաւ իր առ-
ջևը երեք անցուդարձականներ։ Նա նոցա առաջ դուրս եկաւ
և մինչև գետին երկրպագութիւն տալով ասաց. «Եթէ կամե-
նում էք իմ բարիս, մի՛ անցնիք իմ վրանիս մօտով։ Հանգս-
տացէք փոքր ինչ այս ծառիս տակ, ես կբերեմ ջուր ոտներդ
լուանալու և կ'պատրաստեմ ձեզ ճաշ»։ «Արա՛, ինչպէս ասում
ես»։ պատասխանեցին նոքա։ Այն ժամանակ Աբրահամ շտապով
մտաւ վրանը, հրամայեց իր կնկան լաւ նաշիհից թխել նկան-
նել, յետոյ գնաց խաշների մօտ, ընտրեց ամենից լաւ հորթը
և հրամայեց տառաներին պատրաստել նրան հիւրերի համար,
բերեց նոցա համար նմանապէս կարագ և կաթ. իսկ ինքը
կանգնած ծառայում էր նրանց ճաշի ժամանակ։

Ճանապարհորդներն էին հրեշտակներ և Աստուած մարդա-
կերպարանքով։ Տէր Աստուած ասաց Աբրահամին. «Որ է քո
կինդ Սառան»։ «Նա վրանում է, պատասխանեց Աբրահամ։
«Առաջիկայ տարի այս ժամանակ Սառան կ'ունենայ որդի». ա-
սաց Աստուած։ Սառան կանգնած էր վրանի դրան ետև և
լսելով այսպիսի խոստումն Աստծուց, ոչովհետև էր հա-

ԵՊՀ ԳԱԱ Գրադարան
Ա. ԻՄ. Ա. ՄԱՇՏՈՑԻ

ասաւում և ասում էր ինքը իրեն. «Ի՞նչ եմ կարող կատարել այդ ամենի համար, կարող եմ միթէ ես ունենալ որդի, այն ինչ ես էլ իմ մարդս էլ ծերացել ենք (այն ժամանակ Սառան 90 տարեկան էր և Աբրահամ 100)։ Բայց Աստուած ասաց Աբրահամին, «ինչու է ծիծաղում Սառան. կա՞յ արդեօք անկարելի բան Աստուծոյ համար»։ Սառան վախեցաւ տեսնելով, որ Անցաւորին յայտնի էր մինչև անգամ նորա միտքն էլ. նա դուրս եկաւ վրանից, կամենում էր ներողութիւն խնդրել, ասելով, թէ ինքը չէ ծիծաղել։ Բայց Աստուած ասաց. «Ես գիտեմ որ դու ծիծաղեցար»։ Աբրահամ հասկացաւ, որ իր առջև երկնքի հասարակ ճանապարհորդներ չէին։

Երբ վեր կացան և գնացին դէպի Սոդոմ Աբրահամ ճանապարհ գցեց նրանց։ Աստուած ասաց. «Ես չեմ ծածկիլ իմ ծառայից Աբրահամից, ինչ որ կամենում եմ անել։ Ես գիտեմ, որ նա կաւրէնացնէ իր յետնորդներուն ճշմարիտ ճանապարհով գնալ և բարեգործութիւնով կենալ։ Աստուած յայտնեց Աբրահամին, որ միթէ պրել է Սոդոմ և Գոմոր քաղաքները իրենց բնակիչների անօրէնութեան համար ջնջելու։ Աբրահամ հարցրեց Աստծուն, կ'կենայէ արդեօք նա քաղաքին, եթէ գտնվին նորա մէջ հինգ կամ եթէ տասն էլ արդար մարդիկ։ Եվ Աստուած պատասխանեց, եթէ խնայէր քաղաքին, եթէ գտնվէին նորա մէջ միայն տասն հոգի արդար մարդիկ կ...

ԳԼՈՒԽ ԺԲ.

Սոդոմ և Գոմոր։

Երկու հրեշտակները ճանապարհորդների ձևով մտան երկոյեան Սոդոմ։ Ղովտ, որ նստած էր քաղաքի դրան մօտ, տեսաւ մոտենալները. միայն չէր իմանում թէ ով են։ Նա մօտեցաւ նրանց և երկրպագանելով նրանց մինչև գետին խնդրեց,

որ մտնեն իր տունն և գիշերը իր մօտ անց կացնեն։ «Չէ, պատասխանեցին հրեշտակները, մենք կ'անցկացնենք գիշերը փողոցում։ Բայց Ղովտ այնքան խնդրեց, որ նորա վերջապէս համաձայնեցան։ Նա օտարացրեց նրանց ընթրիք և երբ քնելու ժամանակ էր և կամենում էին պառկել, քաղաքի բնակիչները պատեցին Ղովտի տուն և պահանջում էին, որ նա իրենց ձեռք մատնէ օտարականներուն, որոնք նորա մօտ էկել են։ Ղովտ դուրս գալով ժողովրդի առաջ, փակեց դուռը իր ետևից և խնդրում էր, որ ինսա չտան օտարականներին։ Բայց Սոդոմի բնակիչները դոռում էին նրան ասելով. «դու ինքդ մեր մէջ պանդուխտ եկած ես և դեռ մեր դատաւորն էլ կամենում ես լինել»։ Այս խօսքերով յարձակեցան Ղովտի վրայ. միայն հրեշտակները մոտցրին նրան ներս և դուռը փակեցին վրայից։ Այսպէս Ղովտ ազատվեցաւ Սոդոմի բնակիչների կատաղութիւնից. որոնք կուրացած էկարողացան նորա տունն մտնելու ճանապարհ գտնել։

Միևնոյն գիշեր հրեշտակները ասացին Ղովտին. «մենք պրըկած ենք Աստուծմէ այս քաղաքը քանդելու. նորա բնակիչների անօրէնութիւնը բաժակացաւ մինև երկինք»։ Երբ սկսաւ առաւօսնոյ հրեշտակները ասին Ղովտին, նորա կնոջ և երկու աղջիկներուն և հանեցին քաղաքից դուրս։ «Ա՛յժմ ազատվեցէք, ասաց հրեշտակը. ամ՛ մնաք այս հովտում այլ գնացէք սարը և մի՛ նայէք»։ «Տէր», ասաց Ղովտ, ես չեմ կարող գօրութիւն, մինչև սարը գնալու. բայց ահա մօտում փոքրիկ քաղաք կայ, արդեօք չէի՞ կարող այնտեղ ապաստանել։ «Այս բանում էլ թող կատարվի քո խնդիրդ. գնա շուտ այնտեղ, մինչև որ դու քաղաք չմտնես, ես ոչինչ չեմ կարող անել»։ Արևի ծագելիս, Ղովտ հասաւ քաղաքն, որ այնուհետև Սեգովը անուանվեցաւ։ Այն ժամանակ վեր եկաւ երկնքից կրակ և ծծումբ և ջնջեց Սոդոմ և Գոմոր քաղաքները բոլոր նորա

շջական, ամեն բնակիչներուն, դաշտերն և խաչները։ Ղովմի կինը, հրեշտակների հրամանից անցնելով, հետ ձեաց իր ընտանիքից, յետ նայեցաւ և գարձաւ տալ արձան։

Աբրահամ վեր կացաւ առաւօտը գնաց նայելու այն կողմը, ուր էին Սոդոմ և Գոմոր քաղաքները և տեսաւ, որ այն տեղից գարձրանում է Թանձր ծուխ և բոց։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Իսահակի ծնունդը. Ագարի եւ Իսմայէլի աքսորումն

Աստուծոյ խոստմանը հաւեմատ տարուան վերջին Սառան ծնաւ որդի որին անուանեցին Իսահակ։ Սառան ասում էր. «Աստուած տուեց ինձ ուրախութիւն ծերութեանս ժամանակ. ամենքը, ով կ'լսէ իմ որդուս ծնունդը, կ'ուրախանայ ինձ հետ միասին։ Երեխան մեծանում էր և գօրանում։ Աբրհամ հարիւր տարեկան էր և Սառան իննսուն, երբ ծնաւ նրանց որդի։

Իսմայէլ, Աբրհամի որդին Ագարից, էր մեծ Իսահակից քանի մի տարով և յաճախ զրկում էր իր կրքօրը։ Սառան նկատեց այս և պահանջեց Աբրահամից, որ նա աքսորէ Ագար աղախնին իր որդուովը, այն պատճառով, որ նորա չէն պատվում նորա որդուն Իսահակին։ Աբրահամ շատ տրտմեցաւ այս պահանջման համար, բայց Աստուած ասաց նրան. «արա ինչպէս Սառան կամենում է։ Աբրահամ, որնոր միշտ անապատման հպատակում էր Աստուծոյ կամքին, վեր կացաւ առաւօտը վաղ, առաւ մի քանի հաց և ոխիկ ջրով, ղրկեց Ագարին և Իսմայէլին էլ տալով նրան աքսորեց երկուսին էլ։ Ագար թափառելով անապատում կորցրեց ճանապարհը և Իսմայէլը թուլանում էր ծարաւից. Ագար թողեց նրան ծառի

տակ իրը մի վտանգ հեռու նրանից նստեցաւ. «ես չեմ կարող տեսնել որդուս մահը» ասում էր նա լալով։ Իսմայէլ ծարաւից նեղացած, գոռում էր և լաց լինում։ Աստուծոյ հրեշտակը յայտնեցաւ Ագարին և ասաց նրան. «մի լար, Աստուած լսեց քո որդուդ ձայնը, վեր կաց բռնի'ր նրան ձեռից և տար քեզ հետ։ Նրանից կ'ծագէ բազմաթիւ ազգ»։ Այն ժամանակ Ագար տեսաւ յստակ ջրի աղբիւր, մօտեցաւ նրան, լցրեց իր տիկը ջրով և խմացրեց ջուր Իսմայէլին։ Աստուած օրհնեց նրան, նա մեծացաւ, բնակւում էր անապատում, դարձաւ ճարտար աղեղնաւոր և Եգիպտացի կին առնելով ունեցաւ տասներկու որդի և բազմաթիւ ցեղ։ Իսմայէլից գուրս են եկած Արաբացիները, որ այս պատճառով երբեմն Իսմայէլացիք էլ են կոչվում։

ԳԼՈՒԽ Ի

Իսահակի մատաղ բերվելը։

Աստուած, փորձելով Աբրհամի հաւատը, մի անգամ ասաց նրան. «Աբրահամ, Աբրահամ»։—«Այստեղ եմ ես. Տէր, պատասխանեց Աբրհամը։ «Վեր ա'ռ քո սիրելի որդուդ Իսահակին», ասաց Աստուած, «գնա նորա հետ միասին այն սարի գլուխ, որ ես քեզ ցոյց կ'տամ և այն տեղ բեր նրան ինձ մատաղ ողջակէզ»։

Առաւօտը վաղ վեր կացաւ Աբրահամը, պատրաստեց փայտ, բաժնեց այն իշի վրայ, առաւ հետը երկու ծառաներ և Իսահակին ու ընկաւ ճանապարհ։ Երրորդ օրը նորա հասան նշանակած տեղը ուր յետոյ Սողոմոն շինեց Երուսաղէմ Աստուծոյ տաճարը։ Այն ժամանակ Աբրահամը ասաց իր ծառաներին. «Քանք այստեղ և սպասեցէք ինձ, իսկ ես իմ որդուովս կ'երթամ սարի գլուխը պօղեք անելու»։ Նա վեր առաւ մատաղն

կրակն ու դանակը և Իսահակ վեր առաւ փայտը։ Սարը բարձրանալիս Իսահակ ասաց իր հօրը. «Հայր իմ, մենք առնինք կրակ և փայտ. բայց ո՞ւր է մատաղի ոչխարը»—«Որդեակ, ասաց Աբրահամ, Տէր Աստուած կ'պրծէ մեզ մատաղի ոչխար»։ Իսահակի խելի մտքովն էլ չէր անց միտուամ, որ ինքը նշանակուած է զոհվելու։ Երբ սարը վեր եկան, Աբրահամ կանգնեց սեղանն և դրաւ նորա վերայ փայտը։ Իսահակ համեստ հպատակութեամբ, բոլորովին առանց ընդդիմութեան, թողնց իրեն կապել և փայտի վերան դնել։ Աբրահամ բարձրացրեց արդէն իր ձեռքը և դանակով կամենում էր մորթել իր որդուն և ահա լսեց Աստուծոյ հրեշտակի ձայնը, որնոր ասում էր, «Աբրահամ, Աբրահամ».—«Ես այս տեղ եմ». պատասխանեց Աբրահամ։ Ձեռքդ քեզ քաշի՛ր, ասաց հրեշտակը, մի՛ սպանիր որդուդ. Ասուածած բաւական է քո հպատակութեամբդ, որովհետև դու չխնայեցիր Նորա սիրոյն համար մինչև քո սիրելի որդուդ էլ։ Աստուած կ'վարձատրէ քեզ և քո զաւակը կ'բազմանայ ինչպես ծովի աւազ և քո զաւակովդ կ'օրհնվին երկրիս բոլոր ազգերը։ Այս նշանակում էր, որ Աբրահամի յետնից, պէտք է, ծնէր երկրիս փրկիչը։

Յետ նայեցաւ Աբրահամ և տեսաւ մի խոյ, որնոր ծառից կախված էր, առաւ նրան և զոհեց Աստծուն իր որդու տեղ և յետոյ Իսահակի հետ միասին դարձաւ տուն։

Սառա մինչև Իսահակի ամուսնութիւնը կենդանի չմնաց։ Նա մեռաւ հարիւր քսան եօթը տարեկան։ Մինչև այս ժամանակ Աբրահամ, չնայելով իր հարստութեան. չունէր սեպհական երկիր, ուր կարողանար թաղել իր կնոջ։ Այն ժամանակ դեռ հասարակաց հանգստարաններ չկային այլ ազնիւ թաղում էր իր մեռելներն իր սեպհական կալուածքում։ Աբրահամ գնաց այն երկրի բնակիչներից մէկից, որի անունն Եփրոն էր, երկիր մի այլով, ուր և թաղեց իր կնոջ։ Ուրեմն Աբրահամի առաջին սեպհականութիւնն այս երկրում էր գերեզման մի այրով, ուր էր գերեզմանը։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Իսահակի ամուսնութիւնը։

Աբրահամ, խորին ծերութեան հասած, իր մահից առաջ կամեցաւ իր որդու Իսահակի վիճակը կարգաւորել։ Նա չէր ուզում նորան կին առնել ոչ մի քանանացի աղջիկ, այլ վճռեց ընտրել նորա համար կին իր հայրենիքից և ազգականներից. ուստի և կանչեց իր ծառաներից մէկին, որին նա հաւատում էր և որ կառավարում էր բոլոր նորա կալուածներն և ասաց նրան. «Երդում տո՛ւր ինձ մեր Աստուծոյ անունով, որ երկինք և երկիր ստեղծեց, որ դու իմ որդուս Իսահակի համար կին չես ընտրիլ քանանացի աղջիկներից, այլ կերթաս իմ հայրենիքս, իմ ազգականներիս մօտ և այն տեղից կառնես նրան կին։ Տէր Աստուածը, որի պատուիրանները բոլոր կեանքիս մէջ ես պահել եմ, կ'առաջնորդէ քեզ և քո առաջիդ կ'ղրկէ Իր հրեշտակին։» Ծառան երդումով խոստացաւ Աբրահամի ամեն հրամանները կատարելու, առաւ տասն ուղտ, բարձեց նոցա վերայ իր տիրոջ հարստութիւնները և գնաց Միջագետք, ուր Աբրահամ թողել էր իր Նաքովը եղբօր։ Երբ այն քաղաքին մօտացաւ, ուր բնակում էր Նաքովը, նա ծնաց դրան մօտ և իր ուղտերը կանգնեցրեց նոյն ջրհորի մօտ, որից ջուր առնելու գալիս էին քաղաքի բոլոր աղջիկները։ Եղիազար (Աբրահամի ծառայի անունն է) սկսաւ աղօթք անել Աստծու, որ նա ցոյց տայ իրան Իսահակի ապագայ կնոջ։ «Թող այն աղջիկը, ասաց Եղիազար իր աղօթքի մէջ, «որին ես կ'ասեմ, ցածացրու սափորդ, որ ես խմեմ և նա կ'ասէ, խմի՛ր. ես կ'խմեցնեմ քո ուղտերիդ էլ, թող այն աղջիկը լինի Իսահակի կինը»։ Դա-

դիւ աւարտեց իր աղօթքը, դուրս եկաւ քաղաքից մի աղբիւրի մօտ եւ սկսեց աղբիւրին, լցրեց իր սափորը եւ կամենում էր արդէն հեռանալ: Եղիազարը մօտենալով նրան ասաց. «տուր ինձ խմել քո սափորից»:—«Խմի՛ր ինչքան ուզում ես». պատասխանեց աղջիկը բարեհաճութեամբ, սափորը նրան տալով:— «Ես կ՚խմեցնեմ քո ուղտերիդ էլ». աւելորից նա. յետոյ հանեց ջուր լցրեց այն տաշտը, որ դրած էր անասուններուն ջրելո- համար եւ ջրեց ողջ նորա ուղտերուն: Զարմացած այն պիսի բարեհոգութեան վերայ, լուռ նայում էր օտարականը նորա վերայ եւ յետոյ հանելով ոսկի օղեր եւ ապարանջաններ ընծայեց նրան եւ ասաց. «Ո՛ւմ աղջիկն ես, ո՛ւր են քո ծնողները. չունէք արդեօք ձեր տանը տեղ ինձ եւ իմ ուղտերիս համար»:—«Ես եմ Ռեբեկա, Բաթուէլի աղջիկը, որ Նաքովրի որդին է Մելքա կնոջից», պատասխանեց աղջիկը:—Մեր տանը կայ տեղ քեզ համար, ով օտարական, կայ նմանապէս տեղ քո ուղտերիդ համար էլ: Մենք շատ ունենք յարդ եւ խոտ»: Այն ժամանակ երկրպագել Եղիազար Աստծուն ասելով. «օրհնեալ է Աբրահամի Տէր Աստուածը. նա երբէք չէ թողնում նրան եւ ինձ ուղիղ առաջնորդից դէպի նորա եղբօր տունը:

Ռեբեկան շուտով գնաց տուն: Նա ունէր մի եղբօր Լաբան անունով: Սա, տեսնելով թանկագին ընծաները, որոնք իր քոյրը ստացել էր, շտապով գնաց օտարականի մօտ եւ ասաց. «Ե՛կ մեր տուն, դու, Աստուածմէ օրհնածդ. ես պատրաստել եմ քեզ համար տեղ. կայ տեղ հանդստանալու քո ուղտերիդ համար էլ»: Նա տարաւ իր հետ եղիազարին, վեր առաւ ուղտերի բեռները եւ տուեց նրանց ուտելու խոտ եւ յարդ:

Ինչպէս եղիազար նեղս մտաւ թէ չէ, տերին նրան ընթրիք. բայց նա ասաց. «ես ոչինչ կերակուր չեմ դնիլ բերանս, մինչեւ չհատուցեմ իմ տիրոջս կամքը»: Այժմ պատմեց նա իրեն եղած յանձնարարութիւնն եւ խնդրում էր վճռական պատաս-

խան: Բաթուէլ եւ Լաբան ասացին. «Աստուած ինքը կարգադրեց այս բանը. ահա Ռեբեկան քո առաջեւդ է, առ նրան եւ գնա, թող լինի նա քո տիրոջդ որդու կինը, ինչպէս Աստուած հրամայեց»: Այս լսելով եղիազար երկրպագութիւն տուեց Աստծուն եւ շնորհակալ եղաւ նրանից: Բերաւ ոսկի եւ արծաթի բաներ, գեղեցիկ շորեր եւ տղայ տուեց Ռեբեկային: Նոյնպէս ընծաներ տուեց նորա ընտանիքին էլ: Սրանից յետոյ ամենքը նրա- սան ընթրիքի: Միւս օր առաւօտ վաղ վեր կենալուց յետոյ, եղիազար ասաց. «այժմ թող ինձ, գնամ տիրոջս մօտ»: Աղջկան ծնողները ասացին. «Թող Ռեբեկան մնայ մեզ մօտ եկեղ մի տասն օր գոնէ»: Բայց նա պատասխանեց. «մի՛ բռնէք ինձ, Աստուած օրհնեց իմ ճանապարհս եւ ես պէտք է գնամ շուտով ու իմ տիրոջս ուրախացնեմ»: Մայրն եւ եղբայրն ասացին. «մենք կ՚կանչենք Ռեբեկային, թող նա ինքը վճռէ»: Երբ Ռեբեկան ներս մտաւ, հարցրին նրան. «կերթա՞ս դու այս մարդու հետ»:—«Կերթամ», պատասխանեց Ռեբեկան: Այն ժամանակ աղգականները օրհնեցին նրան, հրաժարական ողջոյն տուին եւ Ռեբեկան, առնելով իր պաղախիններուն գնաց Եղիազարի հետ: Խսահակ ամուսնանալով նորա հետ, շատ սիրում էր նրան. իր առաքինութիւններով Ռեբեկան եզաւ նրան ուրախութիւն եւ մխիթարում էր նրան մօր մահուան համար, որի վերայ լալից նա չէր դադարում: Աբրահամ խոյին ծերութեան մէջ մեռաւ, թողնելով բոլոր իր կալուածքը Խսահակին: Նորա որդիք՝ Խսահակ եւ Իսմայէլ թաղեցին նրան այն այրի մէջ, ուր շատ ժամանակ առաջ թաղած էր Սառան:

Գ. ՈՒԻԽ Ժ.Ջ.

Եսաւ եւ Յակոբը:

Եսաւծոյ ընտրած ազգի նահապետներն ուղղակի Աստուած

մէ ատանում էին հրամաններ. իսկ իրենք կառավարում էին և պահում իրենց ընտանիքն, ընդոծիններուն և այն ազգականներուն, որոնք չունէին բաւական հարստութիւն, որ բաւ ժանվէին նրանցից։ Ամեն նահապետ էր մի և նոյն ժամանակ քահանայ էլ իր տան մէջ և միջնորդ Աստուծոյ և իրենների մէջ։ Նահապետների ընտանիքների մէջ աւագ որդին ունէր առաւել արտօնութիւններ քան թէ նորա եղբայրներն. որովհետև հօր մահից յետս ժառանգում էր քահանայութեան և տիրոջ իրաւունքը։ Բայի սրանից աւագ կամ անդրանիկ որդին ունէր ամենից մեծ իրաւունք՝ այն է յոյս ունենալը, որ իսկ իր ցեղից կ'ծնվի խոստացած ապագայ Փրկիչը աշխարհիս։ Աբրահամ էր տէր և քահանայ իր տան մէջ. նրանից յետս միևնոյն իրաւունքները ժառանգեց նորա որդին Իսահակը։

Իսահակից և Ռեբեկայից ծնան երկու եղբայրներ՝ երկուռեակներ՝ Եսաւ և Յակովբ։ Եսաւ ծնաւ առաջ, ուրեմն համարվում էր աւագ։ Նորա մարմինը ծածկած էր մազերով ինչպէս բրդով. նա էր զօրեղ, քաջ, միայն շատ վայրագ և թեթեւամիտ, նորա սիրելի պարապմունքն էր վայրի կենդանիների որսը. նորա աւարը Իսահակի սիրելի կերակուրն էր. ուստի և Եսաւ էին առանձնապես սիրում հայրը։ Իսկ Յակովբն էր հեզ, բարեպաշտ երիտասարդ. օգնում էր իր մեր տան գործքերում և սիրում էր հովուի հանդարտ կեանքը. այս շատ դուր էր գալիս մօրը։ Յակովբը Ռեբեկայի սիրելին էր։

Մի անգամ Յակովբ եփից իրեն համար ոսպի թան և ուտում էր այն։ Նոյն ժամանակ որսից յետ դարձաւ Եսաւ, պապրած և քաղցած։ «Տուր ինձ քո կերակուրիցդ». ասաց նա, «ես շատ դադրած եմ և շատ քաղցած։—«Տուր ինձ քո անդրանկութիւնդ, պատասխանեց Յակովբ, ես էլ կտամ քեզ իմ կերակուրս»։—«Ինչ հարկաւոր է ինձ անդրանկութիւնս, ահա ես մեռնում եմ սովից». պատասխանեց Թեթեւամիտ Եսաւն և երդուեց նրան։ Այսպիսով Եսաւ իր եղբօր իր անդրանկութեան իրաւունքը։ Այնից յետոյ Յակովբ էլ տուեց նրան իր կերակուրը։ Եսաւ կերաւ, խմեց և գնաց, այնպէս չհոգալով իրեն եղբօրը վաճառած իրաւունքների վերայ։ Եսաւ, երբ քառատուն տարեկան դառաւ, ամուսնացաւ մի այլազգի աղջկան հետ. որ ամենևին չէր պատւում Ռեբեկային։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Իսահակը օրհնում է իր որդոց։

Իսահակը, երբ շատ ծերացաւ, կուրացաւ և զգալով, որ մահը արդէն մօտ է, կանչեց իր որդուն Եսաւին և ասաց նրան. «որդեակ, ես արդէն ծեր եմ և իմ մահուանս օրը չգիտեմ։ Դնա՛ դաշտ, որս արա և պատրաստիր ինձ նրանից այն կերակուրը, որ ես սիրում եմ։ Ես մահիցս առաջ կամենում եմ քեզ տալ օրհնութիւնս, ինչպէս անդրանիկ որդուս։ Եսաւ այն լսելին գնաց։ Բայց Ռեբեկան, որ լսեց Իսահակի այս խոսքերը և կամենում էր անդրանկութիւնը առաւել արժանաւոր Յակոբին տալ, հրամայեց սրան իրեն խաշնից երկու ուլերը բերել, պատրաստեց նրանցից Իսահակի ճաշակին յարմար կերակուր. յետոյ Յակովբի վիզն և ձեռները փաթաթեց ուլերի մորթով, հագցրեց նրան Եսաւի լաւ շորերն և տալով նրան պատրաստած կերակուրը, ղրկեց իր հօր մօտ, որ սառնայ անդրանկութեան օրհնութիւնը։ Լսելով, որ մէկը վրան ներս մտաւ, հարցրեց կոյր ծերունին. «ո՞վ եկաւ։ «Եսաւ, քո անդրանիկ որդին», պատասխանեց Յակովբ. «ես կատարեցի հրամանդ, ահա կեր և օրհնի՛ր ինձ»,

«Ո՞տեղի՛ց ինձ առաւել ասաց Իսահակ, ես կամենում եմ քեզ շօշափել. ձշմարիտը իմանամ, թէ դու արդեօք իսկ իմ որդիս Եսաւն ես»։ Յակովբը մօտացաւ։ Իսահակ նրան շոշո-

փեղով ասաց. «Այնպէ նման է Յակոբի ձայնին, իսկ վեղք և ձեռներք նաւաւինն են»։ Եւ յայնէս Ծերունին խաբվեցաւ, կերաւ բերած կերակուրն և ասաց. «Թոռեցիր ինձ որդեակ և համբուրիր ինձ»։ Ինքն էլ նրան առաւ իր օրհնութիւնն ասելով, «եղիր տէր եղբօրդ վերայ, քո մօրդ որդիքը թող հպատակեն քեզ, անիծած լինի, ովոր քեզ կ'անիծէ և օրհնած, ով քեզ կ'օրհնէ»։

Հազիւ Յակովբը դուրս եկաւ թէ չէ, նաւաւ վրանը մտաւ։ «Ո՞վ եկաւ, հարցրեց Իսահակ.—«Ես նաւաւ, քո անդրանիկդ». պատասխանեց նաւաւ։ «Որդեակ իմ», ասաց Իսահակ, «քո եղբայրդ Յակովբ յափշտակեց օրհնութիւնն, որ քեզ համար էր նշանակած»։ Նաւաւ երկիւղից և բարկութիւնից սկսաւ լաց լինել և ասաց. «Հայր. մի՞թէ ինձ համար էլ ուրիշ օրհնութիւն չունես։ Նորա արտասուքներից շարժած, Ծերունին օրհնեց նրան էլ ասելով. «Թող բնակեցնէ Տէր Աստուած քեզ էլ բարեբեր երկրի մէջ, միայն դու պէտք է կենաս սրով և լինես եղբօրդ իշխանութեան տակ»։ Այս ամենը կատարած էր Աստուծոյ նախախնամութիւնից, որ յաձախ իր ընտրեալը խլում է ապերախտներից ու անարժաններից և տալիս է այն երկիւղած մարդոց։

Յա Ժամանակից նաւաւ սուց իր եղբօր և ատում էր մրտքում, «երբ կ'մեռնի մեր հայրը Իսահակը, ես եղբօրս կ'սպանեմ»։ Ռեբեկան, այս խնամալով, խորհուրդ տուեց Յակովբին հայրենի տնից վախչել Միջագետք իր եղբօր Լաբանի մօտ», «Թող նա այն տեղ բնաբէ իրեն կին, ասաց Ռեբեկան Իսահակին, ես չեմ ուզում որ նա ամուսնանայ քանանացի աղջկայ հետ. նաւաւ ի կինը քանանացի է, իմ բոլոր կեանքս մաշեց նա. եթէ Յակովբ էլ քանանացի կին առնէ, էլ ինչո՞ւ համար է իմ կեանքս աշխարհիս վերայ։

ԳԼՈՒԽ ԺՐ.

Յակովբի երազը։

Իսահակ կանչեց Յակովբին իր մօտ, օրհնեց նրան ձանապարհ ընկնելիս և յետագայ հրամանը տուեց նրան. «մի՛ առներ քեզ կին Քանանացիներից, այլ գնա Միջագետք, քո մօրդ հօր՝ Բաթուէլի տունն և ամուսնացիր մօրեղբօրդ Լաբանի աղջիկներից մէկի հետ։ Իսկ Աստուած կ'օրհնէ քեզ, կ'մեծացնէ և կ'բազմացնէ։ Իմ հօրս Աբրահամի օրհնութիւնը կ'տայ նա քեզ և քո զաւակներիդ»։ Յակովբ, ծնողաց օրհնութիւնը սանանալից լիա, ձանապարհ ընկաւ դէպի Միջագետք իր մօրեղբօր Լաբանի մօտ։

Եսաւ լսելով, որ Իսահակ օրհնեց Յակովբին և խրկեց նրան Միջագետք, որ Լաբանի աղջիկներից մէկի հետ ամուսնանայ, որովհետև քանանացի աղջիկներուն չէր հաւանում, ինքն էլ գնաց իր հօրեղբօր Իսմայէլի մօտ և կին առաւ իրեն նորա Մայելէթ աղջկան։

Երբ Յակովբ, իր ծնողների հրամանով, գնում էր Միջագետք, մի անապատ տեղում գիշերը նրան վրայ հասաւ։ Նա պառկեցաւ գետնի վերայ, գլխի տակ քար դրաւ և քնեցաւ հանդարտ։ Երազում տեսաւ նա երկրիս վերայ տնկուած սրած, որի գլուխը հասնում էր մինչև երկինք։ Հրեշտակները իջնում էին և բարձրանում նորա վերայ. իսկ գլխին կանգնած էր ինքն Աստուած և ասում էր. «Ես եմ քո Տէր Աստուածդ, Աբրահամի Աստուածը, Իսահակի քո հօրդ Տէրը, մի՛ վախիր. ես կ'տամ քեզ և քո զաւակներիդ երկիրն, որի վերայ դու այժմ քնում ես. քո սերդ կ'բազմանայ ինչպէս ծովի աւազը և կ'տարածվի դէպի արևելք, արևմուտք, հիւսիս և հարաւ, և քեզմով ու քո զաւակներովդ կ'իջնի օրհնութիւն և բոլոր մարդկութեան վերայ։ Ես կ'լինիմ քեզ հետ, ամեն ձանապարհներում կ'պահեմ

քեզ. կ'գարձնեմ քեզ կրկին այս երկիրը և չեմ թողնիլ քեզ, մինչև չկատարվի ամենը, ինչոր ես քեզ ասացի»: Յակովը պատրաստեցաւ և ասաց. «Աստուած է այս տեղումն և ես չէի իմանում այս տեղ է Աստուծոյ տունն և երկնքի դուռն» և առաւ այն քարը, որի վերայ քնած էր, կանգնեց նրան արձանի պէս, ածեց նորա վերայ իւղ և ասաց. «Քարը Աստուած ինձ չկտ կ'գարձնէ, կ'շինեմ այս տեղ սեղան, այս տեղ կ'լինի Աստուծոյ տունն և ես իմ ստացուածներիս տասանորդը կ'տամ նրան»: Սանդուղը էր օրինակ Աստուածամօր և Յիսուսի Քրիստոսի երկրիս վերայ իջնելուն: Տեղն, ուր Յակովը տեսաւ մարգարէական տեսիլն, այն ժամանակից կտ կոչվեցաւ Բեթէլ, այսինքն Տուն Աստուծոյ:

ԳԻՒԽ ԻԹ.

Յակովբի ամուսնութիւնը:

Յակովը շարունակեց իր ճանապարհը դէպի արեւելք մօրեղբօր Լաբանի մօտ: Նրկար ժամանակ գնալից յետո, հոգսաւ մի ջրհորի մօտ, որ գաշտի մէջ էր և որի մօտ երեք խաշնար հանգստանում էին, և ջրհորը ծածկած էր մեծ քարով: Յակովը հովիւներին ասաց. «Եղբայրնե՛ր, ո՞րտեղից է՛ք»:—«Մենք Խառան քաղաքից ենք», պատասխանեցին հովիւները: «Ճանաչո՞ւմ է՛ք գուք Բաթուէլի որդուն Լաբանին». հարցրեց Յակովը: «Ճանաչում ենք». պատասխանեցին հովիւները. «և ահա՛ Հռաքել նորա աղջկին էլ գալիս է ջրհորի մօտ նորա ոչխարներով»: «Դեռ վաղ է խաշները ժողովելու». ասաց Յակովը. «ինչո՞ւ չէ՛ք ջրում խաշներդ և չէ՛ք քշում նրանց արածելու. մինչև իրիկուն»:—«Մենք սպասում ենք միւս հովիւներուն», պատասխանեցին նրանք, «որ գլորենք քարը, ջրենք ոչխարին մեր ոչխարներուն և յետոյ կրկին ծածկենք ջրհորը»: Այս միջոցին մօտեցաւ Հռաքէլն էլ իր հօր խաշնարով: Երբ տեսնելով, Յակովը շտապեց քարը գլորելու ջրհորի բերանից, ջրեց Լաբանի ոչխարներուն և յետոյ բարեւեց Հռաքէլին, լաց եղաւ ուրախութենից և ասաց, որ ինքը նորա հօրաքրոջ Ռեբեկայի որդին է: Այս իմանալով Հռաքէլ վազեց տուն, որ բոլորը պատմէ իր հօր: Երբ Լաբան իր քեռորդու գալուստը լսեց, գնաց նորա առաջ, գրկեց նրան, համբուրեց և տարաւ իր տուն:

«Դուխմ ազգականս ես», ասաց Լաբան Յակովբին, «բայց ես չեմ ուզում, որ գու ինձ ձրի ծառայես. ասա, ինչ վարձ ուզես, կ'տամնաց քո ծառայութեանդ համար»: Լաբան ունէր երկու աղջիկ, երէցը անուանվում էր Լիա, որի աչքերը ցաւում էին, և կրտսերը Հռաքէլ, որ գեղեցիկ էր շատ դէմքով: «Ես կ'ծառայեմ քեզ եօթն տարի կրտսեր աղջկանդ Հռաքէլի համար», պատասխանեց Յակովը, «եթէ կ'տաս գու նրան ինձ կին»: Լաբանը համաձայնեցաւ: Յակովը եօթն տարի արածում էր սրա խաշները: Նշանակած ժամանակի անցնելից յետո, Լաբանը խրնջոյք պատրաստեց և հարսանիք կանչեց շատ հիւրեր: Այն ժամանակուան սովորութեամբ հարսը պէտք է իր երեսը ծածկէր պատկի ժամանակ քօղով: Երբ Յակովը միւս առաւօտ տեսաւ իր կնոջ առանց քօղի, խմացաւ, որ իրան Հռաքէլի տեղ Լիային են տուել: Յակովը գնաց Լաբանի մօտ և ասաց. «գու խաբեցիր ինձ, եօթն տարի քեզ ծառայելի Հռաքէլի համար և դու ինձ Լիային տուիր».—Մենք սովորութիւն չունինք կրտսեր քրոջը մեծից առաջ կին տալու», պատասխանեց Լաբան. «Եթէ կուզես մի շաբաթից կ'տամ քեզ Հռաքէլին էլ, միայն եթէ կ'համաձայնես էլի եօթն տարի ինձ ծառայել»:

Յակովը անուանացաւ Հռաքելի հետ և ծառայեց Լաբանին էլի եօթն տարի: Բայց իր երկու կնոջից աւելի սիրում էր նա գեղեցիկ Հռաքէլին: Այս գերազանցութիւնը շատ տրամեցրեց Լիային, բայց Աստուած, նրան միխիթարելու համար այս որ

մութիւնից, ուր ոչ նրան շատ որդիք. եւ Հռաքէլը երկար ժամանակ ամուլ էր։ Վերջապէս ամուլութիւնից շատ տարի յետոյ. երբ արդէն Յակովը տասն որդի ունէր, Հռաքէլն էլ ծնաւ որդի, որին անուանեցին Յովսէփ։

ԳԼՈՒԽ Ի.

Յակովբի լաբանի մօտ կենալը։

Տասնըչորս տարիից յետ Յակովբ ասաց Լաբանին. «Ես ծառայեցի քեզ հաւատարմութեամբ. երբ ես քեզ մօտ եկայ, ստացուածդ մեծ չէր այնքան, այժմ դու հարուստ ես։ Եւ ես պէտք է արդէն իմ որդոց համար հոգ քաշեմ. թող ինձ, որ իմ հայրենիքս երթամ»։ Լաբան գիտենալով. որ Աստուած օրհնեց ինձ այն ժամանակից, երբ դու իմ տանս բնակուած ես։ Նշանակիր ինքդ քեզ քո աշխատանքիդ համար վարձ»։ Յակովբ նշանակեց իրեն վարձ խայտախարիւ (դոյդոյն) գառները և սպիտակ ուլերը, որոնք կ'ծնեն Լաբանի խաշնի մէջ։ Լաբանը համաձայնեցաւ։

Արանից յետ Յակովբը մնաց էլի ծառայելու Լաբանին և շատ անբաւականութեանց համբերեց։ Եթէ մի անասուն կորչում էր խաշնից կամ պատռուում էր վայրենի գազաններից, Յակովբ սոխակած էր Լաբանին նորա համար վարձատրելու։ Բայց սրանից Լաբանը քանի անգամ փոխեց պայմանն, որ դրել էր Յակովբի հետ։ Բայց Աստուած էր Յակովբի պաշտպանն, օգնականը։ Երբ Լաբանը նշանակում էր Յակովբի համար խայտախարիւ ծնած գառներն ու ուլերն, ողջ գառները խայտ էին ծնում, իսկ երբ Լաբան միւս տարին պայմանը փոխում

էր և Յակովբին մնան էր նշանակում սպիտակ գառները, ծնում էին սպիտակ։ Այսպէս Յակովբը կամաց կամաց ունեցաւ բաղմաթիւ խաշներ ոչխարների և այծերի, որով կարողացաւ շատ ծառաների էլ տէր դառնալ և ուրիշ անասուններ էլ շատ գնել։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յակովբի դարձը։

Լաբան երբ տեսաւ, որ Յակովբը շատ հարստացաւ, սկսաւ նրան նախանձել և չէր կարողանում հանդարտ աչքով նայել նորա վերայ։ Յակովբը նկատեց այս բանն և շատ տրտմեցաւ այսպիսի վարմունքի համար։ Այն ժամանակ Աստուած ասաց նրան. «այժմ դուրս կ'այս երկրից, ես քեզ կ'դարձնեմ հայրենիքդ, ես քեզ հետ կ'լինեմ»։ Յակովբ պատրաստեցաւ ճանապարհ ընկնելու առանց Լաբանի գիտութեան, նստացրեց իր կնոջ և որդոց ուղտերի վերայ և ճանապարհ ընկաւ դէպ իր հայրենիք։ Լաբանը եռեւներից ընկաւ և բռնութեամբ կամենում էր նրանց կանգնացնել. միայն Աստուած արգելեց նրան, որ ոչ մի կերպի նեղութիւն չտայ Յակովբին։ Ետաի և Լաբանը, երբ հասաւ նրանց Գաղատ լերան մօտ, հրաժարական ողջոյն տուեց Յակովբին, իր աղջիկներին և թոռներին ու խաղաղութեամբ բաց թողեց նրանց։

Յակովբ, երբ Յորդանան գետին մօտ հասաւ, վախեցաւ իր եղբօր Եսաւին միտը բերելով։ Նա իմաց տուեց նրան իր գալուստը։ Խրկուած մարդիկը յետ դարձան և ասացին. «մենք տեսանք եղբօրդ Եսաւին, նա գալիս է քո առաջդ չորս հարիւր հոգով»։ Յակովբը զարհուրեցաւ, կարծելով թէ նա գալիս է յափշտակելու իր բոլոր ստացուածքը։ Նա երկու մասը բաժանեց իր մարդոց և խաշները, ասելով. «եթէ Եսաւը կ'ջնջէ

ստացուածքիս մի մասը. միւսը էլի կ'մնայ ինձ»: Ցետոյ, ամէն խաշնից մի քանի անասուն զատելով, և ամէն մէկը այս փոքրիկ խաշնարից յանձնելով իր հաւատարիմ մարդոց, հրամայեց նրանց նաւակ առաջը դուրս գնալ: Եւ եթէ նաւը նրանց հանդիպելով կհարցնէր թէ ո՞ւմ է պատկանում այս խաշնը ծառաները, պէտք է, ասէին. «քո ծառայիդ Յակովբին, որ խրկում է այս քեզ ընծայ և ինքը գալիս է ետևից»:

Ընդ ամենը այսպէս կարգադրելից յետ Յակովբ սկսաւ աղօթել. ասելով, «ո՛վ Հայրերիս՝ Աբրահամի, Իսահակի Տէր Աստուածը, որ հրամայեցիր ինձ գառնալ իմ հայրենիքս ազգականներիս մօտ և խոստացար ինձ քո ողորմութիւնդ. արժանի չեմ ամեն բարերարութեանցդ, որ ինձ արիր Դու: Երբ ես Յորդանան անցայ, բացի գաւազանից ոչինչ չունէի. այժմ տէր եմ երկու մեծ խաշների: Ազատիր ինձ եղբօրս ձեռքից, որովհետև ես վախենում եմ, որ չլինի թէ նա գայ և սպանէ ինձ և մօրը իր որդիներով»: Երբ պիտի եղաւ, Յակովբ մնաց մէնակ: Նորա մօտ եկաւ մի անծանօթ մարդ և մարանչից (կռուեցաւ) նորա հետ բոլոր գիշերն և այն միջոցին վնասվեցաւ նորա ոտը, ինչից էլ Յակովբ կաղում էր բոլոր իր կեանքի մէջ: Առաւօտեան մօտ, երբ անծանօթը կամենում էր թողնել նրան և գնալ, Յակովբ բռնեց նրան և ասաց. «ես քեզ չեմ թողնիլ մինչև ինձ չօրհնես»: Խորհրդաւոր մարդը հարցրեց. «անունդ ի՞նչ է».—«Յակովբ. պատասխանեց նա: Այսուհետև քեզ, ասաց անծանօթը, «Իսրայէլ կ'անուանեն, որովհետև դու մարտնչեցիր Աստուծոյ հետ, և զօրաւոր կլինես դու պատերազմում մարդոց դէմ էլ»:—«Բո անունդ ի՞նչ է». հարցրեց Յակովբ:—«Մի՛ հարցներ իմ անունս, նա հրաշալի է». պատասխանեց Աստուած. յետոյ օրհնեց նրան և անհետացաւ: Յակովբ այս անցքի յիշատակի համար, անուանեց այն տեղը Փանուէլ (տեսիլ Աստուծոյ), որովհետև դէմ յանդիման տեսաւ Աստուած և չմեռաւ: Առաւօտը տեսաւ նա իր եղբօր նահապետին, որ գալիս էր նորա առաջը:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Երկու եղբայրների հաշտվիլը:

Եսաւ բնակվում էր Սէիր երկրում: Նա եղաւ այր զօրեղ, հարուստ և շատ ժամանակից ի վեր մոռացել էր իր եղբօր Յակովբի դէմ ունեցած ոխը: Երբ Յակովբի ղրկած մարդիկ ծանուցին նրան իր եղբօր գալուստն, նաև ուրախութեամբ դուրս եկաւ նորա առաջ և նրան առաջել պատիւ ցոյց տալ կամենալով, առաւ հետը չորս հարիւր հոգի էլ: Յակովբը նրան տեսնելով, առաջ կարգեց իր աղախիններուն իրենց որդիներով. յետոյ Լիային իր երեխաներով ու վերջապէս Հռաքէլին և նորա որդուն՝ Յովսէփին: Իսկ ինքը գնաց իր եղբօր առաջ և երկրպագեց նրան մինչև գետին եօթն անգամ: Նաւը ընկաւ նորա վիզն, եղբայրաբար գրկեց նրան և երկուսն էլ սկսան լալ ուրախութենից: Նայելով կանանց և երեխաների վերայ, որոնք իր առջևը կանգած էին, հարցրեց Նաւ. «ովքե՞ն սոքա»: Սոքա իմ զաւակներս են, որով ինձ օրհնեց Աստուած և իմ կանայքս են». պատասխանեց Յակովբ: Այն ժամանակ մօտեցան աղախինները իրենց երեխաներով և երկրպագեցին Նաւին. նրանց հետևեց Լիան իր որդիներով և նմանապէս երկրպագեց և վերջապէս եկաւ Հռաքէլ Յովսէփի հետ և երկրպագութիւն տուեց Նաւին: «Այն ո՞ւմ խաշներն էին, որոնք ինձ հանդիպեցան ճանապարհին». հարցրեց Նաւ: «Նա ղրկեցի նրանց քեզ ընծայ, որ արժանանամ քո ողորմութեանդ». պատասխանեց Յակովբ: «Ներե՛ա, նորա ինձ հարկաւոր չեն, ասաց Նաւ, քեզ մա՛ նրանց. ես առանց նոցա էլ բաւական եմ իմ ունեցածով»: Այս նրանց ասաց Յակովբ և ե-

ղի՛ր ինձ ողորմած, ընդունիր այն ընծան իբրև Աստուծոյ օրհնութիւնը, որով Նա ինձ այսպէս առատաձեռնութեամբ վարձատրեց։ Յակովը չդադարեց խնդրելից, մինչև որ նաև համաձայնեցաւ ընդունելու այն ընծան։

Սրանից յետոյ, նոքա հեռացան միմեանցից և գնացին տուրիւ ուրիշ ճանապարհներով։ Ճանապարհին Հռաքէլը ծնաւ Յակովբին մի որդի եւ Բենիամին անունով և ինքը վախճանեցաւ։

Վերջապէս Յակովը, քսանամեայ առանձնութիւնից յետոյ, դարձաւ կրկին իր հօր՝ Իսահակի մօտ, որ այս ուրախալի առաւութիւնից յետ էլ երկար չապրեցաւ։ Նա մեռաւ հարիւրութսուն տարեկան և իր որդիքը՝ նաև և Յակովը թաղեցին նրան։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յակովբի որդիքը։

Յակովը ունէր տասներկու որդիք. ահա նոցա անունները ըստ ազգութեան կարգով. Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Զաբուղոն, Իսաքար, Դան, Գադ, Ասեր, Նեփթաղիմ, Յովսէփ և Բենիամին։ Երկու վերջիններն էին նորա սիրելի կնոջ Հռաքէլի որդիքը։ Մեծ որդիքը պարապում էին հովուութեամբ և իրենց վարքով միշտ արժանի չէին լինում Աստուծոյ սիրոյն։ Բենիամինը՝ ամենից փոքր դեռ երեխայ էր. իսկ Յովսէփ գեղեցիկ, հեզ և բարեպաշտ երիտասարդը, էր շատ սիրելի հօրը։ Յակովը կարեց նրան գեղեցիկ ծաղկեայ շորեր։ Մեծ եղբայրները նախանձում էին Յովսէփին և ատում էին նրան նորա համար, որ հայրը նրան նոցանից գերազանց էր դասում, և նոցա ատելութիւնը աւելացաւ մանաւանդ այն ժամանակից երբ Յովսէփ պատմեց նրանց երկու զարմանալի երազներ, որոնք տե-

սել էր Նա։ Մի անգամ ասաց Նա եղբայրներին. «Լսեցէք, ի՞նչպիսի զարմանալի երազ տեսայ ես։ Ես երազումս տեսայ, որ մենք գաշտում ցորէն էինք հնձում և արդ կապում. իմ արդ կանգնած էր ուղիղ. իսկ ձեր արդերը պատեցին իմ արդը և երկրպագութիւն տուին նրան։—«Միթէ դու կդառնաս մեր թագաւորն և մենք քո հպատակները», ասացին նրան եղբայրները բարկութեամբ։

Ետու սրանից յետ Յովսէփ տեսաւ էլի մի երազ, որ նմանապէս պատմեց եղբայրներին։ «Ես տեսայ երազումս», ասաց նա. «որ արեգակը, լուսինը և տասնումէկ աստղեր երկրպագում էին ինձ»։

Յակովը այս լսելիս, սաստեց նրան ասելով. «այդ ի՞նչ երազ է. միթէ ես, իմ կինս և եղբայրներդ կգանք քեզ երկրպագութիւն տալու։ Եղբայրները շատ չարացան Յովսէփի վերայ այսպիսի երազների համար, բայց Յակովը, որ ինքը տեսիլներ, որոնք Աստուած նրան պրկում էր, չմոռացաւ այն երազները և թաքուն մտածում էր Յովսէփի խօսքերի վերայ։ «Ներեի» ասում էր նա ինքն իրեն, «Աստուած նշանակում է իմ Յովսէփիս մեծ բանի համար»։ Եւ ճշմարիտ, որ Յովսէփ, իր հօրը սիրելին, իր առաքինութեանց պատճառով արժանացաւ Աստուծոյ առանձին շնորհքին։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Եղբայրները ծախում են Յովսէփին։

Յակովբի որդիք արածում էին իրենց հօր խաշները։ Մի անգամ նոքա խաշները շատ հեռու քշեցին հօր տնից և որովհետև հայրը երկար ժամանակ համբաւ չունէր նոցա վերայ, ասաց Յովսէփին. «գնա տես, առողջ են արդիօք եղբայրներդ և մեր խաշնները և յետ գառնալով իմաց տուր ինձ, ինչպէս այն

տեղ լինում է»: Յովսէփ հագաւ իր գեղեցիկ շորերն և գնաց եղբայրների մօտ: Եղբայրները, երբ դեռ հեռուից տեսան նրան, ասացին միմիկու. «ահա գալիս է մեր երազատեսը, եկէք սպանենք նրան և ասենք մեր հօրը, թէ վայրենի գազանները պատառել են նրան: Տեսնենք ինչպէս կկատարվին նորա երազները»: Ռուբէնն, ամենից մեծ եղբայրը, զարհուրեցաւ, լսելով նոցա այս միտքը և ամեն կերպով աշխատելով Յովսէփին ազատել, ասաց. «մի՛ սպանէք նրան, մի՛ թափէք անմեղ արիւն, մի՛ պղծէք ձեռներդ ձեր եղբօր սպանելով. լաւ է, որ դնեք նրան այս անջուր փոսի մէջ»: Նա այս առաջարկեց նորա հաւանելու համար, որ կամենում էր գիշերով գալ, հանել նրան փոսից կամ անջուր ջրհորից և տանել հօր մօտ: Երբ Յովսէփը մօտեցաւ եղբայրներին, սոքա հանեցին նորա շորերը, գցեցին նրան փոսի մէջ: Սորանից յետոյ, իբրև ոչինչ չար բան չէին արած, հանգիստ նստան ուտելու: Բայց Ռուբէնն չկարողացաւ ուտել նոցա հետ, նա հեռացաւ և մտածում էր, թէ ի՞նչպէս ազատէ Յովսէփին:

Երբ Ռուբէնն հեռացել էր, եղբայրները տեսան Իսմայելացի վաճառականներուն, որոնք այնտեղից անց էին կենում ուղտերով: Այս Իսմայելացիները էին Իսմայելի յաջորդները. նոքա տանում էին զանազան վաճառներ Եգիպտոս: Յուդան ասաց եղբայրներին. «ի՞նչու համար սպանենք Յովսէփին. նա մեր եղբայրն է և ի՞նչ օգուտ մեզ, թէ նրան սպանենք. լաւ է, որ ծախենք նրան այս վաճառականներին»: Այսպէս Յովսէփին էլ հանեցին փոսից և ընտրելով նորա խնդրելուն, լացին և արտասուքին ծախեցին Իսմայելացիներին քսան դահեկանով:

Մի քանի ժամանակից եկաւ Ռուբէնն, որ հանէ Յովսէփին փոսից: Նա զարհուրեցաւ, երբ չգտաւ նրան այն տեղ և ինքը շատ նեղացած, վազեց եղբայրների մօտ. «Չկայ երեխային ի՞նչ արիք», հարցրեց նա, «ես չգտայ նրան փոսում, ի՞նչ

կլինի ինձ այժմ»: — «Մենք ծախեցինք նրան». պատասխանեցին եղբայրները: Ցեղոյ իրենց յանցանքը հօրից ծածկելու համար մորթեցին մի այծ, թրջեցին նորա արիւնով Յովսէփի շորերն և ղրկեցին այն հօրը, հրամայելով ասել. «ահա արիւնոտ շորերը, որոնք գտանք դաշտի մէջ, տես արդեօք սա Յովսէփինը չէ»: Յակովբը իսկոյն ճանաչեց իր սիրելի որդու շորն և յուսահատած աղաղակեց: Այս շորը Յովսէփինն է, նրան պատառել են վայրենի գազանները»: Երկար ժամանակ ողբաց նա իր սիրելի որդու վերայ: Բոլոր որդիքն և աղջկներքը հաւաքվեցան նրան մխիթարելու. բայց խեղճ հայրը անմխիթարելի էր: «Ո՛հ. ատում էր նա, սրտիս ցաւը ինձ էլ շուտ կիջեցնէ գերեզման. ես շուտով կմիանամ իմ սրտուս Յովսէփի հետ»:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յովսէփը Եգիպտոսում:

Իսմայելացիք, երբ Եգիպտոս հասան, ծախեցին Յովսէփին մի Պետափրէս անունով մարդուն, որ Եգիպտոսի թագաւորի մեծամեծների մէկն էր: Պետափրէսը տեսնելով, որ Յովսէփն է շատ խելօք, արդար, հեզ և բարեպաշտ մարդ, շինեց նրան առաջին մարդ իր տան մէջ և յանձնեց նրան բոլոր իր ստացուածքը: Լաւ մարդոց ամեն տեղ լաւ է լինում. նոքա ամեն տեղ գտնում են բարեկամ և պաշտպան:

Պետափրէսի կինը չար կնիկ էր. նա կամենում էր հափշտակել Յովսէփին, որ իր հետ միասին խարէ նորա մարդուն. բայց ոչինչհետև Յովսէփ չհամաձայնեցաւ նորա առաջարկութեան, այս չար կինը գտաւ հնարք նրան իր մարդու Պետափրէսի առջև զրպարտելու, այնպէս որ սա հրամայեց անմեղ Յովսէփին այն բանտը դնել, ուր պահվում էին արքունի յանցաւորները: Բայց Տէր Աստուած միշտ անմեղութեան և առաքինու-

թեան պաշտպան է։ Յովսէփ իսկ բանտի մէջ էլ գտաւ բարեկամներ։ Բանտապետը սիրեց նրան, և իրրև ստրուկին խիստ չէր պահում. այլ շինեց նրան երկրորդ մարդ իրանից յետոյ և ասաց նրան, որ նայէ ամենի վերայ, որոնք բանդումն բռնած էին։

Յովսէփի կալանաւորութեան ժամանակ Եգիպտոսի թագաւորը բարկացաւ երկու արքունի պաշտօնեաների վերայ և հրամայեց նրանց բանտը դնել։ Սրանից մէկն էր ասկառապետն, որ դինի էր թագաւորին տալիս և միւսը մատակարարը (հացագործը), որ վերակացու էր թագաւորի սեղանի։ Մի անգամ առաւօտը երբ Յովսէփ մուտ նրանց մօտ, տեսաւ որ շատ մռայլութեան մէջ են։ Նորա ասացին նրան. «մենք տեսանք զարմանալի երազներ, որոնց մեկնութիւնը շատ կ'ուզէինք իմանալ. բայց այստեղ բանտի մէջ այնպիսի հմուտ երազը մեկնիչ չկայ»։ Յովսէփ ասաց. «Աստուծմէ է մեկնութիւնը. պատմեցէք, ի՞նչ երազ տեսաք»։ Այն ժամանակ ասպետապետն առաջինն սկսաւ. «ես տեսայ երազումս, ասաց նա, մի որթ, որ ունէր երեք ճիւղ և ճիւղերին վերայ խաղող հասած. ինձ երևում էր, թէ հաւաքում էի պտուղը, քամում էի ծուծը թագաւորի բաժակի մէջ և տալիս էի նրան»։ Յովսէփ ասաց նրան. «Երեք ճիւղերը նշանակում են երեք օր. այս միջոցի անցնելից յետոյ, թագաւորը կ'հրամայէ քեզ պատել և կ'յանձնէ քեզ էլի քո առաջվան պաշտօնդ։ Քո բաղդաւորութեանդ ժամանակ միագ բեր ինձ և աշխատիր ինձ ազատելու բանդից, ուր ես փակված եմ իզուր»։ Սրանից յետ մատակարարն էլ սկսաւ պատմել իր երազը. «Ես տեսայ երազումս, ասում էր նա, որ երեք զանգ գլխիս դրած եմ, վերին զանգում էին ամեն կերակուրներ, որոնք թագաւորը ծածում է, և թռչուններն ուտում էին նրանցից»։ Այն ժամանակ Յովսէփ ասաց նրան. «երեք զանգերը նշանակում են երեք

օրը. այս ժամանակի անցնելից յետ թագաւորը կ'հրամայէ քեզ կախաղանի վերայ կախել, ուր թռչունները կուտեն մարմինդ»։ Ամենը կատարվեցաւ ինչպէս Յովսէփ գուշակեց։ Ասպետապետն, իր բաղդաւորութեան ժամանակ մոռացաւ Յովսէփին. բայց Աստուած, որ երբէք չէ թողնում անմեղ մարդոց, էր Յովսէփի հետ և նորա թշուառութիւններն էլ դարձրեց բաղդաւորութիւն։

ԳԼՈՒԽ ԻԶ

Յովսէփի ազատվելը։

Երկու տարի, ինչը Փարաւոն Եգիպտոսի թագաւորը (Փարաւոն բառը Եգիպտոսի թագաւորների տիտղոսն էր) տեսաւ զարմանալի երազ։ Նա տեսաւ երազումն որ ինքը կանգնած է գետի մօտ, որից դուրս եկան եօթը գեր կովեր և արածում էին ափում։ Յետոյ հետևից նոյն ներքոյ գետից դուրս եկան եօթը վատ կովեր, որոնք կերան եօթը գեր կովերին։ Փարաւոն զարթնեցաւ, բայց կրկին քնելով տեսաւ էլի երազում եօթը լիք և գեղեցիկ հասկեր մի փնջի վերայ։ Նոյն մօտ և նոյն փնջից դուրս եկան եօթն ազազուն և չոր հասկեր, որոնք կերան եօթը լիքը հասկերը։ Այս երազները շատ անհանգստացրին թագաւորին։ Երբ առաւօտ եղաւ, հրամայեց բոլոր երազահաններին իր պալատում ժողովել. միայն ոչնչ չկարողացաւ մեկնել Փարաւոնի երազները։

Այն ժամանակ ասպետապետը միտը բերեց կալանաւորութեան ընկերին՝ Յովսէփին և ասաց Փարաւոնին. «ես այժմ յիշեցի իմ յանցանքս։ Երբ դու, տէր պետ, բարկացար իմ և մատակարարի վերայ և երկուսիս էլ հրամայեցիր բանտը դնել, ամեն մեկս տեսաւ մի մի զարմանալի երազ։ Նոյն բանդումն կար մի Եբրայեցի երիտասարդ էլ. մենք պատմեցինք

նրան մեր երազները, նա մեզ երկուսիս էլ մեկնեց և կատարվեցաւ այնպես, ինչպես նա ասաց. «ես սատկայ առաջվան պաշտօնս և մատակարարը կախվեցաւ կախաղանի վերայ»: Փարաւոն իսկոյն զրկեց Յովսէփի եաեից. նրան հագցրին հարուստ շորեր և բերին թագաւորի առաջ:

Փարաւոնը ասաց Յովսէփին, «ես տեսայ երազ, բայց ոչոք չէ կարողանում մեկնել նրան: Իմ ասացին, որ դու մեկնում ես երազներ»: Հետ Յովսէփը պատասխանեց. «ես ինքս ոչինչ չեմ կարող անել: Միայն Աստուած կարող է, տէր արքայ, սակ քեզ քո ցանկացած մեկնութիւնը»: Այն ժամանակ Փարաւոն պատմեց իր երազները:

«Երկու երազներդ էլ մի նշանակութիւն ունին», ասաց Յովսէփ, «Աստուած նրանցով ասում է թագաւորին. եօթն գեր կովերն և եօթն լիքը հասկերը նշան են եօթն պտղաբեր տարիներին. իսկ եօթն վատ կովերն և եօթն ազազուն հասկերը նշան են եօթն սովի տարիներին: Ահա ինչպես այս ամենը կ պատահի: Բոլոր Եգիպտոսում եօթն տարի շարունակաբար կ լինի մեծ առատութիւն հացի. նրանից յետ կ'գան միւս եօթն տարիները, երբ ոչինչ չի դուրս գալ և ինչ որ պատրաստած էր պտղաբեր տարիներում, բոլորը կ'ծախվի սովի տարիներում. բայց Փարաւոնի երկու միակերպ երազներ տեսնելը ցոյց է տալիս, որ Աստուծոյ կամքը դուցէ շուտով էլ կատարվի: Պէտք է թագաւորը նշանակէ մի իմաստուն, գործունեայ մարդ, որ պըտղաբեր տարիներին հաւաքէ ամենայն կերպի ցորէն այնքան, որ բաւական լինի բոլոր ժողովրդեան, անպտղաբեր տարիների ժամանակ:

Շատ հաւանելի թուեցաւ այս Փարաւոնին և նորա պաշտօնեաներին. «ուր կ'գտնեմ, բացի Յովսէփից մի մարդ, որի մէջ լինի Աստուծոյ ոգին» ասաց Փարաւոն. քեզ յայտնեց Աստուած իր խորհուրդը, ուրեմն դու ուրիշներից իմաստուն ես:

Քեզ կ'դնեմ ես գլուխ բոլոր Եգիպտոսի վերայ, երկրորդ մարդը կ'լինիս դու ինձանից յոտոյ. միայն գահովս բարձր կ'լինեմ ես քեզանից»: Այս առիթով Փարաւոն հանեց իր մատանին և հագցրեց Յովսէփի մատին. նմանապէս հրամայեց բեհեզեայ շոր հագցնել նրան, վզին ոսկի մանեակ կախել և արքունի կառքով շրջեցնել մայրաքաղաքի մէջ պատուով, որ ամենքը նմանան նորա մեծութիւնը:

ԳԼՈՒԽ ԻԷ:

Յովսէփի եղբայրների առաջին գալուստն:

Եգիպտոս:

Պաղաբերութեան ժամանակ, Յովսէփ շինեց Եգիպտոսի մէջ ահագին մեծութեամբ շտեմարաններ, ու ժողովեց անչափ ցորեն: Վերջապէս եկան սովի տարիները: Այն ժամանակ Յովսէփ բացեց շտեմարաններն և բաժանեց ցորեն աղքատ Եգիպտացիներին: Օտար երկիրներից էլ գալիս էին Յովսէփին մեծ ցորէն գնելու:

Քանանացւոց երկրում նմանապէս սով ընկաւ: Յակովբն ասաց իր որդւոց. «Ես լսում եմ, որ Եգիպտոսում ծախում են ցորէն, գնացէք և դուք և դնեցէք, ինչքան հարկաւոր է, որ սովից չմեռնենք»: Յովսէփի տասն մեծ եղբայրները գնացին Եգիպտոս. միայն Բենիամինը մնաց հօր մօտ: Յակովբը վախում էր, որ չլինի, թէ ճանապարհին պատահի նրան մի անբաղդութիւն:

Յակովբի որդիք հասան Եգիպտոս: Այստեղ առանց Յովսէփի գիտութեան ոչոք հրաման չունէր ցորէն ծախելու. այս պատճառով նորա գնացին նորա մօտ: Նորա չճանաչեցին նրան և մինչև գետին երկրպագութիւն տուին նրան յարգութեամբ: Յովսէփ իսկոյն ճանաչեց նրանց և միտը բերելով իր երեխայու-

թեան տեսիլները, խորին երախտապիտութեամբ սկսաւ մտածել Աստուծոյ անհասանելի նախախնամութեան վերայ։

Բայց ինքը ցոյց տուեց, իբրև թէ չէ ճանաչում իր եղբայրներն և չէ հասկանում նոցա լեզուն։ Նա խստութեամբ ասաց նրանց թարգմանի բերանով. «դուք լրտես էք և եկել էք իմանալ ինչոր լինում է Եգիպտոսի երկրում։ «Չէ, տէր, մենք ճշմարիտ մարդիկ ենք, ասացին եղբայրները. մենք երբէք լրտես չենք եղել և եկանք այս տեղ, որ գնենք ցորէն։ Մեր հայրը կենում է Քանանացոց երկրում և մենք ոգջս տասներկու եղբայրներ էինք։ Մեզանից մէկը կորաւ և փոքրը մնաց մեր հօր մօտ։—«Չէ. դուք կասկածելի մարդիկ էք», ասաց Յովսէփ. «ես կամենում եմ փորձել, արդեօք ուղիղ են ձեր խօսքերըն և չեմ թողնիլ ձեզ Եգիպտոսից, մինչև ձեր եղբայրը չգայ այս տեղ։ Ղրկեցէք ձեզանից մէկին ձեր եղբօր համար, բայց միւսներդ մնացէք իմ մօտ գերի, մինչև ես իմանամ, որ դուք իսկ ճշմարիտ էք ասում։ Նա հրամայեց նրանց բանտը տանել։

Ա՛րդիւնդրութիւնը բարեպաշտ հոգւոյ յատկութիւն չէ Յովսէփ չէր ուզում իր եղբայրներից վրէժ հանել, այլ ուզում նրանց։ Երեք օրից նա հրամայեց բերել նրանց իր առջևն և ասաց նրանց. «ես երկիւղած եմ Աստուծոյ և չեմ ցնդացնում ոչոքին։ Եթէ դուք ճշմարիտ արդար մարդիկ էք, թող մէկը ձեզնից մնայ այս տեղ բանտում, իսկ միւսներդ գնած ցորենով գնացէք տուն, ու յետ դարձէք էլի ձեր փոքր եղբօր հետ. այն ժամանակ ես կհաւատամ ձեր խօսքերին և դուք կապրուիք ձեզ սպառնոց մահից»։

Թշուառութիւնն եղաւ սկիզբն Յովսէփի եղբայրների ուղղուելուն. նոքա ասում էին մէկ մէկու. «արդեօք մենք պատժվեցանք մեր խստասրտութեան համար, որ մենք ցոյց տուինք մեր եղբօր Յովսէփին։ Մենք տեսանք նորա հոգւոյ տագնապութիւնն և աղաչանքն և ականջ չդրինք նորա խնդրելուն»։—«ես չասացի

ձեզ», կրկնեց Ռուբէն, «որ դուք չմեղանչէք ձեր եղբօր դէմ։ դուք ինձ չլսեցիք, այժմ նորա արիւնը մեզնից պահանջում է։

Նոքա կարծում էին, թէ Յովսէփ չէ հասկանում իրենց խօսակցութիւնն, որովհետև նոքա խօսում էին նորա հետ թարգմանի բերանով։ Յովսէփ, լսելով նրանց խօսակցութիւնը, շատ սրտին կպաւ նոցա դէջումն, չկտրեաց և լաց եղաւ։ Բայց ճշմարտութեամբ նոցա դէպքումն իմանալու համար, դարձաւ նրանց և հրամայեց ամենին առջև կապել Շմաւոնին։ Այս կատարելից յետ Յովսէփի ծառաները լքցրին միւս եղբայրների պարկերը ցորենով և նոցա ցորենի համար բերած փողերը, նմանապէս Յովսէփի հրամանով դրին պարկերի մէջ թաքուն, տալին նրանց նոյնպէս ճանապարհի պաշար էլ։ Պարկերը բառնալով իշերի վերայ Յովսէփի եղբայրները գնացին տուն, սակայն մի հրաման սառնաշունչ, որ միւս անգամ առնոց իրենց փոքր եղբօր չերևին Յովսէփի աչքին։

Երբ գարձան հօր մօտ, նոքա պատմեցին ամենը, ինչոր պատահեցաւ և շատ զարմացան, երբ ցորենը Թափելիս պարկերի մէջ գտան իրենց փողերը։

Ծերունի Յակովբ գաւառ էր Շմաւոնի վերայ. բայց ամենից աւելի վախենում էր Բենիամինի համար. «Յովսէփն էլ չկայ,» ասում էր նա, «Շմաւոն բանտն է գցած, այժմ ուզում էք ինձնից խլել իմ Բենիամինս էլ. ամեն թշուառութիւններն իմ գլխիս գնան։ Չեմ թողնիլ ես Բենիամինին Եգիպտոս, նրան մի թշուառութիւն կպատահի և դուք այն ժամանակ իմ ցաւով լքած ծերութիւնս գերեզման կիջուցանէք։

ԴԼՈՒԽ ԻԸ.

Յովսէփի եղբայրների երկրորդ գալուստն Եգիպտոս։

Սովը դեռ էլի շարունակում էր Քանանացոց երկրում։ Ե-

գիպտոսում գնած հացը կերան. Յակովբ ասաց իր որդոց. «գնա-
ցէք էլի Եգիպտոս և ԹԷՔ կարելի է, գնեցէք ցորէն»: «Եգիպ-
տոսի իշխանը». պատասխանեց Յուդան, ասաց մեզ, որ չերևինք
նորա աչքին, ԹԷ չառնենք մեր հետ մեր փոքր եղբօր: Թող
մեզ հետ երևիայն էլ, ԹԷ չէ, չենք կարող ցորէն ստանալ և
մենք ամենքս, պէտք է, մեռնենք սովից, դու էլ, մենք էլ, մեր
որդիքն էլ: Բենիամինին ես իմ ձեռս եմ առնում, նրան դո
ինձանից պահանջեր, ԹԷ ես նրան չեմ բերում և քո առ-
ջևդ չկանգնեցնեմ, Թող նորա յանցանքը իմ վերայ լինի բոլոր
իմ կեանքումս. ԹԷ մենք այսպէս չէինք ուշացել, մենք արդէն
երկու անգամ Եգիպտոս գնացած և եկած կ'լինէինք»:

Վ երջապէս Յակովբ ախուր սրտով ասաց, «ԹԷ այդ շատ
կարևոր է, ահա ինչ արէք. վեր առէք այս երկրի լաւ բեր-
քերից և տարէք ընծայ Եգիպտոսի իշխանին ուտելին, մեղը,
խունկ, ստաշեն, բևեռն և ընկոյզ և պարկերում դանված փո-
ղերը չեմ դարձրէք: Առէք ձեր հետ Բենիամինին էլ: Թող ա-
մենազօր Աստուածը օգնական լինի ձեզ, որ Եգիպտոսի իշխանի
ողորմութեան արժանանաք. որ կարողանաք կրկին հետերդ բե-
րել ձեր այն տեղ իրրև գրաւ մնացած եղբօր և Բենիամինին: Բայց ԹԷ ինձ Աստուածմէ նշանակած է անզաւակ լինիլ, Թող
լինի այնպէս»:

Յակովբի որդիք կրկին գնացին Եգիպտոս: Յովսէփ, երբ ի-
մացաւ, որ Բենիամինն եկել է իր եղբայրների հետ, հրամայեց
իր տան հազարապետին պատրաստել Հարուստ սեղան և հրա-
ւիրել նոր եկածներուն: Երբ հազարապետը մոտրեց նրանց ներս
Յովսէփի տուն, նորա դողով սկսան պատմել նրան այն փողի
վերայ, որ գտել էին իրենց պարկերում, կարծելով ԹԷ իրենց
ստրուկ կ'շինեն այն փողի համար: «Մի՛ հոգաք դորա մասին».
պատասխանեց հազարապետն, «Աստուած ինքը յետ է դարձրել
ձեզ այն փողերը, ես ամենը առացել եմ ինչպէս Հարին էր»:

Նա բերեց Շմաւոնին էլ և ամենը միասին մտան Յովսէփի տուն:
Հազարապետը յայտնեց նրանց, որ նորա կ'ճաշեն այն տեղ ձա-
շելու և որ նոցա հշերն էլ կ'ստանան կերակուր:

Յովսէփի գալուն սպասելով նորա պատրաստեցին ընծաները:
Երբ Յովսէփ ներս մտաւ, բոլոր եղբայրները չոքեցին նորա առ-
ջև և ամեն մէկը բռնած ունէր ձեռին իր ընծան: Նա քաղ-
ցրութեամբ բարևեց նրանց և հարցրեց. «առո՞ղջ է ձեր հայրը.
կենդանի՞ է արդեօք դեռ ծերունին». Նորա պատասխանեցին.
«Մեր ծերունի ծնողը, քո ծառան, առողջ է»: Երբ Բենիամինին
տեսաւ Յովսէփ հարցրեց. «սո՞ւ է ձեր փոքր եղբայրը, որի վերայ
դուք ինձ ասացիք:—Աստուած օրհնէ քեզ որդեակ» ասաց նա
երեխային և շուտ հեռացաւ, որ թագցնէ իր արտասուքը: Նո-
րա սիրտը վառվում էր իր փոքր եղբօր սիրով: Արտասուքն
աղբիւրի պէս վազում էին աչքերից, նա գնաց իր ներքին սե-
նեակն և այն տեղ փակված լաց էր լինում:

Երեսը լուանալից յետո, Յովսէփ դարձաւ իր եղբայրների մօտ
և աշխատելով պահել իր արտասուքը, ասաց. «երեք կերա-
կուր»: Եղբայրներուն նստացրին սեղան աստղութեան կարգով.
նորա ամենից ցած: Նորա մէկ մէկու վրայ նայելով, զարմա-
նում էին և չէին կարողանում հասկանալ, ԹԷ արտեղից այդ-
պէս լաւ յայտնի են նրանց իրենց ծագիքը: Իսկ ինքը Յովսէփ
ԹԷև միասին նոցա հետ էր ուտում միայն առանձին սեղանի
վերայ: Իր հարազատ եղբօր Բենիամինի, իր մօր Հռաքէլի որ-
դուն, նա աւելի սիրտիւ էր տալիս. ամեն խմիչքներից և կե-
րակուրներից Նրան հինգ անգամ աւելի էին տալիս քան ԹԷ
ուրիշներին: Ամենը կերան և խմեցին առատութեամբ:

ԴԼՈՒԽ ԻԹ.

Յովսէփ յայտնվում է իր եղբայրներին:

Յովսէփ էլի մի անգամ կամենում էր փորձել իր եղբայրնե-

բուն. նա հրամայեց իր հազարապետին, որ լքցնէ նոցա պարկերը ցորենով, ու դնէ նոցա մէջ ցորենի համար բերած փողերն էլ. իսկ Բենիամինի պարկի մէջ հրամայեց դնել իր արծաթի սկիհն էլ։ Հազարապետը կատարեց Յովսէփի հրամանը և միւս օրը Յակովբի որդիք ճանապարհ ընկան դէպի հայրենիք։

Ճամբու կէսօրացան նոքա քաղաքից դուրս գնալ, Յովսէփ կանչեց հազարապետին և ասաց. «շտապիր, հասիր այն օտարթականներին ասա նրանց, «դուք չարութիւն էք հատուցանում բարութեան փոխանակ, դուք գողացել էք այն սկիհը, որից միշտ իմ տէրս խմում է»։

Հազարապետը ամէն բան այնպէս կատարեց, ինչպէս իրեն հրամայած էր։ «Այս ի՞նչ է նշանակում. ասացին Յովսէփի եղբայրներն, ի՞նչպէս կարելի է մտածել, որ մենք այդպիսի չար գործքի ընդունակ լինինք. քո միտ է, որ մենք Քանանացւոց երկրից յետ բերինք պարկերում գտնված փողերը, մի թէ մենք կ'գողանայինք քո տիրոջդ տնից արծաթի սկիհ. ում մօտ կը գտնայինն թող նա ապանի, իսկ ոչ ինքներս լինինք քո տիրոջդ ստրուկները»։ Նոքա իջնելի բեռները վեր բերին, առան պարկերը և բաց արին։ Հազարապետը ինքը նայում էր պարկերը, ամենից մեծից սկսելով և երբ կարգը հասաւ փոքրին, սկիհը գտնվեցաւ Բենիամինի պարկում։ Անպատմելի տրտունջից Յովսէփի եղբայրները պատառեցին իրենց շորերը։ Պարկերը կրկին էշերի վերայ բարձած, նոքա էլի յետ դարձան քաղաք։ Ամենքը գնացին Յովսէփի մօտ. իսկ Յուդան նորա առաջն ընկնելով սկսաւ շատ լաց լինիլ։ «Այս ի՞նչ արիք», ասաց Յովսէփ, մի թէ կարծում էիր, որ ինձ կ'խաբէք»։ «Ո՜հ, ազատեցէք Յուդան, ի՞նչ ասենք մեզ արդարացնելու համար. Աստուած պատժում է մեզ մեր վաղուց արած չարութեան համար. ահա՛ նա, ում մօտ որ գտնվեցաւ սկիհը, մենք ամենքս ծառայ ենք քեզ Ճառայ»։—«Չէ՛», պատասխանեց Յովսէփ, այդ անօգուտ նուիրին կ'լիներ, ես չեմ ուզում, որ անմեղները նեղութիւն քաշեն յանցաւորի համար։ Ում մօտ գտնվեցաւ իմ սկիհս, նա միայն կ'լինի իմ ծառայ. իսկ դուք յետ դարձէք խաղաղութեամբ ձեր հօր մօտ։

Յուդան մօտեցաւ Յովսէփին և ասաց. Տէր իմ, առաջ լինէ հրամայիր քեզ մի քանի խօսք ասելու, մի բարկանար հասարակ ծառուիս վերայ, որով ես համարձակվում եմ խօսել քեզ հետ։ որ առաջին մարդն ես թագաւորից յետոյ։ Դու միանգամ հարցրիր մեզ կենդանի է արդեօք մեր Ծնողը և ունինք ուրիշ եղբայր էլ։ Այն ժամանակ մենք պատասխանեցինք, որ մեր հայրը կենդանի է և թէ մենք ունենք էլ մի փոքր եղբայր, որ մեր հօր համար աշխարհիս վերայ ամէն բանից առաւել թանգագին է։ Դու հրամայեցիր մեզ, որ բերենք նրան. բայց մենք պատասխանեցինք, թէ մեր հայրը կ'մեռնի, եթէ բաժանվի իր սիրելի որդուից։ «Եթէ դուք չէք բերիլ ձեր փոքր եղբօրը, դուք էլ իմ երեսս, չպէտք է, տեսնէք» ասացիր դու։ Մենք այս ամենը յայտնեցինք մեր Ծնողին և երբ նա երկարագանգամ կամենում էր զրկել մեզ նպիտակ. մենք ասացինք նրան, որ մենք չենք համարձակվիլ գալ այս տեղ առանց մեր փոքր եղբօր։ Այն ժամանակ մեր հայրը ասաց մեզ, «դուք գիտէք, որ ես իմ սիրելի կնոջիցս՝ Հռաքէլից միայն երկու որդի ունեցայ. մինը անից գալս ակռա և դուք ինձ ասացիք, որ վայրենի գազանները պատառեցին նրան և ես այն ժամանակից ի վեր նրան չեմ տեսած։ Եթէ դուք կ'տանէք Հռաքէլի միւս որդուն էլ և նորա հետ էլ կ'պատահի մի անբաղդութիւն, ես կ'մեռնեմ տրտմութիւնից»։ Ուրեմն եթէ մենք գառնանք տէրտառանց երեխային, մեր հայրը, որ իր կեանքից աւելի սիրում է նրան, կ'մեռնի ցաւից։ Ես նրան իմ ձեռս եմ առել, ես յանձնառու եղայ, որ կ'պահպանեմ նրան, ես ասացի Ծնողիս, որ

ես իմ կեանքս կ'տամ երեխայի համար. ուրեմն թող ես մնամ քեզ ծառայ. բայց նրան բաց թող գնալ տուն եղբայրներիս հետ: Ի՞նչպէս ես պէտք է երևիմ ծնողիս աչքին, եթէ երեխան հետս չլինի. ես չեմ կարող տեսնել նորա արտմութիւնը:

Այժմ տեսաւ Յովսէփ, որ իր եղբայրները ուղղվել են. էլ չկարողանալով աւելի անյայտ մնալ, հրամայեց ամեն իրեն պատող եգիպտացիներին դուրս գնալ և երբ ինքը մնաց եղբայրների հետ բարձր ձայնով սկսաւ լալ և ասաց. «ես Յովսէփն եմ. կենդանի՞ է արդեօք դեռ մեր հայրը»:—Եղբայրները վախից ձեացին անշարժ և չէին կարողանում մի խօսք էլ ասել:

Յովսէփը կամենալով քաջալերել իր եղբայրներուն ասաց. «մօտեցէ՛ք ինձ, ես ձեր եղբայր Յովսէփն եմ, նա, որին դուք ծախեցիք: Աստուած ընտրեաւ ինձ այս տեղ էլի ձեր լաւութեան համար: Անցան սովի երկու տարիներն և անպտղութիւնը դեռ կ'շարունակվի հինգ տարի: Բոլոր այս ժամանակը ոչ կ'ցանեն և ոչ կ'հնձեն. ուրեմն Աստուած ղրկեց ինձ այստեղ նորա համար, որ դուք միջոց ունենաք կերակրվելու, որ դուք ինձ-մով ազատվիք սովի մահից: Ես ոչ թէ ձեր կամքով, այլ Աստուծոյ ղօրութեամբ եմ ես այստեղ: Աստուած շինեց ինձ երկրորդ մարդ Փարաւոնից յետո, հազարապետան նորա տան իշխան բոլոր եգիպտոսի վերայ: Շուտով յետ դարձէ՛ք մեր հօր մօտ և յայտնէցէ՛ք նրան, որ Յովսէփը, նորա որդին, հրամայեց նրան ասել. «թէ Աստուած իրեն դրաւ իշխան բոլոր եգիպտոսի երկրի վերայ, առանց ուշանալու թող գայ ինձ մօտ. նա կ'բնակի եգիպտոսի ամենից լաւ տեղում. կ'լինի ինձ մօտիկ իր որդիքներով, թոռներով և բոլոր իր սատուածներով: Ես կ'հոգամ նորա վերայ և ինչ որ նրան պատկանում է, կ'ներակրեմ ձեզ ամենքիդ, որովհետև սովը էլ հինգ տարի կ'տևէ երկրիս երեսին:—Այժմ դուք տեսնում է՛ք, որ ես խօսում եմ ձեզ հետ ձեր լեզուով առանց թարգմանի: Գնացէ՛ք յայտնեցէ՛ք իմ

հօրս իմ փառքս և պատիւս եգիպտոսի մէջ, պատմեցէ՛ք նրան ամեն բան, ինչըր տեսաք, շտապեցէ՛ք յետ դարձէ՛ք ինձ մօտ շուտով և բերէ՛ք հետերդ իմ հօրս:

Նա գրկեց իր եղբօր Բենիամինին, համբուրեց և լաց եղաւ նորա վերայ, նմանապէս էլ Բենիամինը լալիս էր նորա գրկում: Յետոյ կարգով գրկեց միւս եղբայրներուն էլ և թափում էր արտասուք:

Գլուխ Ի.

Յակովբի եգիպտոս տեղափոխիլը:

Փարաւոնը շատ ուրախացաւ, երբ լսեց, որ Յովսէփի եղբայրները եկել են: Նա տուեց իր կառքերից մի քանիսը, որ բերեն Յովսէփի հօր, եղբայրներուն, նոցա կանանց և որդուց: Յովսէփը ամեն եղբայրներին ընծայեց մի ձեռք շոր, իսկ Բենիամինին տուեց հինգ ձեռք շոր և երեք հարիւր արծաթի դահեկան: Իր հօրն էլ ղրկեց տասն էշ բարձած եգիպտոսի լաւ բերքերով և տասն էլ մատակ էշեր բարձած ցորենով և ճանապարհի պանապան պաշարներով: Իր եղբայրներուն ճանապարհ դցելիս ասաց. «ճանապարհին չվիճէ՛ք մէկ մէկու հետ»:

Բայց ծերունի հայրն այս միջոցին տրտմութեամբ և անհանգստութեամբ սպասում էր իր որդուց դառնալուն: Յանկարծ յայտնվեցան նորա առաջ բոլոր որդիքը, Բենիամինն էլ նոցա հետ և ասացին. «քո որդիդ Յովսէփը կենդանի է. նա է այն հզօր իշխանը եգիպտոսի, որի վերայ մենք քեզ պատմեցինք»: Ծերունին չէր կամենում նրանց հաւատալ: Այն ժամանակ նորա պատմեցին Յովսէփի բոլոր պատմութիւնն և կրկնեցին աւելն նորա խօսքերը: Յակոբ, երբ տեսաւ Փարաւոնի ղրկած կառքերն և հարուստ ընծաները, հաւատաց ու կարծես թէ քնից զարթնելով աղաղակեց. «իմ որդիս Յովսէփը կենդանի է, կ'երթամ կ'տեսնեմ նրան մեռնելից առաջ»:

Յակովբ առանց ուշանալոյ պատրաստվեցաւ ճանապարհ ընկնելու։ Նորա որդիքը նստեցրին կրունկ որդոյ և կանանց Փարաւոնի կառքերի վերայ, առան հեռները բոլոր իրենց խաշ-ներն և սուացուածներն և գնացին Եգիպտոս։ Ողջը միասին էին հօթանասուն հինգ հոգի։ Քանանացւոց երկրի սահմանին վերայ Յակովբ Աստուծոյ մատաղ բերաւ։ Նա էր վհատ թողնել երկիրն, որ խոստացած էր իրեն և իր սաւակներին Աստուծմէ։ Աստուած ասաց նրան գիշերվան տեսիլքում. «Ես եմ քո հօրդ Աստուածը, գնա աներկիւղ Եգիպտացւոց երկիրը. ես քեզ հետ կ'լինիմ։ Այն տեղ քո ցեղը կ'դառնայ մեծ ազգ և ես կ'դարձնեմ նրան քեզ և քո նախնիներիդ խոստացած երկիրը։ Յովսէփ կ'ծածկէ քո աչքերդ»։ Այս տեսիլը հանգստացրեց բա-լեպաշա Ծերունիին. որ աներկիւղ շարունակեց իր ճանապար-հորդութիւնը դէպի Եգիպտոս։ Յուդան առաջ գնաց, որ իմաց տայ Յակովբի գալուստը։ Յովսէփ նստած իր կառքն և շտապեց առաջ դուրս գալու իր հօրը։ Երբ նրան տեսաւ, կառքից ի-ջաւ, ընկաւ նորա գիրկը և լաց էր լինում երկար ժամանակ։ Ծերունին ասաց. «այժմ ես հանգիստ կ'մեռնիմ. ես տեսայ քո երեսդ, դու դեռ կենդանի ես»։

Յովսէփ իմաց տուաւ Փարաւոնին իր հօր գալուստը և Փա-րաւոնը ասաց. «թող Եգիպտոսի երկիրը բաց է քո հօրդ, եղ բայրներիդ համար, ընտրիր նոցա բնակութեան համար իմ թագաւորութեանս ամենից լաւ տեղը»։ Յովսէփ ինքը տարաւ իր հօր Փարաւոնին մօտ։ Բարեպաշտ Ծերունին օրհնեց Փա-րաւոնին, որ հարցրեց նրան. «քանի՞ տարեկան է. Յակովբ պատասխանեց. «հարիւր երեսուն տարեկան եմ»։ Սակաւ եղան և տխուր իմ օրերս. նոքա ամենևին չեն հասասրվում իմ նախնիներիս պանդխտութեան օրերին»։ Նա միւսանգամ օր-հնեց Փարաւոնին և շարժած օրով դուրս եկաւ։ Յովսէփ իր ընտանիքի բնակութեան համար, Փարաւոնի հրամանքով, ընտ-

արեց Եգիպտոսի ամենից լաւ երկիրը, այն է Գեսեմ։ Նա հոգաց էր քաշում իր ազգականների վերայ և ամեն նոցա հարկա-տուութիւնները լնում էր։

ԴԼՈՒԽ Լ.Ա.

Յակովբի և Յովսէփի մահը։

Յակովբը հասաւ խորին ծերութեան։ Նա հարիւր քառա-սուն հօթը տարեկան էր, երբ զգաց իր մահուան մօտենալը և կոչեց Յովսէփի եռանից, որ եկաւ նորա մօտ շուտով և բերաւ հետը իր երկու որդոյ Մանասէին և Եփրէմին, որոնք ծնան նորա Ասանէթ կնոջիցը։ Այս Սրեգ քաղաքի քրմապետի աղջիկն էր։ Յակովբ իր զօրութիւնը հաւաքելով նստաւ մահճի վերայ և ասաց. «ո՞վ են սոքա, տերեխայք, որով Աստուած օրհնեց ինձ»։ պատասխանեց Յովսէփ. «Մօտեցուր զրանց ինձ», ասաց Յակովբ. «ես կամենում եմ զրանց օրհնել»։ Յովսէփը մօտեցրեց նրանցը մեռնող Ծերունիի մօտ, որ որդեգրեց նրանց, գրկեց, համբուրեց և յետոյ ասաց Յովսէփին. «ես կարծում էի, թէ քեզ էլ չեմ տեսնիլ երբէք, բայց Աստուած բերաւ ինձ, որ ես տեսնեմ քեզ և քո որդուդը»։ Վերջապէս օրհնելով Յովսէփի որդոց իր ձեռքերը խաչի պէս նոցա գլխին գրած, ասաց բա-լեպաշա Ծերունին. «Աստուածը, որին հաճելի էին իմ հայրե-րըս Աբրահամ և Իսահակ, և որ կերակրեց ինձ երեխայութիւ-նիցս մինչև այժմ. հրեշտակը, որ ազատեց ինձ չարից, թող օրհնեն այս երեխաներուն»։ Յետոյ, դառնալով դէպի Յովսէփ, շարունակեց. «ես մեռնում եմ. բայց Աստուած միշտ կ'լինի ձեզ հետ, նա կ'դարձնէ ձեզ ձեր հայրերի երկիրը։ Քեզ սուանձնա-պէս, բացի միւս ժառանգութիւնից, տալիս եմ ես Սիկիմին էլ»։

Յակովբ հրամայեց բոլոր որդոցը, որ հաւաքվին իր մահճի չորս կողմում. օրհնեց նրանց ամենուն, իսկ Յուդային ասաց

յետագայ մարգարէական խօսքերը. ով «Ցուդա, քեզ թող օրհնեն եղբայրներդ, քեզ երկրպագութիւն տան քո հօրդ որդիքը, թագաւորները և զօրավարները կ'լինեն քո յետագաներդ, մինչև կ'գայ խաղաղարարը՝ ամեն ազգերի ցոյսը»:

Յետոյ ասաց նա ամեն որդոց. «Թաղեցէ՛ք ինձ Քանանացւոց երկրում այրումը, ուր թաղած են Աբրահամ, Սառան, Իսահակ և Ռեբեկան, այնտեղ ուր դրի ես Լիայի մարմինը»: Այս ասաց, պարկեցաւ իր մահճին վերայ և վախճանեցաւ: Այսպէս խաղաղ և հանգիստ մեռնում է նա, ով վարում է բարեպաշտ կեանք:

Յովհէփը Փարաւոնի հրամանով, բոլոր եղբայրներով, Եգիպտացի մեծամեծներով և բոլոր իր ընտանիքով տարաւ Յակովբի մարմինը Քանանացւոց երկիր և թաղեց այրում, որ Աբրահամ գնեց Սառային թաղելու համար: Բայց երբ Եգիպտոս դարձան, եղբայրները վախենալով, որ նա գուցէ վրէժը հանել ուզենայ իրանցից, ասացին նրան. «մենք շատ յանցաւոր ենք քո առաջդ. բայց մեր հայրը մեռնելիս պատուիրեց, որ դու մեզ ներես, վրէժ մի՛ հանիր մեզնից. մենք քո ծառաներդ ենք» — «Եւ ես Աստուծոյ ծառան եմ». պատասխանեց Յովսէփ: «Աստուած բարի արաւ, թէ ինձ համար և թէ ձեզ համար այն չարութիւնը. որ դուք ինձ կամենում էիք անել: Հանգիստ եղէ՛ք. ես միշտ կ'լինեմ ձեր պաշտպանը»:

Յովսէփ հարիւր տասն տարի ապրեցաւ. նա տեսաւ իր որդոց, թոռներուն և թոռների որդոցը: Իր մեռնելից առաջ ասաց նա իր եղբայրներին. «այժմ ես մեռնում եմ: բայց Աստուած կ'դարձնէ ձեզ մեր հայրերին՝ Աբրահամին, Իսահակին և Յակովբին խոստացած երկիրը. երդուեցի՛ք ինձ, որ երբ կ'պատահի այս տեղափոխութիւնը, դուք կ'պատուիրէ՛ք ձեր որդոց և նոցա յետագաներին, որ տանեն իմ մարմինս էլ իրանց հետ: Նոքա երդուեցին տուին և նա մեռաւ կատարեալ

հաւատով և յուսով: Նորա բարեպաշտ կեանքը ոչ մի անօրէնութեան բիծ չունեցաւ: Նորա մահը հանգիստ էր շատ: Ամենը նորա վերայ լաց եղան օրանց: Նորա մարմինը դրին դագաղի մէջ և թաղեցին Եգիպտոսում:

ԳԼՈՒԽ ԼԲ.

Երգար Յովբը:

Ըստ ուաջաշնչի մէջ նկարագրած է մի բարեպաշտ մարդու կեանք, որ բնակվում էր Արաբիայի մէջ Աւսիդ (Աւստեր) աշխարհումը, դէռ Մովսէսից առաջ: Նորա անունն էր Յովբ. սա էր անարատ, արդար, բարեպաշտ և ամեն անօրէնութիւններից հեռացած մարդ: Երկիրը, ուր նա բնակվում էր, գեղեցիկ էր և պտղաբեր. նա տէր էր բազմաթիւ խաշների, ունէր արծաթ ու ոսկի շատ. ամենը պատուում էին նրան և նորա բաղդը կատարեալ էր մանաւանդ նորա համար, որ այս ամեն բանի հետ միասին ունէր գեղեցիկ և բազմաթիւ ընտանիք էլ: Նա ունէր եօթն որդիք, երեք աղջիկներ, որոնք էին նորա ուրախութիւնը: Ամեն բան միացել էր, որ Յովբին բաղդաւորացնէ: Սորա օրինակովը Աստուած կամեցաւ ցոյց տալ, որ ճշմարիտ բարեպաշտ մարդը չէ փոխվել թէ բաղդաւորութեան և թէ անբաղդութեան մէջ: Սատանան բամբասեց Յովբին Աստուծոյ առաջ ասելով թէ այս բարեպաշտը միայն այն պատճառով այնպէս հաւատարիմ ծառայում է Նրան, որ նա առատաձեռն տուել է Յովբին ամեն երկրաւոր բարիքները: Աստուած Յովբի ստացուածների իշխանութիւը տուեց սատանային:

Նորա որդիքը, որոնք շատ սիրով կենում էին միմեանց հետ, շուտ շուտ խնճոյքներ էին պատրաստում մէկ մէկու համար, միայն Յովբը ինքը իսկի մասնակից չէր լինում այս ուրախու-

թունեերին, այլ հեռանալով նրանցից աղօթք էր անում Աստծու իր որդոյ համար։ Մի անգամ երբ երիտասարդները խընձոյք պատրաստել էին, ուրախանում էին և Յովբը աղօթք էր անում, ծառաներից մեկը վազելով եկաւ ասելու, որ Արաբացի աւազակները փախցրին բոլոր նորա եղներուն և իշերուն։ Նրանից յետ եկաւ երկրորդ ծառան և համբաւ բերեց, թէ երկնքից կրակ ընկաւ և այրեց բոլոր ոչխարներուն և հովիւներուն. յետոյ երրորդը եկաւ ու համբաւ բերեց, թէ ասպատակաւորներ եկան, յափշտակեցին բոլոր ուղտերուն և հովիւներուն սպանեցին. վերջապէս չորրորդը եկաւ և ասաց, որ անապատից մեծ հողմ փչեց և քանդեց տունը, ուր նորա որդիքն և աղջիկները ուրախանում էին և մեռան ամենքը։ Յովբ շատ տրտմեցաւ, մանաւանդ այս վերջին համբաւովը։ Նա ամենայնից պատառեց իր շորերը, բայց մտածելով, որ այս ամեն անբաղդութիւնները Աստուծոյ ղրկած են, ասաց նա. Աստուած տուեց ինձ ամենը. Աստուած էլ առաւ, օրհնեալ լինի նորա անունը։

Յովբ աղքատացաւ։ Նա սիրում էր որդոց կորստի վարայ. բայց ներքէ չէր տրտնջում Աստուծոյ վերայ և միայն հաստատ իր բարեպաշտութեան մէջ։ Այս անբաղդութիւններից յետոյ, Աստուած թողից սատանային, որ նորից էլի փորձէ Յովբի համբերութիւնը։ Նորա բոլոր մարմինը ծածկվեցաւ սոսկալի խոցերով, բայց նա համբերութեամբ տանում էր իր ցաւին և օրհնում էր Աստծուն։ Յովբի կնոջը անտանելի էին թվում նորա չարչարանքները, նա խորհուրդ էր տալի, որ լաւ է մեռնի, քան թէ համբերել այդպիսի տանջանքների։ «Մի խօսք ասա Աստուծոյ դէմ. ասաց նա և մեռիր»։ «Դու խօսում ես ինչպէս անմիտ կին», պատասխանեց Յովբ. «եթէ մենք ընդունեցինք Աստուծոյ ձեռքից բարութիւնները, մի՞թէ չպէտք է համբերենք այն չարչարանքներին էլ, որոնք նա ղրկում է մեզ»։

Յովբի բարեկամներն, և ծանօթները, տեսնելով նրան այս դրութեան մէջ, կարծում էին, թայտնի բան է, թէ Աստուած պատժում է նրան, երևի, թաքուն յանցանքների համար։ Անկարելի է, կարծում էին նորա, որ Աստուած, այնքան բարի և արդարադատ գոլով, այդպէս խիստ պատժէ անմեղ մարդուն։ Նորա չէին մտածում, որ Աստուած շատ անգամ փորձում է արդարներուն էլ թշուառութիւններով, որ նոցա առաքինութիւնը առաւել կփայլէ թշուառութիւնների մէջ և վերջապէս կայ աւրիշ աւելի լաւ կեանք, ուր արդարը ստանում է վարձ իր քաջած նեղութիւնների, իր հաստատութեան, որով համբերեց նրանց, և իր առաքինութիւնները կատարելագործելուն համար։ Խիստ բարեկամները յայտնեցին Թշուառ Յովբին իրանց անարդար կասկածները նորա վերայ։ Յովբ, զուրկ մնացած որդիներից, ստացուածքից, առողջութիւնից, տեսաւ, որ կամենում են իրանից խլել մինչև անգամ իր բարի անունն էլ. բայց նորա խղճմտանքը յստակ էր և յոյսը Աստուծոյ վերայ հաստատ։ Նա ասում էր. «կօրչողներուն աղաղում էի, ոխերիս մխիթարում էի, կոյրի համար աչք էի ես, անտէր մարդուն ցուպ, խեղճերին հայր։ Մի և նոյն ժամանակ խաթաղան էի աւազակների և յափշտակողների համար, խլում էի նրանցից ապօրէն ստացը, ջարդում էի մեղաւորների ատամները։ Եթէ ես գնացել եմ մեղքի ճանապարհով, եթէ ես խաբել եմ մեկին, թող ղրկէ Աստուած իմ վերայ ինձ արժանի պատիժ. բայց իմ խղճմտանքս հանգիստ է։ Հարցրել եմ ծառաներս, արդեօք բարի տէր չէի՞ նոցա համար, բայց չէի արդեօք իմ դուռս ճանապարհորդի համար, արդեօք պատրաստ չէի՞ աղքատին օգնելու։ Չէ, իմ յոյսս ես արծաթի և ոսկու վերայ չէի դրած. չէ։ Ես վախենում էի Աստուծմէ, իմ յոյսս նորա վերայ էր»։

Այն ժամանակ անսիրտ բարեկամները, իրենց դատողութիւն-

Ներով աշխատում էին խլել Յովքից նորա միակ մնացած մխիթարութիւնը: Նոքա աշխատում էին նրան այն տեղը հասցնել, որ նա իրեն մեղաւոր կարծէ և այսպէս շատ նեղացնում էին սրտալր մարդուն: Զարչարված ցաւով և իր խիստ բարեկամների գատողութիւններով, Յովը երբեմն երբեմն ցոյց էր տալիս անհամբերութիւն, գանգատւում էր Աստծու իր վիճակի վերայ և մինչև անգամ անիծից իր ծննդեան օրն էլ: Աստուածաշունչը եղաւ միջնորդ Յովքի ու նրան չարչարող բարեկամների մէջ: Աստուածաշունչ յայտնվեցաւ նրանց մրրկում և ամպրում և ասաց, որ Աստուծոյ ճանապարհները անհասանելի են մարդկային մաքին և թէ մարդուս պարտաւորութիւնն է անպայման հպատակել Աստուծոյ կամքին և չդատել նախախնամութեան ճանապարհների վերայ:

Ըստուած վարձատրեց Յովքին կրկնապատիկ ամեն քաշածների համար: Յետ դարձրեց նրան իր հարստութիւնն և առողջութիւնը: Նրան ծնան էլի եօթն որդիք և երեք աղջիկներ: Յովը ապրեցաւ սրանից յետոյ էլի հարիւր եօթանասուն տարի և տեսաւ որդոցը և թոռներուն, մինչև չորրորդ ազգը:

ԳԼՈՒԽ ԻԴ.

(7) Մովսէսի ծնունդն և կրթութիւնը:

Յանանացոց եկրում Աբրահամի ցեղից ոչոք չկար, այն տեղ հանգստանում էին միայն նորա ընտանիքի ոսկրները. իսկ Եգիպտոսում Աբրահամի ցեղը ժամանակով բազմացաւ շատ և հզօր ազգ դարձաւ: Յակովբը կոչվեցաւ Իսրայէլ, ուստի և այն ազգն էլ սոացաւ նորա Իսրայէլ կամ Իսրայէլացիք անունը: Յակովբ տասներկու որդի ունէր և Իսրայէլացոց ազգն էլ տասներկու տոհմեր բաժանվեցաւ, որոնց ամեն մէկը իր ցեղապետի անունովն էր անուանվում:

Յովսէփի ժամանակվան Փարաւոնը վայրից մեռած էր, թագաւորից ուրիշ Փարաւոն, որ չէր իմանում Յովսէփի գործքերը: Օտար ազգը, որ բնակվում էր նորա տէրութեան մէջ, երկիւղալի թուեցաւ նրան, նա վախենում էր, որ Իսրայէլացիք գուցէ միանգամ միանան իր թշնամիների հետ և այս պատճառով, կամենալով նրանց ջնջել կամ թուլացնել, հրամայեց ամեն կերպով նեղել նրանց: Նրանց ամեն ծանր աշխատանքի համար գործածում էին, կերակրում էին վատ, վարվում էին հետերը տարտղարար. բայց չնայելով այս բանին ուրախութեամբ Իսրայէլացոց ազգը շարունակ էլի բազմանում էր: Վերջապէս Փարաւոնը հանեց տարտղի հրաման, որ ամեն Եբրայեցի նորածին արու երեխաներուն սպանեն և գետը գցեն:

Այս ժամանակներում կենում էր մի բարեպաշտ և Աստուածասէր Իսրայէլացի կնիկ, որի մարդը նմանապէս բարեպաշտ էր և Ղևիի ցեղից էր ինքը. այս կինը ծնաւ մէկ գեղեցիկ որդի: Նա ինչպէս որդեսէր մայր շատ սիրում էր նրան և պահում էր մօտը թագուն մինչև երեք ամիս: Էլ չկարողանալով երկար թաքցնել երեխային, նա հիւսեց մի կողով պրօտուից, ծեփեց նրան կպրով, որ ջուրը ներս չմանէ, դրաւ նորա մէջ իր փոքրիկ որդուն և բաց թողեց կողովը ջրի մէջ: Կարելի է, մտածում էր նա, Աստուած գըրկէ մէկին, որ մեղքանայ իր գեղեցիկ երեխային: Իսկ երեխայի քոյրը, փոքր ինչ հեռու կանգնած, նայում էր, թէ ի՞նչ կլինի իր եղբօր հետ:

Թագաւորի աղջիկը իր աղախինների հետ միասին գնաց ջրի ափը լուացվելու: Նա տեսաւ թափի մէջ ծեփած կողովը, հրամայեց իր աղախիններին, որ առնեն այն և բաց անելով տեսաւ նորա մէջ երեխային, որ լաց էր լինում: Շատ մեղքացաւ երեխային. «յայտնի է» ասաց նա, «որ այս Իսրայէլացի մանուկ է»: Երեխայի քոյրը տեսնելով, որ թագաւորի աղջիկը ողորմած է շատ, համարձակեցաւ, մօտեցաւ, նրան և ասաց.

«իշխանուհի. Թէ կ'հրամայես, ես կ'երթամ մի նպոյկլացի կին, որ կ'սնուցանէ երեխային»։ «Բարի է, ասաց Թադաւորի տղեկը. ես քեզ դորա համար կ'վարձատրեմ։

Ինչպիսի ուրախութեամբ, ինչպիսի սրտանց շնորհակալութեամբ բարձրացրեց խիղճ մայրը իր աչքերը դէպ երկինք երբ կրկին տեսաւ իր փոքրիկ երեխային իր գրկում։ Նա կերակրեց նրան և երբ փոքր ինչ մեծացաւ, տարաւ Փարաւոնի աղջկան մօտ, որ կրթեց նրան իր որդուն պէս և անուանեց Մովսէս, որ նշանակում է ջրից հանած։

ԳԼՈՒԽ Լ.

Մովսէսը Յոթորի մօտ։

Մովսէսը, երբ մեծացաւ, էր հզօր մարմնով և հոգով և տվրած էր բոլոր իմաստութիւնն Եգիպտացւոց։ Բայց չնայելով առատութեան բազդաւորութեան, որով նա պատած էր, նա չէր մոռանում իր նեղացած եղբայրներուն Իսրայէլացիներուն։ Նա չէր կամենում թադաւորի որդի անուանվիլ. նա աւելի լաւ էր համարում Աստուծոյ ժողովրդի աղքատութեանը մասնակից լինել քան թէ վայելել մեղաւոր քաղցրութիւնները Փարաւոնի տան մէջ։ Նա կատարեալ մէջ չմոռացաւ ճշմարիտ Աստուծն և բոլորովին կարևորից էր նեղացած Իսրայէլացիների խնդիր վիճակին։

Մի անգամ, երբ այցելութիւն արաւ իր հզբարեներին, տեսաւ, որ մի Եգիպտացի անողորմաբար ծեծում էր Իսրայէլացին։ Մովսէս ամեն կողմը նայեցաւ, տեսաւ, որ ոչ ոք չկայ։ Խոկաց իր սպանութեան պատճառը կեցաւ և սպանեց Եգիպտացին ու ծածկեց նորա մարմինը աւազի տակ, կարծելով, թէ ոչ ոք չէ իմանալ նորա այս մեղսագործութիւնը. բայց Փարաւոնը լսեցաւ և Մովսէսը դուրս էր իր սկզբի համար իր հեռանքը կորցներ, եթէ Եգիպտոսից չփախչէր։

Եգիպտոսից փախչելով գնաց Մադիամի երկիրը և ճանապարհից դադրած լինելով, նստաւ մի ջրհորի մօտ։ Այս տեղ մօտ բնակում էր մի բարեպաշտ քահանայ, որ Յոթրն տղջիկ ունէր, նորա արածում էին իրենց հօր խաշները։ Երբ այս տղջիկները ջուր էին հանում, որ ջրին իրենց ոչխարներուն, եկան ջրհորի մօտ կողմնակ հովիւներ, որոնք ուզում էին տղջիկներուն դուրս անել, որ առաջ իրենց ոչխարներուն խմեցնեն։ Մովսէս, որ միշտ թոյլերին և նեղացածներին պաշտպան նում էր, հովիւներուն չթողեց խստութիւն անել և օգնեց տղջիկներին իրենց խաշները ջրելու։

Էյն ժամանակ Յոթորի աղջիկներն ոչխարներուն տուն քշեցին։ Երբ Հայրը նրանց տեսաւ, հարցրեց. «Ինչու համար այսօր այսպէս շուտ դարձաք». Մի Եգիպտոսից եկած անծանօթ մարդ օգնեց մեզ ջուր հանելու ու ոչխարներուն ջրելու». պատասխանեցին աղջիկները։ Հայրը, շատ բարեկամ մնաց օտարականի այսպիսի գործքով և հարցրեց աղջիկներուն. «Որ է այն օտարականը, ինչու չկանչեցիք նրան մեր տուն. դնացէք շուտով և հրաւիրեցէք նրան մեզ մօտ ընթրելիքի»։ Մովսէս գնաց Յոթորի մօտ և որովհետև լաւ մարդիկը շուտով բարեկամանում են մէկ մէկու հետ, Մովսէս շուտ բարեկամացաւ Յոթորի հետ, որ նրան կին տուեց իր աղջկանը Սեպփովրային։

ԳԼՈՒԽ ԼԵ.

Ընկէզ Մորենին։

Մովսէս արածում էր իր անդրանիկ Յոթորի խաշները։ Մովսէս յաճախ մտածում էր իր եղբայրների Իսրայէլացիների վերա և ալօթք էր անում Աստծու, որ ազատէ նրանց Եգիպտացւոց ծառայութիւնից։

Մի անգամ Քորեբ լեռան տակ ոչխարները արածելիս տեսաւ Մովսէս մի մորենի, որ այս տեղերում դուրս է գալիս, պատած կրակով։ Կրակը վառվում էր. բայց թուփը անվնաս էր։ Մովսէս մօտացաւ առաւել, որ լաւ տեսնէ այս հրաշալի երևոյթը։ Յանկարծ թփի մէջից նա լսեց ձայն, որ կանչում էր. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս».—«Ես եմ, Տէր, ի՞նչ ես». պատասխանեց Մովսէսը։ «Ես եմ քո հայրերի Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի և Յակովբի Աստուածը». ասաց ձայնը։

Մովսէս, լի երախտագիտութեամբ և յարգութեամբ ծածկեց իր երեսը։ Աստուած շարունակեց. «Ես տեսնում եմ ժողովրդեանս թշուառութիւնն Եգիպտոսի մէջ. լսում եմ նորա աղաղակը, և հասաւ ինձ նորա աղօթքը. Ես կամենում եմ ազատել նրանց Եգիպտացւոց ձեռքից, և մոցնել գեղեցիկ, ընդարձակ երկիրը, ուր բղխում է մեղը և կաթ, այն է Քանանացւոց երկիրը։ Ես ղրկում եմ քեզ Փարաւոնի մօտ, որ հանես իմ ժողովուրդս Եգիպտոսից»։ Մովսէս խոնարհութեամբ ասաց. «Տէր Աստուած. ես ո՞վ եմ, որ համարձակիմ Թագաւորի առաջը գուրս գալ և Իսրայէլացիներուն հանել Եգիպտոսից։ Ես Իսրայէլացիները էլ չեն լսիլ ինձ և չեն հաւատալ, որ ինձ Աստուած յայտնվեցաւ։ Աստուած ասաց. «Այդ ի՞նչ է ձեռումդ».—«գաւազան». պատասխանեց Մովսէս։ «Գցիր դրան գետին վերայ». դցեց գաւազանը գետին վերայ և գաւազանը դարձաւ օձ։ Մովսէս վախեցաւ և կամենում էր փախչել. բայց Աստուած ասաց նրան. «ձդիր ձեռքդ և վեր առ օձին». Մովսէս ձգեց ձեռը, վեր առաւ օձին և նա կրկին դարձաւ գաւազան։ Աստուած կրկին ասաց նրան. «դիր ձեռքդ ծոցդ։ Մովսէս դրաւ իր ձեռքը ծոցը, ու երբ հանեց տեսաւ, որ ձեռը ծածկած է բորով. բայց երբ երկրորդ անգամ տարաւ իրան ծոցը, Աստուծոյ հրամանով հանեց բոլորովին առողջ։ «Այս հրաշքները, ասաց Աստուած, կ'հաւատացնեն Իսրայէլացիներուն, որ նորա

հայրերի Աստուածը յայտնվել է քեզ։ «Տէր Աստուած», ասաց Մովսէս. «ես ծանրաբեռնու եմ, դժուարութեամբ եմ արտասանում բառերը»։ Աստուած ասաց. «Ո՞վ տուեց մարդուն բերան. Ո՞վ մարդուս կոյր կամ ականի շինում. ոչ արդեօք, Ես գնա, Ես կլինիմ քո բերանը. Ես կ'սովորցնեմ, ինչ որ պէտք է խօսես»։ Մովսէսը, որ դեռ էլի իրան ընդունակ չէր համարում այս մեծ գործին, ասաց. «Տէր Աստուած, խնդրում եմ Քեզ, ղրկիր մի ուրիշին»։ Աստուած ասաց նրան. «քո եղբայրդ Ահարոնը ճարտարախօս է, նա կհանդիպի քեզ ուրախութեամբ. դու կ'դրնես իմ պատգամները նորա բերանը, նա քո տեղ կ'խօսի ժողովրդի հետ»։ Մովսէս հպատակեցաւ։ Նա գնաց Յոթորի մօտ և խնդրեց, որ իրեն թոյլ Եգիպտոս երթալու։ Յոթորը ասաց. «գնա խաղաղութեամբ»։ Մովսէս նստացրեց իշերի վերայ իր կնոջ, երկու որդոցը, առաւ իր գաւազանն և ճանապարհ ընկաւ։ Աստուած ասաց Ահարոնին. «գնա անապատը քո եղբօրդ՝ Մովսէսի առաջ»։ Ահարոն շուտ գնաց և գրկելով հարբուրեց նրան, որտանց ուրախացած։ Մովսէս պատմեց նրան. ինչու համար Աստուած իրեն ղրկեց և երկուսը միասին գնացին Իսրայէլացիներին մօտ։ Ահարոն յայտնեց Աստուծոյ հրամանն և Մովսէս արաւ հրաշքները, որոնք Աստուած նրան ցոյց տուեց։ Բոլոր ազգը հաւատաց և երկիւղածութեամբ երկրպագեց Աստծու։

Դ.ԼՈՒԽ Ի.Ջ.

Եգիպտոսի տասն պատիժները։

Ըմն ժամանակ գլուխ բոլոր աշխարհքը ընկղմած էր կռապաշտութեան և ամեն կերպի անօրինապաշտութեան մէջ։ Եգիպտոսը այս անօրինապաշտութիւնների աղբիւրն էր։ Եգիպտացիները, ոչ միայն երկնային լուսաւորներին էին երկրպագութիւն տալիս, այլ կենդանիներին էլ անգամ։ Նոքա պաշտում

էին կուռքեր, և կարծում էին, թէ սոքա լաւ են իրենց աղօթքները և կարող են օգնել իրենց: Աստծուն հաճոյ թուեցաւ Իրան յայտնել հրաշալի գիպուածներում մարդոցը, որ սոքա ճանաչեն վերջապէս ճշմարիտ մի Աստծուն, որ է երկնքի և երկրի Արարիչը»: Եգիպտացիները ինձ կ'ճանաչեն Աստուած ամենաղօր, ասայ Նա Մովսէսին, կ'ձգեմ իմ ձեռս և կ'հանեմ նրանցից Իսրայէլացիներուն:

Երկու ծերունիները՝ Մովսէս ութսուն տարեկան և Ահարոն ութսուն երեք տարեկան, յայտնվեցան Փարաւոնի առաջ: Նաքա յայտնեցին նրան Աստուծոյ կամքը: Աստուած ասաց», կրկնեցին նոքա», թող իմ ժողովուրդս: Փարաւոնը, հպարտութեամբ վիքած, պատասխանեց». Ո՞վ է այն Աստուածը. որին կամենում էք, որ ես հպատակիմ. ես չեմ ճանաչում ձեր Աստծուն և ձեր ազգին էլ չեմ թողնիլ:

Մովսէս, կամենալով համոզել Փարաւոնին իր նշանակութեան ճշմարտութիւնում, դցեց նորա առաջ իր գաւազանն, որ օձ դարձաւ. նա ցոյց տուեց իր բորոտ ձեռքը, որ կրկին բժշկեց. Եգիպտացի քուրմերն էլ արին մի և նոյն. միայն Մովսէսի օձը կերաւ Եգիպտացիների օձերուն: Փարաւոնը չհամոզվեցաւ այս հրաշքներով և շարունակեց չարչարել Իսրայէլացիներուն առաջվանից աւելի:

Մովսէսը Փարաւոնի առջև խփեց գաւազանով Նեղոս գետի ջրին, և ջրերը ոչ միայն Նեղոս գետում, այլ և Եգիպտոսի ամեն ջրհորներում և լճերում դարձան արիւն. ոչ ոք չէր կարողանում խմել և բոլոր ձկները սատակեցան: Բայց Փարաւոնի սիրտը չհակվեցաւ:

Մովսէս ձգեց իր գաւազանը Եգիպտոսի գետի, աղբիւրների և լճերի վերայ և այս ջրերից դուրս եկան անթիւ բազմութեամբ գորտեր, որոնք ծածկեցին բոլոր երկիրը. թագաւորի պալատը, տների տանիքները, անկողինները, շտեմարանները, ամեն

բան լիք էր գորտերով: Փարաւոնը խոստացաւ թողնել Իսրայէլացիներուն. բայց հազիւ գորտերը Մովսէսի նշանով ջնջվեցան թէ ոչ, Փարաւոնի սիրտը կրկին խստացաւ:

Մովսէս խփեց գաւազանով գետնին և բոլոր աւազը ու փոշին դարձան մուն (մոծակ) բայի Գեսեմ երկրից. ուր բնակում էին Իսրայէլացիները. բոլոր Եգիպտոսի մէջ մուները չարչարում էր մարդոց և այլ կենդանիներուն. բայց հպարտ Փարաւոնը էր փափկում, Եգիպտացւոց քուրմերն էլ աշխատում էին մի և նոյնը հանել. բայց չկարողացան և ստիպվեցան ասել Փարաւոնին. «այդ Աստուծոյ ձեռն է»:

Յետոյ շանաձանձը լեցրեց արքունի պալատն և Փարաւոնի ծառաների տները դաշտերն և ամեն բան, ինչ որ կար դաշտերումը: Ան ժամանակ Փարաւոն խոստացաւ Աստուծոյ ժողովրդին թողնել. բայց երբ Եգիպտոսը ազատվեցաւ այս պատժից էլ թագաւորն էլի չկատարեց իր խոստումն:

Սարսափելի մահ հրեւեցաւ կենդանիների մէջ բոլոր Եգիպտոսում բացի Գեսեմի երկրից: Ուղտերն, էշերն, եզներն, ոչխարներն, ամենը մեռնում էին. բայց Փարաւոնը միում էր էլի անհամոզելի:

Մովսէս վեր առաւ ձեռին մխիր և ցանեց այն օդում Փարաւոնի առջև: Կեղը և խաղաւարտը ծածկեցին բոլոր Եգիպտացիներուն և բոլոր նոցա միացած կենդանիներուն. բայց Փարաւոնն այս էլ բանի տեղ չդրաւ:

Մովսէս բարձրացրեց իր գաւազան դէպի երկինք և ահա վերկացաւ սաստիկ մրրիկ, ինչպիսի երբէք չէր եղած Եգիպտոսում: գոռում էր սաստիկ գոռոցքը. անընդհատ փայլում էր փայլակն, որ լուսաւորում էր Թանձր ամպերով ծածկած երկինքը եկաւ այնպիսի սաստիկ կարկուտ, որ դաշտերի բոլոր բոյսերն և ծառերը ջարդվեցան և շատ մարդիկ, որոնք անից դուրս էին, կոտորվեցան: Փարաւոնը աղաղակեց. «ես մեղանչե-

ցի։ արդար է Աստուածը որ պատժում է ինձ և իմ ազգիս, ոչօթք արէք, որ այս սարսափելի մրրիկը վերջանայ. ես կ՚երթամ Իսրայէլացիներուն»։ Բայց հազիւ երկինքը պարզվեցաւ թէ ոչ, Փարաւոնի սիրտը կրկին խստացաւ։

Մովսէս էլ միանգամ ձգեց իր գաւազանն Եգիպտոսի վերան և երեցաւ անթիւ բազմութեամբ մարախ օդումն և ծածկեց բոլոր երկիրը այնպէս, որ ոչինչ չէր երեւում։ Դաշտերում և ծառերի վերայ ոչ մի կանանչ տերև չմնաց. այն արտերը, կանաչներն և բոյսերը, որոնք կարկուտից ազատվել էին, բոլորովին չնջվեցան մարախից։ Փարաւոն խնդրեց ողորմութիւն, խոստացաւ կատարելու ամեն բան, ինչ որ Մովսէսը պահանջում էր, բայց իր խօսքը չպահեց։

Եգիպտի խաւար պատեց բոլոր Եգիպտոսը, որ երեք օր շարունակ ոչինչ չէր կարելի տեսնել։ Միայն Գեսէմի երկրում ցերեկով փայլում էր արեգակն և գիշերը լուսաւորում էր լուսինն և փայլում էին աստղերը։ Փարաւոն ասստիկ բարկացած ասաց Մովսէսին. «Հեռացիր աչքիցս, եթէ ես քեզ մէկ տեղ տեսնեմ, կ՚հրամայեմ քեզ սպանել»։

ԳԼՈՒԽ ԼԷ.

Եգիպտոսից դուրս գալը։

Մովսէս, Աստուծոյ հրամանով, վերջին անգամ գնաց Փարաւոնի առաջ և յայտնեց նրան յեւտագայ խօսքերն. «Աստուած ասաց, երբ կէս գիշեր կ՚լինի, ամեն անդրանիկները բոլոր Եգիպտոսի մէջ կ՚մեռնին, թագաւորի որդիից սկսած մինչև վերջին աղախնի որդին. նոյնպէս էլ անասունների անդրանիկները։ Եգիպտոսի բոլոր երկրում կ՚լինի ողբ, որպիսի երբէք չէ եղած. բայց Իսրայէլացւոց մէջ ամեն բան յաջողակ կ՚լինի։ Այս վերջին հրաշքը կ՚ցոյց տայ ձեզ, թէ որպիսի զանազանութիւն է

դնում Աստուած Եգիպտացւոց ազգի և Իսրայէլացւոց ազգի մէջ։ Սրանից յետ շարունակեց Մովսէս ասելով «բոլոր քո ծառաներդ, բոլոր հպատակներդ կ՚գան ինձ մօտ և ոտերս ընկնելով կ՚ասեն. «գնա այս տեղից դու և քո ազգդ և ես դուրս կ՚երթամ»։ Փարաւոնը սարսափեցաւ։ Գիշերը մօտենում էր։ Աստուած Մովսէսի ձեռքով Իսրայէլացիներին յետագայ հրամանը տուեց. ամեն ընտանեաց գլուխը Իսրայէլացիներից պէտք է մորթէր մի ոչխար մի տարեկան, անարատ, այսինքն առանց բծի և վնասի և խորովէր կրակի վերայ ամբողջ, ոսկրները չըկոտրատեն։ Ամեն տանտիկին, պէտք է պատրաստէր խմոր, որ եփե բաղարջ. այս վերջին ընթրիքն Եգիպտոսի մէջ պէտք է լինէր պօրացուցիչ կերակուր ճանապարհի համար և միևնոյն ժամանակ յիշատակ Աստուծոյ հովանաւորութեանը։ Որ ընտանիքը փոքրաթիւ էր, պէտք է հրաւիրէր դրացիին, որովհետև ընթրիքից ոչինչ չպէտք է մնար։ Իսրայէլացիներին հրամայած էր ոտով այս ընթրիքը կանգնած, ճանապարհի շորերով և գաւազանը ձեռներին։ Եւ ոչխարի արիւնովը սրսկած էին ամեն Իսրայէլացիների դռները։ Մահուան հրեշտակը, որ կոտորեց այս գիշեր բոլոր Եգիպտացի անդրանիկներուն. անց էր կենում Եբրայեցւոց տների մօտով. որոնք դատկի գաւազն արիւնով նշանակած էին։

Ահա գիշերը եկաւ. ամեն Իսրայէլացւոց տներում կատարում էին զոհին, այսինքն ուտում էին պասէքի գառը։ Այս ժամանակ կատարվում էր Եգիպտացւոց տուած վերջին պատիժը Աստուծոյ։ Ամեն անդրանիկ ընտանիքի մէջ մեռաւ, թագաւորի գահի ժառանգից սկսած մինչև վերջին աշխատաւորին։ Նմանապէս սատակեցան անասունների անդրանիկները էլ։ Փարաւոնը, նորա ծառաները և բոլոր ազգը պատած էր սարսափանքով։ Ողորմելի աղաղակ, լաց և ողբ լսել եղան յանկարծ բոլոր Եգիպտոսի մէջ։ Ոչ մի տուն չէր խնայած. ամեն տան

մէջ մեռել կար: Փարաւոն գիշերով հրամայեց կանչել Մէվսէսին և Ահարոնին և ասաց նրանց. «Շուտով հեռացէք իմ երկրիցս, դուք և բոլոր Իսրայէլացիները: Առէք ձեր հետ բոլոր ձեր ա-նասուններըն էլ և ձեր դուրս գալից առաջ օրհնեցէք ինձ: Եգիպտացիները սոսկում էին Իսրայէլացիներուն, որ շուտով հեռանան: «Շտապեցէք. ասում էին նոքա, թէ չէ, մենք ա-մենքս կկոտորվինք»: Իսրայէլացի կանայք սափրվեցան եվել հացը չհնորված և շաղերը մինչև չբուած էլ առան հետերը: Միայն չմռռացան հետերը առնելու Յովսէփի ոսկորները:

Եգիպտացուց ծառայութիւնից ազատվելու յիշատակին համար Իսրայէլացիները մինչև այժմ ոտնում են պասէքը. այսինքն ուտում են գիշերով պասէքի գառն և բոլոր շաբաթը բաղարջ: Այս կատարում են նոքա գարնանքի առաջին ամսի կէսին, որովհետև այս ժամանակ գուրս եկան նոքա Եգիպտոսից. բայց Երբայեցւոց պասէքը այժմ ոչինչ նշանակութիւն չունի. նա օրինակ էր ապագային և նորա տեղ բռնեց այժմ իսկ ճշմարիտ քրիստոնէական պասէքը: Պասէքի գառն, որի արիւնը ապահեց Երբայեցիներուն մահուան հրեշտակի կոտորածից, օրինակ էր Ամենամաքուր Գառին՝ Յիսուսին Քրիստոսին, որի արիւնովը հաւատացողները ազատվում են յաւիտենական մահից:

Յակովբը մնաւ Եգիպտոս ևօթանասունհինգ հոգւով: Զորս հարիւր երեսուն տարի մնաց նորա ազգը Եգիպտոսում. և երբ Մովսէս հանեց Իսրայէլացիներուն, նորա վեց հարիւր հազար հոգիք էին, չհամարելով կանանց և երեխաներուն:

ԳԼՈՒԽ ԼԸ.

Կարմիր ծովի անցնելը:

Այսպէս ազատեց Աստուած Իսրայէլացիներուն ծանր ծա-

ռայութիւնից: Աստուած ինքն ցոյց էր տալիս նրանց ճանապարհը. հրաշալի ամպն առաջնորդում էր Աստուծոյ ժողովրդեան. ցերեկով ամպն էր խաւարին, որ պաշտպանում էր նրանց արեգական ճառագայթներից և գիշերով երևում էր նա հրեղէն և լուսաւորում էր նոցա ճանապարհը: Երբ Իսրայէլացիները, ամպին հետևելով, հասան կարմիր ծովի ափը, բանակ դրեցին մի հովտի մէջ:

Նոյն այս միջոցին Փարաւոնի և նորա ազգի միտքը փոխվեցաւ: «Այս ի՞նչ արինք մենք» ասում էին նոքա, «ինչո՞ւ թողինք այնքան բազմութիւնը մեր ծառայութիւնից»: Փարաւոնն ասաց. նրանց պատում է անապատը, նոքա չեն գտնիլ ճանապարհ. հանենք եռևներից»: Նա շուտ հրամայեց պատրաստել վեց հարիւր լաւ պատերազմական կառքեր և բոլոր իր զօրքով, բոլոր հեծեալներով և զօրավարներով Իսրայէլացիների եռևից ընկաւ և հասաւ նրանց Կարմիր ծովի ափի մօտ:

Գիշերը մռնում էր: Իսրայէլացիները պատած էին ամեն կողմից. առաջներին ծովն էր և եռևներին Փարաւոնի անթիւ զօրքը: Ահը պաշարեց նրանց: Մէկ քանիսը աղօթք էին անում, խնդրելով Աստուծմէ օգնութիւն. իսկ միւսերը պարսաւում էին Մովսէսին ասելով. «Մի՞թէ փոքր էր գերեզմանի տեղ մեզ համար Եգիպտոսում. Ինչո՞ւ բերիր մեզ այս տեղ, որ ամենքս անապատում կորչում ենք: Աւելի լաւ էր մեզ համար, որ ծառայէինք Եգիպտացիներին քան թէ այս տեղ մեռնենք». այսպէս անհանգիստ լինում է մարդուս սիրտը, երբ նորա հոգին Աստուծոյ վրայ հաստատ չէ:

«Ընչի՞ց մի՛ վախենաք, ասում էր Մովսէս. «զուք կը-տեսնէք, ինչպիսի հրաշք կ'գործէ Աստուած ձեր ազատութեան համար: Շուտով այս Եգիպտացիները, որոնք այնպէս հպարտ կանգնած են ձեր առաջին, յաւիտեան կ'կորչին ձեր աչքից»:

Այսպէս հանդարտ և հանգիստ լինում է այն մարդու սիրտն, որ դնում է իր բոլոր յոյսն Աստուծոյ վերայ:

Այն ժամանակ Աստուած ասաց Մովսէսին. «Թող վեր կենան Իսրայէլացիները և շարունակեն իրանց ճանապարհը. իսկ դու առ գաւազանդ և ձգիր ձեռդ ծովի վերայ. ջուրը երկու կ'բաժանվի և Իսրայէլացիները կ'անցանեն ցամաքով: Եգիպտացիները կ'լինան, որ ես եմ Տէր Աստուածը: Ես ցոյց կ'տամ իմ զօրութիւնս Փարաւոնի, նորա կառքերի և հեծեալների վերայ»: Ամպը բարձրացաւ և կանգնեցաւ Եգիպտացիների և Իսրայէլացիների մէջ: Իսրայէլացւոց կողմում նա փայլում էր կրակի պէս և ցրում էր գիշերային խաւարն. իսկ Եգիպտացիների կողմում էր խաւարային: Այսպէս գիշերով երկու բանակները մէկ մէկու չկարողացան հանդիպել:

Մովսէս ձգեց իր գաւազանը կարմիր ծովի վերայ և ջուրը բաժանվեցաւ երկու մասն: Սաստիկ հողմը ցամաքացրեց ծովի յատակը և բոլոր գիշեր Իսրայէլացիները անց էին կենում ծովի ցամաքած յատակի վրայով. նորա գնում էին և երկու կողմում կանգնած էին պատերի պէս բարձրացած ջրերը: Երբ լուսացաւ, Փարաւոնը, տեսնելով որ Իսրայէլացիները անց են կենում ծովի միջով ինչպէս ցամաքի վրայ, յանկարծ ընկաւ նոցա ետևից և իր կառքերովն, այրուձիով և բոլոր զօրքով մտաւ մէջ տեղը: Այն ժամանակ վեր կացաւ մրրիկ սաստիկ, եկան ամպերը, գոռաց գոռոզքը, փայլեցան փայլակները. «յետ դառնանք յետ, աղաղակեցին սարսափած Եգիպտացիները. Աստուած ինքը պաշտպանում է Իսրայէլացիներուն, փախչենք նորա բարկութիւնից». բայց Աստուած հրամայեց Մովսէսին, որ բոլոր Իսրայէլացիներով անց էր կացել միւս ափը, գարձնել իր գաւազան Եգիպտացիների դէմ: Մովսէսը ձգեց իր ձեռքը և ծովը սարսափելի ձայնով թափվեցաւ Եգիպտացիների վերայ,

ծածկեց կառքերն, այրուձին և բոլոր զօրքերուն, ոչ մի Եգիպտացի կենդանի չմնաց:

Այն ժամանակ Մովսէս բոլոր Իսրայէլացիների հետ միասին երգեցին Աստուծոյ շնորհակալութեան երգ, ասելով. «օրհնենք Տիրոջը, որովհետև փառաւորված է նա: Զօրական և պաշտպան է նա ինձ, նա եղաւ իմ փրկութիւնս, նա է իմ Աստուածս և փառաւորում եմ նրան. իմ հօրս Աստուածն է նա և բարձրացնում եմ նրան. և այլն: Մովսէսի քոյրը Մարիամ մարգարէուհի կանանց հետ միասին առանձին պարկուղով սկսան լավ կրկնում էր միևնոյն խօսքերը:

ԳԼՈՒԽ ԼԹ.

Ջուր երկնքից և ջուր քարից:

Երբ Իսրայէլացիները անցան կարմիր ծովը բանակ գցեցին ընդարձակ, անպտղաբեր և անբնակ անապատում. մի տեղ չէր երևում ոչ ցանք և ոչ խոտ: Իսրայէլացիները մանաւանդ զգում էին ջրի պակասութիւն. մի անգամ գտան նորա ջուր. միայն դառն էր այն: Աստուած հրամայեց Մովսէսին գնել նորա մէջ մի կտոր փայտ և ջուրը բոլորովին լաւացաւ և խմելու ջուր դարձաւ: Եգիպտոսից դուրս գալից երեք օր յետ Իսրայէլացիների հացը պակասեցաւ և չգիտէին որտեղից առնեն հաց.

Այն հրաշքներից յետ, որոնք Աստուած նոցա ազատութեան համար գործեց, կարելի՞ էր արդեօք, որ Իսրայէլացիները երկմտէին Աստուծոյ ողորմութեան մասին: Բայց նորա, բոլորովին իրենց յոյսը Աստուծոյ վերայ դնելու տեղ, սրանց ջուր էին և ասում էին Մովսէսին և Ահարոնին. «ինչու՞ չմնայինք մենք Եգիպտոսում: Մեզ համար այն տեղ լաւ էր, մենք հաց շատ ունէինք և մեր առաջը դրած էին մսով լիք կաթ-

սանները: Դուք բերիք մեզ անապատը, որ բոլոր ազգը կոտորվի սովից: Չնայելով, որ այս խօսքերը շատ անմիտ և անշնորհակալ էին, եւ Աստուած մեղքացաւ այս անգամ էլ այն փոքրոգի ազգին: Նա ասաց Մովսէսին. «Ես կ'լըսեմ ձեզ հայց երկնքից, թող ժողովուրդը ամեն առաւօտ դուրս գայ վրաններից և հաւաքէ հայց, ինչքան իրեն հարկաւոր է: Թող նոքա տեսնեն, որ ես եմ ձեր Տէր Աստուածը»: Մովսէս և Ահարոն յանդիմանում էին ժողովրդին ասելով, «Մենք ի՞նչ ենք. դուք որովհետև ոչ թէ մեր վրայ, այլ Իրեն Աստուծոյ վերայ:

Առաւօտը վաղ, երբ ցօղը լջաւ, բոլոր անապատը, կարծես թէ, ծածկած էր ձիւնով, սոքա էին մանր սպիտակ հատիկներ, նման գինձի և ունէին մեղրով խառնած ալիւրի համ: «Այս ի՞նչ է», աղաղակեցին Իսրայէլացիները»: Այս այն հացն է, որ ձեզ ղրկում է Աստուած». պատասխանեց Մովսէս: «Հաւաքեցէք, ինչքան ամեն մէկիդ բաւական է մի օրվան համար»: Այս կերակուրը կոչվում էր Մանանայ: Իսրայէլացիները հաւաքում էին նրան ամեն առաւօտ և կերակրվում էին նրանով.

Մանանան մի օրից աւելի չէր պահվում, միայն այն մանանան, որ շաբաթ օրվան համար քաղում էին դիմանում էր երկու օր: Շաբաթ օրը չէր իջնում և այս պատճառով Իսրայէլացիները շաբաթի առաջնակայ օրը պատրաստում էին երկու օրվան համար:

Իսրայէլացիներն առաջ գնալով հասան ուրիշ անապատ տեղ, ուր բոլորովին ջուր չկար: Ծարաւը նրանց նեղացնում էր և նոքա ազօթքով դէպի Աստուած դառնալու տեղ սկսան էլի արտանջել Մովսէսի վերայ. «Տուր մեզ ջուր», կանչում էին նոքա, «մենք, որդիքս, և ամեն մեր անասունները մեռնում ենք ծարաւից. ինչու՞ հանեցիր դու մեզ Եգիպտոսից»:

«Դուք էլի մեղանչում էք Աստուծոյ դէմ, ասում էր նրանց Մովսէս: Բայց ծարաւից նեղացած ժողովուրդը չէր լսում նորա

խօսքերն և շարունակում էր գոռալ և ապստամբիլ: Աստուծոյ երկայնամտութիւնը դեռ չկարվեցաւ, Նա մեղքացաւ նեղացած ժողովրդին և ասաց Մովսէսին, «առ գաւազանդ և գնա, կանգնիր Իսրայէլացիների առջևը. Դու կ'տեսնես վէմ, խփիր նրան գաւազանով և ջուրը կ'բղխէ քարից, նա կ'ջրէ բոլոր ժողովրդեան»:

Մովսէս մօտեցաւ վէմին, և բոլոր ժողոված ազգի առաջին խփեց Իր գաւազանով քարին և ահա առատ քաղցր աղբիւր ջրի սկսաւ բղխել քարից:

Սրանից յետոյ բոլոր Իսրայէլացիները և նոցա անասունները: Ամենքն ուրախացան և փառաւորում էին այսպիսի հրաշքը:

Գլուխ Թ.

Տասն պատուիրանները:

Իսրայէլացիները հասան Սինա լերան մօտ: Մովսէս ելաւ սարի գլուխն և Աստուած ասաց նրան. «ասա Իսրայէլացիներին, դուք տեսաք ինչպէս ես ջնջեցի Եգիպտացիներուն և ձեզ կարծես արծուի թևերի վերայ հանեցի Եգիպտոսից: Այժմ եթէ կ'լսէք իմ ձայնիս, և կ'պահէք իմ ուխտս, Դուք կ'լինիք իմ ընտրեալ ազգս. բոլոր աշխարհը Իմն է. բայց թէ դուք կ'լսէք իմ խոսքերս և կ'պահէք Իմ ուխտս, դուք կ'լինիք Իմ սուրբ թագաւորութիւնս, Իմ քահանայութիւնս, ընտրեալ և սուրբ ժողովուրդս: ասա Իմ խօսքերս Իսրայէլացիներին»: Մովսէս կրկնեց ժողովրդի առաջին Աստուծոյ խօսքերն և բոլոր Իսրայէլացիները միաձայն աղաղակեցին, «մենք պատրաստ ենք կատարելու Աստուծոյ ամեն հրամանները»:

Աստուած ասաց Մովսէսին. «գնա ժողովրդին մօտ, սրբիր ամենուն, թող լուանան իրենց շորերն և երրորդ օրը պատ-

բաստ լինին։ Երբ փողի ձայնը կ'լսվի, թող մօտենան սարին»։ Ամենքը սրբվեցան, հագան լուացած շորերն և պատրաստվեցան մեծ և սուրբ հանդէսին համար։

Երրորդ օրը, երբ լուսացաւ, Իսրայէլացիները սեսան փայլատակներ և լսեցին գոռոզքի ձայն. թանձր ամպերը ծածկեցին Սինայի սարը, լսվեցաւ փողի ձայնը. ժողովրդին պաշարեց երկիւղ և ահ։ Մովսէս ժողովրդին բանակից հանեց Աստուծոյ առաջ։ Նոքա մօտեցան սարի ստորոտին. բոլոր սարը ծխում էր, վառվում էր և շարժում։ Փողի ձայնը առաւել և առաւել զօրանում էր։

Յետոյ ամեն բան հանդարտեցաւ. Աստուծոյ ձայնը յայտնի լսում էր բոլոր ժողովուրդը։

1 «Ես եմ քո Տէր Աստուածդ. մի՛ ունենար քեզ ուրիշ աստուածներ բացի ինձանից»։

2 «Մի՛ շինիր քեզ կուռքեր, և ոչ մի նմանութիւն, ոչ երկրնքում և ոչ երկրիս վերայ, ոչ ջրերում և ոչ գետնի տակում, Մի՛ երկրպագիր և մի՛ լե՛ր նրանց».

3 «Անոտի բաների համար մի յիշեր Աստուծոյ անունը»։

4 «Միտդ պահի՛ր շաբաթ օրը, որ սուրբ պահես նրան. վեց օր գործի՛ր և ամեն քո բաներդ արա, եօթներորդ օրը՝ շաբաթը նուիրի՛ր քո Աստծուդ»։

5 «Պատուի՛ր հօրդ և մօրդ և քեզ բարի կ'լինի ու երկարակեաց կ'լինես երկրիս վերայ»։

6 «Մի՛ սպաներ»։

7 «Մի՛ շնար»։

8 «Մի՛ գողանար»։

9 «Քո ընկերիդ վերայ սուտ վկայութիւն մի՛ տար»։

10 «Քո ընկերիդ կնոջ մի ցանկանար. մի՛ ցանկանար նորա արտին, ոչ նորա ծառային, ոչ աղախնին, ոչ եզին, ոչ էշին և ոչ անասուններին և բանին, որ ինչ նրան պատկանում է»։

Բոլոր ժողովուրդը լսում էր Աստուծոյ և փողի ձայնը, բոլոր ազգը տեսնում էր բոցն և սարը, որ ծխում էր։ Նա կանգնած դողում էր և սարսում։ «Մի՛ վախենաք», ասաց Մովսէս, «Աստուած ձեզ դէպ ի բարին է առաջնորդում, հպատակեցէք Նրան և փախէ՛ք մեղքից»։ Ազգը միաձայն խոստացաւ կատարել պատուիրանները։ Այս անցքի յիշատակի համար Իսրայէլացիները մինչև այժմ ծօնում են Պենտեկոստէն, որովհետև այս պատահեցաւ Պասէքից յիսուն օր յետոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ոսկի որթը։

Սրանից յետո Մովսէս գնաց Սինայի գլուխն, ուր Աստուած տուեց շատ ուրիշ օրէնքներ էլ Իսրայէլացիներին և իր տան պատուիրանները երկու քարէ տախտակների վերայ գծագրած։ Մովսէս մնաց Սինայի գլխին Աստուծոյ հետ խօսելով քառասուն օր և քառասուն գիշեր։

Ժողովուրդը նորա բացակայութեան ժամանակ վճռեց քանդել իր ուխտն Աստուծոյ հետ։ Իսրայէլացիներն ուզում էին, Եգիպտացւոց օրինակով, ունենալ կուռքեր։ Մենք ուզում ենք գնալ առաջ, ասում էին նոքա Ահարոնին. շինի՛ր մեզ համար աստուածներ, որոնք մեզ առաջնորդեն, մենք կ'տանենք նրանց մեր ամբոխի առջևը. մենք չգիտենք, թ՞ոնչ եղաւ Մովսէսի հետ, որ մեզ Եգիպտոսից հանեց»։ Ահարոնը վախեցաւ ժողովրդին ընդդեմ խօսելու և ասաց. «բերէ՛ք ինձ ձեր կանանց և աղջիկների ոսկի գինդերն և մատանիները»։ Իսրայէլացիները շուտ հաւաքեցին իրենց կանանց և աղջիկների օղերն և մատանիներն և բերին Ահարոնին մօտ, որ բերած ոսկիից ձուլեց որթ (հօրթ)։ Երբ սրան տեսաւ, բոլոր ազգը աղաղակեց «ահա այն Աստուածը, որ մեզ հանեց Եգիպտոսից». նոքա սկսեցին Ա-

Հարունին կանգնել սեղան և զոհել ոսկի որթին. ուրախանում էին և պար էին դալիս նորա շուրջ կողմում:

Մովսէս չէր իմանում, ինչ որ Սինայի ստորոտումն լինում էր. բայց Աստուած ասաց նրան, «իջի՛ր սրտից, ժողովուրդը, որին դու հանեցիր Եգիպտոսից, մեղանչեց, նա շուտ դարձաւ Իմ ցոյց տուած ճանապարհից: Ես կ'ջնջեմ նրան և դու կ'լի նես նահապետ ուրիշ մեծ ազգի»: Բայց Մովսէս ընկաւ Աստուծոյ առաջ և խնդրեց Նրան, որ խնայէ իր ժողովրդին: Աստուած լսեց Մէվսէսի աղօթքն և խնայեց Իսրայէլացիներուն:

Մովսէս իջնում էր սարից, ձեռին օրինաց տախտակները բռնած. բայց երբ մօտեցաւ բանակին, տեսաւ ոսկի որթին և ազգին, որ երկրպագութիւն էր տալիս նրան. բարկութիւնից գցեց տախտակները և կոտրեց: Ցետոյ հրամայեց որթին այրել փոշի շինեց նրան ու ջրի մէջ խառնելով, հրամայեց Իսրայէլացիներին խմել: «Ի՞նչ արին քեզ այս մարդիկ, ասաց Մովսէս Ահարոնին, որ դու նրանց այսպիսի մեղք անել տուիր»: «Մի՛ բարկանար», պատասխանեց Ահարոնը, «դու ինքդ էլ լաւ գիտես նոցա յանդգնութիւնը. նոքա, որոնք ցաւում էին որթի վերայ, սպանվեցան Ղեւտացիների սրով: Շատ հազարներ վչացան: Այն ժամանակ Մովսէս ասաց. «դուք շատ մեղանչեցիք. Ես կ'բարձրանամ էլի սարի գլուխն, որ կակղացնեմ Աստծուն, որ զայրացած է ձեր յանցանքի վերայ»: Նա եկաւ սարի գլուխն և գոչեց Աստծուն ասելով. «Տէր, Ռո ազգդ մեղանչեց Ռեզ, բայց Ռո ողորմածութեամբդ ների՛ր նորա յանցանքը, կամ ջնջի՛ր իմ անունս կենաց գրքից»: «Կ'ջնջեմ կենաց գրքից նորա անունը, որ մեղանչեց ինձ». ասաց Աստուած: «Կ'դայ օրը, երբ կ'իջնի Իմ պատիժս մարդոց վերայ իրանց մեղքերի համար»: Մովսէսը այս անգամ էլ մնաց Սինա սարի վերայ քառասուն օր և քառասուն գիշեր խօսելով Աստուծոյ հետ երես առ երես: Աստուած տուեց նրան ուրիշ տախտակներ, վրան պատուիրան-

ները գծագրած և երբ Մովսէս իջաւ սարից նորա երեսը այնպէս փայլում էր, որ նա պէտք է ծածկէր իր երեսը քողով, որ ժողովուրդը կարողանար նայել նորա վերայ:

Աստուծոյ հրամանով Մովսէս շինեց տապանակ անփուտ փայտից, պատեց նրան ոսկի թիերթով և դրաւ նորա մէջ պատուիրանների տախտակները: Առանձին, գոյն գոյն շորերով և կաշիներով ծածկած վրան շինեց այս տապանակի համար: Սա դրած էր երկրորդ վարագոյրի ետեւը. իսկ առաջին վարագոյրի ետև դրած էր սեղանը խնկով, ոսկի աշտանակն եօթն ճրագարաններով և էլ մի սեղան տասներկու հացերովն երեսաց: Այս տապանն, որի մէջ պահվում էին պատուիրանները, անուանվեցաւ Տապանակ Ուխտի և վրանը, որի մէջ դրած էր Տապանակը կոչվում էր Խորան վկայութեան: Նա պատած էր սրահով, ուր դրած էր զոհարանն և ուր ժողովուրդը պաղատում էր: Խորանի առաջին մասը, որ բաժանած էր սրահից վարագոյրով, անուանվում էր Սրբութիւն. իսկ երկրորդը, որ բաժանած էր առաջինից ուրիշ վարագոյրով, անուանվում էր Սրբութիւն սրբոց: Երբ ամենը պատրաստ էր, ամպը ծածկեց խորանն, որ Աստուծոյ փառքով լցուեցաւ: Ահարոնը քահանայապետի շորերով, խորանի սրահում, գրեց զոհը զոհարանի վերայ: Այն ժամանակ ամպից, որ հովանի էր խորանին, իջաւ զոհի վերայ կրակ: Ժողովուրդն այս հրաշքը տեսնելով, ուրախութիւնից երեսով ընկաւ գետնին, երկրպագեց ամենազօր Աստծուն և շնորհակալ եղաւ Նրան:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Աստուծոյ նոր հրաշքներն անապատում:

Շատով Իսրայէլացիների մէջ ծագեցան նոր ապստամբութիւններ: Նոքա ձանձրացան այն հացկից, որ ընկնում էր երկնքից. նոքա կամենում էին ուրիշ կերակուր: Իրենց վրան-

նների դռների մօտ նստած լաց էին լինում և գոռում էին փոքրիկ երեխաների պէս. «Ով կ'տայ մեզ միս, ասում էին նորա, մենք չենք մոռանալ քնաւ Եգիպտոսի վարունգները, սեխը, սոխը և խաւորը: Իսկ այժմ մենք մանանայից աւելի բան չենք տեսնում:

Մովսէսը չափից դուրս տրտմեցաւ այսպիսի յիմարութեան վերայ, նա լաց էր լինում Աստուծոյ առջև: «Ցայտնի'ր ժողովրդին», ասաց Աստուած; «նոցա լացը լսեցի: Ես կ'ղրկեմ նրան միս, ոչ թէ մի կամ երկու օր, այլ ամբողջ ամիս շարունակ, մինչև որ նրանից էլ զզուի: Իսրայէլացիներն այսուհետև թող չգանգատեն, որ Թողէն Եգիպտոսի երկիրը:

Էր Աստուած, ասում էր Մէվսէս, նորա վեց հարիւր հազար հասակը հասած մարդիկ են բացի կանանց և երեխաներից, որտեղից առնենք այնքան միս, որ բոլոր ամիս կերակրվենք, ոչ թէ մի օր: «Մի՞թէ Աստուծոյ ձեռը բաւական չէ. ասաց Աստուած, այժմ կ'տեսնես Իմ խօսքերիս կատարվելը»:

Աստուծոյ հրամանով վեր կացաւ սաստիկ հողմ և բերաւ ծովից անթիւ բազմութեամբ լորամարգի: Անապատը մի օրվան ճանապարհի չափ տեղ ծածկվեցաւ նրանցով, երկու կանգուն բարձրութեամբ գետնից: Ժողովուրդը հաւաքեց բոլոր այն օր և գիշեր և միւս օրը այս լորամարգիներից:

Բայց դեռ ազգը չկարողացան ուտել, դեռ միսը ատամների տակն էր, երբ զգացին Աստուծոյ պատիժը. նորա չաստուտակն էր, լից հիւանդանում էին և բազմութեամբ մեռնում: Այնտեղ, ուր էր այն ժամանակ Եբրայեցիների բանակը, կոչվեցաւ գերեզմանց ցանկութեան:

Այս միջոցներումն պատահեցաւ յետագայ անցքն էլ: Գնացին Կորխը և երկու հոգիք Ռուբէնի ցեղից ուրիշ անունների հետ յարուցին մեծ խռովութիւն: Նորա վեհում էին Մովսէսի և Ահարոնի հետ նոցա իշխանութեան և քահանայութեան վերայ: Կորխին, Դաթանին և Աբիրոնին, այս վերջին երկուսին իրենց ընտանիքովը, կուլ տուեց երկիրը. իսկ միւս երկու հարիւր յիսուն հոգիները կոտորվեցան հրաշալի կրակով, երբ բուրուարը ձեռքերին կանգնած էին վկայութեան Խորանի առջև, կամենալով Ահարոնից քահանայութիւնը խլել: Միւս օրն երբ դեռ շարունակում էր խռովութիւնը, կոտորվեցաւ ժողովրդից 14,700 հոգի: Այս քահանայութեան իրաւունքի վէճերին յարիտեան վերջ դնելու համար, հրամայեց Աստուած Մովսէսին, առնել ամեն տասներկու ցեղերի ծերերի գաւազաններն և դնել Խորանում: Մէկ գիշերում Ահարոնի գաւազանից բուսաւ ծիւղ ծաղկով և պտղով:

ԳԼՈՒԽ ԹԳ.

Խոստացեալ երկրի վերայ համբաւը:

Իսրայէլացւոց ազգը արդէն մօտենում էր Քանանացւոց երկրի սահմաններին: Մովսէս ընտրեց Յեսուին Նաւեայ որդուն, Քաղէբին և տասն ուրիշ անուանի մարդոց Իսրայէլացիներից և ղրկեց նրանց, որ լրտեսեն խոստացած երկիրը: Նորա յետ դարձան քառասուն օրից: Մէվսէսի և Ահարոնի առջևը գնացին Յեսու Նաւեայն և Քաղէբը ու բոլոր ժողովրդի առաջին պատմում էին յետագայն. «Մենք էինք այն երկրում, ուր դուք մեզ ղրկեցիք. ձշմարիտ այս երկիրումն բղխում է մեղր և կաթ: Ահա պտուղներն, որ մենք բերինք այնտեղից». Նորա ցոյց էին տալիս թուղ, նուռն և մեծ ողկոյզ խաղողի: Բայց միւս տասն լրտեսները ընդդէմ խօսեցան Յեսուին և Քաղէբին և տարածում էին ժողովրդի մէջ վատ համբաւ երկրին վերայ. «երկիրը, ուր մենք էինք, ասում էին նորա, մարդածախ է իր բնակչաց հա-

մար *: Այն տեղ քաղաքները մեծ են, պատած ամուր պատերով: Այնտեղ բնակում են հսկայներ, որոնց առջև մենք այնպես փոքր ենք, ինչպես մարախ»: — Երբ այս լսեցին Իսրայէլացիները, սկսան լալ և գանգատել: Նոցա լացը շարունակվեցաւ բոլոր գիշերը: Վերջապէս Իսրայէլացիները ապստամբեցան Մովսէսի և Ահարոնի դէմ: Նոքա ասում էին, «ինչո՞ւ չմեռանք Եգիպտոսում: Աստուած արդեօք մեզ այս տեղ նորա համար չբերաւ, որ մեզ մեր որդւոց և մեր կանանց մատնէ թշնամիների ձեռքը: Աւելի լաւ է մեզ համար, որ դառնանք էլի Եգիպտոս: Ընտրենք մեր մէջից զօրավար և դառնանք Եգիպտոս»:

Մովսէս և Ահարոն ընկան երեսի վերայ ժողովրդի առջև, որ փախկացնեն նորա սիրտը: Բայց մի՛ վախենաք ոչնչից», ասում էր Մովսէս, «Աստուած կ՛պաշտպանէ ձեզ այս մարդոց դէմ էլ, ինչպէս նա պաշտպանեց Եգիպտացիների դէմ: Մի՛թէ մոռացաք ինչպէս նա առաջնորդեց ձեզ անապատում, ինչպէս հօր պէս հոգաց ձեր վրայ»: Յեսու Նաւեան և Քաղէբը պրըտմութիւնից պատառեցին իրենց շորերը: «Մենք տեսանք բոլոր երկիրն. ասում էին նոքա, «նա շատ գեղեցիկ է: Աստուծոյ օգնութեամբ մենք կ՛մտնենք այն տեղ, Աստուած կ՛բնակեցնէ մեզ այն երկրում, ուր մեղր և կաթ են բղխում: Աստուածմէ մի՛ապստամբէք: Այս երկրի ազգերից մի՛ վախենաք, մենք կ՛ջնջենք նրանց: Աստուած կ՛լինի մեզ նիզակակից»: Բայց՝ ի զուր էին այս ամէն խօսքերը: Ժողովուրդը կատաղած գոռում էր և կամենում էր քարկոծել Մովսէսին, Ահարոնին, Յեսու Նաւեային և Քաղէբին:

Այս միջոցին երևեցաւ Աստուծոյ փառքը ժողովրդի առջև ամպի մէջ խորանի վերայ: Աստուած ասաց Մովսէսին. «մինչև երբ այս ժողովուրդը ինձ կ՛բարկացնէ. մինչև երբ նա

*) Թիւ. Գլ. ԺԳ. 33.)

չի հաւատալ իմ հրաշքներին. ես կ՛կոտորեմ նրան և կ՛ջնջեմ երկրիս երեսից. ինձ քեզ կ՛շինեմ նախահայր աւելի զօրեղ և մեծ ազգի»: — Բայց Մովսէս, արձն Իսրայէլացիները կամենում էին քարկոծել, ասաց. «Աստուած, մի՛ ջնջիր այս մարդոց: Երբ նոքա կ՛ջնջվին երկրիս երեսից, եգիպտացիները և ուրիշ ազգերը կ՛ասեն. Աստուած չկարողացաւ Իսրայէլացիներուն մրտցնել խոստման երկիրը, նոքա կորան անապատում. ողորմած եղիր նրանց և ցոյց տուր քո զօրութիւնդ: Տէր Աստուած, Դու երկայնամիտ ես և բազումողորմ, Աղաչում եմ քեզ, որ քո ողորմածութեամբդ ներես այս անգամ էլ քո ազգիդ իր յանցանքը»:

Աստուած ասաց. «ներում եմ քո խօսքովդ. Իսրայէլացիները չանկարծակի այժմ չեն մեռնիլ, բայց նոցա ոսկրները կ՛փտեն անապատում. ոչք նրանցից, որոնք տրտնջացին իմ վերայ, չի մտնիլ խոստման երկիրը: Նրան կ՛մտնեն միայն Յեսու Նաւեան, և Քաղէբը, որոնք Ինձ հաւատարիմ մնացին: Մէյն որդոց, որոնք ապստամբութեանը մասնակից չէին, կ՛մտցնեմ խոստման երկիրը և նոքա կ՛տիրեն նրան: Բայց նոքա էլ կ՛մեռան քառասուն տարի անապատում, մինչև որ փտեն նոցա հայրերի ոսկրները»:

Տասն հոգիք, որ Յեսուի և Քաղէբի հետ միասին լրտեսեցին Քանանու երկիրն և յարուցին Իսրայէլացւոց մէջ խռովութիւն, մեռան յանկարծակի, իսկ միւսները, որ հաւատով դուրս եկան Եգիպտոսից մեռան անապատում կամաց կամաց:

Եգիպտոսից դուրս գալից յետոյ, քառասուներորդ տարին Իսրայելիները կռիւն մտցրեցան խոցատած երկրի տանտէրերին: Այս տեղ նոքա էլի սկսան արտնջալ Մովսէսի և Ահարոնի վերայ ջրի պակասութեան պատճառով: Երբ սուցան Հրաման Ահարոնի հրաշագէս գաւազանով քարից ջուր հանելու, երբայեցւոց առաջնորդները ցոյց տուին այս անգամ իրենց հաւա-

ոմէ թուլութիւնը կամ երկայութիւնը Աստուծոյ ողորմածութեան մասին անարժան ազգին վերայ։ «Արդեօք այս քարից ջուր կ՚հանենք մենք ձեզ համար» ասաց Մովսէսը Երբայեցիներին և խփեց գաւազանով քարին երկու անգամ։ Հրաշքը գործուեցաւ. բայց Մովսէս և Ահարոն, խոստման երկիրը տեսնելու արգելութիւնից զրկուեցան։ Շուտ այս բանից յետոյ Ահարոնը վախճանեցաւ։

Երբայեցւոց նոր որդիքի համար, Աստուած դրկեց նոցա վերայ թունաւոր օձեր, որոնցից շատերը մեռան. երբ Երբայեցիները զղջացին իրենց մեղքը, Աստուած հրամայեց Մովսէսին դնել դրօշակի վերայ պղնձի պատկերը օձին։ և ով որ նայում էր այս պատկերի վերայ, ստանում էր առողջութիւն օձի թոյնից։ Նոյնպէս էլ այժմ մեզ համար խաչուած Յիսուսի Քրիստոսի հաւատացողները ազատւում են մեղքից և սատանայի իշխանութիւնից։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Մովսէսի մահը։

Մովսէսը, Իսրայէլացիների խոստման երկիրը մտնելից առաջ արդէն, էր հարիւր քսան տարեկան ծերունի։ Իր մահից առաջ նա ժողովեց բոլոր Իսրայէլացիներուն և հրամայեց, որ բերան առնեն իր շատ գրած մարգարէական երգն, որ սկսւում է յատագայ խօսքերով. «Նայեցէք երկինք, ես կխօսեմ և թող լսէ երկիր իմ բերանիս պատգամները»։ Այս երգը, որ լի է յորդորանքներով և սպառնալիքներով, թողեց Մովսէս ապագայ սերունդների համար իբրև յիշատակ։

Վերջին անգամ նա ասում էր ապրին իբրև հայր իր որդոց. «ես պէտք է մեռնիմ անապատում. բայց դուք կանցնէք Յորդանանը և կմտնէք դեղեցիկ երկիրն, որ Աստուած ձեզ

խոստացել է։ Մնացէք հաւատարիմ Աստծուն վկայ կանչելով երկինքն և երկիրը, ես թողնում եմ ձեզ իմ օրհնութիւնս էլ անէծքս էլ. օրհնութիւնս—եթէ դուք կ՚ծնաք հաւատարիմ Աստծու. անէծքս—եթէ կ՚ապստամբիք Նրանից։ Ժամանակով Աստուած ձեր միջից, ձեր եղբայրների մէջից, կ՚վերկացնէ ինձ նման ուրիշ մարգարէ, Նրան լսեցէք»։ Այս Մովսէսի նման մարգարէն է մեր Տէրը Յիսուս Քրիստոս։ Յետոյ Մովսէս գնաց սարի գլուխն, որտեղից նա կարողանում էր նայել հեռուից այն երկրին վերայ. որ խոստացած էր Իսրայէլացիներին, այն երկրին վերայ, ուր բնակւում էին Նորա սուրբ նախահայրերը Աբրահամ, Իսահակ և Յակովբ. Նա տեսաւ նրան բոլոր իր պաղատբեր դաշտերով, գետերով և բարձր լեռներով։ Անտեղ Նաբաւ լերան գլխին Մովսէսից երկրում վախճանեցաւ Մովսէս։ Տեղը, ուր հանգչում է Նորա մարմինը, մնաց անյայտ։

ԳԼՈՒԽ ԽԵ.

Յեսու Նաւեայի խոստացած երկիր մտնելը։

Ով կմտնէ ուրիմն Իսրայէլացիներուն Աւետեաց երկիրը. Մովսէս չկայ, ազգը որբացաւ. բայց կենդանի է ամենազօր Աստուածը. Նա լքցրեց Իր Հոգւով Յեսու Նաւեային և հրամայեց նրան վերջացնել Մովսէսի սկսած գործը։

Իսրայէլացիները երեսուն օր սուգ արին Մովսէսի վերայ, յետոյ դուրս եկան բանակից և հրաշալի կերպով անցան Յորդանանը։ Երբ քահանաները, որոնք տանում էին Ուխտի Տապանակը, մտան գետի մէջ տեղ, Հորդանանի ջուրը բաժանուեցաւ և Երբայեցիները առանց ոտները թրջելու անցան Յորդանան և հասան վերջապէս այն նպատակին, որի համար քառասուն տարի թափառում էին։ Ուրախութեամբ բարեւեցին այն երկիրը, ուր բնակում էին նոցա նախնիք, որոնց հետ Ա-

տաճած ինքը խօսակցում էր և ուր հանդստանում էին նոցա ասկրները։ Այս պատահեցաւ պատերազմից առաջ։

Այժմ գաղարեցաւ մանանան իջնելու երկնքից, երբ Իսրայէլացիները առաջին անգամ կերան երկրի պտուղներից ծննդով պասեքը։ Բայց Աւետեաց երկրի բնակիչները կատպաշտներ էին, գեղջ և խիտ մորթիկ, որ իրենց հարազատ որդոց պոչ էին բերում կաքերին։ Նոքա չէին ուզում թողնել Աբրահամի զաւակները իրանց նահանգը, երկիրը մանկտա այս պատճառով ծագեցաւ երկարատև պատերազմ միայն Աստուծոյ օգնութեամբ Իսրայէլացիները ամեն տեղ յաղթում էին։

Առաջին քաղաքը, որին տիրեցին Իսրայէլացիները, եր Երիքով։ Սա պատած էր ահագին և բարձր պատերով, որոնց առնուիկ էին թվում բոլոր Իսրայէլացի ժողովուրդը մտեցաւ քաղաքին. նոցա մէջտեղումն գնում էին քահանաները, տանելով Ուխտի Տապանակն և փողեր փչելով. Աստուծոյ հրամանով վեց օր այսպէս պատին ամեն կողմից Երիքովի պատերը փողեր հարկանելով։ Եօթներորդ օրը նոյն կերպի առաւօտ վաղ եօթն անգամ պատեցին Երիքովի պատերի շուրս կողմում և երբ քահանաները եօթներորդ անգամն փողերը փչեցին, Յեսուի առած նշանակ ժողովուրդը հանեց պատերազմական ձայներ. Երիքովի պատերը հրաշքով քանդվեցան և Իսրայէլացիները մտան քաղաք և տիրեցին նրան։ Քաղաքի բոլոր բնակիչներից կոտորեցին բացի մի կնոջից, որի անունը Ռահաբ եր իր ընտանիքով, որովհետև սա գնդ օրանից առաջ իր տուն ընդունել եր լրտեսներին, որոնց Յեսու Նաւեան զրկել եր լրտեսելու համար։

Այսպէս Իսրայէլացիները, Աստծուն իրենց նիզակակից ունենալով, շարունակեցին իրենց աշխարհակալութիւնը։ Մի առաւիկ պատերազմի ժամանակ Գաբաւոն քաղաքի մօտ, արեգակը մտանում եր ապրէն մայրը մտնելու, Յեսու Նաւեան

տեսնելով, որ չէ կարող վերջացնել պատերազմը մինչև արեւի մտնելը, ասաց. «Ով արեգակ, կաց Գաբաւոնի հանդէպ և դուն լուսին կանգնիր Եղոնի ձորին վերայ»։ Աստիճ հնազանդեցաւ Յեսուի խօսքերով արեգակն և լուսինը իրանց ընթացքը դադարեցրին և այս օրը ուրիշներից երկար եղաւ։

Իսրայէլացիները տիրեցին գրեթէ Քանանացոց բոլոր երկրին և ջնջեցին բնակչաց մեծ մասը։ Այն ժամանակ Յեսու Նաւեան սկսաւ բաժանել երկիրը Իսրայէլացոց տասներկու տոհմերին, այսինքն Ռուբէնի, Գադի, Յուդայի, Զաբուղոնի, Իսաքարի, Դանի, Գադի, Ասերի, Նեփթաղիմի, Բենիամինի, Եփրեմի և Մանասէի ցեղերի մէջ։ Երկու վերջինները էին Յովսեփի որդիքը, որոնց Յակովբ որդեգրեց։ Ռուբէնի, Գադի ցեղերը և Մանասէի կէս տոհմը ստացած էին իրենց բաժինը արդէն Մովսէսի ժամանակ Յորդանանի միւս կողմում։ Վերի տոհմը չունէր ասանձին մասն, որովհետև Վերատացիք կերակրում էին գոհերից, որ բերում էին Աստծուն և բնակում էին քաղաքներում, որոնք նրանց մասն հանած էին Իսրայէլացոց ամեն ցեղերից Յորդանանի երկու կողմում եղ, ծովի և անապատի միջոցում։

Ամեն բան այսպէս կարգադրելից յետոյ Յեսու Նաւեան հաւաքեց բոլոր Իսրայէլացիներուն Սեղով, որ Հրաժարական ողջոյն տայ նրանց իր մահից առաջ։ Նա միտերը բերաւ նրանց Աստուծոյ ամեն բարերարութիւնները և խնդրեց, որ նրան հաւատարիմ մնան։ Երբ ազգը խոստացաւ, որ չի անջնել Աստուծոյ օրէնքներից, Յեսու Նաւեան վախճանեցաւ հարիւր տասն տարեկան։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Դատաւորները։—Դերասիա կէս մարգարէ։

Յեսու Նաւեայի մահից յետոյ Իսրայէլացիները չունէին ընդ-

հանուր զօրավար, որ հոգար Աստուծոյ օրէնքներուն կատարելուն վերայ և պաշտպաներ ազգը բազմաթիւ և հզօր թշնամիներից։ Մինչև նոքա հեռատարմութեամբ ծառայում էին Աստուծոյ, Աստուած ինքը պահում էր նրանց. իսկ երբ հեռացան ճշմարիտ Աստուծոյ պաշտօնից, Քանանացիք, Մովաբացիք, Փղշտացիք, Մադիամացիք և Ամմոնացիք սկսան նեղել նրանց։ Բայց այս ծանր միջոցումն էլ Աստուած չէր մոռանում նրանց, եթէ նոքա խոնարհութեամբ դառնում էին. Նա զրկում էր նրանց փրկիչներ, որոնք կոչվում էին դատաւորներ։ Երբ նեղացնում էր նրանց Քանանացոց Յաբին թագաւորը, կենում էր մի կին Դեբովրա անունով. սա դատում էր Իսրայէլացիներուն և էր մարգարէ։ Ամեն երևելի բաներումն նրանից խորհուրդ էին հարցնում և նրանից իմանում էին Աստուծոյ կամքը։ Նա բնակում էր մի արմաւենիի տակ լեառներում, Եփրեմի ցեղի բաժնի մէջ։ Աստուած յայտնեց նրան, որ կամենում է տասներկու տարի Յաբինից նեղացած Իսրայէլացիներուն ազատել և հրամայեց նրան, որ մի անուանի մարդուն Նեփթաղիմի ցեղից, Բարակ անունով, ղրկէ տասն հազարով Յաբինի զօրավարի Սիսարային դէմ։ Դեբովրան կանչեց Բարակին և յայտնեց նրան Աստուծոյ կամքը։ Բայց Բարակ առանց նորա յանձն չէր առնում պատերազմ երթալ։ Այն ժամանակ մարգարէուհին խոստացաւ գնալ նորա հետ. միայն այս էլ ասաց. ձես կերթամ. միայն յաղթութեան փառքը կ'ընկնի կնոջ և ոչ քեզ։ Բարակ ժողովեց տասն հազար զօրք։ Թշնամեաց զօրքը շատ բազմաթիւ էր նրանցից. բայց այս բանին չնայելով նոքա յաղթուեցան. Սիսարայի զօրքը կոտորվեցաւ. իսկ ինքը փախաւ։ Սա երբ տեսաւ, որ Բարակ իր ետևից գալիս է, թռաւ կառքից ցած և փախչում էր ոտով։ Ճանապարհին կար մի կինեցիի վրան։ Սիսարան թագնվեցաւ այս տեղ և սպանվեցաւ վրանի տանտիկնից, որի անունը Յայել էր։ Այս պէս կատարվեցաւ մարգարէութիւնը, որ ասում էր, թէ յաղթութեան փառքը կընկնի կնոջ։ Դեբովրան և Բարակ այս յաղթութիւնից յետոյ երգեցին Աստծուն հանդիսաւոր և շնորհակալութեան օրհնութիւն։

ԳԼԽԻ Խ.

Գեդէոն։

Իսրայէլացիները էլի ընկան առաջվան անօրէնութեան մէջ։ Նոքա մոռացան ճշմարիտ Աստծուն և սկսան երկրպագութիւն տալ կռքերին։ Այն ժամանակ Աստուած էլ հեռացաւ նրանցից և մատնեց նրանց Մադիամացւոց ձեռքը, որոնք եօթն տարի շարունակ գալիս էին հունձքի ժամանակ անթիւ ուղտերով, փչացնում էին և յաթշտակում ամեն բան, ինչոր գտնում էին։ Ոչ թէ չմնաց ոչինչ պաշար, այլ և Իսրայէլացիները հազիւ կարողանում էին ապատել իրենց կեանքը թագնվելով այրերում և լեռների մէջ։ Երբ վերջին թևը հասան նոքա դարձան դէպի Աստուած և խնդրեցին նրանից օգնութիւն։ Աստուած լսեց նրանց։

Մի երբա անունով անկայա քաղաքում բնակում էր մի մարդ Գեդէոն անունով Մանասէի ցեղից. սրան ընտրեց Աստուած, որ փրկէ իր ազգին։

Այս Աստուծոյ ընտրած գինուորը երեք հարիւր ընտիր մարդկներով ցրուեց թշնամիների բազմաթիւ զօրքը։ Գեդէոնի երեք հարիւր գինուորները գիշերով մտեցան թշնամեաց զօրքին, փչեցին երեք հարիւր փողեր և աղաղակեցին. «Աստուծոյ և Գեդէոնի սուրը». թշնամիները սարսափած փախան մէկ մէկու սպանելով և Իսրայէլացիներին թողին հարուստ աւար։

Իսրայէլացիները. երբ տեսան, որ Գեդէոնի ձեռքով ազատվեցան, ասացին Նրան, «Թագաւորիր մեր վերայ դու և քո

աղջը», բայց Գեդէոնն, որին Աստուած ընտրել էր Իսրայէլացիներուն փրկելու համար և ոչ թագաւորութեան, պատասխանեց նրանց. «ես չեմ կամենում ձեր թագաւորը լինել. Աստուած թող թագաւորէ ձեր վերայ:

Գեդէոնին անուանեցին Յերոբոամ էլ, որովհետև նա քանդեց բահալ կուռքի բագինը: Նա մեռաւ խորին ծերութեան մէջ:

ԳԼՈՒԽ ԽԸ.

Աբիմելէք:

Գեդէոնը ունէր եօթանասուն որդի և մի որդի Սիկիմացի կնոջից, Աբիմելէք անունով: Գեդէոնի որդոց ոչ մինը չէր փքնաւում իշխանութիւն Իսրայէլացիների վերայ բացի Աբիմելէքից: Սա էր հպարտ, վառասէր, և խստասիրտ մարդ: Գեդէոնի մահից յետ շուտով գնաց նա Սիկիմ իր մօր ազգականների մօտ, պնաւորեց նրանց Գեդէոնի միւս որդոց դէմ և անմարդաբար սպանեց բոլոր իր նղբայրներուն, բացի ամենից փոքրիին, որի անունն էր Յովաթամ: Չարագործութիւնը աշ աշց պատժի չմնաց: Սիկիմի բնակիչները, որոնք ընտրեցին Աբիմելէքին թագաւոր, առաջինը ապստամբեցան նորա դէմ: Աբիմելէք գնաց նոցա վերայ պատերազմ, պաշարեց նոցա քաղաքը, առաւ այն և այրեց: Սիկիմի բնակիչները հաւաքուեցան մի ամուր աշտարակի մէջ և կամենում էին մինչև վերջին զօրութիւնը պաշտպանել իրենց: Աբիմելէք գնաց աշտարակին և հրամայեց նորա շրջակողմը շարել փայտ, որ այրէ: Մի կին տեսնելով նրան աշտարակի մօտ, ուր ինքը փակված էր, գցեց նորա վերայ վերևից երկանի կտոր և ջարդեց եղբայրասպանի գլուխը: Աբիմելէք կանչեց իր կապարձակին և հրամայեց նրան, որ սպանէ իրեն, չկամենալով կնոջ ձեռքով մեռնել: Կապարձակին կատարեց նորա վերջին հրամանը:

ԳԼՈՒԽ ԽԹ.

Յեփթայէ:

Մի քանի ժամանակից Ամոնացիները յարձակվեցան Իսրայէլացիների վերայ Գաղաադի մէջ, Յորդանանի միւս կողմում: Իսրայէլացիները հաւաքեցին զօրք, բայց զօրավար չունէին: Ազգա որոնում էին զօրավար, միայն ոչոք չէր ուզում կամ ոչոք չէր կարողանում առաջնորդել նրանց: Նոքա միտքը բերին այն ժամանակ Յեփթայէ անունով մէկին, որին եղբայրները մի քանի ժամանակ առաջ դուրս էին գցել հայրենի տնից, և զրկել նրան ժառանգութիւնից: Յեփթայէն սոսկալից հեռանալ հայրենիքից և բնակեցաւ օտար երկրում, ուր նա անուանի եղաւ իր քաջութեամբ: Եւ այս պատճառով էլ Իսրայէլացիները ասում էին. «եթէ Յեփթայէն մեր մէջ լինէր, յայտնի բան է, նա մեզ կազատէր»: Եւ նոքա մարդիկ ղրկեցին և կանչեցին նրան, որ իրենց զօրավար լինի:

Յեփթայէն էր քաջ և մեծահոգի, միայն չկարողացաւ նա զսպել իր օրինաւոր բարկութիւնն և ասաց իր մօտ եկած պատգամաւորներին, ինչպէս չարացած մարդ. «դուք չէիք, որ ինձ աքսորեցիք հայրենի տնից և սոսկացիք ինձ օտար երկրում թափառել. ինչու՞ այժմ ձեր նեղութեան ժամանակն եկաք ինձ մօտ»:

Այլ երբ լսեց ամեն թշուառութիւնները, որ քաշում էին իր քաղաքակիցները, մոռացաւ իր սեփական նեղութիւնները և ղրկանքն ու շտապով գնաց օգնելու Իսրայէլացիներին: Յեփթայէի նման մեծահոգի և կարեկից մարդը շուտ յանձն չէ առնել արիւնահեղութիւն: Նա աշխատում էր ամեն կերպի պատերազմը վերջացնել և երկու անգամ ղրկեց Ամմոնացւոց թագաւորին մօտ պատգամաւորներ, յորդորելով նրան, որ յետ կեցնայ իր անօրէն պահանջմունքներից և խաղաղութիւն անէ:

Բայց Ամմոնացւոց թագաւորը չընդունեց ոչ մի առաջարկութիւն. ուստի և Ցեփթայէն վճռեց պատերազմ տալ:

Պատերազմի դաշտը դուրս գալիս Ցեփթայէն առանց մոռնալու խոստումն արաւ, որ եթէ յաղթող կ'ինայ, ողջակէզ կընէ առաջին բանը, ինչոր իր տնից իրեն առաջ դուրս կ'գայ: Նա ջարդեց Թշնամիին, քշեց նրան իր երկրի սահմաններից և աղատեց իր նեղացած հայրենիքը: Յաղթութեամբ տուն դառնալիս, պատահեցաւ նրան քաղաքի դրան մօտ իր միամօր աղջիկը. Սա Գաղաադացի կանանց և աղջիկների հետ իր Ցնողին առաջ դուրս էր եկել, որ շնորհաւորէ նրան. Ցեփթայէն, երբ նրան տեսաւ, սարսափած պատառեց իր շորերը: «Աղջիկս իմ». աղաղակեց նա «ես սարսափելի խոստումն արի»: Հեզ աղջիկը հասկացաւ նորա միաքն ու ասաց խոնարհութեամբ. «ով հայր. կատարիր քո խոստումդ, երբ Աստուած պարգևեց քեզ յաղթութիւն: Միայն, տուր ինձ հրաման, որ երկու ամիս իմ ընկերակիցներովս գնամ սարը և լամ իմ կուսութիւնս: Այս ժամանակի անցնելից յետ Ցեփթայէն կատարեց իր խոստումն:

ԳԼՈՒԽ Ը.

Սամիսոն:

Ցեփթայէի մահից յետ Իսրայէլացիները իրենց անօրէնութեանց համար ընկան Փղշտացիների իշխանութեան տակ: Երկար ժամանակ տանջվեցան նորա այս ծառայութեան մէջ. վերջապէս Աստուած տուեց նրանց մի արտաքոյ կարգի մարդ, Սամիսոն անունով, որ սարսափեցրեց փղշտացիներուն. Հրեշտակը յայտնեց նորա Ցնողներին, թէ նրանց կ'ծնի որդի գերբնական զօրութեամբ: Երբ նա հասակ առաւ, կամեցաւ ամուսնանալ մի փղշտացի աղջկան հետ: Ծնողները յայտնեցին նրան,

որ Աստուածային օրէնքը արգելում է Իսրայէլացիներին օտարազգիների հետ կապակցութիւն ունենալ: Բայց Սամիսոն չլսեց նրանց և անպատճառ կամենում էր կատարել իր կամքը: Աստուած բանը այնպէս կարգեց, որ Սամիսոնի ամուսնութիւնը ինքը միջոց եղաւ փղշտացիներից վրէժ հանելու, նոցա Իսրայէլացիներուն նեղացնելու համար:

Միանգամ Սամիսոն, երբ գնում էր իր հարսի մօտ, դաշտումը տեսաւ մի առիւծ, որ նորա վերայ յարձակեցաւ: Սամիսոնը բռնեց և պատառեց նրան: Մի քանի ժամանակից, երբ յետ էր դառնում մի և նոյն ճանապարհով, հանդիպելով իր պատառած առիւծին, կամեցաւ տեսնել նրան և գտաւ ամբողջ մեղուների գունդ, որոնք մեղր էին շինել նորա բերնում: Նա առաւ մեղրից, համը տեսաւ և բերաւ իր հօրն ու մօրն էլ, որոնք նոյնպէս կերան նրանից, միայն չասաց որտեղից էր առել այն: Իր հարսանիքի օրը նա, այն ժամանակուան սովորութեամբ, առաջարկեց փղշտացիներին մի հանելուկ այն պայմանով, որ եթէ նոքա կ'իմանան եօթն օրուան մէջ. Սամիսոն, պէտք է, ամեն հիւրերին մի մի ձեռք շոր ընծայեր (հիւրերը երեսուն հոգի էին). իսկ եթէ առասպելը չկարողանան լուծանել փղշտացիները, պէտք է, իրենք նրան տային երեսուն ձեռք շոր:

Ահա նորա առասպելը, «Ուտողից դուրս եկաւ ուտելիք և հզօրից քաղցր:

Այսպիսի առասպելը անկարելի էր իմանալ, որովհետև Սամիսոնի սխրագործութիւնն առիւծի դէմ ոչոք չէր իմանում, բայց Սամիսոն յայտնեց խորհուրդն իր հարսին, որ պատմեց այն փղշտացիներին: Հիւրերը ձեռնամուխ, իրրև թէ իրենք իմացան առասպելն, ասացին, ի՞նչ է մեղրից քաղցր և ի՞նչ առիւծից զօրեղ: Սամիսոն հասկացաւ, որ իր խորհուրդը հարսի դաւաճանութեամբը յայտնված է, բայց պայմանին նա-

յերով շորերը պէտք է տար: Նա երկար չմտածեց, թէ որտեղ ղէց առնէ շորերը: Գնաց Օհադեան քաղաքը, սպանեց այնտեղ երեսուն փղշտացիների և բերաւ նոցա շորերը հիւրերին, որոնք հրաւիրած էին հարսանիքում և բաժանեց դնաց իր հօր տունը: Նորա կնոջ հայրը կարծելով որ Սամփսոն բոլորովին թողեց իր կնոջ տունց նրան կին ու ոչխարին: Մի քանի ժամանակից Սամփսոն եկաւ իր կնոջ մօտ և երբ իմացաւ, որ նրան ուրիշին կին են տուել, սառնութեամբ չկարողացաւ համբերել այդ անպատուութեան, վճռեց այս բանի համար վրէժ հանել բոլոր փղշտացիներից: Ընդի ժամանակը նա բռնեց երեք հարիւր ագուէս, երկու երկու կապեց նրանց պոչերից և պոչերի մէջ վառած ջահ դնելով բաց թողեց գրուէնի դաշտերի մէջ, որոնք փղշտացիներին էին պատկանում: Այսպէս այրվեցան նոցա ոչ միայն արտերն, այլ և խաղողի ծառերը ու ձիթենիներն էլ բոլորովին ջնջվեցան:

Փղշտացիք պահանջում էին, որ Իսրայէլացիները Սամփսոնին կապած իրենց ձեռքը մատնեն, ապա թէ չէ, սպառնում էին, որ կրակի և սրի զոհ կանեն բոլոր բնակիչներուն: Սամփսոնը անձնատուր եղաւ Իսրայէլացիներին և թողեց իր ձեռքերը կապել չուաններով, բայց երբ փղշտացիները, նրան առած, կամենում էին տանել իրենց հետ, Սամփսոն կարեց չուաները ինչպէս կծուծ, սատակած էշի ծնօտր վերը առաւ և այսպիսի զէնքով սպանեց հազար փղշտացի:

Մի անգամ էլ պատահեցաւ նա մի քաղաքում, որ պատկանում էր փղշտացիներին: Կառավարութիւնը պահպանել էր բաւ այն տան մօտ, ուր նա կեցնում էր և երբ գիշեր եղաւ, քաղաքի դռները փակվեցան. ամենքը կարծում էին, թէ Սամփսոնին անկարելի է փախչել, բայց Սամփսոն բարձրացրեց քաղաքի դռները իր սեմով և նրանց ու իր ուսին գրած տարաւ քաղաքի մօտ եղած սարի գլուխն և հանգիստ էլն գարձաւ տուն:

Երբ Սամփսոնի քաջութիւնը հասկացան փղշտացիները, նա երբէք չէր կրնկել փղշտացիների ձեռքը: Ապաքաղաքաց նա ծանօթացաւ մի Դալիլա անուամբ փղշտացի կնոջ հետ: Փղշտացիները փոքրով և ընծաներով խաբեցին այս կնոջ, որ իմանայ Սամփսոնից, թէ ընչից է նորա այն անհաղթ զօրութիւնը: Նա ՝ի գործ դրաւ ամեն կերպի հնարքներ, որ իմանայ նորա գաղտնիքը: Վերջապէս Սամփսոն, չգիտնալով նորա խնդրելուն և հաւատալով նրան, յայտնեց, որ ծնողները իր ծննդից նուիրել են նրան Աստուծոյ, որ նորա մազերը երբէք գերծած չեն եղել և որ իր բոլոր զօրութիւնը կախված է մազերից և եթէ սրանց կորուն, նա ուրիշ մարդկանցից աւելի զօրեղ չլինիլ: Դալիլան քնացրեց նրան և մինչև որ նա անհոգութեամբ հանգստանում էր, կանչեց վարպետ վերայիչ, հրամայեց գերծել նորա գուխը, ու յետոյ կանչեց նորա թշնամիներուն: Սամփսոն, երբ զարթեցաւ, զգայ իր ակարութիւնն և սոսկալեցաւ մատնել իր անձը Փղշտացիների ձեռքը, որոնք հանեցին նորա աչքերը, փակեցին շղթաներով և ընչին ծառուկի պէս հրամայեցին տրել բանտում:

Այս դարսափելի անբախտութիւնից յետոյ Սամփսոնը զղջացաւ և հանեց վրէժ իր թշնամիներից: Նրանք մեռան, իր հետ միասին սպանեց շատ Փղշտացիներ էլ: Երբ նորա գլխի մազերը մեծացան, նոցա հետ միասին յետ գարձաւ նորա առաջին զօրութիւնն էլ:

Մի անգամ Փղշտացիները կազմեցին մեծ հանդես իրենց Դագոն Աստուծոյ պատուի համար և բազմութեամբ հաւաքված նորա տաճարում չնորհակալութեան զոհեր էին բերում նրան, որ այսուհետ իրենց ահագին թշնամիից՝ Սամփսոնից: Այս միջոցին դուրս բերին Սամփսոնին էլ որ ծաղր անեն նրան, որ ամենին ցոյց տան նորա այժմեան անզօրութիւնն և սկսան ծիծաղել վրան: Փղշտացիները ամենևին չէին կարծում, որ էլ

Նորա զօրութիւնը չէս կ'դառնար։ Ծերերն, երիտասարդները, կանայք, երեխաները, ամենքը ծիծաղում էին Սամփոնի վերայ և տանջում էին նրան։ Թշուառ կոյրը խնդրեց իրեն մանաճողին, որ մօտեցնէ նրան տան սիւներին, ուր խրախանում էին նրան ծաղր անողները։ Շինուածը հաստատած էր սիւների վերայ։ Տափարակ տանիքի վերայ կային այն ժամանակ մինչև 3000 հոգի։ Սառան մօտեցրեց նրան սիւներին։ Սամփսոն աղօթք արաւ Աստուծոյ և խնդրեց նորա օգնութիւնը. յետոյ երկու ձեռքով շարժեց տեղից երկու միջին սիւներն, որով քանդվեցաւ բոլոր շինուածն և ոպանեց թէ նրան և թէ բոլոր այն տեղ եղող Փղշտացիներուն։ Այս մի անգամն նա սպանեց աւելի Փղշտացի, քան թէ բոլոր իր կեանքումն մինչև այն օրը։

ԳԼՈՒԽ ԾԱ.

Հռութ։

Այն ժամանակ, երբ դատաւորները կառավարում էին Իսրայէլացւոց ազգին, նոցա երկրում միանգամ սով ընկաւ։ Յուդայի Բեթղեհէմ քաղաքի բնակիչներից մինը, Եղիմելէք անունով, իր Նոոմին կնկով և երկու որդիկներով տեղափոխեցաւ Մովաբացւոց երկիրը։ Եղիմելէք մեռաւ և Նոոմինը իր երկու որդոց հետ, որոնք Մովաբացի կին առան, մնաց Մովաբացիների երկրում։ Նորա հարսերից մէկի անունն էր Կրփա և միւսինը Հռութ։ Փոքր ժամանակից յետոյ Նոոմինի որդիքն էլ բայց հարսերը կենում էին նորա մօտ։ Իր տեղափոխութիւնից տասն տարի յետոյ Նոոմին իմացաւ, որ Իսրայէլացւոց երկրում սովը վերջացել է, միաը դրաւ դառնալ իր հայրենիք։ Հարսերըն էլ գնացին հետը։

Ճանապարհին մնաճում էր իր աղքատութեան վերայ և նորա վերայ, թէ ինքը չէ կարող կերակրել իր հարսերուն։

«Իմ աղջիկներս ասաց նա նրանց. «գնացէք ձեր ծնողների մօտ։ Աստուած օրհնէ ձեզ, որ դուք էիք բարի կանայք իմ հանգուցեալ որդոց և յարգութեամբ վարվում էիք ինձ հետ։ Ես շատ ցաւում եմ, որ չեմ կարող ձեր համար մի բան անել, միայն դուք իրենքդ տեսնում էք, ինչպէս ես խեղճ եմ։ Հարսերը լաց եղան և Որփան դրկելով իր սկեսրին համբուրեց, հրաժարական ողջոյն տուեց և գարձաւ տուն։ Նոոմին ասաց Հռութին. «Դու տեսնում ես, Որփան գարձաւ իր ազգի, աստուածների և Աստուածների մօտ, հետևիր դու էլ նորա օրինակին»։ Հռութ պատասխանեց. «Ջէ, ես քեզ չեմ թողնել, ուր որ դու կ'երթաս, ես էլ կ'գամ հետդ, քո ազգը կ'լինի ինձ ազգ և քո Աստուածդ ինձ Աստուած։ Ուր դու կ'մեռնիս, այնտեղ էլ ես պէտք է մեռնիմ։ Միայն մահը կ'բաժանէ ինձ քեզ նից»։ Եւ Հռութ գնաց Նոոմինի հետ։

Հռութ Նոոմինի գարձը յայտնի եղաւ բոլոր Բեթղեհէմի մէջ։ Բոլոր բնակիչները պատեցին նրան ասելով, «Դու ես Նոոմին»։ — «Ինձ էլ մի՛ անուանէք Նոոմին, այսինքն, գեղեցկագոյն, այլ կանչեցէք ինձ դառնացած.» պատասխանեց Թշուառ կնիկը։ «Դառնութիւններով լիքն է իմ կեանքս. Տէրս հեռացաւ ձեզանից և այժմ աղքատ գարձրեց ինձ Աստուած»։

Նոոմին հասաւ Բեթղեհէմ գարնի հնձի ժամանակ։ Օրվան հացի կարօտ լինելով, Հռութը գնաց արտ, մնացած հասկերը հաւաքելու։ Թէպէտ օտարականը չէր իմանում, ուր երթայ, բայց Աստուած բերից նրան մի հարուստ մարդու արտը, որ իր մարդու ազգականն էր և անունը Բոոս էր։ Սա եկաւ քաղաքից, որ նայէ ինչպէս քաղել են գարին, կանչեց հնձողների վերակացուին և հարցրեց. «այս ի՞նչ կին է»։ Վերակացուն պատասխանեց. «սա Մովաբացի աղջիկն է, որ Նոոմինի հետ եկաւ, նա հրաման ուզեց, որ հաւաքէ մնացած հասկերը։ Նա այնտեղ արտում առաւօտից մինչև այժմ աշխատում է և ոչ մի րոպէ չէ հեռացել»։

Բոոս մտածելով Հռութին ասաց. «Ազգական, մի երեսար ա-
րուիշ արտը. Մնա իմ ազախինների մօտ և գնա նոցա ետևից,
ուր նոքա կ'հնձեն։ Ես կ'հրամայեմ իմ բոլոր ծառաներին, որ
նոքա քեզ հետ քաղցրութեամբ վարուին։ Երբ ծարաւիս, կ'ա-
մէ՛ր այն տեղից, ուր խմում են իմ ծառաները»։ Հռութը
երկրպագեց նրան մինչև գետին և ասաղակեց. «Ինչո՞վ արժա-
նացայ ես այդքան ողորմութեան, ես այսպիսի մի ծառայական
կին եմ»։ Բոոս պատասխանեց նրան. «Ես պիտեմ դու ինչպես
չարգուհեամբ վարուեցար քո սկեսրոջ հետ, մարդուդ մահից
յետոյ։ Ասուած կ'վարձատրէ քեզ, քո որդիական սիրոյդ հա-
մար։ Խնդրեմ Տէր Ասուածը, որին դու հաւատացիր, կ'հա-
տուցանէ քեզ»։ «Ես արդէն բաւական վարձատրուած եմ նրա-
նով էլ, որ դու այդպես ողորմած ես ինձ», պատասխանեց
Հռութ։ Դու ինձ մխիթարեցիր, քո քաղցր խօսակցութեամբդ,
ինձ, որ աւելի փոքր եմ քան թէ քո վերջին աղախինդ»։—
Ո՛չ թէ իմանային բարդաւորները, թէ ինչպիսի բարերարու-
թիւն է թվում նոցա մի քաղցր խօսքն էլ նեղացած որի
համար»։

Երբ ճաշի ժամանակ եկաւ Բոոսը կանչեց Հռութիին, որ իր
ծառաների հետ ուտէ. ինքը աճուռի էր նորա համար կերա-
կուր։ Հռութ կշտացաւ և պահեց փոքր ինչ իր սկեսրի հա-
մար էլ։ Ճաշից յետ այն տոպէին նա էլի աշխատանքը սկսաւ։
Բոոսը հրամայեց հնձողներին արտում աւելի հասկեր թողնել,
որ նա հեշտութեամբ կարողանայ հաւաքել։ Հռութ հաւաքեց
մինչև երեկոյ, յետոյ հոդացրեց հաւաքած հասկերը. ծեծեց
նրանց և եղաւ ամբողջ արդու գործի։

Իրեկոյեան Հռութ տարաւ իր սկեսրին գարին և իր պա-
հած կերակուրը։—«Աղջի՛կս, ով ողորմեց քեզ, ազաղակեց Նո-
մին, Ասուած օրհնէ այն կարեկից մարդուն»։ Ես հաւաքում
էի հասկեր Բոոսի արտում, պատասխանեց Հռութ»։—«Նա մեզ

ազգական է։» ասաց Նոոմինը. «Նա միշտ սիրում էր մեր հան-
գուցեալներուն, նոցա կենդանութեան ժամանակ, այժմ նոցա
մահից յետոյ էլ մտում ունի հին բարեկամութիւնն և այն
պատճառով անում է ողորմութիւն մեռած բարեկամների այրի-
ներին։ Աստուած օրհնէ նրան։ Իսկ դու սիրելի աղջիկս, ու-
րիշի արտ մի՛ գնար հասկ հաւաքելու, օտար մարդիկ խստու-
թեամբ և անպատշաճ կերպով կ'վարուին հետդ»։ Նոոմին տա-
կաւ էր իր հարսին շատ ուրիշ օգտաւէտ խրատներ էլ և Հռ-
ութը միշտ պատրաստ էր նորա հրամանները կատարելու։

Գարնի և ցորենի հնձի ժամանակ Հռութ հաւաքում էր
հասկեր Բոոսի արտում։ Երբ հունձը վերջացաւ, Բոոս ասաց
նրան. «աղջի՛կս, Ասուծոյ օրհնութիւնը քեզ վերա լինի։ Քո
ամենի վարմունքդ յայտնում է սէրդ դէպի քո սկեսուրդ։ Դու
ամենևին երիտասարդների սիրոյն եռևից չընկար. բոլոր քա-
ղաքը համարում է քեզ առաքինի կնիկ։ Եթէ դու համաձայն
ես և ոչոք չի ընդդիմանալ իմ նպատակիս, ես կ'ամուսնանամ
քեզ հետ»։ Բոոս յայտնեց իր միտքը ծերերին և ամենք հա-
ւանեցան, բազդաւորութիւն ցանկանալով նրան։ «Աստուած
օրհնէ կնոջդ, ինչպէս նա օրհնեց մի ժամանակ Հռաքելին և
Լիային, Իսրայէլացւոց ազգի մայրերուն», ասում էին նրան ծե-
րերը և բոլոր ժողովուրդ, «Աստուած պարգևէ քեզ որդի նրա-
նից, փառաւորվի անունդ Բեթղեհեմի մէջ»։

Բոոս ամուսնացաւ Հռութի հետ. Աստուած տուեց նրանց
որդի, որին անուանեցին Ովբէդ։ Սա էր Յեսսէի հայրը. իսկ
Յեսսէն էր Դաւթի հայրը, որի վերայ յետոյ կ'խօսենք։ Երբ
Ովբէդը ծնաւ, Բեթղեհեմի կանայք շնորհաւորում էին Նոոմի-
նին ասելով. «Օրհնեալ է Աստուածը, որ չթողեց քեզ անզա-
ւակ։ Ահա քո հարսիդ Հռութի որդին, Հռութի, որ քեզ այն-
պէս սիրում է և որ քեզ աւելի ուրախութիւն է պատճառում
քան թէ եօթն որդիք։ Աստուած այս երեխայն խրկեց քեզ

ուրախութիւն և կերակրիչ ծերութեանդ ժամանակ»: Նոյնիսկ առաւ երեխային իր գիրկը, եղաւ նորա դայեակը և մեծ սիրով կրթում էր նրան:

ԳԼՈՒԽ ԾԲ

Հեղի դատաւորն և քահանայապետը:

Պատերազմասէր զօրավարներից յետոյ, Հեղի քահանայապետը դառաւ դատաւոր Իսրայէլացւոց ազգին քառասուն տարի շարունակ: Նա բնակում էր այն ժամանակ Սելով քաղաքում, ուր էր վկայութեան խորանը: Այս տեղ բերում էին ընտանեաց մեծերը իրենց խաչների նախածիններուն, պտուղների երեխայրիքը և տասանորդը ամեն իրենց եկամտից. այս տեղ հաւաքվում էին բոլոր Իսրայէլացիները Ուխտի տապանակի առջեն Աստուծոյ մատաղ բերելու համար:

Հեղին երկու որդի ունէր, մէկի անունն էր Ովնի և միւսինը Փենեհէս, որոնք երկուսն էլ ամենևին Աստուծոյ երկիւղ չունէին և ոչ էլ յարգում էին խորանի սրբութիւնն և Աստուածպաշտութիւնը: Հեղին արդէն շատ ծեր էր. նա գիտէր իր որդոց անկարգ վարքը, յաճախ նրանց յանդիմանում էր, միայն այնպէս թոյլ, որ նոքա բանի տեղ չէին գցում:

Նոյն ժամանակումն կենում էր էլի մի բարեպաշտ մարդ Եղկանա անունով, որ երկու կին ունէր՝ Աննա և Փեննանա անունով: Վերջինը ունէր որդիք, իսկ Աննա, թէպէտ և աւելի սիրելի էր մարդուն, միայն ամուլ էր և այս շատ տրտմեցնում էր նրան: Աննան ամեն տարի գնում էր Սելով աղօթելու և զոհ անելու Աստծուն: Միանգամ ուրեմն ժամանակ, Աննան մենակ գնաց խորանի մօտ. որ տեղ էր և Հեղի քահանայապետը: Աննան ջերմեռանդութեամբ աղօթք էր անում Աստուծոյ. որ պարգեւէ իրեն մի որդի և խոստացաւ նրան Աստուծոյ ծառայութեանը նուիրել խորանումը: Հեղին երկար ժամանակ նայում էր նրան և տեսնելով, ինչպէս նորա երեսը վառվում էր, շրթունքները շարժում էին առանց մի բառ արտասանելու, կարծեց, թէ նա հարբած է և ասաց նրան. «Մինչեւ ե՞ք քեզ, որ հարբած Աստուծոյ տուն ես եկել. գնա և արբեցութիւնդ անցկացրու»:—«Ո՛հ, պատասխանեց Աննան. «ես հարբած չեմ, այլ ես թափում եմ Աստուծոյ առաջ իմ սրտիս ցաւն և խնդրում եմ նորա օգնութիւնը»: Իսրայէլացիների մէջ կնկայ համար ոչ միայն անպատուութիւն. այլ ամօթ էլ էր համարվում որդի չունենալը: «Գնա խաղաղութեամբ» ասաց Հեղին: Մի քանի ժամանակից Աննան ծնաւ որդի և անուանեց Սամուէլ:

Աննան, երբ երեխային ծծից կարեց, իր մարդու և փոքրիկ Սամուէլի հետ միասին գնաց Սելով: Գնաց քահանայապետին մօտ ասաց. ես այն կինին եմ, որ քո առաջիզ աղօթք էի անում Աստծուն և խնդրում էի, որ ինձ որդի պարգեւէ: Աստուած լսեց խնդիրքս և ահա ես Նրան նուիրում եմ իր պարգեւը: Ահա իմ որդիս, թող մնայ սա այս տեղ խորանում և ծառայէ Աստուծոյ բոլոր իր կեանքում: Շնորհակալութիւն առնելից յետ սրտաշարժ և խորհրդաւոր երգով Աննան թողից Սամուէլին Աստուծոյ տանը, քահանայապետի հովանաւորութեան տակ. որ կրթում էր նրան և սովորցնում էր նրան Աստուծոյ օրէնքները: Աննան ամեն տարի ծնունդ դալիս էր Սելով և բերում էր իր որդոց համար նոր շոր: Սա մխիթարվում էր, երբ լսում էր ամենից, որ իր որդին շատ ժրաջան է, խոնարհ և երկիւղած և տեսնում էր, որ, իր որդին զօրանում է մարմնով և հոգւով: Աննան այնուհետև ունեցաւ էլի տղայ երեք որդի և երկու աղջիկ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Սամուէլ։

Սամուէլը, վեռ երեխայ ժամանակը, քնում էր միշտ վկայութեան խորանում։ Հեղլի քահանայապետը քնում էր փոքր ինչ հեռու այնտեղից առանձին սենեակում։ Միանգամ գիշերով Սամուէլը լսեց ձայն, որ կանչում էր։ «Սամուէլ, Սամուէլ»։— Սամուէլը կարծելով, թէ քահանայապետը կանչում է իրեն. վազեց նորա մօտ և ասաց. «Ես այստեղ եմ, դու էիր կանչում ինձ». բայց Հեղլին պատասխանեց. «Ես քեզ չեմ կանչել, գնա քնիր»։ Նորից էլի մի անգամ կանչեց. «Սամուէլ, Սամուէլ». երեխան վեր կացաւ և վազեց քահանայապետի մօտ ասելով. «Դո՛ւ ինձ կանչեցիր, ես այս տեղ եմ.—Չե, որդեակ. ես քեզ չեմ կանչել». պատասխանեց Հեղլին, «գնա քնիր». և Սամուէլը քնեցաւ. բայց էլի զարթեցրեց նրան այն ձայնը, որ կանչում էր, «Սամուէլ.» Սամուէլ.» նա էլի գնաց քահանայապետի մօտ. և ասաց։ «Դու ինձ կանչեցիր և ես եկայ»։ Այն ժամանակ Հեղլին հասկացաւ, որ Աստուած ինքը կանչում է երեխային, և ասաց նրան. «գնա պրդեակ և քնիր. միայն եթէ էլի կ'լսես ձայն, պատասխան տուր. «Խօսա, Տէր, քո ծառայը լսում է քեզ»։ Սամուէլ քնեցաւ և չորրորդ անգամն էլ լսեց էլի ձայն. որ կանչում էր. «Սամուէլ, Սամուէլ»։ Այն ժամանակ Սամուէլը ասաց. «խօսիր, Տէր, ծառայ լսում է քեզ»։ Աստուած ասաց նրան, կ'գայ օրը, երբ ես կ'պատժեմ Հեղլիին և նորա որդոցը։ Հեղլին գիտէ իր որդոց յանցանքներն և չէ պատժում նրանց։

Առաւօտը, երբ Սամուէլ վեր կացաւ դուրս գնաց խորանից, նա չէր սիրա անում պատմել քահանայապետին Աստուծոյ խօսքերը։ Բայց Հեղլին կանչեց նրան իր մօտ ասելով. «Սամուէլ որդեակ. «Ա,յս տեղ եմ ես», պատասխանեց Սամուէլ։ «Խնդրում

եմ քեզ, ասաց Հեղլին, «մի ծածկիր ինձանից, ինչ որ Աստուած քեզ յայտնեց»։ Այն ժամանակ Սամուէլ պատմեց քահանայապետին ամենը, ինչոր Աստուած իրեն յայտնեց և ոչ ինչ չծածկեց։ Հեղլին հպատակելով Աստուծոյ կամքին, ասաց, «նա է Տէրը, թող լինի նորա կամքը»։

Մինչև Հեղլի որդիք չէին Աստուծոյ անհնազանդ, այլ և բոլոր Իսրայէլացւոց ազգն էլ, ուստի և պատժվեցան պատերազմելիս Փղշտացւոց հետ։ Իսրայէլացիները յաղթվեցան և փախան կռվի դաշտից։

Այն ժամանակ ծերերից մի քանիսը ասացին. «եթէ ուխտի Տապանակը հետերնիս տանինք, յայտնի բան է, յաղթութիւնը մեր կողմում կ'մնայ և մենք կ'ջարդենք Փղշտացիներուն»։ Խրկեցին Սելով Ուխտի Տապանակի եռանից, որ բերուն նրան։ Հեղլի որդիք Ոփնին և Փենեհէսը պէտք է բերէին Տապանակը։ Միևն Իսրայէլացիները այս կռվումն էլ ջարդվեցան։ Նոքա կորցրին երեսուն հազար հոգի կռվում, իսկ մնացած զօրքը ազատվեցաւ փախչելով։ Ուխտի Տապանակն ընկաւ թշնամիների ձեռքը և Հեղլի որդիք, Ոփնին ու Փենեհէսը սպանվեցան։ Մի պիտուր որ ազատվեցաւ այս կոտորածից, Սելով քաղաքը վազելով, յայտնեց այս բանը քահանայապետին, որ խորանի դուռն մօտ նստած անհամբերութեամբ սպասում էր կառքի հետքերին։ Հեղլին, տարտամանքով և արհամարհանքով պաշարած, ընկաւ կռնակի վրայ աթոռից, որի վրայ նստած էր, կոտրեց իր պիղը (մէջքի ոսկորը) և մեռաւ։ Նա ինսունուն տարեկան էր։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Սամուէլը զոհը և յաղթութիւնը Փղշտացւոց դէմ։

Փղշտացիք Իսրայէլացւոց երկրում ամեն բան թրի և կրակի

կերակուր արին։ Ոչոք չէր համարձակում նրանց դէմ կենալ. սարսափը պաշարեց բոլոր խեղճ ազգին ամեն տեղ։ Նոյն իսկ Տապանակը, Իսրայէլացւոց սրբութիւնն, ընկաւ Թշնամիների ձեռք. նոքա, պէտք է, հասկանային, որ այս ամեն Թշուառութիւնները ծագեցան իրենց մեղքից, և որ մինչև նոցա յոյսը Տապանակին վերայ դնելն էլ Աստուծոյ ընդունելի չեղաւ. նոքա ոսկով պատեցին Տապանակը, ուր դրին Աստուծոյ տուած պատուիրանները, միայն իրենց սրտերը չկրթեցին և չսովրեցրին այն պատուիրանները կատարելու։

Սամուէլ դառաւ Իսրայէլացւոց ազգի ազատիչը։ Նա հաւաքեց ցրուած Իսրայէլացւոց և նրանց իրենց մոլորութիւններից, որոնց մէջ ընկել էին, դարձնելով ասաց. «Միայն մի բան կարող է ձեզ փրկել. դարձէք բոլոր սրտով դէպի Աստուած և կատարեցէք նորա ամեն հրամաններն. այն ժամանակ նա ձեզ կազատէ»։

Ժողովուրդը ախոռ և զղջալով բոլոր օրը անցկացրեց պահով և աղօթքով ու բարձր ձայնով աղաղակում էր. «Մենք մեղանչեցինք Աստուծոյ դէմ»։ Սամուէլ ողջակէզ բերաւ գառը և աղօթք արաւ Աստծուն։ Աստուած լսեց նրան. այն ժամանակ երբ դեռ ողջակէզն ծուխը բարձրանում էր, Իսրայէլացիների վերայ յարձակեցան Փղշտացիները և կռիւը սկսաւ, յանկարծ սարսափելի գոռոցք եղաւ. Փղշտացիները սարսափած ջարդվեցան ու փախան։ Իսրայէլացիները քշեցին նրանց իրենց սահմաններից և Աստուած խրկեց Փղշտացիների վրայ զանազան Թշուառութիւններ, մինչև որ նոքա յետ դարձրին Ուխտի Տապանակը։ Առաջ դրին նոքա նրան Դագոն կուռքի բազնում, միայն միւս օրը գտան Դագոն կուռքը ընկած գետնի վերայ Տապանակի առջևը։ Երբ նոքա կուռքը իր տեղը դրին, միւս օրը գտան նրան ոչ միայն ընկած գետնի վերայ, այլ և առանց գլխի և ձեռների։ Սրանից յետոյ Աստուած խրկեց Փղշտացւոց

վերայ անթիւ մկներ և մահ։ Այն ժամանակ Փղշտացիները, ընդհանուր խորհրդով, վճռեցին. որ Ուխտի Տապանակը դնեն կառքի վերայ, որին լծեցին երկու դեռ չլծված երինջներ և բաց թողին։ Անասունները, առանց կառավարի, տարան Տապանակը Իսրայէլացւոց երկիր։ Այսպէս Աստուած ցոյց տուեց Իսրայէլացիներին. որ միայն արտաքին Աստուածապաշտութիւնը չէ բաւական մարդուս, այլ պէտք է ուղղել իր ղգացմունքները էլ, կատարելով Աստուծոյ սուրբ պատուիրանները։

Սամուէլ այն տեղում, մինչև ուր Իսրայէլացիները Փղշտացիներուն քշեցին, դրեց քար և անուանեց նրան վէմ օգնականի։

ԳԼՈՒԽ ԾԵ.

Սաւուղի թագաւոր ընտրվելը։

Ռաքինի Սամուէլն էր դատաւոր Իսրայէլացւոց ազգին, բայց երբ ծերացաւ, իր իշխանութիւնը յանձնեց իր երկու որդոց, որոնք ամենևին նորա արդարասիրութեանը և ռաքինութիւններին մասնակից չէին։ Ազգը անբաւական էր նրանցից և Սամուէլից թագաւոր էր պահանջում։ Սամուէլ այս մասին հարցրեց Աստծուն և Աստուած հրամայեց նրան որ թագաւոր ընտրէ և ինքը ցոյց տուեց ընտրվելու մարդուն։ Բենիամինի տոհմի բաժանումը բնակում էր մի հարուստ մարդ Կիս անունով։ Սա ունէր որդի, որ երևելի էր ամենից իր մեծ հասակով, գեղեցկութեամբ և զօրութեամբ։ Նրան նմանը չկար բոլոր Իսրայէլացւոց մէջ։ Մի անգամ Կիսի էշերը կորան։ Նա խրկեց իր որդուն Սաւուղին, մի ծառայի հետ, կորած անասուններուն փնտռելու համար։ Սաւուղ իր ծառայով գնաց Եփրեմի տոհմի լեռները, միայն չգտաւ, ինչ որ փնտռում էր։ Յետոյ երեք օր ի զուր թափառեցաւ և արդէն միտը դրել

էր դառնալ. միայն նորա հետ եղած ծառան առաջարկեց նրան մտնել մերձակայ քաղաքը. «Այն տեղ է այժմ սուրբ մարդը, Սամուէլ մարգարէն, ասում էր ծառան, նա կ'ասէ մեզ, ուր պէտք է փնտռենք կորած էշերուն»:

Սաւուղ գնաց մարգարէի մօտ: Սամուէլին, դեռ մի օր առաջ յայտնել էր Աստուած, որ Սաւուղը ընտրած է իրանից Իսրայէլացւոց թագաւոր: Սամուել տարաւ Սաւուղին իր հետ բաւա քաղաքը, ուր պէտք է ժողովէր ժողովուրդը և լինէր ազգային խրախճանք: Այս տեղ Սաւուղին հիւրերի մէջ առաջին տեղը նշանակվեցաւ և ուրիշ կէտակուրների հետ միասին բերին իրեն մարգարէի հրամանով առաջվանից նորա համար պատրաստած ազդրը: Միւս օրը, երբ Սաւուղը տուն էր դառնում, Սամուէլ նրան ճանապարհ գցեց քաղաքից դուրս և հետը առած սրանով իւղը ածեց Սաւուղի գլխին: Այս կերպով նա օծեց նրան թագաւոր: Սաւուղ եկաւ տուն: Ազգականները հարցրին նրան, թէ ինչ ասաց նրան մարգարէն: «Նա ասաց ինձ», պատասխանեց Սաւուղ, որ մեր էշերը շուտ կը գտնվին», որ ձշմարտիւ էլ կատարվեցաւ. բայց ծածկեց այն գաղանիքը, որ իրեն յայտնվեցաւ, այսինքն, որ ինքը օծվեցաւ Իսրայէլացւոց թագաւոր:

Գլ. ՈԻԽ. Ծ2.

Սաւուղ Իսրայէլացւոց թագաւոր:

Սամուէլ հաւաքեց Իսրայէլացւոց բոլոր ցեղերը Մասեփաթ քաղաքում, որ ընտրեն թագաւոր: Վիճակ գցեցին տոհմերի մէջ և վիճակ դուրս եկաւ Բենիամինի տոհմին. յետոյ էլի գցեցին վիճակ Բենիամինի տոհմի ընտանեաց մէջ և վիճակը դուրս եկաւ Ամաասարէսի ցեղին. էլի գցեցին վիճակ Ամասարէսի ցեղի մարդոց մէջ և ելաւ վիճակը կիսի որդուն Սաւուղին: Բայց Սաւուղ պահվեցաւ: Սամուէլ գտաւ նրան և հանեց հաւաքված ժողովուրդի առաջին: Սաւուղ գեղեցիկ էր տեսքով և ուսով չափ բարձր էր ամեն իր առջև կանգնածներից. «Ահա թագաւորը, ասաց Սամուէլ, «որին Աստուած ձեզ տուեց, սրան նմանը չկայ բոլոր Իսրայէլի մէջ»: Ժողովուրդը տեսնելով գեղեցիկ և երիտասարդ մարդուն ուրախութեամբ աղաղակեց, «կեցցէ մեր թագաւորը»: Միայն մի քանիսը անրաւականացին ճանաչին այս ընտրութեամբ. Նորա անարգում էին Սաւուղին և ասում էին. «ի՞նչ կարող է նա մեր համար անել»: Սաւուղ լռեի թէ չլսեց այս խօսքերին. և դարձաւ իր հօր տունը և մի քանի ժամանակ կեցաւ այնտեղ անյայտութեան մէջ: Սաւուղ օծված սուրբ իւղով ասային մարգարէութեան չնորհք: Ամմոնացիք պաշարեցին Յաբէս քաղաքը և ստառնում էին, թէ քաղաքի բնակիչները աջ աչքերը պէտք է հանեն: Նորա պատշաճավածներին եօթն օր ժամանակ տուին մտածելու համար. Յաբէսի բնակիչները ամրացրած խրկեցին մարդիկ Բենիամինի տոհմից օգնութիւն խնդրելու: Սաւուղ, երբ լսեց Յաբէսի բնակիչների ողորմելի դրութիւնը, շատ ախրեցաւ. Աստուծոյ հոգին իջաւ նորա վերայ: Նա առաւ երկու եղներ, կտոր կտոր արաւ նրանց, և խրկեց Իսրայէլացւոց ամեն ցեղերին, հրամայելով յայտնել թէ ով որ չէ զինաւորվել իր հետ միասին Ամմոնացւոց դէմ, նորա եղներն էլ այսպէս կ'կտրվին: Իսրայէլացիք ահնքը զենք առան, ժողովեցան վեց հարիւր հազար թանասուն հազար հոգի: Այս զօրքով Սաւուղ յարձակեցաւ Ամմոնացւոց վերայ, բաղդովին ջարդեց նրանց և ազատեց Յաբէս քաղաքը: Այն ժամանակ Իսրայէլացւոց սրտը ուրախացաւ, օրհնել սկսաւ Սաւուղին և գոչում էր. «Ամաննիր մեր ձեռք նրանց, որոնք չէին կամենում քեզ թագաւոր ընտրել իրենց. մենք նրանց կապանեցինք»: բայց Աստուած փրկութիւն խրկից Իսրայէլ-

լացող ազգին, ոչ ոք չգիտք է կորչի։ Այս յաղթութեամբ և մանաւանդ իր մեծահոգութեամբ, Սաւուղ ամէնի սիրտը գրաւեց։ Ապա Սամուէլ յայտնի օծեց նրան Իսրայէլացւոց թագաւոր։

Կառավարութիւնը ընտրած թագաւորին յանձնելով Սամուէլ ժողովեց ազգը և ասաց. «Ես աշխատում էի հաստատակաց բարութեան համար իմ մանկութիւնից մինչև այսօր։ Այսուհետև ժողովրդին կ'կառավարէ թագաւորը։ Ես կանգնած եմ ձեր առջևը, ով Իսրայէլացիք, պատասխանեցէք իմ մասին ի բեն Աստուծոյ և Նորա օծեալի առաջին, արդեօք զղկեցի ես մէկին իր սեփականութիւնից, նեղեցի ես արդեօք մէկին. կրտրեցի արդեօք մէկի դատաստանը անարդար կամ երեսպաշտութեամբ և առի արդեօք մէկից ընծայ։ Թող պատրաստ եմ ամէն բան ուղղելու, ամէն բան յետ դարձնելու»։ Բայց բոլոր ժողովուրդը միաձայն աղաղակեց. «Ոչ էիր մեր հայրը, դու երբէք անարդարութիւն չես արել մեզ օրհնում ենք քեզ»

Սաւուղ, իր քաջ որդուն Յոնաթանի օգնութեամբ մեծ գործեր կատարեց, շատ ևրևելի յաղթութիւններ էր անում և միշտ պատում էր Իսրայէլացիներուն իրենց թշնամիներից։

Մեծ յաջողութիւնները, իշխանութիւնը և փառքը մոլորեցուցին Սաւուղին։ Ինչքան որ մեծանում էր նորա զօրութիւնը, նորա սիրտը լքցւում էր զեղխութեամբ։ Սամուէլ յաճախ զգուշացնում էր նրան։ բայց սա չէր լսում նրան։ Մի անգամ, երբ յաղթեց Ամաղեկին, Աստուծոյ կամքը կատարելու տեղ, իր շահի համար ընտիր խաշները իրեն աւար առաւ, որ Աստուած հրամայել էր բոլորը ջնջել, բացի սրանից համարձակվեցաւ ինքը Աստծու զոհ էլ բերել։

Սամուէլ ասաց Սաւուղին. «Ես պէտք է յայտնեմ քեզ Աստուծոյ կամքը, որ նա ինձ այս գիշեր ասաց։ Երբ դու ինքդ քեզ ոչինչ էիր համարում, ընտրեց քեզ Աստուած Իսրայէլացւոց թագաւոր, բայց այժմ դու հպարտացար, ընչասէր եղար և մոռացար Աստծուն, որ քեզ այնքան բարութիւններ արաւ։ Աստուած այլհամարհում է քեզ և քո թագաւորութիւնը կ'տայ ուրիշին»։

Այս ասաց և երեսը դարձրեց, որ հեռանայ նրանից, միայն Սաւուղ զղջալով բռնեց նորա փէշից և պատռեց։

Աստուած ողորմում է հնազանդներին և հակառակ է հպարտներին։

Այս ժամանակից յետոյ Սամուէլ էլ իսկի չգնաց Սաւուղի մօտ և էլ չտեսաւ նրան մինչև նորա մահը, թէև էլի միշտ աղօթք էր անում նորա համար և լաց էր լինում նորա վերայ։ Սաւուղ ընկաւ մեծամտութեի մէջ, յաճախ սխրում էր նրան տխրութիւն և անհանգստութիւն. միայն նա չէր փնտռում մխիթարութիւն Աստուծոյ մէջ և չէր աշխատում իրեն ուղղել։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Դաւիթ։

Սամուէլը տխրում էր միշտ էլի, որ Սաւուղ բարկացրեց Աստծուն։ Աստուած ասաց Սամուէլին, «մինչև երբ դու լաց կ'լինես Սաւուղի վերայ։ Նա էլ թագաւոր չի լինիլ Իսրայէլացւոց վերայ։ Գնա Բեթղեհէմ, Յեսսէի որդու ցեսսէի տունը. ես ընտրեցի նորա որդոց մէկին թագաւոր»։

Սամուէլ գնաց Բեթղեհէմ, բերեց Աստուծուն զոհ և հրաւիրեց ցեսսէին իր որդոց հետ զոհ ուտելու։ Երբ նորա եկան, Սամուէլը տեսնելով ցեսսէի մեծ որդուն Եղիաբին, որ քաջ, բարձրահասակ և գեղեցիկ տեսքով մարդ էր, կարծեց իր մտքում, թէ, յայտնի բան է, սա կլինի օծեալը։ Բայց Աստուած

պատասխանեց Նրան. «Մի նայիր ոչ հասակին և ոչ գեղեցկութեանը» սա չէ իմ ընտրածս»։ Աստուած, վարդոց պէս, աչքին տեսքով չէ դատում։ Մարդս տեսնում է միայն, ինչը նորա աչքի առաջևն է։ բայց Աստուած տեսնում է սիրտն էլ։

Յեսսէն Սամուէլի առաջ հանեց իր երկրորդ որդուն Ամինադաբին։ Սամուէլ ասաց. «Չէ, Աստուած դրան չէ ընտրել»։ Նրանից յետ հայրը Սամուէլի առջև հանեց իր երրորդ որդուն։ «Սա էլ չէ ընտրած աստուածմէ». ասաց Սամուէլ։ Յեսսէն հանեց մարգարէի առաջ իր եօթն որդոց էլ մէկին միւսի ետևից։ «Սրանցից ոչ մէկին Աստուած չէ ընտրել». ասաց Սամուէլ։

Ոչոք չէր հասկանում, ինչ են նշանակում այս խօսքերը։ Ուրիշ որդի էլ չունեն դու արդեօք». հարցրեց Սամուէլ։ «Ունիմ էլի մի որդի. պատասխանեց Յեսսէն, ամենից փոքրն է նա. Դաւիթը, նա արածում է իմ ոչխարները».—«Նուա մարդ խրկիր նորա ետևից, ասաց Սամուէլ։ Թող գայ նա մեր սեղան նրա տեղից առաջ»։

Հայրը խրկեց մարդ, կանչեց Դաւիթ և հանեց Սամուէլի առջև երեխային, որ գեղեցիկ էր երեսով և քաղցր տեսքով։ Այն ժամանակ Աստուած ասաց Սամուէլին. «ահա իմ ընտրածը. օծիր սրան թագաւոր»։

Սամուէլ առաւ եղջիւր իւղով և օծեց Դաւիթին, իր բոլոր եղբայրների ներկայութեամբ։ Աստուծոյ Հոգին իջաւ օծեալի վրայ և այնուհետև մնաց միշտ նորա հետ։

ԳԼՈՒԽ ԾԲ.

Երիտասարդ Դաւիթը արքունի պալատում։

Աստուծոյ Հոգին բոլորովին թողեց Սաուղին, որ սրտով զեղխացել էր։ Սաուղ ընկաւ տրտմութեան մէջ, և տանջվում էր չար ոգուց։ Ով որ իրեն Աստուծոյ տրտմութեանը անարժան

է զգում, չէ պղջում իր վատ գործից վերայ և չէ աշխատում նրանց լաւացնել, նա չէ կարող ամենևին հանգիստ լինել, ինչպիսի մեծ փառքով և մեծութեամբ էլ պատած լինի։

Պալատականները ասացին Սաուղին. «Թագաւոր, երէկ կրհրամայես, մենք կբերենք քեզ մօտ մի մարդ, որ լաւ ածում է քնար, դուցէ երաժշտութիւնը վերադարձնէ քո տրտմութիւնը»։—«Բարի է, պատասխանեց Սաուղ. «ճանաչում էք մի այնպիսի մարդ»։ Այն ժամանակ պալատականներից մէկը ասաց. «Բեթղեհէմացին էլ, Յեսսէի որդին քնար էր ածում։ Նա գեղեցիկ ածում է. բացի սրանից նա շատ խելօք է, բարեպաշտ և Աստուածահաճոյ»։ Սաուղ այն րոպէին խրկեց Յեսսէի մօտ Բեթղեհէմ մարդ, հրամայելով նրան, շուտ խրկել իր որդուն Դաւթին, որ արածում է նորա ոչխարները։ Յեսսէն առաւ մի քանի հաց, մի տիկ գինի, ուլն և խրկեց Դաւթին այս դիւղական ընծաներով Թագաւորի մօտ. Այն ժամանակ Իսրայէլացոց երկրում սովորութիւն էր Թագաւորի մօտ ընծաներով երթալ։

Դաւիթ յայտնվեցաւ Սաուղին և շատ սիրելի եղաւ նրան։ Թագաւորը նրան իրեն կապարճակիր շինեց և հրամայեց Յեսսէին ասել, որ ինքը պահում է նորա որդուն իր մօտ, որովհետև արժանացաւ իր պաշտպանութեանը։ Այն անգամ, երբ տրտմութիւնը տիրում էր Սաուղին, Դաւիթ ածում էր քնար— և այս շրջում էր Սաուղի տխրութիւնը ու չար ոգին, որ տանջում էր նրան, հեռանում էր նրանից։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Գողիաթ։

Փղշտացիները նորից պնդեցան Իսրայէլացւոց դէմ. Սա-

ուղղ դուրս եկաւ նոցա դէմ իր զօրքով։ Փղշտացւոց զօրքը վեր եկաւ սարի գլխին։ Իսրայէլացիներն նմանապէս վեր եկան նոցա դէմուդէմ միւս սարի գլխին։ Հովիտը բաժանում էր երկու զօրքերուն մէկ մէկից։

Փղշտացւոց բանակից առաջ դուրս եկաւ մի հսկայ, Գողիաթ անունով։ Նորա հասակն էր կարգից դուրս բարձր, գլուխը ճաճկած էր երկաթէ սաղաւարտով, և ինքը հագած ունէր պղնձի զրահ։

Զեռին ունէր տէգ ահագին մեծութեամբ։ Նորա բոլոր զէնքն էր շատ ծանր և ցոյց էր տալիս նորա արտաքոյ կարգի զօրութիւնը։ Նորա առջևից գնում էր նորա զէնակիրը, որ տանում էր նորա նիզը։

Գովաբ մէջ ցած իջնելով Գողիաթ կանչեց Իսրայէլացիներին. «Ինչո՞ւ դուք ամենքդ պատրաստուում էք կռւի։ Ես Փղշտացի եմ և դուք Սաւուղի ծառաներն էք։ Ընտրեցէ՛ք ձեր մէջից մէկին, որ կարողանայ իմ հետ մենամարտիլ։ Եթէ նա ինձ կըսպանէ, մենք կ'լինենք ձեր ծառաները, իսկ եթէ ես նրան կըսպանեմ, դուք եղէք մեր ծառաները։

Այսպիսի առաջարկութիւն որ լսեցին, Սաւուղ և բոլոր Իսրայէլացիներն խռովեցան շատ և սարսափեցան։ Իսկ Գողիաթ ծաղր էր անում նրանց, տեսնելով, որ ոչոք չէ համարձակվում դուրս գալ իրեն դէմ և պարծենում էր զօրութեամբ։

Դաւիթ, որին Սաւուղ չէր կամենում իր հետ առնել պատերազմ նորա մանկութեան պատճառով, յետ դարձաւ էլի իր հօր ոչխարները արածելու, բայց նորա երեք մեծ եղբայրներն էին արքունի զօրքումն։ Յեսսէն ասաց Դաւթին. առ հաց և տաք զօրաց բանակը եղբայրներիդ համար։ Ահա էլի տասն կըտոր նոր պանիրներ, որ կտաս դու նոցա հազարապետին. տեսղեկացիր, արդեօք եղբայրներդ առողջ են և ինչպէս են գնում գործերը»։ Դաւիթ, որ առաւն բանուին հնազանդ էր հօրը և

սրտանց սիրում էր եղբայրներուն, ուրախութեամբ գնաց բանակը, տանելով իր հօր տուած պաշարը։

Երկու կողմն էլ արդէն պատրաստ էր պատերազմելու, երբ Դաւիթ եկաւ այնտեղ։ Ինչոր հետը բերել էր, տուեց վանապանին։ Իսկ ինքը նգաց իր եղբայրներուն տեսնելու։ Այն ժամանակ Գողիաթ հսկայն առաջ դուրս եկաւ թշնամեաց զօրքի մէջից, պարծենում էր իր զօրութեամբ ու նախատում էր Իսրայէլացիներուն։ Սրան տեսնելիս Իսրայէլացիները վախեցած փախան։ Բայց Դաւիթ ասաց. «Ով է այս չանդուդն մարդը որ համարձակվում է նախատել Աստուծոյ ազգի զօրքին։ Ի՞նչ վարձատրութիւն է նշանակած նրան, ով որ կ'սպանէ այս հըպարտ Փղշտացիին և կ'ազատէ Իսրայէլացիներուն ամօթից։

Դաւիթ մեծ եղբայրը նկատեց նորա խօսքերն և չարացաւ։ «Ինչո՞ւ եկար դու այս տեղ, Ասաց նա։ Այս քո տեղդ չէ։ Գնա, արածի՛ր ոչխարներուդ, ինչո՞ւ թողնիր նրանց անապատում։ Ես քո հպարտութիւնդ և սրտիդ չարութիւնը գիտեմ, դու հետաքրքրութեանից եկել ես պատերազմ տեսնելու»։ Դաւթի եղբայրներն էին հպարտ և կոպիտ և այս պատճառով էլ Աստուած չընտրեց նրանց։ Բայց Դաւիթ հեզութեամբ և խոնարհութեամբ հոմբերում էր նոցա կոպտութեան և Աստուած ընտրեց նրան։ Աստուած ցածացնում է հպարտներուն և բարձրացնում է խոնարհներուն։

Օտար մարդիկ, որ կանդնած էին Դաւթի մօտ, սկսեցին քաղցրութեամբ վարվիլ նորա պատասխանների նրան։ «Ով որ կ'յաղթէ այս հսկային, նրան թագաւորը ինքը կ'վարձատրէ, նա իր աղջկան նրան կին կ'տայ և նորա հօր տունը հարկից ազատ կ'լինի»։ Դաւիթ, որ բոլոր սրտով սիրում էր հայրենիքը, յայտնեց, որ ինքը շատ ցանկանում է կռվել հսկայի հետ։ Այս բանը հասցրին Սաւուղի ականջն և նա հրամայեց Դաւթին իրեն մօտ բերել։

Դաւիթ թագաւորն առջև գալով ասաց նրան. «Թագաւոր, ոչընչից մի վախենար, հրաման տուր ինձ, որ երթամ մարտնչեմ այս Փղշտացիի հետ»։ Սաւուղ պատասխանեց. «Ինչպէս կարող ես դու յաղթել այն հսկային։ Դու դեռ մանուկ ես, իսկ նա հասակ առած մարդ է և մանկութենիցը սովոր է պատերազմի»։

Դաւիթ պատասխանեց. «Երբ ես արածում էի իմ հօրս ոչխարները, երբեմն դալիս էր գայլ և յափշտակում էր ոչխարներից մէկին, ես ընկնում էի ետևից ու խլում նորա բերանից առարը, բայց եթէ ընդդիմանում էր ինձ, բռնում էի նորա փողից և սպանում էի նրան։ Առիւծ և արջ էլ սպանել է իմ ծառան։ Նոյն կերպով կ'վարվեմ ես այն Փղշտացի հետ էլ։ Ինչպէս համարձակվեցաւ նա նախատել Աստուծոյ զօրքին։ Աստուածը, որ ինձ ազատեց առիւծի և արջի բերանից, կազատէ Փղշտացիի ձեռքից էլ»։

«Գնա Աստուած քեզ հետ լինի», ասաց թագաւորը։ Սաւուղ հրամայեց հագցնել Դաւթին պղնձէ սպաստարէն, գլուխ և կապել մէջքին իր սեպհական սուրը։ Դաւիթ այսպէս զինուորված մեն եկաւ յետ ու առաջ և տեսաւ, որ շատ ծանր է, նա չէր սովոր այսպիսի զինուորական զրահին։ «Ես չեմ կարող մեն գալ այսպէս զինուորված, ասաց նա, ու հանեց սաղաւարտը, զրահն և թուրը. վեր առաւ իր հովուական ցուպը, ընտրեց գետի ափից հինգ հարթ քարեր, ձեռը առաւ իր պարսը և այս զէնքով միայն դուրս եկաւ հսկայի դէմ։

Գողիաթ դուրս եկաւ պատերազմի ահեղ կատարելապէս զինուորված և առաջևից գնում էր նորա զինակիրը։ Նա, երբ տեսաւ Դաւթին, արհամարհեց նրան։ Դաւիթ քնքուշ մանկութիւնը և հեզ դէմքը ամենևին չէին ցոյց տալիս նորա քաջ և զօրեղ զինուոր լինելը։

«Միթէ շուն եմ ես, որ իմ դէմ քարերով ես գալիս, ասաց

հսկային։ Շուտով ես քո մարմինդ կերակուր կ'տամ երկնային թռչուններին և երկրային գազաններին»։

Դաւիթ պատասխանեց. «դու դուրս ես գալիս իմ դէմ վահանով, սուրով և տեգով, իսկ ես գալիս եմ քո դէմ Յովսեթեանց և Իսրայէլի Աստուծոյ անունովը, որին դու անարգում ես։ Այժմ Աստուած կ'մատնէ քեզ իմ ձեռս և բոլոր երկիրը կ'իմանայ, որ նա է միայն ճշմարիտ Աստուած։ Ամեն այս ներկայ ժողովուրդը կ'լինի վկայ, որ Աստուծոյ օգնութիւնը աւելի զօրեղ է քան թէ սուրն և տեգը, ձեզ Աստուած կ'մատնէ մեր ձեռքը»։

Հսկայն գնաց Դաւթի վերայ. եղ հասաւ թէ Դաւիթը աներկիւղ դուրս եկաւ նորա առաջ և իր պարսը առնելով դցեց նրանով մի քար Փղշտացու վերայ. քարը պատռեց նորա ճակատը։ Գողիաթը երեսով ընկաւ գետնի վերայ. իսկ Դաւիթ առնելով նորա ահագին սուրը կարեց գլուխը։ Փղշտացիները, իրենցից ամենից զօրեղին սպանած տեսնելով, վախեցան և փախան։ Իսրայէլացիները, պատերազմական ձայներ հանելով, ընկան նոցա վերայ և հալածեցին, կոտորեցին նրանց, յրուեցին և ոտնակոխ արին նոցա գունդերը։ Ինչպէսեաց բոլոր բանակն ընկաւ յաղթողների ձեռքը։

ԳԼՈՒԽ Կ.

Յովնաթան։

Գողիաթին յաղթելից յետոյ Դաւթին տարան Թագաւորի առջև։ Սաւուղ ընդունեց նրան քաղցրութեամբ, իսկ նորա որդի Յովնաթանը սիրեց Դաւթին բոլոր սրտով։ Նա գտաւ Դաւթի բարեկամին և տեսնելով նորա առաքինութիւնները սիրում էր նրան ինչպէս իր կեանքը։ Բարեկամութեան նշանի համար Յովնաթան ընծայեց Դաւթին իր շորը, թուրը, աղե-

ղը և նեռները։ Սաւուղ յիշ գաւազանին վրայ առաւ հետը Դաւիթին։ Այն քաղաքներում, որոնց մօտից անց էին կենում, աղջիկները նոյա առաջ էին դուրս գալիս երգերով ծնծղաներով։ Իրենց հանդիսաւոր գովասանական երգերում էին նոքա. «Սաւուղը յաղթեց հազարին, իսկ Դաւիթ բիւրերին»։ Ուրախութիւնը, որով ամեն տեղ ընդունում էին Դաւիթին և գովասանութիւնները, որ նրան տալիս էին, տրտմեցրին Սաւուղին, որ բարկացած ասաց. «Դաւիթին ինձնից գերազանց են համարում, ուրեմն ի՞նչ է նրան պակաս, միայն թագաւորութիւն»։ Այս ժամանակից Սաւուղ սկսաւ կասկածել Դաւիթի վերայ և նորա առաջվան այսահարութիւնն էլ նորոգվեցաւ։ Միանգամ Դաւիթ ածում էր քնար թագաւորի մօտ։ Սաւուղ վեր առաւ տէգը և գցեց նորա վերայ. բայց Դաւիթը ճարպիկ ազատվեցաւ այս հարուածից։ Այս երկու անգամ պատահեցաւ։

Դաւիթ էլի միանգամ յաղթեց Փղշտացիներին և Սաւուղ այս պատճառով աւելի ատեց նրան։ Նա իր որդու Յովնաթան էլ առջև հրամայեց թիկնապահներին սպանել Դաւիթին, բայց Յովնաթան ասաց. «Թագաւոր մի մեղանչիր քո ծառայ Դաւիթին. նա անմեղ է։ Ինչպէս Դաւիթը արաւ, բոլորը քո օգտին համար էր, Քեզ համար չխնայեց իր կեանքը, նա չէ՞ որ սպանեց Գողիաթին. նա չէ՞, որ ազատեց Իսրայէլացիներուն։ Դու ինքդ վկայ էիր նորա քաջութիւններին, դու ինքդ գովեցիր նրանց, ինչո՞ւ համար ես կամենում թափել անմեղ արիւն, ինչո՞ւ ես կամենում սպանել նրան, որ քեզ ոչնչ չէ արել»։ Այս խօսքերը կակղացրին Սաւուղի սիրտն և ասաց. «Չէ. թող Աստուած ինքը վկայ լինի, ես չեմ սպանում Դաւիթին»։ Այն ժամանակ Յովնաթան բերաւ Սաւուղի մօտ իր բարեկամին։ Սաւուղ իր Մեղքերի պղծկից ապչկից նրան կին։

Ետու սրանից յետոյ Դաւիթ կրկին յաղթեց պղշտացիներ-

րին, այս էլի նորոգեց Սաւուղի սրտի մէջ նախանձը։ Նորա առաջվան այսահարութիւնը նորոգվեցաւ առաւել զօրութեամբ։ Նա նստած էր տանը պեղարդը ձեռին և Դաւիթն ածում էր քնար և երգում։ Սաւուղ դցեց նորա վերայ գեղարդը. բայց Դաւիթ մի կողմ քաշվեցաւ և գեղարդը ցցվեցաւ պատի մէջ։ Նոյն գիշեր Դաւիթը գնաց և պահվեցաւ լեռներում։

Մի քանի ժամանակից յետոյ թագաւորը, երբ նստած էր սեղանի առջև, հարցրեց. «Ինչո՞ւ Յեսսէի որդին չէ գալի իմ սեղանիս մօտ. նա երեկ էլ չկար, այսօր էլ չէ երևում։ Յովնաթան սկսաւ արդարացնել Դաւիթին. և այս մտքին Սաւուղ շատ չարացաւ. «Դու անհնազանդ որդի», գոչեց նա, «ես գիտեմ, դու ինձ և մօրդ ամաչցնելու համար ընտրել ես քեզ բարեկամ Յեսսէի որդուն։ Այս րոպէիս հրամայիր բերել նրան այս տեղ. նա, պէտք է, մեռնի»։ Յովնաթանը հեզութեամբ պատասխանեց. «Ինչո՞ւ պէտք է զրկես նրան կեանքից, նա ի՞նչ է արել»։ Սաւուղ բարկացած վեր առաւ գեղարդը և կամենում էր սպանել իր որդուն։ Յովնաթան, վեր թռաւ սեղանից, դուրս գնաց և ախորժութիւնից բոլոր օրն ոչինչ չկերաւ։ Այն միտքը, որ իր Հայրը վճռել է Դաւիթին սպանել, շատ արխուցնում էր նրան։

Միւս օր առաւօտը վաղ Յովնաթան գնաց սարը այն տեղ, ուր պահված էր Դաւիթ, միայն նրան էր յայտնի սորա թագնված տեղը։ Դաւիթ նորա առաջ դուրս եկաւ։ Յովնաթան խորհրդ տուեց նրան, որ ոչ ոքին չյայտնվի և իրարից հրաժարվելիս գրկեցին միմիանց և լաց էին լինում երկուսն էլ. վերջապէս Յովնաթանը ասաց։ «գնա խաղաղութեամբ, բարեկամութիւնը, որով մենք Աստուծոյ երեսն առաջը երդում տուինք, միմեանց անբակտելի, Աստուած թող վկայ լինի իմ և քո մէջ, իմ որդուց և քո որդոյդ մէջ»։ Սրանից յետոյ նոքա հե-

ռացան մէկ մէկից։ Յովնաթանը գարձաւ տուն. իսկ Դաւիթ հեռացաւ խորը անապատի մէջ։

Սաւուղ շարունակից հալածել Դաւթին անապատումն էլ։ Նա խրկեց իր բոլոր զօրքը գանագան կողմեր Դաւթի ետևից։ «Եթէ գետնի տակն էլ պահված լինի, այնտեղից էլ պէտք է գտնվի նա». ասում էր Սաւուղ։ Բայց Դաւիթը հեռացաւ շատ հեռու և անապատ տեղեր։ Յովնաթան այն տեղ էլ գտաւ նրբան և աշխատում էր մխիթարել նրան ու զօրացնել նորա մէջ այն յոյսը, որ նա ունէր Աստուծոյ վերայ։ «Ոչնչից մի վախենա՛ր, ասում էր նա, «իմ հօրս ձեռը չէ կարող քեզ հասնել դու կ'լինիս ժամանակով Իսրայէլի թագաւոր. իսկ ես կամենում եմ երկրորդը լինել քեզնից յետ»։

Յովնաթանը յաւիտեան կ'մնայ հաստատ բարեկամութեան բարի օրինակ։

ԳԼՈՒԽ ԿԱ.

Նաբաղ և Գբիգիա։

Դաւթի պաշտպանը Սամուէլ վախճանեցաւ։ Նորա վերայ լաց եղաւ Իսրայէլացւոց բոլոր ազգն և թաղեցին նրան Ռամի մաթեմում։

Դաւիթը շատ խղճալի դրութեան մէջ էր։ սոխվածՙ մի տեղից միւս տեղ թափառելու, նա ոչ մի տեղ չէր գտնում հաստատ ապաստանի տեղ։ Նորա կեանքը միշտ վտանգի մէջ էր, իբրև աքսորված, հեռու մարդկանց ընկերակցութիւնից, նա պէտք է ծածկվէր կամ թանձր անանցանելի անտառներում կամ խորը այրերում։ Բայց այն տեղ էլ ապահովութեան մէջ չէր, այն տեղ սպառնում էր նրան մարդասպանի նետը, այս տեղ սպառնում էին նրան Սաւուղի զինուորները։ Թէ ուրիշը լինէր նորա տեղ, կ'յուսահատվէր. բայց Դաւիթ չկորցրեց իր

արիութիւնը, նա բոլոր սրտով յոյսը դնում էր Աստուծոյ վերայ և իր տխուր աքսորանքի ժամանակը գրեց Աստուծոյ հոգւով շնչած սաղմոսները, որոնց մէջ նա իր բոլոր սիրտը բաց էր անում Աստուծոյ առջև։ Այսպես կենում էր նա անապատումն, բայց մի քանի ժամանակից յետոյ Սաուղից ամեն անբաւական և զրկեալ մարդիկը փախան և մտան Դաւթի պաշտպանութեան տակ և Դաւիթ դառաւ իշխող չորս հարիւրից աւելի մարդոց։

Մի փոքրիկ Մաոն անունով քաղաքում, որ անապատի մօտն էր, բնակում էր մի հարուստ մարդ Նաբաղ անունով։ Նա ուներ երեք հազար ոչխար և հազար այծ, որոնք արածում էին անապատում և որոնց Դաւիթ պահպանում էր։ Նաբաղը, չբնայելով իր հարստութեան, էր շահասէր և խստասիրտ մարդ։ Միանգամ Նաբաղը ժողովից բոլոր իր մշակներուն և հովիւներուն, որ կորեն հօտերը։ Այս բանի համար, այն ժամանակվան սովորութեամբ, նա կամենում էր մեծ խնճոյք կազմել։ Դաւիթ, զրկեթէ պաշարից զրկած լինելով, խրկեց նորա մօտ տասն երիտասարդներ, որոնք նորա մօտ էին և մասնակից էին լինում ամեն նորա կարօտութիւններին. նա հրամայեց նրանց հարցնել Նաբաղի և ընտանեաց առողջութիւնն ու ասել նրան. «Դաւիթը բարեխամաբար ողջունում է քեզ։ Յանկանում է քեզ և քո բոլոր ընտանեացդ ողջութիւն և ինչ որ դու ունես։ Մենք իմացանք, որ այժմ քո հովիւներդ պէտք է խուզեն քո ոչխարներդ, որոնք մեզ մօտ անապատում արածում էին։ Մենք ոչ միայն չէինք արգելում քո մարդոցդ արածելու խաշնարդ մեր մօտ, և ոչ թէ միայն ոչնչ պատ չէինք տալիս, այլ և պահպանում էինք նրանց գողերից և վայրենի գազաններից։ Հարցրու այս մասին քո հովիւներուդ, նորա, յայտնի բան է, կ'հաստատեն մեր խօսքերը։ Այս պատճառով մենք յոյս ունինք արժանանալ շնորհք գտնելու քո առջև։ Մենք քեզ մօտ

գալով այսօր, որ քո կազմած հանդեսիդ օրն է, լոյս աշխինք, որ դու կ'ուրախս մի բան Դաւթին էլ ինչպէս հայրը իր որդուն. նոյնպէս էլ մեզ՝ քո ծառաներիդ մի ուրախութիւն կ'տաս»:

Դաւիթ յայտնի էր իսլ ցեղացոյց բոլոր ազգին, ամենքը սիրում էին նրան, ամենը գովասանութեամբ լսում էին նորա վերայ. բայց Նաբաղ ձևացրեց, իբրև թէ չէ ճանաչում նրան: Նա բարկութիւնից տեղից վեր թռաւ և գոռաց. «Այդ ո՞վ է Յեսսէի որդի Դաւիթը: Այժմ շատացել են ծախսատականներն և իրենց տէրերից փախած ծառաներն, ես իմ հայս և միս, որ պատրաստել եմ իմ ծառաներիս համար, նոցա չեմ բաժանիլ. ես Դաւթին չեմ ճանաչում: Դաւթի մարդիկ ամբողջ յետ դարձան

Նաբաղի կնոջ անունն էր Աբիգիա: Սա էր խելօք, բարի և գեղեցիկ կնիկ: Հովիւներից մեկը գնաց և յայտնեց Աբիգիային այս անցքը: «Դաւիթը, ասաց նա, խրկեց իր մարդոց, որ շնորհաւորեն այս ուրախութեան օրը քո մարդուդ, բայց Նաբաղ յետ խրկեց նրանց մեծ կոպտութեամբ: Իսկ Դաւիթն և նորա մարդիկը մեզ շատ օգտաւէտ էին: Ինչքան որ մենք մնաք պատուհն էինք, բնդգի պէս պահպանում էին մեզ ցերեկը և գիշերը պաշտպանում էին աւազակներից և վայրենի գազաններից: Լաւ մտածիր, որ Նաբալի յիմարութիւնը ուղղելու հնարք գտնես: Նա վախենում եմ չլինի, թէ մի թշուառութիւն պատահի քո մարդուդ և բոլոր նորա տանը:

Աբիգիան այն րոպէին վեր առաւ երկու հարիւր նկանակ, երկու սման գինի, հինգ խաշած ոչխարներ, մի կողով չամիչ և երկու հարիւր շարուկ չոր թուզը, այս ամենը խրկեց իր ծառաների հետ Դաւթի համար, ասելով. «գնացէք դուք այս ընծաներով առաջ. շուտով ես ինքս էլ կ'գամ ձեր հետից»: Նա նստաւ իշի վերայ և գնաց ծառաների հետից, բայց գիտեանալով իր մարդու կոպիտ բնութիւնը ոչինչ չյայտնեց նրան:

Բայց այն տասն երիտասարդները արդէն յետ դարձած յայտնել էին Դաւթին Նաբաղի պատասխանը: Դաւիթ, չարացած այդպիսի խոտութեան վերայ, կապեց իր սուրն և իր մարդոցն էլ հրամայեց զինաւորվել: «Ուրեմն, ասաց նա, մենք ի՛ զուր պահպանում էինք Նաբաղի խաշները, նա մեզ բարին չարով է հատուցանում. Աստուած էլ թող այնպէս հատուցանէ մեր թշնամիներին, եթէ առաւօտը նորա բոլոր ունեցածից մի շունն էլ չի մնալ. եկէք եւևիցս:

Դաւիթը արդէն ճանապարհումն էր, նա պատրաստ էր մեծ յանցանք գործելու. բայց Աբիգիան, Նաբաղի իմաստուն կինը, ցածացրից նորա բարկութիւնը: Երբ Դաւթին հանդիպեցաւ, նա շուտ իշից իջաւ և նորա առաջին ընկնելով երկրպագութիւն տուեց նրան մինչև գետին: «Տէր իմ. աղաղակեց նա, թող իմ մարդուս յանցանքի պատիժը միայն իմ վրաս բնկնին: Հրաման տուր ինձ, քո աղախնիդ, բերել քեզ օրհնութիւն և ականջ դիր իմ խօսքերիս: Ես բերի քեզ ընծաներ, բաժանիր այն քո զինուորներիդ: Բանի տեղ մի դնիր Նաբաղի յիմարութիւնը: Դու կ'լինիս Աստուծոյ ազգի առաջնորդն, անվեզ արիւն թափելը թող չլինի արդա քո փառքիդ: Ինձ միայն բեր այն ժամանակ»:

Դաւիթ, փափկացած այս հեզ խօսքերով, ասաց Աբիգիային. «Օրհնեալ է Աստուած, որ խրկեց քեզ. օրհնեալ լինիս դու էլ, որ պահեցիր իմ ձեռքս արիւնհեղութիւնից: Դարձիր խաղաղութեամբ քո տունդ. ես կ'կատարեմ խնդիրդ»:

Իսկ Նաբաղ այս միջոցին խմում էր, ուտում էր և ուրախանում ոչինչ չկասկածելով: Միւս օր առաւօտն, երբ սթափեցաւ գինիից, կինը յայտնեց նրան, թէ ինչպիսի վտանգի մէջ էր նորա կեանքը: Նաբաղն, երբ այս լսեց, քար կտրեցաւ վախից և տասն օրից յետոյ մեռաւ: Դաւիթ, որ լսեց նորա մահը, ամուսնացաւ Աբիգիայի հետ:

ԳԼՈՒԽ ԿԲ.

Դաւթի վերջին տնտեսութիւնը Սաւուղի հետ։

Սաւուղի ամեն աշխատանքը Դաւթին բռնելու համար՝ իզուր եղան. Աստուած պահում էր այս հեզ և առաքինի մարդուն։ Չնայելով Սաւուղի բոլոր ատելութեան և հալածելուն, Դաւիթ էլի միշտ յարգում էր նրան, իբրև Աստուծոյ օծեալին և իր թագաւորին։

Միանգամ Սաւուղ երեք հազար ընտիր զինուորներով գնաց Դաւթին փնտրելու։ Նա վեր եկաւ մի սարի գլխին։ Դաւիթը իմացաւ այս և գիշերով թագուն գնաց իր ամենից հաւատարիմ զինուորի Աբեսսայի հետ միասին Սաւուղի բանակը։ Ամբողջ զինուորները, Սաւուղն զօրավարն և նորա բոլոր զինուորները խորը քուն էին մտել։ Դաւիթ Աբեսսայի հետ առանց արգելքի գնացին մինչև թագաւորի վրանը. Սաւուղի նիզակահները քնած էին և ինքը թագաւորն էլ խորին քնի մէջ էր ընկղմել։ Նորա գեղարդը ցցած էր գետնին, գլխի մօտ, այն տեղ մօտիկ էլ դրած էր ջրի կուժը։

«Աստուած մատնում է մեր ձեռը մեր թշնամիին, ասաց Աբեսսան. ես կ'սպանեմ դրան իր գեղարդով»։ Չէ՛, խօսքը կտրեց Դաւիթը. «չհամարձակիս ձեռդ բարձրացնել Աստուծոյ օծեալի վերայ։ Առ նորա գեղարդն և կուժն ու գնանք այստեղից»։ Նոքա վեր առան գեղարդն և կուժն ու հեռացան բանակից, և ոչ ոք չնկատեց նրանց։

Դաւիթ, վեր ելաւ դէմուդէմ եղած սարի վերայ և բարձր ձայնով դոռաց. «Աբենները, պատասխան տուր ինձ»։—Աբենները ձայն տուեց հարցնելով. «Ո՞վ ես դու»։—Դաւիթն ասաց, «դո՛ւ ես այն հաւատարիմ և քաջ զինուորն, որին նմանը չկայ բոլոր Իսրայէլի մէջ։ Այսպէ՞ս ես պահում դու քո թագաւորիդ։ Տես, ահա նորա կուժն և գեղարդը, որոնք նորա գլխի մօտ

էին դրած»։ Այն ժամանակ Սաւուղ դոչեց. «Դաւիթ, իմ որդեակս, քո ձայնդ է սա»։—Այո՛, թագաւոր, ես եմ՝ ծառադ» պատասխանեց Դաւիթ. «Ինչո՞ւ համար հալածում ես դու ինձ. արդեօք ես ի՞նչ եմ արել թագուել եմ արդեօք երբէք քո հրամաններդ առանց կատարելու. ինչո՞ւ ես կամենում Աստուծոյ առջևդ թափել անմեղ արիւն»։ Սաւուղ ասաց, «ես մեղանչեցի։ Դարձիր մօտս, որդեակ։ Որովհետև դու խնայեցիր իմ կեանքս, երբ ես քո ձեռումդ էի, ես քեզ ոչինչ չարութիւն չեմ անիլ»։

Դաւիթն ասաց. «Տես, ահա քո գեղարդդ և կուժդ։ Հրամայիր ծառաներիդդ մէկին, որ գայ և առնէ։ Աստուած ամենին կ'հատուցանէ իրենց գործոց համեմատ։ Ինչպէս այսօր մեծացար քո անձդ իմ աչքիս, այսպէս էլ կ'մեծանայ իմ անձս Աստուծոյ առաջին։ Նա կ'փրկէ ինձ ամեն չարից»։ Սաւուղն օրհնեց Դաւթին և հեռացան մէկ մէկից խաղաղութեամբ։ Դաւթի այս տեսակցութիւնը Սաւուղի հետ եղաւ վերջինը։

Սաւուղ իր բոլոր ղօրքովը չկարողացաւ յազթել Դաւթին, բայց Դաւիթ միայն մեծահոգութեամբ յազթեց Սաւուղին։

Սաւուղ, որի առաքինութեան սերը միայն րոպէական էր և սերտ չէր, շուտ սրանից յետոյ յազթվեցաւ Փղշտացիներից։ Նորա ղօրքը բոլորովին ջարդվեցաւ. նորա երեք որդիք մեռան, որոնց մէջ էր և առաքինի Յովնաթանը, Դաւթի բարեկամը։ Սաւուղ ինքը վիրաւորվեցաւ. Փղշտացիները ամեն կողմից յարձակեցան նորա վերայ և կամենում էին գերի առնել նրան։ Սաւուղ վախենալով, որ թշնամեաց ձեռը չընկնի, ընկաւ իր սրի վերայ և կոխեց նրան իր սիրտն ու մեռաւ։

Դաւիթ թէպէտ և աղաւաղեցաւ իր հօր և ահագին թշնամիից, բայց էլի չէր ուրախանում Սաւուղի մահուան վերայ։ Նա և բոլոր նորա զինուորները ողբում էին Սաւուղի և Յով-

նաթանի վերայ, որոնք մեռան պատերազմուն: Նոքա լացով և առանց ուտելու անց կացուին բոլոր օրը:

ԳԼՈՒԽ ԿԴ.

Դաւիթ Իսրայէլացւոց թագաւոր:

Սաւուղի մահի ժամանակը, Դաւիթ բոլոր իր զինուորներով կենում էր Գէթայ Անքուս թագաւորի մօտ, Սիկկլակ քաղաքում: Յանկարծ եկաւ նորա առաջ Սաւուղի զինուորներից մէկը, որ փախել էր պատերազմի դաշտից. նա բերաւ Դաւթին Սաւուղի թագաւորական թագն և ապարանջանները, յուսալով այս կերպով ողորմութիւն գտնել նրանից: Այս մարդը պատմեց. թէ երբ Սաւուղ ընկաւ սրի վերայ, մինչև ի մահ չվիրաւորվեցաւ և դեռ կենդանի էր. ուստի և իրեն կանչեց և ասաց. «սպանիր ինձ. ես խիստ տանջվում եմ և դեռ շունչս մէջս է»: Յետոյ շարունակեց եկած մարդը. «ես տեսնելով, որ Սաւուղ այնպէս վիրաւորված է, որ չէ կարող երկար ժամանակ ապրել, սպանեցի նրան, առի նորա գլխից թագն և ձեռներից ապարանջաններն և եկայ քեզ մօտ»: Դաւիթ և բոլոր զինուորները տրտմութիւնից պատառեցին իրենց շորերը: Դաւիթը ողբաց շատ Սաւուղի և իր բարեկամի Յովնաթանի վերայ:

«Ինչպէ՞ս կարողացար դու բարձրացնել ձեռդ Աստուծոյ օծեալի վերայ», ասաց Դաւիթ Սաւուղին ոպանող մարդուն. «ի՞նչպէս համարձակեցար դու քո թագաւորիդ կեանքից զրկել: Թագաւորի կեանքը Աստուծոյ ձեռքին է. նորա արիւնը քո գլխի՛ կ'լինի, որովհետև և դու ինքդ վկայեցիր քո դէմ»: Դաւիթ հրամայեց սպանել այս համբաւ բերողին:

Դաւիթ գնաց եկաւ Սիկկլակից իր ընտանիքով և վեցհարիւր զինուորներով դարձաւ իր հայրենիքն և Քեբրոնում յայտնի ընտրվեցաւ թագաւոր:

Դաւիթ Յեսսէի որդին էր, կամ Յեսսին Ովբէդի որդին էր և Ովբէդը Հռութի և Բոոսի որդին: Այսպէս ազգքաղ, բայց առաքինի Հռութի ցեղը նստաւ Իսրայէլացւոց գահը: Յետոյ էլ նորա զաւակներից ծնաւ Աստուծոյ խոստացած Մեսսիան, նա, որով Աստուած օրհնեց երկրիս բոլոր ազգերուն:

ԳԼՈՒԽ ԿՀ.

Դաւթի թագաւորական գործքերը:

Փղշտացիները, պատերազմի դաշտում գտնելով Սաւուղին և նորա որդուց մարմինները, վեր առան նրանց ու ուրիշ մեռելներուն և նոցա ապրը նախատելու համար կախեցին պիերը իրենց բերդի պատի վերայ: Յաբիսի բնակիչները լսեցին, ինչպէս մի ժամանակ քաջ թագաւորը ազատեց իրենց քաղաքը կորուստից. գիշերով ժողովեցան և իրենց կեանքը վտանգի մէջ գնելով վեր առան թշնամեաց պատերից իրենց թագաւորի և նորա որդոց մարմիններն, որոնք յարգելի էին նոցա համար, այրեցին և թաղեցին նրանց Յաբիսում ու ծօթն օր պահեցին:

Դաւիթ, երբ լսեց Յաբիսի բնակիչների այս գործը, օրհնեց նրանց և ասաց. «Աստուած թող վարձատրէ ձեզ ձեր հաւատարմութեան համար դէպի ձեր թագաւորը և ես էլ իմ կողմից կ'վարձատրեմ ձեզ»:

Սրանից յետո Դաւիթ սկսաւ պատերազմել այն օտար ազգերի հետ, որոնք Յեսու Մաւեայի ժամանակից մնացել էին Իսրայէլացիների մէջ և անդադար նոցա հետ կռիւ էին անում: Նա յաղթեց նրանց և սրբեց Իսրայէլի բոլոր երկիրը: Դաւիթ պաշարեց Երուսաղէմ քաղաքն և առաւ: Երուսաղէմ ընտրեց իրեն բնակութեան տեղ: Կարծում են որ այս քաղաքը, որ թագաւորանիստ դառաւ, նոյն Սաղէմ քաղաքն է, ուր Մելխիսեդեկը Աբրահամին պատահեցաւ: Այսպէս Աբրահամի գ

թագաւոր գոռոզ այն գեղեցիկ երկրին, որ Աստուած խոստացաւ տալ նորա ազգին:

Դաւիթ բարի և բարեպաշտ թագաւոր էր: Նա սրտով կամենում էր, որ իր ազգը լինի առաքինի և երջանիկ: Ինքն ուզեր սիրա սիրով լեքը, երախտագէտ էր Աստուծոյ և յոյսը հաստատ նորա վերայ և բոլորովին հպատակ նորա սուրբ կամքին: Այս զգայմունքներն էին նորա բոլոր երջանկութիւնն երկրիս երեսին և այն պատճառով կամենում էր արմատացնել նրանց իր հպատակների սրտերումն էլ:

Դաւիթ սկսաւ իր թագաւորութիւնը, տարածելով ազգի մէջ աստուածպաշտութեան սէրը: Երուսաղէմ քաղաքի մօտ էր Սիոն լեառը, որ ունէր բերդ էլ: Այս տեղ իրեն համար արքունիք շինելից յետոյ, կանգնեց Դաւիթ հոյակապ խորան, Ուխտի տապանակը մէջը տեղաւորելու համար, որ մինչև այն ժամանակ Կարիաթարիմ քաղաքումն էր: Երբ ամեն բան պատրաստ էր, հանդէսով տեղափոխեցին Ուխտի տապանակը նորա համար պատրաստած տեղը, և զրեթէ Իսրայէլացւոց բոլոր ազգն ուղեկից էր նրան փողերով և ուրախութեան երգերով: Բայց իր սրտումն Դաւիթ չունէց Աստուծոյ համար աւելի գեղեցիկ տուն: Նա Աստուծոյ հոգւով լցցված գրից այն սրտաշարժ և խրատական սաղմոսներն, որոնք կարդացվել հոգին աղնուացնում են և մխիթարում:

Ետ Սիոնի վրայ չունած օրհնութիւնումն Դաւիթ գոհ բերաւ Աստուծոյ, օրհնեց իր ազգին, ամենին բաժանեց հաց, գոհի միս և գինի: Այս գոհի սեղանին ամենը մանուկից և դան. այս ուրախութեան օրը վերջին աղքատն էլ Դաւիթի հրապարակներից լեցաւ կերակրով:

Դաւիթ հարցրեց. «Աստուծի ցեղից արդեօք չմնաց մի հոգի կենդանի ևս իր բարեկամիս Յոնաթանի սիրոյ համար կամենում եմ նրան ցաւութիւն անել»: Մնացել էր միայն Յոնա-

թանի մի որդին Մեմփոսթէն, որ երկու ոտով էլ կաղ էր: Նա բնակում էր Նոդաբարուսը: Դաւիթը խրկեց նորա տեսնից, բնակեցրեց իր տան մէջ և տուեց նրան Սաուղի բոլոր կալուածները և վարվում էր նորա հետ իր որդու պէս: Մեմփոսթէն միշտ ուտում էր թագաւորի սեղանից, Դաւթի որդոց հետ միասին:

ԳԼՈՒԽ ԿԵ.

Դաւթի մեղանչելն և զղջումն:

Ամեն թշնամիներուն յաղթելից յետոյ, Դաւիթ և իր թագաւորութիւնը վայելում էին խաղաղութիւն և առատութիւն: Բայց շատ անգամ բարեբաստութիւնը լինում է մեզ վնասակար: Թշուառութեան ժամանակ Դաւիթ եր առաքինի. բայց լուութեան, հանգստութեան և զօրութեան ժամանակը նա ընկաւ փորձութեան մէջ և գործեց սարսափելի յանցանք:

Ակսաւ պատերազմ Ամմոնացւոց դէմ: Առ հասարակ թագաւորներն իրենք առաջնորդում էին զօրքին. բայց Դաւիթ կամեցաւ վայելել հանգստութիւն. նա ինքը չգնաց կռիւ և թողնեց զօրքը իր զօրավար Յովաբին, իսկ ինքը մնաց Երուսաղէմում:

Միւսգամ, երեկոյեան վաղ, դուրս եկաւ նա յոտակ օդ շունչ քաշելու իր պալատի տանիքը, որտեղից երևում էր բոլոր քաղաքն և ազատ, անգործ մարդու պէս նայում էր ամեն կողմ հետաքրքրութեամբ: Անգործութիւնից ծնում են միշտ վատ մտքեր: Նա տեսաւ մի կին և գայթակղվեցաւ նորա գեղեցկութեամբը: Այս կնոջ անունն էր Բէերսաբէ: Սա էր Ուրիայի կինն, որ Դաւթի զօրավարներից մէկն էր և արժանաւոր մարդ էր: Դաւիթ խրկեց Ուրիային զօրավար Յովաբին մօտ նամակով, որի մէջ հրամայում էր սրան, որ Ուրիային

խրիչ ամենից երկիւղալի տեղն և երբ պատերազմը սաստկացնայ, նրանից բոլոր զօրքին չեա կանչէ, որ Թշնամին կարողացնայ անակնկալ ապանել Նրան: Աժեն բան կատարվեցաւ Դաւթի հրամանին համեմատ. Ուրիան ապանվեցաւ, իսկ նորա կինը Բեթսաբէէն, սուգի օրերի անցնելից յետ, տիրանացաւ Դաւթի հետ:

Մարգկերանցից ամենից լաւն էլ կարող է ընկնիլ յանցանքի մէջ, բայց առաքինի մարդը չէ ընդունակ յամառելու իր յանցանքի մէջ և երկար ժամանակ հետևանալու թարի գործմունքներից, որոնք ունէր նա իր բոլոր անցեալ կեանքի մէջ և որոնք էին նորա արդանութիւնն: Սաստուած ինքը խրկում է նրան իր օգնութիւնը: Նա խրկեց դաւթի մօտ Նաթան մարգարէին. Մարգարէն ասաց նրան. «Մի քաղաքում բնակում էին երկու մարդիկ. նրանցից մէկը հարուստ էր և միւսը աղքատ. հարուստ ունէր ոչխարների և կովերի ամբողջ խաշներ, իսկ աղքատն ունէր միայն մի գառն, որին նա դեռ շատ փոքրիկ գնել էր. նա կերակրեց նրան և այն էր նորա բոլոր հարստութիւնը: Սա մարդն էլ հանում նրան իր աղքատ կերակուրից, մի ամանից նորա հետ խմում էր, և քնեցնում էր նրան իրա ծոցումը: Բայց հարստի մօտ եկաւ հիւր. նա չխնայեցաւ նորա համար իր ոչխարներից մէկին մորթել լսելց աղքատից նորա սիրելի գառին և պատրաստեց նրանից կերակուր իր հիւրի համար»:

Սկզբում Դաւիթ չհասկացաւ այս առածն, որի մէջ նկարագրվում էր իր յանցանքը: Նա բարկացաւ շատ և դառաց. «Քաջ է մարդը, որ խլեց աղքատից գառը, արժանի է մահուան»: «Դու ինքդ վճռեցիր քո պատիժդ, ասաց Նաթան: Այս խօսքերը շատ ներգործեցին Դաւթի վերայ: Նա ճանաչեց իր յանցանքի բոլոր վատութիւնը:

Նաթան շարունակեց. «Սաստուած ասում է քեզ. «Ես օծեցի

քեզ Իսրայէլի թագաւոր. Ես ազատեցի քեզ Սաւուղի ձեռքից. Ես հպատակեցրեցի քեզ ոչ միայն Յուդայի տոհմը, այլ Իսրայէլացոց բոլոր ազանիկոտ տոհմերը: Եթէ այս փոքր է, կ'ա նեմ քեզ համար աւելի: Ինչու դու անարգեցիր քո Սաստուծոյ պատուիրանները և գործեցիր նորա առաջ այսպիսի անօրէնութիւն: Դու սպանեցիր Ուրիային Թշնամիի ձեռքով, դու առար նորա կնոջ քեզ կինը Այս պատճառով սուրը չի հեռանալ քո տնից: Ես ընտանիքիդից կ'ծագէ քեզ վնաս»: Դաւթի սարսափելով և դողալով ասաց. «Ես մեղանչեցի Սաստուծոյ առջևը»:—Նա Սաստուած ներում է քեզ մեղքդ». ասաց Նաթան: Դու չես մեռնիլ այժմ. բայց քո առաջին որդիդ Բերսաբէից կենդանի չի մնալ»:

Սաւուլն էլ քանիցս անգամ խոստովանեց, որ մեղանչեց Սաստուծոյ առաջը, բայց Սաստուած չէր ներում նրան. Սաստուած կատարում է մեր օրհասական էրաժը: Նա տեսնում էր, որ Սաւուլին գղջումն միայն խօսքերով էր: Բայց Դաւիթ գղջում էր բոլոր սրտիցը: Ա յսպիսի գղջման հետևանքը է միշտ ուղղվելը:

Դաւիթ այս միջոցին գրեց այն գեղեցիկ սաղմոսն, որի մէջ կենդանի նկարագրում է իր բեկեալ սրտի զղացմունքները: Այս սաղմոսը սկսվում է այս խօսքերով. «Ողորմեա ինձ Սաստուած ըստ մեծի ողորմութեան քոյ, ըստ բազում գթութեան քոյ քաւեա զանօրէնութիւնս իմ: (Ողորմի՛ր ինձ, Սաստուած, քո մեծ ողորմութեամբդ և քո շատ գթութեամբդ քաւիր իմ անօրէնութիւնները):

Գլուխ կգ.

Աբիսողոմի ապստամբութիւնը:

Դաւթի որդիներից ամենից արժանայիշատակներն են Աբիսողոմ և Սողոմոն: Աբիսողոմ ամենից գեղեցիկ մարդն էր

բոլոր Իսրայելի մէջ։ Արտաքուստ ոչինչ պակասութիւն չունէր նա. մանաւանդ գեղեցիկ էին նորա մազերը. բայց նորա սիրտը փառասիրութեամբ լեր էր։ Նա մաքուր դրեց չար խորհուրդ իր հօրը գահից վեր գցելու, որ ինքը թագաւորէ նորա տեղ։ Այս նպատակին աւելի հեշտութեամբ հասնելու համար, նա ամեն կերպով աշխատում էր ազգի սէրը առանալու։ Քաղաքի դրան մօտ կանգնած, հարցնում էր անցկացողներուն. «Ինչ խնդրելու են դնում թագաւորից»։ Եւ երբ մէկը պատմում էր իր գործը, Աբիսողոմ ասում էր. «գործդդ ճշմարիտ է. բայց թագաւորի մօտ չկայ մարդ, որ քո կողմը բռնէ։ Ո՜հ. թէ ես լինէի ազգի դատաւորը, ես ինքս կլսէի ամենուն և ինքս կը դատէի արդարութեամբ»։ Ով որ կամենում էր նրան պատիւ տալ, որպիսի արժան է թագաւորի որդուն, Աբիսողոմ գրկում էր նորան։ Այսպէսով նա ազգին շատ սիրելի եղաւ և ամենքը կամենում էին նրան թագաւոր ունենալ։ Նմանպէս իր կողմ գըցեց Աքիտոփելին՝ թագաւորի խորհրդականին էլ, որ մեծ պատիւ ունէր Իսրայէլացւոց մէջ։

Աբիսողոմ չէր կասկածում իր չար խորհրդի յաջողութեան մասին։ Նա գնաց թագաւորի մօտ և հրաման խնդրեց նրանից Քեբրոն քաղաքն երթալու, որ զոհ բերէ Աստուծոյ ինչպէս խոստացել էր։ Դաւիթ ասաց «գնա՛ ցերը քեզ հետ լինի, օրհնա՛կ»։ Աբիսողոմ, Քեբրոն հասնելից յետոյ, զոհ բերաւ և միևնոյն ժամանակ կազմեց դաւակցութիւն էլ հօր դէմ։ Նա առաւ թագաւորից հրաման միայն նորա համար, որ կասկածանքից ազատ լինի. երեսպաշտը բարեպաշտութեան դէմքի տակ ծածկում էր իր աւելի ժողովուրդ հաւաքելու միտքը։ Դեռ Քեբրոն գնալից առաջ, խրկեց նա հրեշտակներ Իսրայէլացւոց ամեն ցեղերուն, հրամայելով յայտնել նրանց. «երբ կ'լսվի փողի ձայնը, Աբիսողոմ Քեբրոնում թագաւոր կընտրվի»։ Ժողովուրդը ամեն կողմից հաւաքվում էր նորա մօտ և ընտրեց նրան թագաւոր։

Դաւիթ, երբ լսեցաւ այս ապստամբութիւնը, հարկաւոր համարեց հեռանալ փոքրաթիւ զօրքով, որ իր մօտ մնացել էր։ Այս փախուստի սկզբում արդէն Աստուած խրկեց Դաւթին մխիթարութիւն։ Նա ոտով փախաւ քաղաքից բոլոր իր ընտանիքով և շատ ժողովուրդ հետևեց նրան։

Դաւիթ կանգնեցաւ Երուսաղէմի մօտ։ Այն ժամանակ եկան նորա մօտ Ցովաբը, Աբիսան, Եթթի և բոլոր վեց հարիւր հոգիքը, որոնք նորա թիկնապահներն էին։ Դաւիթ, երբ տեսաւ այլազգի Եթթիին, որին նոր առել էր ծառայութեան մէջ, ասաց. «գնա նոր թագաւորի մօտ, դու այլազգի ես, ես քեզ երէկ միայն ընդունեցի ծառայութեանս մէջ և այսօր դու կամենում ես ինձ ընկեր լինիլ թշուառութեանս մէջ։ Ես ինքս դեռ չգիտեմ, ինձ ինչ կ'լինի»։ — «Որ տեղ էլ լինիս, թագաւոր ասաց Եթթին, ես քեզ կ'ծառայեմ, ես գալիս եմ քեզ հետ կենդանի մնալու կամ մեռնելու»։ «Ինանք, ևկ ուրեմն ինձ հետ», ասաց Դաւիթ, շարժած այսպիսի հաւատարմութիւնից։ Ամեն ներկայ գտնվողները լաց եղան և հետևեցին Եթթիի օրինակին։ Ամենքը գնացին իրենց թագաւորի ետևից։

Դաւիթ անցաւ Կեդրոնի հեղեղատը բոլոր իր մարդոց հետ։ Այն ժամանակ եկան նորա մօտ Սադովկ քահանայապետն և ամեն քահանաները բերելով Ուխտի Տապանակը։ Բայց Դաւիթ ասաց. «տարէ՛ր քաղաք Սուրբ Տապանակդ. եթէ Աստուծոյ հաճոյ կ'լինի, կ'դառնամ Երուսաղէմ և երկրպագութիւն կ'տամ Սուրբ Տապանակին Խորանում։ Իսկ եթէ Աստուած կ'ըսէ ինձ. ես այն ժամանակ կատարեալ հպատակութեամբ կ'ասեմ. Թող Ցո կամքդ լինի, իսկ դուք գարձէք քաղաք»։

Դաւիթ գնաց բոլորան ձիթենեաց սարի գլուխը, գլխին մոխիր ածած և լաց լինելով։ Մեծ թշուառութիւնը նորա համար իր գահից զրկվելը չէր. այլ իր սիրելի որդուն ապստամբութիւնը։

Սեմէի, որ Սաուղի թոռներից մէկն էր, դուրս եկաւ Դաւթի առաջը։ Նա քարեր էր գցում Դաւթի և նորա ուղեկիցների վրայ, անիծում էր և գոչում. «փախի՛ր, փախի՛ր մեր երկրից, դու անօրէն մարդ։ Այժմ Աստուած վրէժխնդիր է լինում, Սաուղի և նորա որդոց թափված արիւնի համար, այժմ Աստուած տալիս է քո թագաւորութիւնը քո որդուդ»։

Աբիսան, Դաւթին սիրող քաջ, հաւատարիմ և արի զինուորը, զայրացաւ շատ, լսելով այսպիսի նախատանքներ ու զրպարտութիւններ և ասաց Դաւթին. «Ի՞նչպէս համարձակվում է այս ապերին անիծել իմ թագաւորիս։ Ես չեմ կարող համբերել այս բանին և կ'կարեմ այն լրբի գլուխը»։

Դաւիթ հեզութեամբ ասաց. «Մի՛թէ դու մոռացար, որ իմ հարազատ որդիս կեանք է բարձրացրել։ Ուրեմն էլ ինչ յարգանք կարող ես պահանջել օտար մարդից։ Թող նրան, թող անիծէ ինձ։ Գուցէ Աստուած կ'ողորմի ինձ և նորա անէծքները կ'դառնան ինձ օրհնութիւններ։ Թագաւորը շարաւ նակեց իր ճանապարհը, իսկ Սեմէին երկար ժամանակ հետևում էր նրան իր անէծքներով, սարից նորա վերայ քարեր գցելով և հող ցանելով։

Դաւիթ իր բոլոր ուղեկիցներով անցաւ Յորդանանն և հեռացաւ անապատ։ Այս տեղ կարօտութիւն քաշում էին նորա ամէն պաշարների համար։ Մի առաքինի ծերունի, Բերզելէ անունով և մօրիշ էլի երիտ ճշմարիտ մարդիկ բերին թագաւորի և նորա ընկերակիցների համար անկողիններ, զանազան ամաններ և ամէն տեսակ ուտելու պաշարներ։

Ինչպիսի պանապանութիւն է անտրժան Սեմէիի վարմունքի և առաքինի Բերզելէի ազնուութեան մէջ։ Մէկը բամբասում է իր թագաւորին, տեսնելով նրան թշուառութեան մէջ, կարծելով թէ նա զուրկ է իրեն վնասելու միջոցներից, իսկ միւսը աշ-

խատում է նրան օգնութիւն տալ։ Հոգ չէ վարձատրութիւն։

ԴԱՒԻԹ ԿԷ

Աբիսողոմի մահը։

Դաւիթը մնաց անապատի մօտ եղած Մանայիմ (բանակ) քաղաքում և կարգի դրեց իր զօրքը։ Նա բաժանեց նրան երեք մասը, մի մասին վերայ զօրավար դրեց Յովաբին, միւսին վերայ Աբիսայիին և երրորդի վերայ Եթթիին։ Զօրքը անցնում էր նորա մօտով և նա իր երեք զօրավարներին ասում էր. «խնայեցէ՛ք իմ որդուս Աբիսողոմին»։

Աբիսողոմն էլ նմանապէս հաւաքեց բազմաթիւ զօրք և հանդիպեցաւ Դաւթի զօրքին Եփրեմի անտառում։ Աբիսողոմի զօրքը ջարդվեցաւ և ինքը շտապեց ապատվել փախչելով։ Նա գընում էր ջորիի վերայ նստած թանձր անտառի միջով։ Աբիսողոմի երկար գանգուր մազերը փաթաթվեցան ծառի ճիւղերին և ինքն կախվեցաւ, ջորին տակից դուրս եկաւ և գնաց։ Դաւթի զինուորներից մէկը տեսաւ այս և յայտնեց Յովաբին։ Ինչո՞ւ չսպանեցիր դու նրան, ասաց Յովաբ, ես քեզ կ'տայի դրա համար յիսուն սիկղ արծաթի։ Իսկ արդար զինուորը պատասխանեց. «Ես չէի առնուլ քեզնից հազար դահեկան էլ նորա համար, որ թագաւորը ձեռս իմ թագաւորիս որդու արիւնում։ Ես լսեցի, ինչպէս թագաւորը հրամայում էր քեզ, Աբիսայիին և Եթթիին ասելով. «խնայեցէ՛ք իմ որդուս Աբիսողոմին»։

Յովաբ զայրացած լինելով ապերախտ և անհնազանդ որդուն դէմ, առաւ երեք նետ, գնաց այն կողմը, ուր Աբիսողոմն էր և խփեց նետը նորա որտին. բայց որովհետև Աբիսողոմ դեռ կենդանի էր, տասն երիտասարդներ Յովաբի ուղեկիցներից, որոնք հասան նորա մօտ, զբկեցին նրան կեանքից։ Այն ժամանակ Յո-

վաբ հրամայեց փողերը ածել, որ պատերազմը վերջացնեն, ո-
րովհետև խնայում էր նա իր հայրենակիցներին արիւնը: Աբի-
սողմի մարմինը գցելին անասունում փոսի մէջ և ծածկեցին
քարի շեղջով:

Յայտնի բան է, ամեն այսպեղից անցկացողը տեսնելով այս
վիշատակարանը կ'սարսափէր և միտը կ'բերէր Աստուծոյ պա-
տուիրանը. «Պատուիր քո հօրդ և մօրդ, քեզ բարի կ'լինի և
երկար կեանք կ'ունենաս երկրիս վրայ»:

Դաւիթը քաղաքի դրան մօտ նստած սպասում էր պատե-
րազմի յաջողութեան աւետիքին, Լուր բերողը, որ պատե-
րազմի տեղից եկաւ, բերեց նրան Աբիսողոմի մահուան համ-
բաւը: Դաւիթ շատ ախրեցաւ, մտաւ սենեակ և դառնապէս
լաց էր լինում, աղաղակելով. «Որդեակ իմ Աբիսողոմ, որդեակ
իմ, Աբիսողոմ որդեակ իմ, ո՜հ: ոմ կ'տայ ինձ մահ քո տեղ.
Աբիսողոմ որդեակ իմ, որդեակ իմ Աբիսողոմ»: Այսպէս էր ողբ-
բում Դաւիթ իր ապերախտ որդու մահը, որ կամենում էր
նրան գահից զրկել:

Գլուխ կը.

Դաւիթի իր թագաւորութիւն դառնալը:

Բոլոր ժողովուրդը ուրախութեամբ Դաւիթի առաջը դուրս
եկաւ նրան ընդունելու: Սուրհանդակներ իրկվեցան թագաւո-
րի մօտ խնդրելու նրան, որ շուտ դառնայ իր մայրաքաղաքը:
Դաւիթ էլի մտաւ Երուսաղէմ:

Միայն Յորդանանին մօտեցաւ, հանդիպեցաւ Սեմէիին, այն
Սեմէիին, որ այնպիսի ցածութեամբ նախատում էր նրան,
զըպարտում և անիծում նրան անթաղդութեան ժամանակ: Սե-
մէին ընկաւ թագաւորի ոտները, ասելով. «Թագաւոր, մոռացիր
այն զրկանքներին, որ ես քեզ տուի, քո Երուսաղէմից փախչե-
լու օրը, ես յանցաւոր էլի քո դէմ, բայց այժմ ես առաջինը

չէմ արդեօք, որ քո առաջը դուրս եկայ»: Աբիսան գոչեց, «ի՞նչ
դեռ համարձակվում է պարծենալ, մի՞թէ Սեմէին կենդանի
կ'մնայ, նա, որ անիծում էր Աստուծոյ Օծեալին». Բայց ազնիւ
սիրտը միշտ պատրաստ է ներելու: Դաւիթ ասաց Աբիսային.
«ինչո՞ւ դու աշխատում ես ինձ վատ գործի մէջ գցել: Այսօր
չպէտք է կորչի ոչ մի Իսրայէլացի: Ոչ արդեօք այսօր դառայ
էլի Իսրայէլացւոց թագաւոր»: Յետոյ դառնալով Սեմէիին, ա-
սաց նրան քաղցրութեամբ. «Սեմէի, դու չես մեռնիլ իմ ձեռ-
քիցս»:

Խորհրդին, ուրախութեան տարեկան ծերութին, նմանապէս դուրս
եկաւ Դաւթի առաջ ուրախ սրտով: Թագաւորը շնորհակալ ե-
ղաւ նրան և ասաց. «Ահ կ'նա հետս, դնանք Երուսաղէմ. այն
տեղ կ'կենաս ինձ մօտ հանդստութեան և լիութեան մէջ: Բեր-
զելին պատասխանեց, «Թագաւոր, ես արդէն ուրախութեան տա-
րեկան եմ, ինձ էլ երկար ժամանակ չէ մնում ապրել երկրիս
երեսին: Ես էլ համ չեմ տեսնում ոչ ուտելում և ոչ խմելում,
երգիչուհիների երգերն ինձ էլ չեն ուրախացնում, ես միայն ծան-
րութիւն կ'լինեմ իմ թագաւորիս իսկ վարձատրութիւն ինձ
ամենևին հարկաւոր չէ: Ես քեզ կամենում եմ էլի փոքր ինչ
ուղեկից լինել և յետոյ հրաման տուր ինձ առն յետ դառնալ,
այն տեղ կամենում եմ վերջացնել օրերս և թաղվել հօրս և
մօրս գերեզմաններին մօտ»:

Դաւիթ բոլոր ազգի ուղեկցութեամբ Յորդանանը անցնելից
յետոյ գրկեց Բերզելլին և օրհնեց նրան. բայց էլի հօրը վար-
ձատրելու համար, առաւ նորա որդուն իր աքսունիք և շատ
ողորմած եղաւ նրան: Իսկ Բերզելլին գարձաւ իր տուն:

Գլուխ կթ.

Դաւիթի մահը:

Դաւիթ հասաւ խորին ծերութեան և զգում էր արդէն իր

մահուան մօտենալը։ Նա չէր բաւականանում նրանով, որ բոլոր կեանքը նուիրած էր Աստուծոյ անունը փառաւորելու և իր հպատակների բարօրութեանը, այլ կամենում էր դեռ իր մահից յետոյ էլ օգտակար լինել։ Ահա այն գեղեցիկ բարեկարգութիւնները, որ նա արաւ իր մահից առաջ։

Դաւիթ սրտումն երկու ցանկութիւններ կային, որ կամենում էր կատարված տեսնել իր մահից առաջ։ Առաջինը՝ կանգնել հոյակապ տաճար Աստուծոյ և երկրորդը տալ թագաւորութիւնը իր որդուն Սողոմոնին։ Այս առաջին ցանկութիւնը բաց արաւ Նաթան մարգարէին, որ յայտնեց նրան Աստուծոյ կամքը։

Իր մահից փոքր ժամանակ առաջ, Դաւիթ հաւաքեց Երուսաղէմում ամեն իշխաններուն, մեծամեծներուն և բոլոր Իսրայէլացոց ազգին, որ ամենի առաջև բաց անէ Աստուծոյ կամքն, որ Նաթան մարգարէի միջնորդութեամբ յայտնվեցաւ իրեն։ Բազմաթիւ ժողովի մէջ ասաց նա յետագայ խօսքերը.

«Եղբայրներ, իմ ժողովուրդս. ես կամենում էի կանգնել տուն, որ դնվի նորա մէջ Ուխտի Տապանակն և պատրաստեցի ամեն հարկաւոր նիւթերը նորա համար. բայց Աստուած ասաց ինձ. «Դու չես կանգնել ինձ տուն. որի մէջ կ'փառաբանվի իմ անունս, դու զինուոր էիր և շատ արիւն թափեցիր։ Քո որդիդ Սողոմոնը թօղ կանգնէ իմ տունս։ Նա ինձ որդի կ'լինի և ես նորա Հայրը. ես կ'զօրացնեմ նորա թագաւորութիւնն, եթէ կ'պահէ իմ պատուիրանները։

«Աստուծոյ իրեն առջև և բոլոր ազգի ներկայութեամբ, պատուիրում եմ ձեզ, որ կատարէք Աստուծոյ պատուիրանները, այն ժամանակ հանգստութեամբ կտիրէք երկրին, որ Աստուած ձեզ տուեց և կ'տաք այն ձեր որդոցը յաւանգութիւն։

Իսկ դու, որդեակ, Սողոմոն, պաշտիր քո նախնիքների Աստծուն, և ծառայիր նրան սուրբ սրտով։ Աստուած փորձում է մեր սրտերը և տեսնում է մեր խորհուրդները։ Փնտռիր Աստծուն և կ'գտնես նրան, բայց եթէ կ'հեռանաս նրանից, նա էլ կ'թողնէ քեզ յաւիտեան։ Աստուած ընտրեց քեզ, որ կանգնես նրան տաճար. կատարիր Ամենաբարձրեալի կամքը։

Դաւիթը տաճարի շինութեան համար թողեց Սողոմոնին շատ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, քար և փայտ։ «Զնայելով, որ պատերազմի էի ես, ասաց նա, էլի կարողացայ Աստուծոյ տան շինութեան համար հաւաքել այսքան նիւթեր»։

Ամենքը հետևեցին Թագաւորի օրինակին. ամեն մարդ բերում էր շինութեան համար, որչափ իր կարողութիւնը ներում էր, ոսկի, արծաթ, թանգագին քարեր, երկաթ, պղինձ և այլն։ Ժողովուրդը ուրախանում էր տեսնելով տաճարի շինութեան համար սրտանց բերած նուէրների այնքան բազմութիւնը, բայց Թագաւորը ինքը ամենից աւելի ուրախանում էր։ Նա բարձր ձայնով, բոլոր ազգային ժողովի առջև, փառաբանում էր Աստծուն։

Դաւիթ շնորհակալութեան զոհ բերաւ Աստուծոյ և տանեց բոլոր ազգի հետ միասին այս օրը։

Սողոմոն դեռ իր հօր կենդանութեան ժամանակ օծվեցաւ Իսրայէլացոց Թագաւոր։ Իշխանները, մեծամեծներն և ազգը ուրախանում էին այս ընտրութեան վերայ։ Այսպէս, արքունի գործերը կարգապրելից յետոյ, Դաւիթ յանձնեց կառավարութիւնը իր որդուն։

Մահուան մահճումը պարկած, Դաւիթ ասաց Սողոմոնին. «Ես գնում եմ այնտեղ, ուր ամեն մահկանացու պէտք է երթայ, իսկ դու միխիթարվիր և եղիր կատարեալ մարդ։ Պահիր Աստուծոյ ուխտը։ գնա նորա ցոյց տուած ճանապարհով և կատարիր Մովսէսի օրէնքներումը գրած պատուիրանները։ Թօղ կատարվի Աստուծոյ խօսքը, որ նա ինձ ասաց. «Եթէ քո որ-

դիքդ հաւատարիմ կ'ինան իմ պատուիրաններիս, քո զաւակիդ թագաւորութիւնը Իսրայէլի գահին երբեք չի պակարիլ»:

Գլխաւոր խոստումն, որ Աստուած տուեց Դաւթին և որ մխիթարեց նրան մահուան բոպէին, որ այն թէ Դաւթի զաւակից կ'ծնի Փրկիչը:

Դաւիթ վախճանեցաւ խորին ծերութեան մէջ. թագաւորեց Սաւուղից յետոյ քառասուն տարի և թաղեցին նրան Սիոն տարի վերայ:

ԳԻՐՔ Ա.

Սողոմոն թագաւորը:

Սողոմոն դեռ երիտասարդ էր, երբ նստաւ Իսրայէլի գահը: Թէ ինչպիսի զգացմունքներով ոգեւորած էր նա իր թագաւորութեան սկզբին, կարելի է նկատել յետագայ խնդրքից: Աստուած երազում ասաց նրան. «խնդրիր ինձանից, ինչոր ուզում ես: Սողոմոն պատասխանեց. «Ես դեռ երիտասարդ եմ և անփորձ. Դու, Տէր Աստուած, յանձնեցիր ինձ բազմաթիւ ազգի կառավարութիւնը: Խնդրում եմ քեզնից սուրբ սիրտ և հանճար, որ կարողանամ կառավարել ժողովրդեան և պատել նրան արդարութեամբ և առանց կողմնապահութեան: Տուր ինձ միտք, որ կարողանամ բարին չարիցը զանազանել, որով հեւտ ինչպէս կարելի է առանց իմաստութեան կառավարվել այսպիսի բազմաթիւ ազգին»:

Այս խոսքերը հաճոյ թուեցան Աստուծոյ. Նա ասաց Սողոմոնին. «որովհետև դու չխնդրեցիր ինձանից ոչ երկար կեանք, ոչ քո թշնամիներիդ մահ, ոչ փառք և ոչ հարստութիւն. այլ խնդրեցիր իմաստութիւն, ես տալիս եմ քեզ ոչ միայն, ինչ որ խնդրեցիր. այլ և ինչ որ չխնդրեցիր էլ՝ այն է հարստութիւն և փառք: Ես կ'տամ քեզ միտք և իմաստութիւն, քեզ նմանը

չէ եղել քեզնից առաջ և ոչ էլ կլինի քեզնից յետոյ: Միայն պահիր իմ ուխտս և վարվիր իմ պատուիրաններիս յամար, ինչպէս վարվում էր քո հայրդ»:

Սողոմոն զարթեցաւ ուրախութեամբ լիքը սրտով և Երուսաղէմում Ուխտի Տապանակի առաջին բերաւ Աստուծոյ շնորհակալութեան մատաղ: Շուտ սրանից յետոյ եկան նորա մօտ երկու կանայք: Սրանցից մէկը ասում էր. «թագաւոր, ես քեզ մի խնդիրք ունիմ ասելու. ես բնակում եմ այս կնոջ հետ միասին մի տանը, ուր մեր երկուսից ուրիշ ոչ ոք չկայ: Երկուսս էլ ունէինք մի մի երեխայ: Նա քնած ժամը, երբ ես էլ քնում էի, խեղդեց իր որդուն, իմ կենդանի երեխային վեր առաւ իր մօտ և իր մեռած երեխային դրեց ինձ մօտ: Առաւօտը, երբ զարթեցայ, տեսայ այս մեռած երեխան. բայց լաւ նայելով ճանաչեցի որ երեխան իմն չէ, այլ նորանն է»: Միւս կինը ասաց. «այդ սուտ է, իմ երեխայս կենդանի է, այլ քո երեխայդ մեռաւ»:—«Չէ. կանչեց առաջինը. «դու սուտ ես ասում»:— Այսպէս վիճում էին նոքա թագաւորի առջև: «Տուէք սուրը». ասաց Սողոմոն: Սուրը բերին և Սողոմոն ասաց. «կէս արէք կենդանի երեխային և տուէք ամէն մի կնոջ մէկ կէսը»: Այս խօսքերը լսելիս հարազատ մօր սիրտը սարսեցաւ: «Չէ, թագաւոր, աղաղակեց նա, մի հրամայիր երեխային սպանել. տուր նրան կենդանի այս կնոջ»: Իսկ միւսը ասաց. «լաւ է նրան կէս անել. Թող ոչ դրան լինի և ոչ ինձ»: Այս խօսքերից թագաւորը այն րոպէին ճանաչեց իսկական մօրը: Մայրական սէրը յայտնեց նրան: Սողոմոն ասաց. «տուէք երեխան առաջին կնոջ. նա է նորա մայրը»: Այս դատաստանը յայտնի եղաւ Իսրայէլի բոլոր երկրում և թագաւորը հասարակաց յարգութեան արժանացաւ: Ամենքը տեսնում էին, որ Աստուած նրան իմաստութիւն տուել է: Այս իմաստութիւնը փառաւորեց նրան ամէն տեղ: Նորա թագաւորութեան ժամանակ Իսրայէլացիները

րը վայելում էին խաղաղութիւն և հանգստութիւն։ Ամեն դրացի թագաւորները Սողոմոնի հետ բարեկամութեան ուխտ դրին, և նորա ամեն մի հպատակը կարողանում էր առանց երկիւղի նստել իր այգում և իր թզենիի տակ։

ԳԼՈՒԽ ՀԱ.

Տաճարի շինութիւնը։

Սողոմոն կանգնեց Աստուծոյ հոյակապ տաճար։ Երբ շինուածքը վերջացաւ, ժողովեցան ամեն ծերերն և Իսրայէլացւոց բոլոր ազգը։ Քահանաները այս հանդիսաւոր ժողովը առջև տեղափոխեցին Ուխտի տապանակը տաճարի ամենից ներքին մասը, որ կոչվում էր Սրբութիւն սրբոց։ Պատրաստած էին շատ զոհեր։

Սողոմոնը մօտեցաւ բոլոր ազգի առաջևը զոհարանին, ծունր իջաւ և իր աղօթքումն ասաց յետագայ խօսքերն էլ.

«Տէր, Իսրայէլի Աստուած, դու ես տիեզերքի մի Աստուածը. քեզնից ուրիշ Աստուած չկայ ոչ երկնքում և ոչ երկրում. դու տալիս ես քո ողորմութիւնդ ամենին, որոնք ձշմարտութեամբ պաշտում են քեզ. թող կատարվին իմ հօրս Դաւթին տուած ամեն քո խոստումներդ։ Ցիրաւի կ'բնակի՞ արդեօք Աստուած մարդոց հետ երկրիս վերայ։ Եթէ երկինքն և երկինից երկինքը չեն բաւական քեզ պարունակելու, առաւել ևս այս տաճարը, որ ես շինեցի քո անուանդ համար։ Տէր և Աստուած Իսրայէլի, այս աղօթքի տանը մէջ նայիր մեր, քո ծառաներիդ, վերայ. թող բարձրանան այստեղից մեր խնդիրքները քեզ մօտ, ցերեկն և գիշերը լսիր մեզ։ Երբ մեր մեղաց համար կփակվի երկնքի դուռը, կ'գայ երաշտութիւն և քո ժողովուրդդ ողջալով և բեկեալ սրտով կ'գայ այս տաճարը աղօթելու. լսիր նորա խնդրքի ձայնը. ներիր նրան իր յանցանքն և ջրիր երկիրս անձրևով»։

»Ինչպիսի թշուառութիւն էլ որ հասանի այս թագաւորութեանը՝ սով, ջրհեղեղ, երկրաժարժ, ցաւ, կրակ, այլազգիների յարձակումները—լսիր քո մարդոց, որոնք այս տաճարումս աղօթք կ'անեն, և ողորմիր նրանց»։

Եթէ կ'պայ այլազգի հեռու երկրից այս տաճարում քեզ աղօթք անելու, լսիր նրան էլ, Տէր Աստուած։ Կատարիր նորա խնդիրքը, թող իմանան երկրիս ամեն ազգերն քո անունդ և երկնչին քեզնից և գիտենան, որ քո անունդ դրած է այս տաճարիս վերայ, որ ես քեզ կանգնեցի»։

Երբ աղօթքը վերջացրեց, Սողոմոն վեր կացաւ, օրհնեց բոլոր ազգին և յորդորեց նրան պահել Աստուծոյ ամեն պատուիրանները և չանցնել Մովսէսին տուած օրէնքներից։ Այն ժամանակ երկնքից ընկաւ կրակ պատրաստած զոհերի վերայ և բոլոր ժողովուրդն ընկաւ գետին, փառաւորելով Աստուծուն։

ԳԼՈՒԽ ՀԲ.

Սողոմոնի մահը։

Հարունակ բազդաւորութիւնը, Սողոմոնի սրտում աւելի սէր և հնազանդութիւն զարթեցնելու տեղ դեպի Աստուած, նրան փչացրեց։ Նա ձշմարիտ ճանապարհից մոլորվեցաւ և սկսաւ դեպի կռապաշտութիւն հակիլ։ Այսպէս մարդոց ամենից իմաստունն էլ, եթէ իր կրքերին կ'յանձնէ իրեն, ընկնում է մոլորութեան մէջ։

Սողոմոնը շատ կանայք ուներ և օրէնքների ընդդէմ, որոնք արգելում էին ամուսնութիւնը կռապաշտների հետ, կային նորա կանանց մէջ մի քանի կռապաշտներ էլ։ Իր ծերութեան ժամանակ, նրանց սիրտը գրաւելու համար, նա հրաման տուեց շինել կռքերի բագիններ Երուսաղէմի մօտերումն։ Այսպէսով հնքը օրինակ տուեց ազգին Աստուծոյ օրէնքից անցնելու։

Աստուած յայտնեց Սողոմոնին, որ նորա թագաւորութիւնը կ՚բաժանվի և թէ այս թշուառութիւնը կ՚ուշանայ փոքր ինչ նորա հօր Դաւթի անաքինութիւնների համար. ինքը Սողոմոնը չի՞ տեսնիլ այն, այլ կ՚լինի այն նորա որդւոյ ժամանակը։

Սողոմոնի ձեմարիա Աստուածմէն հեռանալու ժամանակից սկսան խռովութիւնները խանգարիլ նորա հանգստութիւնն, և նա ինքը իր կեանք զեղխութեան մէջ անցկացնելով, վաղ ծերացաւ։ Իր մահից փոքր ժամանակ առաջ Սողոմոն զղջաց և այս ժամանակ գրեց իր գիրքը երկրային ամեն բանների ունայնութեան վերայ։ Այս գիրքը Աստուածաշունչումն կոչվում է Ժողովող (Եկկլեսիաստէս). Այս գրքի գլխաւոր միտքերը յետագաներն են. «Եա մեծ գործքեր արի, շինեցի տներ, տնկեի շատ ծառաներ և աղախիններ, ունեի մեծ խաշներ, հաւաքեցի անթիւ գանձեր, ինձ մօտ պահում էի երգիչներ և երգեցող կանանց, ամեն կարելի ուրախութիւններն անում էի, կատարում էի ամեն ցանկութիւնները—բայց ոչինչ չէր ուրախացնում սիրտս, ես տեսայ, որ ամենն ունայնութիւն էր և հոգւոյ չարչարանք։ Արեգակի տակը ոչինչ հաստատ բան չկայ։ Ամեն իմաստութեանց բովանդակութիւնն է յետագային. վախեցիր Աստուածմէ և պահիր նորա պատուիրանները»։

ԳԼՈՒԽ Հ.

Թագաւորութեան բաժանվիլը։

Սողոմոնի մահից յետոյ, նորա որդին Ռովբովամ նստաւ Իսրայէլի գահը։ Նա չէր լսում իր հօր ծեր և փորձառու խորհրդականներուն և վարվում էր ազգին հետ հպարտութեամբ ու խստութեամբ, որ և եղաւ պատճառ նորա թագաւորութեան բաժանվիլուն։ Տասն ցեղերն ապստամբեցան նրանից և նորեցին թագաւոր Երոբովամին, Եփրեմի տոհմից։ Միայն

ցին հաւատարիմ Դաւթի տան, այն է Յուդի ցեղերը։ Տասն ապստամբած ցեղերը Երոբովամը կազմեցին առանձին տէրութիւն, սկսելի թագաւորութիւն։ Մի քանի ժամանակից յետոյ Սամարիան։ Ամեն այս տասն ցեղերը հին կռապաշտութեան մէջ։

Թէև իր ձեռին ունէր մայրաքաղաքը՝ Երուսաղէմը, ազգի շատ փոքր մասին։ Նորա տէրութիւն էր Յուդայի թագաւորութիւն։ Այս ժամանակ բոլոր Իսրայէլացւոց ազգը կոչվում է յաճախ Յուդայ։ Այց բաց ի սրանից, թէ Յուդայի թագաւորութեան և թէ Իսրայէլի տէրութեան հպատակները կոչվում էին նամանաւանդ Երբայեցիք, Երերի անունով, որ Աբէմ պատկան էր և Աբրահամի նախահայրը։

Երկու թագաւորութեանց բաժանվելը շատ վնասակար հետևանքներ ունեցաւ. երկու թագաւորութիւնները շատ անգամ պատերազմում էին միմեանց դէմ Յուդայի թագաւորները բաց ի մի քանիսից, մոռանում էին Աշխարհիս Աստծուն. ազգը ընկաւ ապիրատութեան և մեղքի մէջ։

Թագաւորներուն և ազգը ուղղելու համար, աստուած խրբոկում էր երբէմն երբէմն սո ըր Մարգարէներուն։ Սոքա նախատեսում էին ապագան և աշխատում էին մարդոց ուղղելու։

Յուդայի թագաւորների անունները, որոնք թագաւորեցին երկու ցեղերի վերայ, են՝ Ռոբովամ, Աբիու, Ասա, Յովսափատ, Յովրամ. Ոքոզիա, Յովաս, Ամասիա, Ազարիա կամ Ոզիա, Յոթամ. Աքազ, Եզեկիա, Մանասէ, Ամոն, Յովսիա, Յովաքազ, Յովակիմ, Սեքոնիա, Սեդեկիա.

Իսրայէլի թագաւորների անուններն, որոնք կառավարեցին տասն ցեղերուն, են՝ Երոբովամ Ա. Նադաբ, Բաասա, Եղա, Զամբրի,

Ամրի, Աքաաբ, Ոքոզիա, Յովրամ, Ցեհու, Յոա
Ցերոբովամ Բ. Զաքարիա, Սելլում, Մանայիմ, Փ

ԳԼՈՒԽ ՀԴ.

Յուդայի թագաւորների վերայ.—Գ

Թագաւորութեան ընկնիլը։

Իսրայէլի ցեղերի թշուառ բաժանմունքից յետոյ, լինչէս ասացինք, Դաւթի գաւակները թագաւորեցին միայն երկուց ցեղերին վերայ այն է Յուդայի և Բենիամինի. նոցա մայրաքաղաքն էր Երուսաղէմ; նա էր Սողոմոնի հոյակապ տաճարը. բայց Յուդայի թագաւորների մեծ մասը Աստուծոյ օրէնքից հեռանում էր և ընկնում կռապաշտութեան մէջ։ Յուդայի քսան թագաւորներից միայն ութն էին բարեպաշտ։ Ահա նոցա անունները. Ասա, սորա որդին Յովսափատը, Յովաս, Ամասիա, սորա որդին Ազարիան, սորա որդին Յովաթամը, Եզեկիա և Յովսիա։

Միանգամ Դաւթի ցեղը հազիւ ազատվեցաւ ընկնելից։ Աստուած հրաշալի կերպով ազատեց այս բարեպաշտ թագաւորի յետագաներից մէկին միայն, որովհետև նորա խոստացած էր, որ նորա գաւակից կծնվի Մեսիան։

Յովրամը, Յովսափաթի որդին, իրան կին առեր Իսրայէլի չար թագաւորի Աքաաբի աղէկան Գոդողեայից։ Յովրամի մահից յետոյ շուտ վախճանեց աւ նորա որդին Ոքոզիան էլ։ Ոքոզիայի մայրը, Գոդողիան, չհանգաւեր, արիւնահեղ կինը, կամենալով ինքը թագաւորել, վճռեց արքունի ցեղը ջնջել։ Այս սարսափելի ապստամբեան ժամանակ Ոքոզիայի մի տարեկան որդուն Յովասին թագցրին։ Նրան, ծծմօր հետ միասին ազատեց իր ազգականը, Յովսիդա քահանայապետի կինն, Աստուծոյ տաճարում։ Երեխան կրթվեցաւ քահանաների մէջ Աստու-

ծոյ տանն և նորա հովանաւորութեան տակ վեց տարի։ Գոդողիան չէր իմանում նորա կենդանի լինելը։

Երբ Յովասը եօթն տարեկան դառաւ, Յովսիդա քահանայապետը ժողովեց բոլոր քահանաներուն և Ղեւտացիներուն և պատեց տաճարը զինաւորած մարդիկներով. Յոյնց հաւատարմութեան հաւատի էր։ Ժողովուրդը մեծ հետաքրքրութեամբ ժողովեցաւ տաճարի մօտ, սպասելով մի արտաքոյ սովորութեան բանի։ Այն ժամանակ քահանայապետը դուրս հանեց եօթն տարեկան երեխային և ազդարարեց. «Յուդայիք, ահա ձեր թագաւորը Յովաս, Ոքոզիայի որդին, ազատվեցաւ Գոդողիայի ձեռքից»։

Բոլոր ազգի առաջին Յովասը օծվեցաւ թագաւոր և բոլոր տաճարը լցվեցաւ փողերի ձայնով և ուրախութեան ազաղակներով։ Ազգը ուրախութեամբ ընդունեց մատաղ թագաւորին, որ Դաւթի ցեղի ճիւղն էր։

Յովաս սկզբում թագաւորում էր բարեպաշտութեամբ. բայց Յովհդայի մահից յետոյ, մեծամեծները խնդրեցին և ստացան թագաւորից հրաման աղօթք անելու տաճարում, ոչ թէ ճշմարիտ Աստծուն, այլ կուռքերին։ Յովհդայի որդին Զաքարիա քահանան ընդդիմացաւ այս բանին. բայց թագաւորի հրամանով քարկոծվեցաւ տաճարի բակի մէջ։ Զաքարիան ասաց. Աստուած կլինի դատաւոր իմ և քո մէջ։ Յովասը բազմաթիւ զօրքով չարժվեցաւ Ասորոց թագաւորից և յետոյ սպանվեցաւ իր սեպհական ծառաների ձեռքով։ Յովասից յետոյ Յուդայում թագաւորեցին առ հասարակ բարեպաշտ թագաւորներ։ Ամասիան, յետոյ նրան որդին Ոզնիան, որին յաջորդեց իր որդին Յովաթամը, բայց Յովաթամի որդին Ա.քաղը չհետևեց իր նախորդների բարեպաշտութեան. նա փակեց Սողոմոնի կանգնած տաճարն և չինեց շատ մեղանիներ կռքերի համար։

Ա.քաղի բարեպաշտ որդին Եզեկիան, որի ժամանակ Իսրա-

յէվի թագաւորութիւնը վերջացաւ, բայց սրաւ Աստուծոյ տաճարը, զարգարեց նրան և քանդից կոքերի ամեն սեղաններըը։ Սոյն ժամանակ Ասորեստանի թագաւորը Սենեքերիմ, Սալմանասարի որդին, պաշարից Երուսաղէմը, բայց մեհուան հրեշտակը մի գիշերուայ ընդում Ասորեստանցոց զօրքն և Սենեքերիմ թագնելով Երուսաղէմի պաշարումն, գարձաւ Նինուէ։

Մանասէն պաշտպանում էր կռապաշտութիւնն և անմեղաց արիւնով ջրից բոլոր Երուսաղէմը. միայն Ասորեստանցոց ձեռքը գերի ընկած, նա Աստուծոյ առաջին օրհանից դղջացաւ և ապացաւ թողութիւն։ Ամոնա, Մանասէի թոռը, միշտ իր մահը էր առաքինի։ Նա թագաւորից ուրը սարեկան և միշտ հաւատարիմ մնաց Աստծուն։

Յուդայի թագաւորութիւնը ծաղկեցաւ էլի հարիւր տարի, Իսրայէլի թագաւորութեան ընկնելից յետոյ. վերջապէս նորա վերայ էլ հասաւ Աստուծոյ արդար դատաստանը։ Աստուած մատնեց նրան Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորի ձեռքը։ Այս աշխարհակալը Յուդայի Յովակիմ թագաւորին երեն հարկատու արաւ։ Շուտ սրանից յետոյ Նաբուգոդոնոսորը նորա որդուն Յեքոնային բոլոր Յուդայի մեծամեծներով բաբելոն գերի տարաւ։ Տասն տարիից յետոյ, Սեդեկիա թագաւորը կամեցաւ ազատվել յաղթողների ծառայութեան լծից։ Նաբուգոդոնոսոր հրամայից Սեդեկիայի աչքերը հանել, ինչպէս կռուարարի և նորա ներկայութեան ժամանակ սպանեցին նորա բոլոր որդոցը։ Սողոմոնի հոյակապ տաճարը այրեցին և Երուսաղէմ քաղաքը քարերի շեղջ դարձրին։ Յուդայի ազգը իր կոյր թագաւորի հետ միասին գերի գնաց Բաբելոն։ Այս պատահեցաւ 588 տարի Քրիստոսից առաջ։ Այն ժամանակից Երուսաղէմ մնաց ամայի և տաճարը քանդած, ընկած էր, մինչև որ Պարսից թագաւորը Կիւրոս, Բաբելոնին տիրելով, Յուդայի գերիներուն դարձրեց իրենց հայրենիքը։

Իսրայէլի թագաւորութիւնը։

Սուրբ Մարգարէն Եղիա։

Իսրայէլի թագաւորները, առանց բացառութեան, ամենքը հակամիտ էին դէպի կռապաշտութիւն. բայց ամենից չարն և անբարեպաշտն էին Աքաաբ և նորա կինը Յեզաբել. նոքա ոչ միայն բահաղի կոքին բագին չենկեցին. այլ և հալածում էին մարգարէներուն և ամեն Աստուածապաշտներուն։ Աքաաբ թագաւորի պալատականներից մեկը, Աբդիա անունով, էր երկիւղած Աստուծոյ, նա պահեց այրերի մէջ Աքաաբի և Յեզաբելի գազանութիւնից հարիւր մարգարէներու։ այնտեղ թագուն տանում էր նրանց կերուխումը և ամեն հարկաւոր բաները։ Իսկ Եղիա մարգարէին փրկեց Աստուած ինքը։

Սուրբ Եղիան, միանգամ յայտնվելով Աքաաբի առջևը, ասաց նրան. «քո մեղքերի և կռապաշտութեանդ պատճառով յայտնում եմ քեզ, որ այս օրից սկսած երկնքից չընկնիլ ոչ մի կաթիլ անձրև և ոչ ցող, մինչև որ ես նորա համար աղօթք չանեմ Աստծուն»։ Աքաաբը չվախեցաւ այս սպառնալիքից. այլ միայն գրեց թագուն սպանել նրան։ Աստուած ինքը փրկեց մարգարէին, ասելով նրան. «հեռացիր այս տեղից և թագնվիր Քոռաթու հեղեղատի մօտ, որ Յորդանանի մէջ է վազում։ Ես հրամայեցի իմ ագռաւներին, որ քեզ կերակրեն»։ Եղիան հպատակեցաւ և անցավիսկեցաւ Քոռաթու հեղեղատի ափը, Յորդանանի մօտ։ Նա բնակում էր հեռու մարդոց հասարակութիւններից. հեղեղատը տալիս էր նրան խմելու ջուր, և առաւօտ ու երեկոյեան ագռաւները բերում էին նրան միս և հաց ուտելու։

Բայց երկար ժամանակ անձրև չգալից և սաստիկ տագնապ

Քոռաթի հեղեղատն էլ ցամաքեցաւ։ Սուրբ Եղիան ջրի պակասութիւն զգում էր։ Այն ժամանակ Աստուած ասաց Նրան. «գնա՛ Սիդոնացւոց Սարեփթա քաղաքն. այնտեղ ես կ'հրամայեմ մի այրի կնոջ, որ քեզ կերակրէ»։ Մարգարէն հպատակեցաւ և երբ եկաւ քաղաքի դրան մօտ, տեսաւ մի այրի կնոջ, որ փայտ էր ժողովում։ Սա էր այն կինն, որի մօտ Աստուած նրան խրկեց։

Սուրբ Եղիան մօտեցաւ այրի կնոջ և ասաց. «ես շատ ծարաւ եմ, տուր ինձ ջուր»։ Այրին շատ բարի կնիկ էր։ Նա այն րոպէին գնաց ջրի ետևից։ Եղիան նորա ետևից ձայն տուեց. «բե՛ր ինձ հաց էլ. ես քաղցած եմ»։—Աստուած ինքը վկայ է, ասաց այրին, որ ես ոչ մի կտոր հաց չունիմ։ ես ունեմ մի բուռը ալիւր միայն սափորիս մէջ և փոքր ինչ իւղ ամանումս։ Ես եկայ այստեղ, որ մի քանի կտոր փայտ գտնեմ և եփեմ մնացած ալիւրից նկանակ։ Այս վերջին կերակուրն էլ ուտելից յետո, իմ որդուս հետ միասին, մենք պէտք է մեռնենք սովից»։ Եղիան ասաց նրան. «մի՛ վախենար, եփի՛ր նկանակդ. միայն այն առաջ ինձ մօտ բե՛ր և յետոյ կ'եփես քո և որդուդ համար էլ։ Աստուած ասաց. որ «ալիւրդ և իւղդ չեն պակասիլ մինչև այն օրը, երբ կ'գայ անձրև երկրիս վերայն»։ Բարի այրին հաւատաւով լսեց Մարգարէի խօսքերը, կատարեց ամենն, ինչոր ասաց նրան Սուրբ Եղիան, կշռացաւ ինքն և իր որդին և այն ժամանակից սկսած չէր պակասում ոչ նորա ալիւրն և ոչ իւղը։

Սուրբ Եղիան բնակեցաւ նորա տանը։

Մի քանի ժամանակից այրի որդին հիւանդացաւ և մեռաւ։ Սուրբ Եղիան, տեսնելով մոր անմխիթար արտասուքը, առաւ երեխայի մարմինը, դրաւ իր անկողնի վերայ. յետոյ ջեռմեռանդ աղօթքով դարձաւ դէպի Աստուած, փչեց երեք անգամ մեռածին և երեխան վեր կացաւ և յանձնվեցաւ իր մօրը։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Եղիայի զոհը։

Սուրբ Եղիայի մարգարէութիւնը, որ նա ասաց Աքաաբին, կատարվեցաւ. երեք տարի և վեց ամիս անձրև և ցօղ չեղաւ, ամեն ջրի աղբիւրները ցամաքեցան, երկիրը չտուեց ոչ ցորէն և ոչ խոտ. Իսրայէլի թագաւորութեան մէջ սարսափելի թշուառութիւն էր։ Մառերը կանդնած էին առանց տերևի և դաշտերն ընկած առանց խոտի։ Ամբողջ անտառները չորացան, անասունները կոտորվում էին և մարդիկ մեռնում։

Վերջապէս Իսրայէլացիները զղջացան, դարձան Նրան, որ միայն կարող է ջրել երկիրս պղտաբեր անձրևով և գովացնել նրան երկնային ցօղով. նոքա սկսան աղօթք անել ամենազօր Աբրահմին և Աստուած ասաց Եղիային. «գնա՛, յայտնվի՛ր Աքաաբի առջև. ես կ'տամ երկրիս անձրև»։ Սուրբ Եղիան հպատակեցաւ։

Այս ժամանակ ինքն Աքաաբ թագաւորը բարեպաշտ Աբդիուի հետ ճանապարհորդութիւն էր անում, փնտռելով մի ձոր հեղեղատով, ուր կարելի լինէր արածել արքունի ձիերուն և ջորիներուն, աշխատելով գոնէ մի քանի անասուն կենդանի պահել Իսրայէլի երկրում։ Թագաւորը գնում էր մի ճանապարհով և Աբդիուն միւսով։ Ճանկարծ Եղիան հանդիպեցաւ Աբդիուին և ասաց Նրան. «յայտնի՛ր թագաւորին իմ գալուստս»։

Աբդիուն յայտնեց թագաւորին, որ Եղիան, որին ամեն տեղ փնտռում էր, ինքն եկել է նորա մօտ։ Թագաւորը ասաց մարգարէին, «այն դու ես, որ խռովում ես Իսրայէլի ազգին»,— «ես չեմ այն», պատասխանեց Եղիան. «այլ դու ինքդ և քո հօրդ տունը։ Դու մոլորեցուցիր Նրան Աստուծոյ ճանապարհից և ստիպեցիր կռքերին երկրպագութիւն տալ։ Խրկի՛ր ամեն կողմ հրեշտակներ. որ ժողովեն քո ազգդ Կարմելոս լերան վերայ, թող գան այն տեղ նոյնպէս Բահաղի քուրմերն էլ»։

Ամենը ժողովեցան Կարմելոս լեռան վերայ: Բահաղի քուրմերը չորս հարիւր յիսուն հոգի էին. իսկ Եղիան էր միայն ճշմարիտ Աստուծոյ մարգարէն: Նա առաջարկեց պատասխել երկու զոհ, մէկը Բահաղի համար և միւսը Իսրայէլի Աստուծոյ համար և ասաց ազգին, թէ ճշմարիտ Աստուածը նա է, որ կրակէ երկնքից կրակ զոհի վերայ: Բոլոր ազգը յաջողակելով համաձայնեցաւ այս առաջարկութեան: Բահաղի քուրմերը առաջինը սկսան բերել իրենց զոհը: Մորթեցին մի եզն, դրին նրան զոհարանի վերայ և քուրմերը սկսան աղաղակել. «Բահաղ, լսիր մեզ: Բահաղ, լսիր մեզ»: Նոքա ծունր իջան, պտտում էին սեղանի չորս կողմերը, կանչում էին, բայց նա չէր կարողանում լսել նրանց, նոքա ոչինչ պատասխան չստացան: «Բարձր ձայնով կանչեցէ՛ք», ասում էր Եղիան, «գուցէ քնած է ձեր Աստուածը կամ զբաղած է ուրիշ գործով, նրան պէտք է զարթեցնել»: Բահաղի քուրմերը գոռում էին, ծեծում էին իրենց և ծակծկում իրենց, մինչև որ արիւն էր գոռս դալիս. բայց ամենը ի զուր էր: այսպէս գոռում էին նոքա առաւօտից մինչև իրեկոյ, միայն ոչ ոք նրանց ոչ ձայն տուեց և ոչ լսեց: Այն ժամանակ Եղիան ասաց ազգին. «մօտացէ՛ք ամենքդ ինձ»: Ժողովուրդը մօտեցաւ: Եղիան կանգնեց Աստուծոյ սեղան ասանկարկու քարերից, Իսրայէլացւոց ցեղերի թուով, սեղանի մօտ հրամայեց փորել խորը փոս դրեց փայտ զոհարանի վերայ և մորթեց զոհի համար նշանակված եզը: «Լեցէ՛ք ջուր», ասաց նա, «և ածէ՛ք զոհի վերայ: Նոքա անգամ լեցին ջուր և Եղիան նրանով բոլոր սեղանը և փոսը, որ փորած էր սեղանի չորս կողմերը մինչև բերանը լցուեցաւ: Այն ժամանակ Եղիան, մօտենալով սեղանին, ասաց. «Տէր Աստուած Աբրահամի, Իսհակի և Յակովբի, ցոյց տուր այժմ Իսրայէլացւոց բոլոր ազգին, որ Դու ես միայն Աստուած և թէ ես, Քո ծառայդ, անում եմ այս քո հրամանով: Լսիր ինձ,

Տէր, դարձրո՛ւ այս մարդոց սրտերը դէպի քեզ, որ մի միայն ես ճշմարիտ Աստուած»: Այս խօսքերը ասելուց յետոյ երկինքից, վառեց փայտերը, սրբեցաւ զոհը և կրակը պատեց բոլոր գետինը սեղանի չորս կողմերում և ցամաքեցրեց ջուրը փոսի մէջ: Ժողովուրդը ընկաւ գետին, ապաշաւելով «ճշմարիտ Աստուածը Տէրը Աստուածը»:

Այդ եղան հրամայեց Բահաղի քուրմերին ապանել, որ ոչ մի մարդ չազատուի: Նոքա ապանեցին նրանց և տարան Կիսոն գետակի մօտ և քանդեցին նոցա բագինները: Յետոյ Աքաաբին ասաց. «դնա՛ տուն և ուտէ՛ և խմէ՛, որովհետև ես լսում եմ անձրևի մօտենալը»: Իսկ ինքը եղիա Կարմելոսի գագաթն ելաւ և ծունր իջած աղօթում էր: Աղաղարի աղօթքը գործեց Աստուծոյ առաջ: Ծառկարծ վերը կապոյտ ամպերի հոլմ ևս ամպեր պատեցին երկինքն և նրանց մէջ եկաւ մեծ անձրև և տապալեց երկիրը:

Յետոյ եկաւ նրը լսելու Բահաղի քուրմերի մահը, երբ տեսաւ ատեց, որ Եղիան էլ նոյն վիճակին կ'հասնի. բայց Աստուած պահպանեց նրան Յեզաբէլի վրէժխնդրութիւնից. որդորը հեռացաւ Արաբիա:

ԳԼՈՒԽ ՀԷ.

Եղիա մարգարէն Քորէբ լերան մօտ:

Սորբ Եղիան քնակում էր մի քանի ժամանակ Արաբիաում, այրի մէջ, Քորէբ լերան մօտ: Այստեղ նա շատ անգամ տրըտմութեամբ մտածում էր, թէ ինչպէս Իսրայէլացւոց տասն ցեղերը մոռացան ճշմարիտ Աստծուն, քանդեցին նորա սեղաններն և կոտորեցին նորա մարգարէներին, որոնք ողջ էին, ամենքը կ'կորչէին, եթէ Աբդիան նրանցից մի քանիսին չազատէր: Այս պատճառով մեծ Սորբ Եղիան դուրս եկաւ այրից Աստուած հրամայեց նրան յայտնվել Իրեն լեռան գլխին:

Նա կանգնեցաւ այրի դրան մօտ և յանկարծ վեր կացաւ մեծ քամի, որ խորտակում էր լեռներ. բայց սորա մէջը չկար Աստուած: Եղիան հողմի ժամանակ չէր զգում նորա մօտ լինելը: Ցետոյ երկիրը շարժեցաւ, բայց Աստուած չկար այս շարժի մէջն էլ: Ցետոյ անցաւ հուրը. Աստուած չէր նորա մէջն էլ: Սրանից յետոյ փչեց մեղմ քամի և այս մեղմ օդի մէջը մարգարէի ախուր սիրտը զգաց Աստուծոյ լինելը: Նա ծածկեց իր գլուխը մաշկեակով և դուրս եկաւ այրից և խօսակցում էր Աստուծոյ հետ: Աստուած հանգստացրեց նորա նախանձայոյզ ոգին, ասելով, թէ Իսրայէլի թագաւորութեան մէջն էլ, ուր Եղիան չէր գտնում ճշմարիտ աստուածապաշտներ, կան էլի 7000 հոգի, որոնք Բահաղին երկրպագութիւն չեն տալիս:

Աստուած մօտ է ամեն մարդոց և խօսում է մեզ հետ բնութեան ամեն երևոյթներով՝ մրրկով, որոտումով, փայլակով, անձրևով, արեգակի փայլելովը և հողմի մեղմ փչելովը: Հպարտ և յանդուգն մարդուն զսպելու համար կան մրրիկ և որոտումն, հեզ և ախուր սրտի համար—հողմի մեղմ փչելը, արեգակի փայլելը:

Սրանից յետոյ Սուրբ Եղիան Աստուծոյ հրամանով դարձաւ իսրայէլի երկիրը:

ԳԼՈՒԽ ՀԸ.

Աքաաբի և Յեզաբէլի յանցանքն և նոցա պատիժը:

Մի Իսրայէլացի Նաբաւթ անունով, բնակում էր Յեզրայէլէ գեղեցիկ և պտղաբեր ձորի մէջ, Յեզրայէլ քաղաքում. այստեղ Թագաւորն էլ ունէր պալատ Նաբաւթի այգիի մօտ: Աքաաբը խնդրեց Նաբաւթին, որ այգին իրեն տայ, որովհետև այնտեղ

դուրս նա կամենում էր պարտէզ տնկել տալ: Նա խոստացաւ փոխարէնը կամ ուրիշ այդի տալ և կամ փող վճարել նրան: Բայց Նաբաւթը ասաց. «Աստուած չանէ, որ ես երբէք հաճախեմ ծախել ժառանգութիւնն, որ ստացել եմ Յնորհներից: Ա՛յն ժամանակ Յնորհաց Թողած ժառանգութիւնը սուրբ էր համարվում և նրան ծախելը մեղք: Աքաաբ այս բացատացութեամբ այնպէս տրտմեցաւ, որ հիւանդ պարկեցաւ, դարձրեց երեսը դէպի պատն և չէր ուզում ոչ ոքին նայել և ոչ կերակուր ուտել:

Նորա կինը Յեզաբէլ, նորա մօտ մտնելով, հարցրեց. «քեզ ի՞նչ պատահեցաւ. լինչո՞ւ դու ոչ ոքին չես ուզում տեսնել և բան չես ուտում: Աքաաբ պատմեց նրան իր խօսակցութիւնը Նաբաւթի հետ: Ի՞նչպէս, պատասխանեց Յեզաբէլ. «ուրեմն էլ դու որպիսի թագաւոր ես, որ քո հպատակից խնդարհում ես. կեր հաց և հանգիստ եղիր, ոչինչ բանի վերայ մի՛ մտածիր. ես կ՛տամ քեզ Նաբաւթի այգին»: Նա գրեց Աքաաբի անունովը նամակ Յեզրայէլ քաղաքի ծերերին և մեծերին և կնքեց արքունի կնքով: Այս նամակումը հրամայած էր սուտ վկաներով ամբաստանել Նաբաւթին, իբրև թէ նա հայհոյել էր Աստծուն և չարաբանել թագաւորին: Այս պատճառով անմեղ Նաբաւթը քարկոծվեցաւ:

Յեզաբէլ, երբ Նաբաւթի մահն իմացաւ, ասաց Աքաաբին. «այժմ կարող ես ձրի առնուլ այն այգին, որ Նաբաւթը քեզ չէր ուզում փողով ծախել. Նաբաւթը մեռաւ: Աքաաբ այն րոպէին գնաց այնտեղ և մտաւ այգին: Եղիա մարգարէն, Աստուծմէ իրկած, եկաւ այնտեղ և ասաց Աքաաբին. «դու մարգասպան. Աստուծոյ անունով յայտնում եմ քեզ, որ նոյն տեղում, ուր թափվեցաւ անմեղ Նաբաւթի արիւնը, կ՛թափվի քո արիւնդ էլ: Իսկ Յեզաբէլին կ՛պատահեն շները»:

Երեք տարի սրանից յետոյ Աքաաբը ստացաւ պատերազ-

մեծ մահաբեր վէրք։ Նրան բերին Սամարիա, իր մայրաքաղաքը, և Թագեայինն նորա կառքը լըցվել էր արիւնով, որ վազում էր վէրքից։ Այս կառքը լուացին իսկ այն տեղում, ուր Թափվել էր Նաբաթեի արիւնը։ Իսկ Աստուծոյ դատաստանը Յեզաբէլին վրայ կատարվեցաւ Յեզրայելում այնտեղ, ուր էր Նաբաթեի այգին, որին նա անօրէնութեամբ տիրել էր։ Երբ Ախաբէի յետոյ գնացող զօրավարը՝ Յեհուն հանդիպեաց մեծամեծ էր Յեզրայել քաղաքը, նա զարդարվեցաւ, զարդարեց գլուխն և մօտեցաւ պատուհանին, որ նայէ յայնժոյղ հանդիսաւոր ընթացքին, յայնժոյնն, որ տիրեց Իսրայէլի Թագաւորութեան և եղաւ նորա որդու Յովրամի մահվի պատճառը։ Թագաւորը, երբ նրան տեսաւ, ասաց իր մօտ եղող ծառաներին. «դուրս դեցէք դրան պատուհանից»։ Նրան դուրս դցեցին, պատերը սրսկեցան նորա արիւնով, ձիերը ոտնակոխ արին նորա մարմինը և երբ Թագաւորը հրամայեց վերստին նորա դին, որ թաղէն, դտան միայն նորա կառատիրը, ոտներն և ձեռները։ Նորա բոլոր մարմինը պղտտաեել էին շներըն։

Ախաբէի որդին և յաջորդը Յովրամ տարվեցաւ նեռով և նորա մարմինը դցվեցաւ Նաբաթեի այգում։ Ախաբը բաց ի նրանից ունէր էլի եօթանասուն որդիք, որոնք ամէնքը սպանվեցան։ Այսպէս չնչվեցաւ Ախաբէի բոլոր տունը։

Գ. Ո Ի Ե Ա Կ.

Սուրբ Մարգարէն Եղիսէ

Աստուծոյ հրամանով Սուրբ Եղիան իրեն աշակերտ ընտրեց Եղիսէին, որ ամէն տեղ նրան ուղեկից էր լինում։ Եղիան օծեց նրան մարգարէ և Աստուած իրկեց Սուրբ Հոգին նորա վերայ։ Սուրբ Եղիան, Եղիսէի աչքի առաջին, երկինք բարձրացաւ հրեղէն կառքով

Սուրբ Եղիսէն իր տէրը վարդապետի վերարկուի հետ միասին ժառանգեց մարգարէութեան կրկնապատիկ շնորհքն և հրաշագործութեան զօրութիւնը։

Մի պղտքան այրի եկաւ Եղիսէի մօտ և ասաց. «իմ մարդս մեռաւ, դու ինքդ դիտես, որ նա բարեպաշտ մարդ էր»։ Այժմ եկաւ պարտատէրը, որ հօր պարտքի համար իմ որդուց կամենում է իրեն ստրուկ անել։ ազատիր իմ որդուց»։—«Ինչով կարող եմ քեզ օգնել, հարցրեց Եղիսէն, «ասա՛ թէ ունես արդեօք մի կաթսայ»։—«Ես ունենք չունենմ, պատասխանեց այրին, բայց մի տան լուցից»։—«Ուրեմն դնա՛ առ». ասաց Եղիսէն. «փոխ ուղիր դրացիներիցդ, ինչքան կարելի է, շատ տաներ, փակիր տանդ դուռն և քո որդուդ օգնութեամբ լի տաներդ ամանիդ փոխ ուղած տաներիդ մէջ, և բոլորն էլ լիքը թող լինեն»։ Այրին կատարեց Եղիսէի հրամանը, փոխ առաւ իր ծանօթներից շատ տաներ և տունը լցրեց լուրթ, որ փակում էր նորա տանից, մինչև որ իսկ դատարկ տաներ։ Նա այնքան իւղ ծախեց, որ ոչ միայն կարողացաւ իր մարդու պարտքը տալ այլ նրան մնաց դեռ էլի բաւական փող, որ կերակրեր իրեն և իր որդուց։

Միանգամ Իսրայէլի Թագաւորութեան մէջ սով ընկաւ։ Մարգարէների որդիքն եկան Եղիսէի մօտ և նա հրամայեց իր ծառային նոցա համար կերակուր պատրաստել։ Ծառաներից մէկը գնաց բանջար հաւաքելու կերակրի համար և գտնելով մի վայրի պտուղ, որ խաղողի նման էր, ժողովեց և դրեց կերակրի մէջ, չիմանալով այս պտուղների վնասակար լինելը։ Երբ կերակուրը պատրաստ էր, ամէնքը նստան ուտելու, բայց փոքր ինչ ուտելից յետոյ ամէնքը կանչեցին. «մարդ Աստուծոյ, մենք կորանք, մենք դեղած ենք։ Այս կերակրի մէջը թոյն է խառնած»։ Եղիսէն հրամայեց ածել ալեւր պղնձի մէջ և ասաց ծառային. «այժմ ուր. թող ուտեն անվրիպ»։ Ա-

մենքը կշտացան և մնացին առաղջ. պատուղները կորցրին իրենց ընտակար յատկութիւնը։

Մարգարէի որդիքն ասացին Եղիսէին, թէ այստեղ, ուր մենք բնակում ենք, շատ նեղուածք է։ Մենք գնանք Յորդանան, նի մեզ. կարենք փայտ և շինենք մեզ համար բնակարաններ։ Եղիսէն էլ գնաց նոցա հետ։ Երիտասարդներից մէկը իր կացինը վեր գցեց ձեռքից գետի մէջ. «Ո՛հ. ես ինչ անեմ հիմիկ։ կացինս էլ փոխ ուզած էր», աղաղակեց նա։ «Ցոյց տուր ինձ», ասաց Եղիսէն, կացինդ որ տեղ վեր գցեցիր». երիտասարդը ցոյց տուեց այն տեղն, ուր ընկաւ կացինը. Եղիսէն գցեց այն տեղ մի փայտի կտոր—և կացինը դուրս եկաւ ջրի երեսը։ «Ա՛ռ քո կացինդ». ասաց Եղիսէն։ Երիտասարդը ձգեց իր ձեռքն և առաւ կացինը։

Մի քաղաքում երեխայք մանքերը դրին մարգարէի վերայ ծաղր անել։ Քաղաքից դուրս գալով կանչում էին նորա ետևից. «գնա՛ կնատակ, գնա՛ կնատակ». Այն լսելին դուրս եկան անից պատից երկու արջ և պատառեցին քառասուն երկու երեխայք։

ԳԼՈՒԽ Զ.

Նէեման Ասորի բժշկվելը։

Իսրայէլի երկրի հիւսիսային սահմանն է Ասորոց երկիրը։ Ասորոց թագաւորի առաջին զօրավարը՝ Նէեման էր լաւ զինուորական առաքինութեանց տէր մարդ և սիրելի շատ իր թագաւորին։ Նա շատ երևելի էր և հարուստ. բայց այս ամեն արտօնութիւնները ոչինչ էին նորա աչքում. որովհետև ինքը բորոտութիւն ունէր, որ սարսափելի և դրեթէ անբուժելի ցաւ է։

Միանգամ մի քանի Ասորի զինուորներ յարձակեցան Իսրայէլացոց երկիրը և յափշտակեցին ուրիշ գերիների հետ մի

սին մի փոքրիկ աղջիկ էլ, որին բերին իրենց հետ և տուին Նէեմանին։ Զօրավարի կինն առաւ գերի աղջկան և պահում էր իր մօտ։ Փոքրիկ Իսրայէլացի աղջիկը կարեկցութեամբ նայում էր հիւանդ Նէեմանի վերայ։ Ո՛հ. ասաց նա միանգամ Նէեմանի կնոջ, եթէ մեր տէրը գնար Սամարիայ Մարգարէի մօտ, յայտնի բան է, սա կ՚բժշկէր նրան»։ Կինը կրկնեց աղախնի խօսքերն իր մարդուն և սա էլ ասաց թագաւորին։ «Գնա Սամարիա, ասաց թագաւորն, ես կ՚տամ քեզ նամակ Իսրայէլացոց թագաւորի վերայ»։ Նէեման առանց ուշանալու գնաց, և առաւ հետը տասն տաղանդ արծաթի, վեց հազար դահեկան և տասն ձեռք ծանրագին շորեր։ Երբ Սամարիա հասաւ, նա խրկեց Իսրայէլի թագաւորին իր թագաւորի նամակն, որ գրած էր այս մտքով, թէ այս նամակը կ՚բերէ քեզ իմ ծառայս Նէեման, որին խրկում եմ քեզ մօտ, որ դու բժշկես նրան բորոտութիւնից։ Իսրայէլի թագաւորը շփոթվեցաւ և ասաց. միթէ՞ ես Աստուած եմ, նա միայն կարող է յարուցանել մեռեներուն և բժշկել բորոտներուն։ Ասորոց թագաւորը փնտռում է պատճառ ինձ պատերազմ յայտնելու»։ Եղիսէն խրկեց թագաւորի մօտ մարդ և հրամայեց նրան ասել. «Ի զուր ես տրտմում դու. խրկի՛ր Ասորին ինձ մօտ. թող նա իմանայ, որ Իսրայէլի մէջ կայ Մարգարէ»։

Նէեման նստաւ իր կառքը, գնաց Եղիսէի մօտ և կանգնեցաւ նորա տան դրան առաջն։ Եղիսէն խրկեց իր ծառային ըսելու, որ նա գնայ Յորդանանի մօտ և եօթն անգամ լուացվի այն գետում, այն ժամանակ նա կ՚սրբվի բորոտութիւնից։ Նէեման, սաստիկ նեղացած, ասաց. ահա ասացաւ էի, որ Մարգարէն ինքը դուրս կ՚գայ ինձ մօտ, աղօթք կ՚անէ իր Աստծուն. կ՚դնէ իր ձեռքը իմ վէրքերիս վերայ և կ՚բժշկէ ինձ։ Միթէ Ասորոց գետերը Իսրայէլի գետից վատ են։ Ինչո՞ւ խորհում է նա ինձ Յորդանանում լուանալու»։ Նա բարկացած կա-

ժինամ էր արդէն հեռանալ բայց ծառաներն, որոնք բոլոր
օրառիւ սիրում էին նրան, ասացին. «Եթէ Մարգարէն ասէր քեզ
մի ծանր բան, մի՞թէ պիտի չկատարէիր քո բժշկութեանդ
համար նորա հրամաններն։ Իսկ նա ասաց քեզ «լուացվիր և
կ'առողջանաս»։ Նեեման վեր կացաւ, լուացվեցաւ
Յորդանանում եօթն անգամ և սրբվեցաւ բորոտութենից։ Այն
ժամանակ դարձաւ նա Մարգարէի մօտ բոլոր իր ուղեկիցներով,
մտաւ նորա տունն և ասաց. «այժմ գիտեմ ճշմարտութեամբ, թէ
Իսրայէլի Աստուծմէ չկայ ուրիշ Աստուած, բայց միայն
Իսրայէլի Աստուծմէ։ Խնդրում եմ քեզ, ընդունիր ինձանից այս
ընծաները»։ Նա կամենում էր տալ Մարգարէին բոլոր իր տաք
կին, արծաթն և ծանրագին հագուրդը։

Բայց Եղիսէն պատասխանեց. «Կեցցէ Աստուած
Ծրէն, որ հիմա ես կեցնում եմ ինձ։ Նեեման ամէն կերպով աշխատում էր համոզել նրան, բայց մարգարէն ամենայն ուժգնութեամբ
և ասաց նրան. «գնա խաղաղութեամբ»։

ԳԼՈՒԽ ՁԱ.

Գէեզի։

Եղիսէ մարգարէի ծառան Գէեզին շատ էր սիրում իր տիրոջ անարատ
ծառայութիւնը։ Ինչքա՜ն հմայող մտածել նա, թէ ինչպէս տէրս
այն մարդին, ինչու չընդունեց նա նրանից ոչ մի ընծայ։ Ես
կհասնեմ նրան ետևից և կ'առնեմ նրանից մի բան»։ Գէեզին
գնաց Նեեմանի ետևից։

Նեեման, երբ տեսաւ Մարգարէի ծառային, ինքը դուրս
եկաւ նորա առաջ և բարեհոգութեամբ ընդունեց նրան։ Գէեզին
ասաց Նեեմանին, որ իր տիրոջ Եղիսէի մօտ եկել են Եփրեմի
սարից երկու պատանի աշակերտներ, որ մարգարէի որդիք են և խնդրեցել նորա տերը խնդրում է Նեեմանին ընծայել նրանից մի մի տոպրակ

զանգուածով և մի մի հագուստ։ Նեեմանի ծառաներից երկուսը տարան Գէեզիի ետևից ընծաները։ Գէեզին, երբ տունը հասաւ, ծառաներին յետ ետրեց, թէպետև նրանց ընծաները և նրանից ոչինչ չառաւ։ այդ մասին

«Որտեղից եկար Գէեզի»։ հարցրեց նրանին «ես ոչ մի տեղ չեմ գնացել»։ պատասխանեց Գէեզին։ Բայց լինել կարող էր ծածուկ ետևը Մարգարէից։ նրանին ամէնը դիտեր արդէն։ «ես տեսայ, երբ որ դու խորհրդաւորութեամբ առար փող, որ դնես քեզ համար պարտէզներ, ձիթիներ և խաշնեղէն, ոչխար Մարգարէն. «դու խաբեցիր ճշմարտութեամբ ասացար հարատութիւն, վերդրեցիր Նեեմանից վեր և շուտ. նոյն հիւանդութիւն ընդունիր դու և քո ամէն որդիք յաւիտեան»։ Գէեզին դուրս եկաւ Մարգարէի ճեմից բորոտած, ինչպէս էր Նեեման։

ԳԼՈՒԽ ՁԲ.

Յովնան Մարգարէն

Իսրայէլի թագաւորութեան մէջ բնակուում էր Յովնան մարգարէն։ Աստուած ասաց նրան. «վեր կաց, գնա Նինուէ քաղաքը և քարոզիր ժողովրդին ապաշխարութիւն։ Այս ընդարձակ, բազմամարդ քաղաքը սարսափելի անօրէնութիւնների մէջ ընկաւ, որոնց ձայնը հասաւ երկինք»։

Յովնան, այնմայ հնազանդելով Աստուծոյ հրամանին, ճանապարհ ընկաւ, միայն ոչ Նինուէ քաղաքն երթալու համար. նա վարձեց իրեն տեղ մի նաւի վերայ, որ գնում էր Թարսիս, և կամենում էր անցնել ծովն, որ աղաւոյի Աստուծոյ հրամանը կատարելից։

Բայց ի՞նչ պատահեցաւ։ Վեր կացաւ մրրիկ սաստիկ և նաւը մեծ վտանգի մէջ կր։ Ամէնքը սարսափեցան և սկսան ա-

ղօթք անել. որովհետև վտանգի ժամանակ ամենից մեծ չարագործն էլ դառնում է դէպի Աստուած:

Յովնան այս ժամանակ քնած էր: Նաւի տէրն ասաց Յովնանին. «ամօթ չէ՞ քեզ, որ քնում ես: Վեր կաց և աղօթք արա Աստծուդ, գուցէ նա ազատէ մեզ մահից»:

Ամենքը կարծում էին, թէ Աստուած վեր է կայրել մրրիկ պատժելու համար մի մեծ չարագործի, որ իրենց մէջ է: Ամենքը ժողվեցան միասին և ասում էին. «եկէք, վիճակ գցենք, որ իմանանք, թէ ո՞վ է պատճառն այս պատուհասին, որ ամենուս սպառնում է»: Աստուած այնպէս կարգեց, որ վիճակն ընկաւ Յովնանին: Այն ժամանակ ամենքը սկսան նրան հարցնել. «ասա, ո՞վ ես դու. ո՞ր կամենում էիր դու երթալ և ինչո՞ւ Աստուած պատժում է մեզ քեզ համար»: Յովնան պատասխանեց. «ես Իսրայէլացի եմ և երկրպագութիւն եմ տալիս Ամենազօր Աստծուն, որ ստեղծեց երկինքը, ջուրն և ցամաքը»: Յովնան չի ծածկեց, որ ինքը կամենում էր Աստուծոյ հրամաններից փախչել: Այն ժամանակ ամենքը տեսան, որ նա մեղանչել է և վախենալով ասում էին նրան. «ինչո՞ւ փախչում ես դու քո Աստուծոյ երեսից: Ի՞նչ անենք ուրեմն մենք այժմ, որ դադարեցնենք մրրիկը»: Յովնան պատասխանեց. «գցեցէ՛ք ինձ ծովը, ես գիտեմ, որ մրրիկը իմ պատճառով է վեր կացել»:

Բայց ծովագնացները մարդասէր մարդիկ էին, նոքա կամենում էին Յովնանին ափը հանել, աշխատում էին մօտենալ ցամաքին և երկար ժամանակ կռվում էին մրրկի հետ, բայց ալիքն անդադար նրանց հետ յաղթում էին, այնպէս որ վերջապէս զօրութիւնից ընկան: Տեսնելով, որ իրենց ամեն աշխատանքները ի զուր են, սկսան աղօթք անել, ասելով նոյն ժամանակ յետագայ խօսքերն էլ. «Տէր, մի կորցնիր մեզ ամենուս այս մի մարդու անօրէնութեան համար և սորա մահը մեղք մի համարիր, մենք կատարում ենք քո կամքդ»: Նոքա վեր առան Յովնանին և գցեցին ծովը: Մրրիկը այն րոպէին դադարեցաւ:

Նաւի վերա բոլոր գտնուողները զօրացան կենդանի հաւատով Աստուծոյ և ջերմեռանդութեամբ: Նոքա զոհ բերին Աստուծոյ և մեծարգնեալ Աստծուն և խոստացան պահել նորա պատուիրանները:

ԳԼՈՒԽ ԶԳ.

Յովնան կէտ ձկան փորում:

Այն րոպէին, երբ Յովնանին ծովը գցեցին, Աստուած հրամայեց մեծ ձկան, որ նրան կուլ տայ. բայց կէտի փորումն էլ պահպանեց Աստուած նորա կեանքը: Յովնան մնաց անվնաս երեք օր և երեք գիշեր ձկան փորում:

Այս Յովնան մարգարէի անցքն էր օրինակ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի երեքօրեան թաղման և յարութեան: Եւ աղօթքը, որ Յովնան կէտի փորում ասաց, պարունակում է իր մէջ շատ մարգարէութիւն:

Աստուած լսեց Յովնանի աղօթքն և հրամայեց կէտին, որ նրան ցամաքը դուրս գցէ:

Աստուած երկրորդ անգամ հրամայեց Յովնանին երթալ Նինուէ և նորա բնակիչներին ապաշխարութիւն քարոզել. նա անյապաղ ընկաւ ճանապարհ: Նինուէն Ասորեստանի թագաւորութեան մայրաքաղաքն էր և այնպէս ընդարձակ էր, որ Յովնան բոլոր օր գնում էր մի ծայրից մինչև միւս ծայրը, անդադար ձայն տալով. «կանգնի՛ էլի երեք օր—և Նինուէն կ'կործանվի»: Նինուէի բնակիչները, վախենալով այս սպառնալիքներից, ապաշխարեցին. պահք գրին իրենց, հագան քուրձ և նստան մոխրի վերայ ամենքը, թագաւորից սկսած մինչև վեր-

Ջին մարդը, Թոքին իրենց ամեն գործերն և մեծ չկրմեցան-
դրելեամբ ապծիք էին անում: Աստուած, տեսնելով նոցա
սրտանց զղջումն, ներեց նրանց:

Յոնան դուրս եկաւ քաղաքից և փոքր ինչ հեռու նստաւ
նորա հանդէպն և սպասում էր, թէ ինչ կպատահի քաղաքին:
Այս ժամանակ Աստուծոյ հրամանով դուրս եկաւ այն տերևը,
ուր Յոնան էր, զովենի, որ իւր լայն տերևներով պահպա-
նում էր նրան օրվան շոգից: Այնտեղ նստաւ նա և քաղաքին
նայելով սպասում էր իր մարգարէութեան կատարվելուն: Բայց
տեսնելով, որ նինուէն անվնաս կեցած է, նա սկսաւ տրտմիլ,
որ իր մարգարէութիւնը չկատարվեցաւ: Նա մինչև անգամ
մահ էլ խնդրեց իրեն Աստուածից և ասում էր, ահա ինչու ես
չեի ուզում նինուէ երթալ. ես գիտեի, որ դու երկայնա-
միտ ես և բազմողորմ և թողութիւն ես տալիս զղջացած մե-
ղաւորներին: Այժմ, խնդրում եմ Քեզ, տէր, առ իմ կեանքս,
ես աւելի կամենում եմ մեռնել, քան թէ ապրել:

Մի օր էլ չիարդ պղմենին, ձրձուռն կերաւ նրան և նա
թառամեցաւ արեգակի տաքութիւնից: Յոնան աւելի տրտ-
մեցաւ: Նա էլի սկսաւ կանչել մահն, որովհետև Աստուած խը-
լեց նրանից պղմենու շուքը: Այն ժամանակ Աստուած ասաց
նրան. «Յոնան, դու չես տնկել պղմենին, հոգս չես քաշել նո-
րա մեծանալու վերայ, բայց տրտմում ես նորա կորուստի հա-
մար. Նա գիշեր եկաւ մի գիշերում և մի գիշերում էլ թառա-
մեցաւ: Դու ցաւում ես նորա վերայ և ուզում ես, որ ես ջնջ-
ջեմ մեծ քաղաքն, որի մէջ հազարներով մարդիկ են կենում,
ուր 120000 էլ աւելի մարդիկ կան, որոնք չեն կարող դեռ
բարին չարից զանազանել և շատ էլ անասուններ:

ԳԼՈՒԽ ՁԴ.

Իսրայէլի թագաւորութեան ընկնիլը:

Ասորիներն և Բբրայեցւոց միս դրացիները քանիցս անգամ յարձակեցին Իսրայէլի գեղեցիկ երկիրը: Իսրայէլացիները դեռ կարողանում էին ընդդիմանալ դրացիներին և պաշտպանել իրենց նոցա յարձակումներից: Բայց վերջ կացաւ Աստեստանցոց ազգն և բոլորովին նուաճեց Իսրայէլի թագաւորութիւնը: Ովսէ թագաւորը անհաւատարմութեամբ վարվեցաւ Ասորեստանի թագաւորի հետ և այն պատճառով զրկվեցաւ թագաւորութիւնից և եղաւ Իսրայէլի վերջին թագաւորը:

Ասորեստանցոց բազմաթիւ զօրքը տիրեց Սամարիային: Ովսէ թագաւորը, գրեթէ բոլոր իր հպատակներով, գերի գնաց: Այնուհետև Իսրայէլի թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ: Դարպակ տեղերում բնակվեցան կռապաշտներն, որոնց հետ միասին մնացած փոքրաթիւ Իսրայէլացիներն էլ և սկսան այնուհետև Սամարացիք կոչվել:

Հայոց ընկաւ Իսրայէլի հրեից տասն ցեղերի թագաւորութիւնն Ասորեստանի Սաղամանասար թագաւորի ձեռքով 722 տարի Քրիստոսի ծնունդից առաջ:

ԳԼՈՒԽ ՁԵ.

Սուրբ մարգարէները.

Ո՞ր են այն մարգարէների անունները, որոնց պրոտաճքը պրած են Աստուածաշնչի մէջ:

Նոյան, Աբրահամ որդին, բնակում էր Յուդայի երկրում, Ոզեայի, Յովաթամի, Աքազի և Եզեկիայի թագաւորութեանց ժամանակ: Ինչքան տրամեցնում էին նրան չար թագաւորները

անաստուածութիւնն և մեղքերն, ընդ հակառակ այնքան էլ աւելի ուրախացնում էին բարի թագաւորների առաքինութիւն ներն և բարեպաշտութիւնը: Եզեկիան Յուդայի թագաւորների լաւերից մէկն էր: Նորա թագաւորութեան ժամանակ Աստուած պատերազմ բաց արին Յուդայի հետ և շատ չարութիւններ արին, այնպէս որ Եզեկիան սպասում էր, որ իր թագաւորութիւնը կ'քանդվի. բայց Եսայի մարգարէն խոստացաւ նրան Աստուծոյ մերձակայ և շուտ օգնութիւնն, որ և ճշմարիտ կատարվեցաւ: Նմանապէս Եզեկիայի ծանր հիւանդութեան ժամանակ, Եսայի խոստացաւ նրան բժշկութիւն և հաւատացրեց այն նրան հրաշքով. նա արեգակի ստուերը տասն աստիճան յետ դարձրեց: Եսային լցեալ էր Աստուծոյ Հոգով. նա վառ ոգացմամբ խօսում է Աստուծոյ վերայ և նոցա երջանկութեան վերայ, որոնք երկրպագութիւն են տալիս նրան հաւատով. նա չարչարանում է Դաւթի այն զաւակի վերայ, որ կըծնի կոյսից, մարդոց փրկելու համար. նա խօսում է նմանապէս այն չարչարանքների վերայ, որոնց նա կ'տանէ մարդկային ազգի համար. Մարգարէներից ոչ մէկը այսպէս պարզ չէր գուշակում Մեսսիայի ցիտուի Քրիստոսի ծնունդը, չարչարանքներն և փառքը: Ա յս պատճառով մի քանի Սուրբ Հայրերը Սուրբ Եսայիին անուանում են հին ուխտի աւետարանիչ:

Երեմիա մարգարէն ուրիշների պէս մարգարէանում էր Մեսսիայի գալուստն, և յորդորում էր Աստուծոյ ժողովրդին ապաշխարելու և գուշակեց Երուսաղէմի քանդուիլը և ինքն էլ տեսաւ իր գուշակութեան կատարումն:

Դանիէլ մարգարէին վերայ աւելի ընդարձակ կ'խօսնք յետոյ:

Մարգարէներն եզեկիէլ, Ովսէ, Յովէլ, Ամովս, Աբդիու, Յովնան, Միքիա, Նաւում, Ամբակում, Սոփոնիա, Անդէ, Զաքարիա և Մեղաքիա մարգարէացան նոյնպէս Մեսսիայի և Յու-

դայի թագաւորութեան ու ուրիշ ազգերի զանազան վիճակների վերայ:

ԳԼՈՒԽ ՁԶ.

Տովբիթ:

Էյն Իսրայէլացիների մէջ, որոնց Աստուածտանցիք գերի տարան, կար մի բարեպաշտ մարդ Տովբիթ անունով: Նրան բերին Նինուէ՝ Աստուածտանի մայրաքաղաքն, իր կնոջ և միակ որդու հետ միասին: Բայց օտար երկրումն էլ հաստատ մնաց նա իր հաւատին և կատարում էր Աստուծոյ պատուիրանները: Սաղմանասար, Աստուածտանի թագաւորը, սիրում էր այս բարեպաշտ մարդուն և հրամայում էր նրան ազատ մանգալ իր բոլոր տէրութեան մէջ: Տովբիթ այս հրամանը գործ էր դնում, որ մխիթարէ իր գերի եղբայրներուն, օգնէ նրանց իր կարողութեան չափ և նրանց օգտակար խորհուրդներ: Նա ամեն տարի գնում էր իր ազգականների և ծանօթների մօտ նրանց էլ մասն էր հանում ամենից, ինչ որ ուներ:

Տովբիթ վաճառականութեամբ շահեցաւ տասն տաղանդ արծաթ. Ա յս փողերն որ հաւաքեց, գնաց Մարաստանի Հռագա քաղաքն, որ այնտեղ էլ թեթևացնէ գերի Իսրայէլացիների վիճակը:

Հ ուտ սրանից յետոյ մեռաւ Սաղմանասար և նրանից յետոյ թագաւորեց նորա որդին Սենեքերիմը: Սա խստութեամբ էր վարվում Իսրայէլացիների հետ և ատում էր նրանց: Ա յս ազգի թշուառութիւնը սարսափելի էր. նորա մեծ մասը չունէր ոչ օրվան հաց և ոչ շոր, շաւերը սպանվեցան և գիերը դժվեցան քաղաքի պատերից դուրս, որ վայրի գազաններին և պատառող թռչուններին կերակուր լինեն: Ա յս թշուառ ժամանակները Տովբիթի ողորմածութիւնն առաւել աւելացաւ, նա

կերակրում էր քաղցածներըն. հագցնում էր մերկերուն և թաղում էր մեռածներուն։

Նորա այսպիսի անխոնջ բարեգործութեան համբաւը հասաւ թագաւորին։ Սենեքերիմ բարկացաւ. հրամայեց սպանել Տովբիթից նորա բոլոր ստացուածը և իրեն սպանել։ Թշուառականը, ամեն բանից զրկած, փախաւ։ Նրան թագցնում էին բարեկամները, որովհետև իր առաքինութիւններով շատ բարեկամներ գտել էր։

Տովբիթի փախուստից չետ չիտուն օր հազիվ անցել էր, որ Սենեքերիմ սպանվեցաւ իր հարազատ որդիներից։ Նրանից չետոյ թագաւորեց Ասորդան նորա որդին, որի մօտ Տովբիթի ազգականներից մէկն էր երեսի իշխան։ Սա խնդրեց Տովբիթին համար թողութիւն, և նա չետ ստացաւ կրկին իր կնոջ, որդուն, իր տունն և բոլոր ստացուածը։ Նա առաջվան պէս սկսաւ բնակել Նինուէում իր ընտանիքով։

Եկաւ եօթներորդ շաբաթը, պենտէկոստէի տօնը։ Տովբիթի տանը պատրաստվեցաւ մեծ ճաշ։ Տովբիթ, տեսնելով կերակուրների առատութիւնն, ասաց իր որդուն, «գնա, կանչիր ինձ մօտ իմ աղքատ եղբայրներից մի քանիսին, որոնք պահում են Աստուծոյ օրէնքները և թող տօնեն այս մեծ օրը. ես քեզ ճաշէ կսպասեմ»։ Նորա որդի Տուբիան, երբ չետ դարձաւ, պատմեց, թէ տեսաւ փողոցում մի սպանած Իսրայէլացիի մարմին։ Տովբիթ սեղանից վեր կացաւ և թագուն մեռելին բերաւ իր տուն, որ արեգակի մտնելից չետ թաղէ։ Դրացիները նախատում էին նրան, ասելով, «չէ՞ որ ժամանակ է, որ թագաւորը քեզ կամենում էր սպանել մեռելները թաղելու համար։ Հազիւ ազատվեցար մահուան վճռից և էլի մի և նոյն բանն ես անում»։ Բայց Տովբիթ թաղեց սպանածի մարմինը։

Գիշերով, թաղումից չետ դառնալով, չմտաւ իր տուն. այլ պարկեցաւ տան պատի մօտ և չնակատեց, որ ուղիղ իր գլխի

վերայ կար ծուխ բոյն։ Այս բունից ընկաւ նորա աչքի մէջ ծիրան, որից եկաւ աչքի վրան փառ։ Տովբիթ դնաց բժիշկների մօտ, միայն նոքա ոչինչ օգնութիւն չտուին նրան և նա բոլորովին կուրացաւ։ Բայց այս թշուառութեան էլ տանում էր նա համբերութեամբ։

Աննան, Տովբիթի կինը, անխոնջ աշխատում էր, որ կերակրէ իր ընտանիքը. նա մանում էր բուրդ։ Միանգամ նա, երբ տարաւ տէրոջ իրեն յանձնված աշխատանքը, ստացաւ բացի իր վարձից մի ուլ էլ ընծայ։ Տովբիթ, որ լսեց նորա ձայնը, չէր իմանում, թէ այն ինչ է նշանակում։ Տէս, ասաց նա իր կնոջ, գողացած չէ արդեօք ուլը. չետ տուր այն տէրոջը, գողունի բան ուտելն մեղք է»։ Կինը շատ բարկացաւ նորա այս կասկածանքի համար։ Նա ասաց նրան շատ աւելորդ խօսքեր։ Տովբիթը լռութեամբ համբերում էր նորա հայհոյանքներին և յանդիմանութիւններին, նա հոգոց էր հանում և իր սրտում խնդրում էր Աստուծոյ, որ կամ թեթևացնէ իր վիճակն և կամ կրկին իրեն մահ։

Աստուած լսեց նրա աղօթքն և խրկեց նրան օգնութիւն իր Ռափայէլ հրեշտակին։

ԳԼՈՒԽ ՁԷ.

Տովբիթի իր որդուն տուած խրատները։

Տովբիթը հաւատում էր, որ Աստուած լսել է իր աղօթքն և շուտ կկրկին իրեն մահ և այս պատճառով կանչեց իր որդուն և ասաց նրան վերոգրեալ խօսքերն. «որդեակ, լսիր քո հօրդ և պինդ պահիր իմ խօսքերս սրտումդ»։

Երբ Աստուած կկանչէ Իր մօտ իմ հոգիս, թաղիր իմ մարմինս»։

Պատուիր մորդ, մի առանար երբէք, ինչքան նա քաշել է

քեզ համար։ Եւ երբ նա կ'մեռնի, թաղի՛ր նրան էլ ինձ մօտ մի գերեզմանում»։

Աստուծն միշտ աչքիդ առաջև ունեցի՛ր, կատարի՛ր նորա պատուիրանները, և փախի՛ր մեղքից։

«Ողորմութիւն արա՛ քո կարողութեանդ համեմատ և երբէք երեսդ մի՛ դարձնի՛ր աղքատից. այն ժամանակ Աստուած էլ քեզնից չէ դարձնել իր երեսը»։

«Օգնի՛ր ամենին, ինչքան կարող ես։ Եթէ դու հարուստ կ'լինես, տո՛ւր շատ, եթէ դու աղքատ կ'մնաս, տո՛ւր փոքր, միայն բարի սրտով։ Այսպէսով կ'հաւաքես մեծ գանձ թշուառութեան ժամանակի համար։ Ողորմութիւնը փրկում է մահից և չէ թողնում մարդուս խաւարն երթալ։

«Եղի՛ր ողջախոհ, հեռացի՛ր զեղխ մարդոց հասարակութիւնից և մի՛ առնի՛ր քեզ կին կռապաշտ, այլ ընտրի՛ր մեր ազգից։

Փախի՛ր հպարտութիւնից, նա չպէտք է տեղ ունենայ սրտումդ։ Հպարտութիւնն և փառամոլութիւնը մարդուս ամեն բարի որպիսութիւնները խախտում են և դժում են նրան ամեն մեղքի մէջ»։

«Տո՛ւր վարձ արդարութեամբ ամենին, ովոր քեզ համար կ'աշխատէ և մի՛ պահի՛ր մօտդ վարձկանի աշխատանաց գինը»։

«Մի՛ անի՛ր ուրիշին այն, ինչ որ չես ուզում, որ քեզ անեն»։

«Մի՛ խմի՛ր գինի այնքան, որ հարբես»։

«Խաժանի՛ր հացդ կարօտեալների հետ և հագցրո՛ւ մերկերին քո շորերդ»։

«Հարցրո՛ւ խորհուրդ միշտ իմաստուն մարդկից»։

Կենացդ ամեն դիպուածներում փառաբանի՛ր Աստծուն և խնդրի՛ր նրան, որ կառավարէ ամեն քո գործքերդ և խորհուրդներդ։ Որովհետև Աստուածմէ է ամեն բարին։ Նա բարձրացնում է և խոնարհեցնում է, ում որ կամենում է»։

«Հրեացի՛ր, որդեակ, մենք աղքատ ենք. բայց եթէ կ'կենանք

Աստուծոյ կամաց յատար և կ'փախչենք մեղքից, այն էլ, ինչ որ ունինք, բաւական կ'լինի մեզ»։

Երիտասարդ Տուբիայի սիրտը շարժեցաւ այս խօսքերից։ Նա ասաց իր հօրը. «Հայր իմ. ես կ'կատարեմ քոլոր քո հրամանները», և պահեց իր խօսքը։

ԳԼՈՒԽ ԶԸ.

Երիտասարդ Տուբիայի ճանապարհորդութիւնը։

Իր խրատները վերջացնելից յետ, Տովբիթ ասաց իր որդուն, «ես քեզ պէտք է հրի յայտնեմ, որ քո մանկութեան ժամանակ, Մարաստանի Հռագա քաղաքում Գաբայէլի մօտ պահ տուել եմ տասն տաղանդ արծաթ. գնա՛ նորա մօտ, որդեակ։ Բայց առաջ գտի՛ր քեզ ընկեր, որ առաջնորդէ քեզ Հռագա և հրի յետարի ինձ մօտ։ Կատարի՛ր այս իմ մահիցս առաջ»։

Երիտասարդ Տուբիան գնաց իրեն ընկեր փնտռելու և պատահեցաւ մի երիտասարդի, որ շատ գեղեցիկ էր տեսքով։ Այս երիտասարդն էր Հռափայէլ հրեշտակը. նա հագած էր ճանապարհի շորեր։ Տուբիան, չիմանալով, թէ ով է նա, մօտեցաւ հրեշտակին, ողջունեց և ասաց. «գիտե՞ս արդեօք Մարաստանի Հռագա քաղաքի ճանապարհը»։—«Գիտեմ, պատասխանեց հրեշտակը, ես այնտեղ քանիցս անգամ եղել եմ մեր եղբօր՝ Գաբայէլի մօտ։ Տուբիան ասաց. «սպասի՛ր ինձ այստեղ, մինչև ես այդ յայտնեմ հօրս»։ Հայրը զարմացաւ, տեսնելով, որ Տուբիան այնպէս շուտ գտաւ իրեն ուղեկից և հրամայեց որդուն իմ մօտ կանչել երիտասարդին։ «Կ'համաձայնե՞ս դու իմ որդուս Հռագա Գաբայէլի մօտ առաջնորդելու. հարցրեց Տովբիթ։ Երբ դու կը դառնաս նորա հետ միասին, մենք քեզ կ'տանք աշխատանացդ վարձն», աւելորեց նա։ «Ուրախութեամբ պատասխանեց երիտասարդը. «ես կ'տանեմ որդուդ Հռագա և յետ կ'դարձնեմ նը-

բան էլիս։ Ոբեմին», ասաց Տոբիթին, գնացէ՛ք, Աստուած ձեզ հետ լինի, Աստուած Թովղ խրկէ ձեզ ուղեկից իր հրեշտակին»։

Երիտասարդ Տոբիան պատրաստեցաւ ճամապարհի, հրաժարական ողջոյն տուաց իր հօր և մօր, ապա նոցա օրհնութիւնն և գնաց երիտասարդի հետ»։

Անապարհորդութեան առաջին օրը նոքա հասան մինչև Տիգրիս գետը։ Տոբիան գնաց գետում լողնալու։ Յանկարծ մի մեծ ձուկը դուրս եկաւ ջրից և կամենում էր կուլ տալ նրան։ Տոբիան վախեցաւ, պինդ գոռաց և օգնութիւն կանչեց իր ընկերոջը։ Հրեշտակն ասաց. «բռնիր այդ ձկան և հանիր ջրից»։ — Տոբիան հանեց ձկան ցամաքը. «Այժմ, ասաց հրեշտակը, ձեղքիր փորը. սիրտը, լեղին և լնարդը պահիր. դոքա դեղ են։ Տոբիան կատարեց, ինչ որ իրեն հրամայվեցաւ։ Այս ձկնից մի քանի կտոր նա խորովեց ընթրիքի համար։

Յետոյ գնացին առաջ և եկան Եգբատանա քաղաքը։ «Ո՞ւր իջևանենք մենք», հարցրեց Տոբիան հրեշտակին։ «Այս տեղ կենում է մի մարդ Հռագուէլ անունով, ասաց հրեշտակը. նա քեզ ազգական է և բացի մի աղջկից, որի անունը Սառա է, չունէ ուրիշ զաւակ։ Նա գեղեցիկ է, խելօք և բարեպարոյ, նա կ'իսկամ քեզ վերայ նորա հօր հետ, նա կ'համձայնի նրան քեզ տալ. դու ես նորա ամուսնացնելի օրինաւոր ժառանգը։ «Ես լսել եմ դորա համար». պատասխանեց Տոբիան։ Առում են, թէ նա չար դևի իշխանութեան տակն է. թէ նա ևօթն անգամ ամուսնացել է և թէ նորա ամեն ևօթն ամարդերն էլ ամուսնութիւնից յետ առաջին գիշերը մեռել են։ Ես վախենում եմ, որ ինձ հետ էլ մի և նոյնը չպատահի։ Եթէ ես մեռնեմ, ոչ հոգս կ'քաշէ ծնողացս վերայ։ Ես եմ նոցա միակ նեցուկը։ Տրտմութիւնը նրանց գերեզման կ'իջեցնէ»։

«Մի վախիր, ասաց հրեշտակը. չար ոգին քեզ վնաս չէ տալ. միայն ջերմեռանդութեամբ աղօթք արէք ամենաբարձր Աստծուն և նա կ'պատուհէ ձեզ և կ'օրհնի։

Գլուխ ՇՔ.

Տուբիայի ամուսնութիւնը։

Տուբիան հրեշտակի ուղեկցութեամբ եկաւ Հռագուէլի մօտ և Սառան ընդունեց նրան։ Հռագուէլ, Տուբիային նայելով, ասաց իր կնոջ Հեգնային. «նայիր թէ նման է այս երիտասարդը մեր ազգականին՝ Տովբիթին։ Ցետոյ, դառնալով ճանապարհորդներին, հարցրեց նա, «որտեղից էք գալիս, սիրելի եղբայրներ»։ Մենք գերի Նեփթաղիմի ցեղից, ոտ Նինուէացի ենք», պատասխանեցին նոքա։ «Ձեզ ճանաչում արդեօք այնտեղ իմ ազգական Տովբիթին», հարցրեց Հռագուէլ։ «Ճանաչում ենք». պատասխանեցին նոքա։ «Նա կեանք է», ասաց Տոբիան։ Այն ժամանակ Հռագուէլ գրկեց Տուբիային և լաց եղաւ ուրախութիւնից։ «Օրհնուած եմ քեզ, որդեակ, ասաց նա. դու ունես առաքինի և բարեպաշտ հայր»։ Հեգնան, Հռագուէլի կինը և Սառան, նորա աղջիկը, ուրախութեամբ բարևեցին Տուբիային, բայց ամենքն էլ շատ տխրեցան, երբ լսեցին, որ Ձերունի Տովբիթը զրկվել է աչքից։

Հռագուէլ հրամայեց մեծ ճաշ պատրաստել և խնդրեց իր հիւրերուն, որ նստին։ Բայց Տուբիան ասաց. «ես ոչ կ'ուտեմ և ոչ կ'խմեմ, մինչև ես համաձայնիլ իմ խնդիրքս կատարելու։ Տուր ինձ կին քո աղջկանը Սառային։ Հռագուէլ վախեցաւ այսպիսի առաջարկութիւնից, մտածելով, թէ արդէն իր աղջկան ևօթն ամուսիններն մեռան, նա վախենում էր, որ նոյն վիճակը Տուբիային էլ չհասնի. բայց հրեշտակը ասաց նրան. «մի վախիր, նա բարեպաշտ մարդ է և Աստուած ինքը նշանակել է նրան քո աղջկանը համար. ահա ինչու մինչև հիմիկ

ոչ ոք չէր կարողանում տիրել նրան։ Այն ժամանակ Հռագուէլ միացրեց Տուբիայի և Սառայի ձեռքերն, ասելով. «Աստուած տեսաւ իմ արտասուքներս և լսեց իմ աղօթքս։ Տալիս եմ Նրան քեզ։ Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստուածը օրհնէ ձեր պսակը»։

Այս գիշերից յետ Հռագուէլ կանչեց իր ծառաներուն և կնոջ նոցա հետ միասին պարտէզ, որ գերեզման փորէ իր աղջկան նոր մարդուն համար։ Երբ գերեզմանը պատրաստեց, նա դարձաւ իր կնոջ մօտ և ասաց նրան. «Երկիր քո աղախիններից մէկին, որ տեսնէ, չէ՞ մեռել արդեօք Տուբիան, որ մենք կարողանանք նրան թաղել արեգակի ծագելից առաջ և այսպիսով ծածկենք նորա մահը»։ Աղախինը դարձաւ և համբաւ բերից, որ երկու նոր ամուսնացածներն էլ ողջ և առողջ են։ Տուբիան Հրեշտակի հրամանով, իր համար պատրաստած սենեակը ծխեց սրտոմն և լեարդոմն, որ հանեց իր բռնած ձկնից, և Սառայի հետ միասին երեք օր աղօթքով անցկացրեց։ Աստուած ողորմեց նրանց։ Հռագուէլ հրամայեց իր ծառաներին ծածկել փորած գերեզմանն, իսկ ինքն և իր կինը աղօթք էին անում և շնորհակալ լինում Աստուծոյ։

ԳԼՈՒԽ Զ.

Տուբիայի դարձը։

Հռագուէլ պատրաստեց հարսանիքի ընթրիք, ու հրաւիրեց ամեն իր բարեկամներուն և դրացիներուն։ Նա խնդրեց իր փեսայից, որ մնայ իր մօտ էլի երկու շաբաթ։ Տուբիան, չկարողանալով բացատրել իր անկրօն և մի և նոյն ժամանակ վախենալով իր երկարժամանակեայ բացակայութեամբ իր ծնողաց անհանգստութիւն պատճառել, խնդրեց հրեշտակին, որ իրեն Աղարիա էր անուանում, որ գնայ առանց իրեն Հռագա Դա-

բայէլի մօտ և ձեռագրի զօրութեամբ ստանայ նրանից փողն և իրեն էլ հրաւիրէ հարսանիքի խնջոյքը»։ Հրեշտակը կատարեց Տուբիայի յանձնարարութիւնը։ Գաբայէլ տուեց բոլոր արծաթըն, որքան պարտք էր և ինքն էլ ուրախութեամբ եկաւ Տուբիայի հարսանիքը։

Երկու շաբաթից յետոյ Հռագուէլն ասաց Տուբիային. «Մնա իմ մօտ մի քանի ժամանակ. ես կխրկեմ քո հօրդ մօտ մարդ ասելու, որ դու առողջ ես»։ — «Չէ». պատասխանեց Տուբիան. «ես գիտեմ, որ իմ ծնողքս համարում են այժմ ամեն րոպէն և իմ բացակայութիւնս անհանգստացնում է նրանց։ Թէև շատ խնդրեց Հռագուէլ նրան, բայց Տուբիան ոչ մի կերպով չհամաձայնեցաւ մնալ։ Ուստի Հռագուէլ տուեց նրան իր աղջկան Սառային, իր բոլոր խաշների կէսն, իր փողերի կէսը, տուեց նրան ծառաներ, աղախիններ և ցանկալով նրանց բարի ճանապարհ, ասաց նրանց. «Աստուծոյ սուրբ Հրեշտակը ուղեկից լինի ձեզ և հասցնէ ձեզ յաջողութեամբ ձեր տունն։ Աստուած տայ, որ ծնողացդ առողջ գտնես և ես իմ մահիցս առաջ արժանանամ ձեր որդոցը տեսնել»։ Հռագուէլ և Հեդնան գրկեցին իրենց փեսային և աղջկան ու համբուրելով հրամայեցին Սառային, որ սիրէ իր մարդուն և պատուէ իր սկեսուրին և սկեսրային և պահէ իրեն այնպէս, որ ոչ մի յանդիմանութեան չարժանանայ։ Սառան, արտասուք թափելով, խոստացաւ, որ երբէք չէ մոռանալ իր ծնողաց խրատները։ Ցետոյ նոքա բաժանվեցան։

Իսկ ծերունի Տոբիթի և նորա կինը շատ անհանգստանում էին իրենց որդու վերայ, որ փոքր ինչ ուշացաւ հարսանիքի խնջոյքի պատճառով։ «Ի՞նչ բան կարող էր պատահել մեր որդուն», ասում էր նա իր կնոջը։ «Գուցէ Գաբայէլը մեռել է և նա չդիտէ ումից առանայ փողերը»։ Տուբիթ և Աննան ժամից ժամ աւելի անհանգստանում էին. նոքա լաց էին լինում,

տեսնելով, որ իրենց որդին նշանակած ժամանակը չէ դառնում, Մայրը չէր դադարում տրտնջել. «Ո՛հ որդեակ իմ. որդեակ իմ». ասում էր նա. «ինչո՞ւ խրկեցինք մենք քեզ օտար երկիրը — դու մեր աչքի լույսը, մեր ծերութեան նեցուկը, մեր կեանքի միխիթարութիւնը. մեր ցեղի յոյսը: Միթէ՞ մենք բաւական հարուստ չէինք, երբ քեզ ունէինք:: Տովբիթ միխիթարում էր նրան, ասելով, «բաւական է, մի՛ տխրիր. յայտնի բան է, որ մեր որդին առողջ է, ընկերն, որ նորա հետ գնաց, արդար և հաւատարիմ մարդ է: Բայց Աննան չէր կարողանում միխիթարվել և ամեն օր գնում էր այն ճանապարհն, որով պէտք է նորա որդին դառնար: Այս տեղ բարձրութեան վերայ նստած նայում էր հեռու: Վերջապէս հեռուից տեսաւ ճանապարհորդներ, որոնք գալիս էին այն ճանապարհով և նրանցից մէկին ճանաչեց, որ իր որդին էր: Աննան ուրախացած վազեց իր մարդուն մօտ պատմելով. «որդիդ գալիս է»:—

Տուբիան հառաչելի հետ միասին գնաց առաջ, որ շուտով տեսնէ ճնողաց հետ, իսկ Սառային բոլոր ծառաներով և խաշներով հետ թողին. սա կամաց կամաց հետևում էր նրանց:

Բրեշտակը ասաց Տուբիային. «վեր ա՛ռ հետդ լեղին, որ ձրկնից հանցիր և քսիր այն հօդս աչքին. այսպիսով կ՚բժշկես նորա աչքերը»:

Երուսնի կոյրը Տովբիթ, շտապելով իր որդուն առաջը դուրս գալ, գլորվեցաւ և որդին շուտ գնաց նրան բարձրացրեց: Հայրն և մայրը գրկեցին իրենց սիրելին և ամենքը միասին ընդհակառակ եղան Աստուծոյ և ջերմեռանդութեամբ աղօթք արին: Երբ փոքր ինչ հանգստացան, ուրախութեան առաջին թոպեներից յետոյ, Տուբիան առաւ ձկան լեղով լիք ամանն և օծեց նրանով իր հօր աչքերը. նոյն րոպէին փառը աչքերի բերից հեռացաւ և Տովբիթ սկսաւ տեսնել: Ամենքը փառաւորեցին Աստծուն: Երուսնի Տովբիթ ասաց ուրախու-

թեամբ. «Ձեր Աստուած Իսրայէլն, ընդհակառակ իմ կամքից. դու պատժեցիր ինձ. բայց դու էլ ողորմեցար. ես էլի տեսնում եմ իմ որդուս Տուբիային:

Կարեպատշաճ Տովբիթի առաջին խօսքերն, աչքերը բացվելից յետո, էին շնորհակալութեան աղօթքը Աստուծոյ: Նա պիտէր, որ ամեն ուրախութիւն Աստուծոյ պարգև է և ամեն բանի մէջ տեսնում էր նա Աստուծոյ բարութիւնը:

Տովբիթ ուրախ սրտով գնաց իր հարսի առաջը ներս մտնելիս դռներից դուրս. ով որ նրան ճանաչում էր, զարմանում էր, որ նա առանց առաջնորդի գնում է, իսկ Տովբիթ աչքի առջևը փառաւորում էր Աստուծոյ, որ գարձրեց նրան աչքի լոյսը: Տովբիթի բոլոր ազգականներն ուրախանում էին և երեք օր տևում էին Տուբիայի պատկը: Երկոյքի օրերն անցնելից յետո, երկուսն էլ, հայրն և որդին, խնդրեցին Ճպտեալ Ազարիային, որ իրրև շնորհակալութեան նշան ընդունէ իրենց բոլոր ստացուածքի կէսը. բայց հրեշտակն ասաց նրանց. «փառաւորեցէ՛ք Աստծուն ամենի առջև. նա խրկեց ձեզ մեծ ողորմութիւններ. թագաւորի գաղտնիքը պահել հարկաւոր է. իսկ Աստուծոյ գործքերը յայտնելը բարի է: Պահք, աղօթք, և ողորմութիւնը ամեն դարձերից լաւ են: Լաւ է քիչը արդարութեամբ, քան թէ շատը անարդարութեամբ: Ողորմութիւնը փրկում է մահից և սրբում է մեղքերն, ողորմութիւն և արդարութիւն անողները կեանք կ՚ստանան. խստասիրտ մեղաւորն իր հոգուց թշնամին է: Ես չեմ ծածկիլ ձեզնից մեծ գաղտնիքը: «Այն ժամանակ», ասաց հրեշտակը Տովբիթին, «երբ դու աղօթք էիր անում և քո հարսի Սառան էլ աղօթք էր անում ես տանում էի ձեր աղօթքն Ամենաբարձրեալի առաջ: Երբ դու թաղում էիր մեռածներուն և այս բարի գործի համար չծուլացար սեղանից էլ վեր կենալ և թողնել քո ճաշդ, ես քեզ հետ էի այն ժամանակ. ես այն բոլորը տեսայ: Աստուած խըր-

կեց ինձ, որ պսակեմ քեզ և քո հարսիդ Սառային։ Ես Հռափայէլն եմ, մէկը այն եօթն սուրբ հրեշտակներից, որոնք տանում են սուրբերի աղօթքն և կանգնում են Ամենաբարձրեալի աթոռի առջևը։

Երբ որ լսեցին Տովբիթ և իր որդին, դողացին և յարգութեամբ ընկան հրեշտակի առաջևը։

«Խաղաղութիւն ձեզ», շարունակեց նա, «մի՛ վախենաք ոչ ընչից, ես ոչ թէ իմ կամքովս, այլ Աստուծոյ հրամանով եկայ ձեզ մօտ և բնակեցայ ձեր մէջ։ Փառաւորեցէ՛ք Նրան, աղօթք արէ՛ք Նրան, այժմ ես դառնում եմ Նորա մօտ, Ով ինձ խրկեց. յայտնեցէ՛ք մարդոց և գրեցէ՛ք հրաշքներն, որոնք ձեզ պատահեցան։

Երբ ասելից յետ Հռափայէլ հրեշտակը անհետացաւ։ Տովբիթ և իր որդին ընկան գետին, փառաւորեցին Աստծուն և ամենին պատմում էին իրենց պատահած հրաշքները։

Սրանից յետոյ Ծերուն Տովբիթը ապրեցաւ էլի վաթսուն երկու տարի յաջողութեամբ և տեսաւ իր թոռներուն։ Իր մահից առաջ նա նախազուշակեց որդոյն, որ Նինուէն շուտ կը քանդվի և Իսրայէլացիները կ'դառնան իրենց հայրենիք։ Տովբիթ մեռաւ խորին ծերութեան մէջ հարիւր յիսուն ութը տարեկան և պատուով թաղվեցաւ։ Տուբիա, նորա որդին, կեցաւ իր մօր մօտ մինչև նորա մեռնիլն և յետոյ տեղափոխեցաւ Նկրատանայ իր աներոջը՝ Հռագուէլի մօտ և պատվում էր նրան և նորա կնոջ Հեդնային ինչպես իրեն ծնողներուն։ Նա փակեց նոցա աչքերը։ Տուբիան կեցաւ երկրիս երեսին հարիւր քսան եօթն տարի և հանգիստ վախճանեցաւ արդարների մահով։

ԳԼՈՒԽ ՀԴ.

Յուդիթ։

Բաբիլոնի թագաւորը, Նաբուգոդոնոսոր, պատերազմ էր տալիս Մարաց Արիոքսատ թագաւորի դէմ։ Նա խրկեց ամեն ղրացի աղգերին մօտ օգնութիւն խնդրելու, միայն ամենքն էլ բացասեցին։ Երբ յաջողութեամբ վերջացրեց պատերազմը Մեդացւոց թագաւորի դէմ, Նաբուգոդոնոսոր միտքը դրեց վրէժ հանել նրանից, որոնք օգնութիւն չտուին իրեն։ Այս բանի համար խրկեց նա իր Հողոփեռնէս զօրավարին բազմաթիւ զօրքով նոցա դէմ։ Այս զօրավարը սրտի և կրակով ջնջում էր ամեն իրեն ընդդիմացողներուն։ Ցուդայի բնակիչները, որոնք նամանաւանդ նրանցից էին, որ բացասեցին Նաբուգոդոնոսորին օգնութիւն, սպասում էին նոյն վիճակը։ Նոքա պահք կարգեցին և վճռեցին մինչև վերջին զօրութիւնը պաշտպանել իրենց։ Հողոփեռնէս զարմացաւ նոցա այսպիսի հաստատամտութեան վերայ։ Նա պաշարեց Բետուղիա բերդը, կտրեց ջրի աղբիւրներն և քաղաքի բնակիչները քաշում էին ջրի մեծ պակասութիւն։ Թշուառութիւնը Բետուղիայի մէջ սարսափելի էր և շատերը կամենում էին վերջապէս անձնատուր լինել. քան թէ մեռնիլ ծարաւից։ Վճռեցին էլի հինգ օր սպասել և եթէ այս միջոցում Աստուած իրենց օգնութիւն չի տալ, մատնել բերդը թշնամեաց ձեռքը։

Բետուղիա քաղաքում բնակում էր մի բարեպաշտ և գեղեցիկ այրի կին, Ցուդիթ անունով, որ միտը դրեց փրկել քաղաքը։ Նա ոչ ոքին չյայտնեց իր խորհուրդը. բայց միայն խրատ դրեց իր քաղաքացիներուն, որ աւելի ջերմեռանդութեամբ աղօթք անեն իրեն համար Աստծուն։ Ցետոյ հանեց իր սգոյ շորերն, որ իր մարդու մահուան պատճառով հագած ունէր, զարդարվեցաւ ճոխութեամբ և գնաց թշնամեաց բանակը։ Նը-

րան տարան Հողեփեռնէսի մօտ, որին նա ասաց, թէ ինքը կարող է գտնել միջոց հեշտութեամբ քաղաքին տիրելու, յետոյ նա խնդրեց միայն, որ իրեն և իր հետ եկած ազախնին հրամայ ամեն ապահով և երեկոյ բանակից դուրս գնալ ազատ ման ընդունել: Հողեփեռնէսը չատ բանական մնաց այս առաջարկութեամբ և հրամայեց պահպանին, որ չարգիլէ Յուդիթին և նորա աղախնին բանակից դուրս գալու առաւօտներն և երեկոյները: Նա տիրահարուեցաւ Յուդիթի գեղեցկութեան և խոհեմութեան վերայ: Նորա գալուստի չորրորդ օրը հրաւիրեց նորան իր սեղանի մօտ ընթեր: Երբ նա վրանը մտաւ, Հողեփեռնէս ասաց. Նիոտ՝ մի՛ վհատիր, սկեր խմիր, և ուրախացիր»: «Ո՛հ», յայտնի բան է, ես ուրախ կ՚լինեմ», պատասխանեց Յուդիթ, «ինձ դեռ ոչ ոք երբէք այսպիսի յարգանք չէ ցոյց տուել Հողեփեռնէս, Յուդիթի ներկայութեամբն ուրախացած, խմում էր սովորականից աւելի, նոյնպէս էլ նորա ազատարձակները: Անդամից յետոյ ամենքը հեռացան մէկ մէկից, իւր որ կողմն կամեցաւ. վրանում ոչ ոք չմնացին բացի Յուդիթից և Հողեփեռնէսից, որ պառկած էր անկողնի վերայ առանց զգացողութեան: Յուդիթ, նրան մօտենալով, ասաց փրոտոստքով. «Տէր Աստուած Իսրայէլի, զօրացրու ինձ այն ժամու: Յետոյ նա վեր առաւ Հողեփեռնէսի սուրը, որ կախած էր նորա գլխի վերայ, և կտրեց նորա գլուխը: Յուդիթի աղախինը Հողեփեռնէսի գլուխը դրաւ պարկի մէջ:

Երբ քաղաքի ծերերը ժողովեցան հրապարակում, Յուդիթ ցոյց տուեց նրանց Հողեփեռնէսի գլուխը: Բնաւորապէս ամենքն ուրախացան շատ և նոյն ժամին վճռեցին դուրս գալ քաղաքից և յարձակել թշնամիների վերայ: Թշնամիները, դեռ չիմանալով իրենց զօրավարի մահը, ծաղրում էին Յուդայեցիներուն. նորա ժողովեցան Հողեփեռնէսի վրանի չորս կողմը, կարծելով, որ նա դեռ քնում է, բայց տեսնելով, որ նոցա զօրավարը շատ ուշ է զարթնում, մի քանիսը չանձն առան վրանը մտնելու և գտան այնտեղ Հողեփեռնէսի գլխատած մարմինը: Զօրավարի մահուան համբաւը մեծ խռովութիւն գցեց բանակի մէջ: Զօրքը բանակը թողնելով փախաւ և Բետուղիայի բնակիչները մտան բանակ և գտան այնտեղ մեծ աւար, որ երեք ամիս օրվան մէջ հազիւ կարողացան քաղաք տանել: Յուդիթը երդից գովաստական երգ Աստուծուն:

ԳԼՈՒԽ ՂԲ

Բաբելոնի դրութիւնը. Դանիէլ:

Բաբելն տարած գերի Երրայեցիների մէջ կային շատերը թագաւորական ցեղից և մեծամեծների որդիքը: Նաբուգոդոնոսոր հրամայեց այս ընտանիքներից ընտրել խելօք և գեղեցիկ երեխաներուն: Նա նշանակեց նրանց իրեն ծառայելու համար, հրամայեց սովորցնել նրանց ամեն գիտութիւններ և արհեստներ, պահել լաւ, տալ նրանց կերակուր և գինի իր սեղանից:

Ահա երեխաների անուններն էին Դանիէլ, Անանիա, Ազարիա և Միսայէլ: Նորա մտքերը դրին չգործածելու նոցա բերած ոչ քաղցրահամ կերակուրները և ոչ թանգագին գինիները: Ջնայելով իրենց մատաղ և փափուկ հասակին, Երրայեցի երեխաները էին բարեխառն. նորա ոչինչ էին համարում ամեն երկրային բարութիւններն, և ոչինչ ուրիշ բանի վերայ չէին մտածում, բայց միայն որ կատարեն Աստուծոյ պատուիրանները: Նորա գիտէին, որ Թագաւորի սեղանում գտնվում են շատ այնպիսի կերակուրներ, որոնք Մովսէսի օրէնքներով արգելք և չարձակել թշնամեաց վերայ: Թշնամիները, դեռ չիմանալով իրենց զօրավարի մահը, ծաղրում էին Յուդայեցիներուն. նորա ժողովեցան Հողեփեռնէսի վրանի չորս կողմը, կարծելով, որ նա դեռ քնում է, բայց տեսնելով, որ նոցա զօրավարը շատ ուշ է զարթնում, մի քանիսը չանձն առան վրանը մտնելու և գտան այնտեղ Հողեփեռնէսի գլխատած մարմինը: Զօրավարի մահուան համբաւը մեծ խռովութիւն գցեց բանակի մէջ: Զօրքը բանակը թողնելով փախաւ և Բետուղիայի բնակիչները մտան բանակ և գտան այնտեղ մեծ աւար, որ երեք ամիս օրվան մէջ հազիւ կարողացան քաղաք տանել: Յուդիթը երդից գովաստական երգ Աստուծուն:

ԳԼՈՒԽ ՂԲ

Բաբելոնի դրութիւնը. Դանիէլ:

Բաբելն տարած գերի Երրայեցիների մէջ կային շատերը թագաւորական ցեղից և մեծամեծների որդիքը: Նաբուգոդոնոսոր հրամայեց այս ընտանիքներից ընտրել խելօք և գեղեցիկ երեխաներուն: Նա նշանակեց նրանց իրեն ծառայելու համար, հրամայեց սովորցնել նրանց ամեն գիտութիւններ և արհեստներ, պահել լաւ, տալ նրանց կերակուր և գինի իր սեղանից:

Ահա երեխաների անուններն էին Դանիէլ, Անանիա, Ազարիա և Միսայէլ: Նորա մտքերը դրին չգործածելու նոցա բերած ոչ քաղցրահամ կերակուրները և ոչ թանգագին գինիները: Ջնայելով իրենց մատաղ և փափուկ հասակին, Երրայեցի երեխաները էին բարեխառն. նորա ոչինչ էին համարում ամեն երկրային բարութիւններն, և ոչինչ ուրիշ բանի վերայ չէին մտածում, բայց միայն որ կատարեն Աստուծոյ պատուիրանները: Նորա գիտէին, որ Թագաւորի սեղանում գտնվում են շատ այնպիսի կերակուրներ, որոնք Մովսէսի օրէնքներով ար-

գելված են, և վախենալով, որ նրանցից չանցնեն, նախագահե-
լի համարեցին բաւականանալ հացով, կանանչեղէնով և ջրով:
Սրբոյեցի մանուկների վերակացուն, որ Թագաւորի առաջին
պաշտօնեաներից մէկն էր, յայտնում էր Դանիէլին և նորա ըն-
կերներին, որ իր վերայ կ'բարկանայ Թագաւորն, եթէ խոց-
վի, որ նոքա չեն կերակրվում արքունի սեղանից րերած կե-
րակուրներով և եթէ Թագաւորը կ'տեսնէ նոցա երեսները գեղ-
նած և տխուր. բայց Դանիէլ խնդրեց նրան, որ միայն տասն-
օրեայ փորձ անէ և եթէ այս միջոցում կ'նկատէ, որ իրենք
վատանում են կամ դեղնում, նա խոստացաւ ուտել այն, ինչ
որ կ'հրամայեն: Վերակացուն համաձայնեցաւ: Նրանց սկսան
ուտելու տալ միայն ունտ, հաց և ջուր խմելու համար: Նը-
շանակած տասնօրեայ ժամանակից յետ, նոքա աւելի առողջ և
զուարթ երեւում էին, քան թէ այն երիտասարդ երեսները, որոնք
ուտում էին Թագաւորի սեղանի կերակուրներից: Այս տեսնե-
լով, վերակացուն հրամայեց նրանց գործածել այն կերակուրն,
ինչ որ կ'բարեհաճեն իրենք: Աստուած վարձատրեց այս բա-
րեպաշտ և բարեխառն երիտասարդներն, տալով ընդունակութիւն
գիտութիւններ սովորելու: Նոքա մեծ յառաջադիմութիւններ
արին և գիտութեամբ անցան ամեն Բաբելացի ուսեալներից և
իմաստուններից, նրանց յանձնեցին երեւելի գործքեր Բաբելոնի
երկրում (Դան. Գ. 12):

ԳԼՈՒԽ Ը.Գ.

Երեք մանուկները կրակի հնոցի մէջ:

Նաբուգոդոնոսոր հրամայեց ոսկիից մի մեծ կուռք ձուլել
և դնել դաշտում: Նա կանչեց իր սերութեան ամեն երեւելի
մարդոց ժողով անելու ուշ այս կռքի պատուի համար և փողերի
ձայներով հրամայեց յայտնել, թէ ով որ երկրպագութիւն չի

տալ կռքին, նրան, կ'գցեն վառած հնոցի մէջ: Այս հրամանը
լսելիս ամենքը ժողովեցան, որ երկրպագութիւն տան կռքին և
երկրպագանում էին, բացի երեք Սրբոյեցի մանուկներից, որոնց
անունները Սեդրաք, Միսաք և Աբեդնագով էին: Այս երեք
մանուկներուն տարան Թագաւորի առաջը:

Ճշմարիտ է, չէք կամենում երկրպագութիւն տալ ոսկի
կռքին». հարցրեց բարկացած Թագաւորը: «Այժմ իսկ հրա-
մայում եմ ձեզ, որ երբ կ'լսէք փողի ձայնն, ընկնէք կռքի ա-
ռաջին և երկրպագէք նրան: Իսկ եթէ չէք հնազանդիլ, կ'ըն-
կնէք կրակի հնոցի մէջ: Այն ժամանակ կ'տեսնենք, ո՞ր Աս-
տուածը կ'փրկէ ձեզ իմ ձեռքից». Մանուկները պատասխա-
նեցին. «Ամենազօր Աստուածը, որին մենք երկրպագութիւն ենք
տալիս, կարող է փրկել մեզ քո ձեռքիցդ և հնոցի բորբոքեալ
կրակից. բայց եթէ նա էլ չէ բարեհաճիլ մեզ փրկել էլի այն
ժամանակն էլ, այս յայտնի լինի քեզ, մենք քո չաստուածնե-
րիդ և կուռքիդ, որ դու կանգնեցիր, երկրպագութիւն չենք
տալ»:

Թագաւորը, զայրացած, հրամայեց, որչափ կարելի է, սաս-
տիկ բորբոքել հնոցն և գցել նորա մէջ երեք մանուկներուն,
պինդ կապած: Ամեն բան Նաբուգոդոնոսորի հրամանին հա-
մեմատ կատարվեցաւ: Հնոցը այնպէս տաքացրած էր, որ սպա-
սաւորներուն, որոնք մանուկներուն գցեցին մէջը, այրումէր:
Բայց կապած մանուկները, որոնք ընկան այս սաստիկ բոցի
մէջ, ճոպային անվնաս: Աստուածմէ խրկած Հրեշտակը մեղմացրեց
կրակի սաստկութիւնն և զովացրեց նրանց ինչպէս զովարար
ցօղով: Կրակը նրանց չէր հասնում: Նոքա, կրակի մէջ կանգ-
նած, երգում էին Աստծուն երգ:

Նաբուգոդոնոսոր, երեք մանուկներուն անվնաս տեսնելով,
զարմացաւ, վեր կացաւ իր տեղից և հարցրեց իր պալատա-
կաններուն. «մենք երեք մարդոց կապած չգցեցի՞նք բորբոքեալ

հնոցի մէջ։ Նայեցէք, նոքա ազատ են. անվնաս նրանց պատող բոցի մէջ և նրանց հետ միասին էլի չորրորդը, գեղեցիկ երկնային ոգիի պէս»։ Նա մօտեցաւ հնոցին և կանչեց. «Ուրք բարձրեալ Աստուծոյ ծառայք, դուրս եկէք բոցից և մօտեցէք ինձ»։ Նոքա մօտեցան թագաւորին։ Ոչ մի մազ նոցա գլխի վերա չէր խանձվել. նոցա շորերը անվնաս մնացել էին. չէր երևում կրակի ոչ մի հետքն, և ոչ էլ կրակի հոտը կար. միայն շղթանները, որով կապած էին, թուլացել էին և քակվել։ Այն ժամանակ Նաբուգոդոնոսոր երկրպագութիւն տուեց ճշմարիտ Աստծուն և ասաց. «Օրհնեալ է ձեր Աստուածը, որ խրկեց իր հրեշտակին փրկելու իրեն վերայ յուսացողներուն։ Եթէ իմ հպատակներից մէկը կ'համարձակվի հայհոյել Աստծուն, որին երկրպագում են այս ծուղակինները, մահով կ'մեռնի նա. որովհետև չկայ ուրիշ Աստուած, որ կարողանայ այսպիսի հրաշք գործել»։

Թագաւորի հրամանով Սեդրաք, Միսաք և Աբեդնագով (այսպէս անուանվեցան Բաբելոնում Անանիա, Ազարիա և Միսայէլ) ստացան բարձր պաշտօններ տէրութեան մէջ։

ԳԼՈՒԽ Ը.

Դանիէլ մարգարէ։

Նաբուգոդոնոսոր թագաւորը միանգամ տեսաւ երազ, որ մեծ անհանգստութեան մէջ դրեց նրան։ Նա մոռացաւ երազի մանրամասն հանգամանքները. բայց զգում էր ահ և ոչինչ ուրիշ բանի վերայ չէր կարողանում մտածել բայց միայն նորա վերայ, թէ ինքը տեսել է մի սարսափելի բան։ Վերջապէս, կամենալով հանգստանալ այս երազից, կանչեց իր թագաւորութեան բոլոր գիտուն մարդոց, մանաւանդ երազահաններուն և քուրմերուն, որոնք պարապում էին սպառնալի գուշակելով

Աստուծով, որ առանց երազն իմանալու, նոքա չեն կարող մեկնել նրան։ Թագաւորը կամենում էր, որ անպատճառ պատմեն և մեկնեն իրեն այն երազն, որ ինքը մոռացել էր։ Նա սպառնում էր սպանել նրանց, որոնք չեն իմանալ նորա երազն, և քանդել նոցա տները։ Ի զուր աստում էին նրան, թէ այս մարդկային մտաց զօրութիւնից վեր բան է, թագաւորը հրամայեց սպանել իր թագաւորութեան մէջ եղած բոլոր գիտունականներուն, որովհետև նոքա չկարողացան մեկնել նրան այն, ինչ որ ինքն չէր իմանում։

Այս թշուառների մէջ, որոնք պէտք է մեռնէին անարդար հրամանով, էր Դանիէլն և նորա ընկերները էլ, ինչպէս գիտութիւններով պարապող անձներ։ Սոքա ամենքն էլ չէին իմանում՝ թէ ի՞նչ է պատահել թագաւորին։ Սպառնալ վտանգն որ իմացաւ, Դանիէլ գնաց այն պաշտօնատարի մօտ, որ, պէտք է, կատարէր թագաւորի հրամանը։ Արիովք (այսպէս էր պաշտօնատարի անունը) պատմեց նրան Նաբուգոդոնոսորի բարկութեան պատճառն ամեն իմաստունների վերայ։ Դանիէլ, լսեցը կենդանի յոյսով Ամենազօր Աստուծոյ վերայ, որ պահպանեց նրան բոլոր կեանքում, խնդրեց, որ իրեն տանեն թագաւորի առջև, որից խնդրեց, որ ժամանակ տայ պատասխանելին, մինչև ինքը կ'իմանայ երազն և մեկնութիւնն էլ կ'ասէ։ Թագաւորը հաճայնեցաւ ժամանակ տալ։ Դանիէլ կանչեց իր մօտ իրեն ընկերներուն Անանիային, Ազարիային և Միսայէլին. պատմեց նրանց, թէ ի՞նչ է պատահում թագաւորն և խրախուսեց նրանց, որ իրեն հետ միասին աղօթքն անեն Աստծուն, որ Նա բարեհաճի յայտնել իրենց գաղտնիքն, այնքան անհրաժեշտ մարդոց փրկութեան համար։ Նոքա ամենքը սկսան ջերմեռանդութեամբ աղօթք անել։ Աստուած լսեց նոցա աղօթքն և գիշերը տեսիլքում յայտնեց Դանիէլին, ինչ որ հարկաւոր էր նրան դիտենալ։ Առաւօտը վեր կացաւ, շնորհակալ եղաւ Աստ

աուծմէ, և յետոյ գնաց Թագաւորի պալատն և խնդրեց, որ իրեն Նաբուգոդոնոսորի առջև տանեն։

Արիովք յայտնեց Թագաւորին Դանիէլի գալուստն և ներս մտցրեց նրան։ Դանիէլ ասաց Նաբուգոդոնոսորին, թէ գիտութիւններով ոչ ոք չէր կարող մեկնել այն երազն, որ Աստուած իրեն բաց արաւ։ Բանի որ Դանիէլ պատմում էր Նաբուգոդոնոսորին նորա տեսած երազը. Թագաւորը իր միաք բերում էր ամեն պարագաներն, և մեկնելով երազը, Դանիէլ ասաց, որ Աստուած կամենում էր նորա ձեռքով յայտնել այն մեծ անցքերի դաղտնիքը, որոնք երկրիս երեսին, պէտք է, կատարվին։ Լսելով մեկնութիւնն, որ բոլորովին համաձայն էր երազի ամեն մանրամասն հանգամանքներին, Նաբուգոդոնոսոր վեր ընկաւ Աստուծոյ առջև, աղաղակելով. «Ճշմարիտ բաց ի յաւիտենական, Ամենազօր Աստուածմէ, ոչ ոք չէր կարող յայտնել այդպիսի երևելի դաղտնիք»։ Նաբուգոդոնոսոր Թանգագին ընծաներ տուեց Դանիէլին և բարձրացրեց նրան իր Թագաւորութեան առաջին աստիճանի պաշտօնատարների կարգը։ Դանիէլ խնդրեց իր բարեկամների՝ Անանիայի Ազարիայի և Միսայէլի մասին և նրանց յանձնվեցան Բաբելոնի երկրի գործերի կառավարութիւնը։ Դանիէլ մարդարէն պալատում Թագաւորի սիրելին լինելով, միջոց ունեցաւ շատ բարեգործութիւններ անելու իր հայրենակից Հրէաներին։

Նաբուգոդոնոսոր տեսաւ ուրիշ երազ էլ և երբ հրամայեց մեկնել այն, Դանիէլ յայտնեց նրան, որ Աստուած կամենում է կորցնել նորա հպարտութիւնն և թէ նա մի քանի ժամանակ կ'զրկվի խելքից և աթոռից կ'ընկնի, մարդոց հասարակութիւնից կ'հեռանայ, կ'ստիպվի թափառել անապատներում և վայրենի գաղանների պէս կերակրվել արօտով, մինչև այն ժամանակ, երբ կ'հաւատայ, որ մի է Ամենազօր Աստուածն և որ Նա միայն տալիս է իշխանութիւն, ում

կամենում է։ Ամեն գուշակածը կատարվեցաւ։ Նաբուգոդոնոսոր իր հպարտութեան և փառասիրութեան համար զրկվեցաւ մտքից և վայրենի գաղանների հետ եղաւ նորա բնակութիւնը։

Նոյնպէս մեկնեց Դանիէլ Նաբուգոդոնոսորի որդուն և յաջորդին Բաղդասարին էլ մի հրաշալի երևոյթ։ Բաղդասարը տալիս էր մեծ խնջոյք, ուր հրաւիրեց իր Թագաւորութեան ամեն մեծամեծներուն, մօտ հազար հոգիք էին ամենքը։ Նա հրամայեց բերել սուրբ ամանները, որ նորա հայրը Նաբուգոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից։ Այս ամաններով խըմում էին գինի, և մեծացուցանում էին ոսկեղէն, արծաթեղէն, պղնձի, երկաթի, քարեղէն և փայտեղէն կռքերուն, բայց ոչ ոք չէր մտածում փառաւորելու Մի, Յաւիտենական և Ամենազօր Աստծուն։ Յանկարծ երևեցաւ մի ձեռք, որ գրում էր մենին անծանօթ բառերը՝ Մանէ, Թէկէղ Փարէս»։ Թագաւորը, սարսափած, տեսնում էր վառ լապտերների լոյսով գրող ձեռքն և մատներն, որ շարժում էին, բոլոր հիւրերը տեսան այն նմանապէս։ Էլի կանչեցին ամեն գիտուններուն. բայց ոչ ոք չկարողացաւ ոչ կարդալ անծանօթ գրերն և ոչ մեկնել այն բառերի միաքն, ոչ ոք չկարողացաւ բացի Դանիէլից, որ ասաց թէ այն բառերը նշանակում են, չափեցի, կշռեցի, բաժանեցի և թէ Բաղդասարի Թագաւորութիւնը կ'բաժանվի և կ'նուաճվի Մեդացիներից և Պարսիկներից։ Նոյն գիշերն իսկ Բաղդասարին սպանեցին և նորա Թագաւորութեանը տիրեց Մարաց Դարեհ Թագաւորը։

ԳԼՈՒԽ ՂԵ.

Եղուշան։

Բաբելոնում բնակում էր մի անուանի և հարուստ Հրէայ, Յովակիմ անունով, որի կնոջ անունը Շուշան էր։ Յովակիմի մօտ

հաւաքվում էին ամենից յանուանի Հրէաներն և նա նոցա մէջ առաջինը համարվում էր: Մանաւանդ երկուսը Հրէաների դատաւորներից ամեն օր այցելութիւն էին անում նրան: Նոքա ծերունի էին և ամենքի առաջ պատուելի, բայց նոցա սրտերն էին չար և արատաւոր: Նոքա զըպարտեցին Շուշանին մի մեծ յանցանքում, որի համար Մովսէսի օրէնքով յանցաւորը մահու, պէտք է, դատապարտվէր: Առաւանը, ծերունիների վկայութիւնը յարգելով, Շուշանին յանցաւոր հանեց: Նրան տանում էին արդէն դատապարտութեան տեղը, բայց Աստուած լսեց անմեղի աղօթքը: Նա լըցրեց իր Հոգով Դանիէլին, որ յայտնըվեցաւ դատաւորների առջև և պահանջեց, որ նոքա նորից քննեն Շուշանի գործը:

Դատաւորները, դատապարտածն և զըպարտիչները դարձան դատարանը: Դանիէլ հրամայեց զըպարտիչներուն զանազան աւետեաններ բաժանել և հարցնել նրանց մէկ մէկ: Իրենց պատասխաններում անառիթ ծերունիները հակառակաբանեցին միմեանց: Այն ժամանակ ամենքը տեսան Շուշանի անմեղութիւնն և փառաւորում էին Աստծուն, որ փրկում է իր վերայ յոյս դնողներուն: Երկու զըպարտիչներն էլ ստացան իրենց արժանի հատուցումն. նոքա մահու դատապարտվեցան, որ պատրաստում էին անմեղ Շուշանին:

ԳԼՈՒԽ Ղ.

Բէլի կռքի կործանումն:

Բաբելոնի բաղիններից մէկի մէջ կանգնած էր Բէլայ կուռքը, որ Բաբելոնում առաջին Աստուածն էր համարվում: Նրան բերում էին ամէն օր զոհ քառասուն ոչխար, տասներկու արու նաշխոհ և վեց մար գինի: Թագաւորը ինքն ամեն օր զնում էր տաճար կռքին երկրպագութիւն տալու. Ամենքը հաւատում էին, որ Բէլը կենդանի էակ է, ուտում է բոլոր իրեն բերած զոհերն, ամենքը աղօթք էին անում նրան, ամենքը պաշտում էին նրան—ամենքը բաց ի Դանիէլից և ուրիշ աստուածապաշտ Հրեաներին: Միանգամ թագաւորը հարցրեց Դանիէլին. «Ինչո՞ւ դու չես ուզում երկրպագութիւն տալ Բէլին: Ա՛յն պատճառով». պատասխանեց Դանիէլ, «որ ես չեմ պաշտում կռքեր, որոնք մարդու ձեռքով շինած բաներ են: Ես երկրպագում եմ Մի ճշմարիտ Աստծուն. երկրի և երկնքի արարչին, որ տիրում է ամեն արարածներին»:—«Մի՞թէ դու կարծում ես, որ Բէլը կենդանի Աստուած չէ», հարցրեց թագաւորը. «Մի՞թէ չես տեսնում, ինչքան շատ ուտում է նա և խմում է ամեն օր»:—«Թագաւոր, մի մոլորվիլ: Բէլը արձան է, մէջից հողէ և դրսից պղնձէ», նա երբէք ոչ կերել է և ոչ խմել»: Թագաւորը չարացաւ և հրամայեց կանչել Բէլի ամեն քուրմերուն, որոնց թիւն եօթանասուն էր, չհամարելով կանանց և երեխաներ: Նա ասաց նրանց. «եթէ չէք ասել ինձ. ով է ուտում զոհն, որ ամեն օր բերվում է Բէլին, ամենքդ մահուան կ'արժանանաք. բայց եթէ դուք կ'ապացուցանէք, որ ինքը Բէլն է ուտում, ես կ'հրամայեմ Դանիէլին սպանել, որովհետև նա հայհոյեց Աստծուն»: Դանիէլ պատասխանեց. «Թագաւոր. Թող լինի, ինչպէս ասացիր»:

Թագաւորը մտաւ բաղին Դանիէլի հետ միասին, քուրմերն ասացին. «Թագաւոր, մենք ամենքս կ'երթանք այսօրվնից. դուք ինքդ կերակուր և գինի, յետոյ փակիր դուռն և կնքիր քո կնքովդ և եթէ եգուց առաւօտը պատրաստած կերակուրդ անձեռնմխած կլինի, Թող մեզ սպանեն, բայց եթէ կ'գտնես, որ Բէլը կերել է նրան, այն ժամանակ, պէտք է, սպանվի Դանիէլ, որ զըպարտում է մեզ»: Քուրմերը դուրս գնացին և թագաւորն ինքը դրեց բերած կերակուրները սեղանի վերայ: Իսկ Դանիէլ այս միջոցին հրամայեց իր ծառաներին բերել մո-

խիլ և ցանել այն, Թագաւորի ներկայութեան ժամանակ, տաճարի բոլոր յատակի վերայ: Յետոյ, տաճարից դուրս գալով, Թագաւորը փակեց դուռն և կնքեց իր մատանիի կնքովը: Դիշերների մէջ քուրմերն, իրենց կանանց և որդոց հետ միասին, մտան տաճարն և վեր առան ամենն, ինչ որ Թագաւորը դրել էր Բէլի կռքի առջև:

Միւս օր առաւօտը վաղ Թագաւորը Դանիէլի հետ եկաւ տաճարի դրան մօտ: «Դանիէլ, ասաց Թագաւորը, տէս լաւ. ողջ է կնիքը»: «Այո. Թագաւոր», ասաց Դանիէլ, «ողջ է կնիքը»: Դուռը բաց անելով Թագաւորը նայեցաւ զոհի սեղանին և աղաղակեց. «մեծ Բէլ, մեծ ես դու: Այստեղ ոչ մի խաբեբայութիւն չէր կարող լինել»: Դանիէլ կանդնացրեց Թագաւորին. որ նա չմտնէ տաճար, որ նոր հետքեր չթողնէ փուած մոխրի վերայ, «Թագաւոր, նայիր տաճարի յատակին, ասաց Դանիէլ, չէս տեսնում արդեօք ոչ մի հետք»:—«Ես տեսնում եմ, պատասխանեց Թագաւորը, մարդոց, կանանց և երեխանց ոտների հետքեր»: Այս հետքերը թողել էին քուրմերը, նոցա կանայք և երեխաները: Որքան խորամանկ էր խաբեբայութիւնը, բայց էլի բացվեցաւ: Գտան գաղտնի դուռը, որով մտնում էին քուրմերն իրենց ընտանիքներով, որ ուտէն գիշերով ամեն բան, ինչ որ կռքին զոհ էին բերում: Թագաւորը հրամայեց բոլոր քուրմերուն սպանել իրրև չար խաբեբաներու, իսկ կուռքը տուեց Դանիէլին, որ քանդեց նրան էլ նոցա տաճարն էլ:

ԳԼՈՒԽ Ղ.

Դանիէլն առիւծների փոսում:

Բոլոր մարդիկ, որոնք հաւատի աստուածատուր ուսումն չունէին, ընդունակ են ամեն մոլորութեանց մէջ ընկնելու: Բաբելոնում կար մի մեծ օձ, որին ժողովուրդը պաշտում էր: Մի անգամ Թագաւորն ասաց Դանիէլին. «այս Աստուծոյ վերայ չես ասիլ, գիտեմ, թէ կենդանի չէ, դու տեսնում ես ինքդ, ինչպէս նա ուտում է և խմում է, ուրեմն երկրպագիր դրան»: Դանիէլ պատասխանեց. «ես երկրպագում եմ Տէր Աստծուն, Նա միայն է կենդանի Աստուած: Տուր ինձ հրաման, արքայ, ես կսպանեմ այդ կենդանուն, որին ժողովուրդն ընդունում է Աստուած, և ես կսպանեմ առանց սուր և գաւազան գործածելու: Թագաւորը հրաման տուեց: Դանիէլ առաւ ձիւթ, ճարպ և մազ, եփեց ամենը միասին և գցեց օձի առջև, որ կերաւ այս պատրաստած խառնուածքը և տրաքեցաւ: «Տեսնում էք, ումն էք պաշտում դուք». ասաց Դանիէլ ժողովրդին:

Երբ այս համբաւը տարածվեցաւ, ազգը սկսաւ արտնջալ Թագաւորի վերայ. պատեցին նորա պալատն և գոռում էին. «Թագաւորը Հրէայ է դառել. նա քանդեց Բէլին, գտատապարտեց նորա քուրմերուն և սպանեց օձին»: Ապստամբների խումբը մտաւ Թագաւորի պալատ ներս և ասում էր Թագաւորին. «Տուր մեզ Դանիէլին կամ թէ չէ, կսպանենք քեզ էլ բոլոր ընտանիքդ էլ»: Թագաւորը ստիպվեցաւ Դանիէլին նոցա ձեռք մատնել: Ժողովուրդը գցեց նրան փոսն, ուր կային եօթն առիւծներ: Ամեն օր նրանց կերակրում էին, տալով նրանց երկու մարդու մարմին և երկու դառը. բայց Դանիէլին գցելից յետոյ վեց օր ոչինչ կերակուր չտուին, որ սովից շուտ պատառեն նրան:

Աստուած այստեղ էլ չթողեց Դանիէլին: Առիւծները ոչինչ վնաս չտուին նրան: Բայց Դանիէլ ինքը զգում էր սով: Այս ժամանակ բնակում էր Հրէաստանում Ամբակում մարգարէն: Նա եփեց կերակուր իր հնձողների համար, կողովի մէջ դրեց հաց և պատրաստած կերակուրի հետ միասին տարաւ արտը իր մշակների մօտ: Աստուծոյ հրեշտակն երևեցաւ Ամբակումին ճանապարհում և ասաց. «տար այդ ճաշը Բաբելոն Դանիէլին,

որ առիւծների փոսի մէջ է։ Տէր, պատասխանեց Ամբակում, ես երբէք Բաբելոնում չեմ եղած և չգիտեմ էլ, ուր է առիւծների փոսը»։ Այն ժամանակ հրեշտակը բարձրացրեց նրան, տարաւ, ինչպէս մրրիկ, օդի միջոցին և դրեց Բաբելոնում առիւծների փոսի մօտ։

Ամբակում կանչեց. «Դանիէլ, ծառայ Աստուծոյ, առ այս կերակուրն, որ Աստուած խրկում է քեզ»։ Աստուած լսեց, ասաց Դանիէլ. «Դու չմոռացար ինձ։ Դու երբէք չես թողնում նրան, ով քեզ սիրում է»։ Նա վեր կացաւ և կուշտ կերաւ, իսկ հրեշտակը տարաւ Ամբակումին իր առաջնի տեղը։

Եօթներորդ օրը թագաւորը գնաց առիւծների փոսի մօտ, որ լաց լինի Դանիէլի մահն, որովհետև նրան մեռած էր կարծում. բայց Դանիէլին անվնաս և առողջ տեսնելով բարձր ձայնով աղաղակեց. «ով Աստուած. Աստուած Դանիէլի. Դու մեծ ես և չկայ ուրիշ Աստուած, բացի քեզնից միայն։ Նա հրամայեց հանել Դանիէլին առիւծների փոսից և դնել այնտեղ նրանց, որոնք նրան դցել էին։ Մի րոպէում թագաւորի աչքի առաջին առիւծները պատառեցին նրանց։ Թագաւորն ասաց. «Իմ ամեն հպատակներս, պէտք է, երկրպագութիւն տան Դանիէլի Աստծուն։ Նա է գործում հրաշքներ. Նա փրկեց Դանիէլին առիւծներից»։

ԳԼՈՒԽ Ղ.Ը.

Նսթեր։

Նսթերի ծնողները գերի Հրէաներից էին և գտնւում էին Պարսկաստանում ուր այն ժամանակ թագաւորում էր Արտաշէս, որ մականունվում էր երկայնաթաղուկ։ Նորա մեռան և Նսթեր մնաց որբ օտար երկրում և օտարների մէջ։ Բայց Աստուած, ամեն որբերի հայրը, խրկեց նրան պաշտպան, որ էր

նորա աղգական Մուրդքէոսը, նորա հօրեղբօր որդին։ Սա էր առաքինի, աստուածասէր մարդ և կրթում էր Նսթերին ճշմարիտ Աստուծոյ հաւատով։ Նսթերը դեղեցիկ էր շատ, բարի և խելօք։

Արտաշէս հզօր թագաւոր էր և տիրում էր հարիւր քսան գաւառների։ Միանգամ նա իր Սիսիս մայրաքաղաքում մեծ ընդոյք կազմեց և հրաւիրեց իր թագաւորութեան ամեն մեծամեծներուն և պաշտօնատարներուն։ Ընդոյքի տեղը կարգած էր թագաւորի տան գաւթում. սիւների վերայ կախած էին ղոյնղղոյն գործածներ, որոնք պաշտպանում էին հիւրերուն արեգակի ճառագայթներից։ Սեղանը զարդարած էր ոսկի ամաններով և խմիչքները բաժանում էին ոսկի բաժակներով։ Այս հաւկերոյթը տևեց եօթն օր։ Եօթներորդ օրը թագաւորը աւելի ուրախ էր. մեծ բազմութիւն հաւաքուեցաւ և թագաւորը նրանց յարդելով կամենում էր, որ ձաշի ժամանակ իր կին Աստինէն, բոլոր իր զարդերով զարդարուած, յայտնվի իր բաղդաւոր հպատակների մէջ։ Բայց հրապարտ Աստինէն չկամեցաւ կատարել իր ամուսնի կամքը։ Թագաւորը բարկացաւ, թողեց Աստինէին և միտք դրեց ընտրել իրեն ուրիշ աւելի հեզ և խոնարհ կին։

Ընտրութիւնն ընկաւ Նսթերին։ Պարկեշտ Նսթերն ամենևին չէր կասկածում, որ այս բաղդաւորութիւնն իրեն կ'վիճակվէր։ Նա զարդերով չէր պարարտում և իր համեստութեամբ չէր էլ իմանում, որ ինքն ամենից գեղեցիկ է։ Թագաւորը նրան նախատասելի համարելով ամեն ուրիշ աղջիկներից, դրեց նորա գլխին թագաւորական թագ։

Նսթերի պատուի համար թագաւորը կազմեց խնճոյք, ուր հրաւիրեց ամեն իշխաններուն և մեծամեծներուն։ Բոլոր ազգին մի տարի հարկի թողութիւն արաւ և ամենին պարգև էր տալիս ըստ ունի առատաձեռնութեամբ, իր ուրախութիւնը

յայտնելու համար. նա ուզում էր, որ իր բոլոր թագաւորութիւնն էլ մանակից լինի այս ուրախութեանն: Բայց Սթեր ամենևին չհպարտացաւ իր նոր վիճակում: Թագուհի լինելով, նա էլի չէր դադարում պատուել և սիրել Մուրթքէոսին, ինչպէս առաջ, երբ բնակում էր նորա տանը, իբրև մի պարկեշտ որբ:

ԳԼՈՒԽ Ը.

Մուրթքէոս և Համան.

Մուրթքէոսը շատ յաճախ գալիս էր թագաւորի պալատի դռան մօտ, որ տեսնէ, թէ ի՞նչ է պատահում Սթերին: Միանգամ նա լսեց ինչպէս պալատականներից երկուսը խօսք էին կապում թագաւորին սպանելու համար: Մուրթքէոս, իբրև հաւատարիմ հպատակ, կամեցաւ զգուշացնել իր թագաւորին. նա յայտնեց այս թագուհուն որ իր կողմից ասաց թագաւորին: Գործի վերայ քննութիւն եղաւ, ամբաստանութիւնն արդարացաւ. երկու դաւաճաններն էլ կախվեցան, իսկ անցքը գրվեցաւ արքունի յիշատակաց գրքի մէջ:

Արտաշէսի առաջին նախարարն էր Համան: Թագաւորը նրան իր թագաւորութեան ամեն իշխաններից վեր բարձրացրեց. ամենքը, պէտք է, ծունր իջնէին նորա առջև. բայց Մուրթքէոս չէր կամենում Համանի առաջին ծունր իջնել, ուստի սա շատ ատեց նրան: Համան գոհ չէր լինում միայն նրանից վրէժ հանելով: Գիտենալով, որ Մուրթքէոս Հրեայ է, միտը դրեց Համան, Արտաշէսի տերութեան մէջ եղած բոլոր Հրեաներուն ջնջել: Նա խօսում էր թագաւորի առաջին նոցա վերայ, իբրև մի ազգի վերայ, որ միշտ պատրաստ է ապստամբութիւն անելու: Վերջապէս հանեց հրովարտակ, թագաւորի սորագրութեամբ, ամեն Հրեաներուն կոտորելու համար: Զարհուրանքով լցած, Համան շտապեց թագաւորի հրամանը հրատարակելու: Ադար ամսի տասնչորսը նշանակած էր Արտաշէսի թագաւորութեան մէջ եղած բոլոր Հրեաներուն ջնջելու օր:

Մուրթքէոս սարսափեցաւ, երբ լսեց այսպիսի ամարդի հրամանը: Նա ջերմեռանդութեամբ աղօթք էր անում Աստուծոյ, որ փրկէ իր թշուառ ազգին: Աստուծոյ օգնութեան վերայ յուսալով, նա մտածում էր Հրէաներուն փրկելու միջոցների վերայ: Այս մտածմանց մէջ նա խրկեց Սթերին թագաւորի հրամանից մի օրինակ և խնդրեց, որ թագաւորից մի ողորմութիւն հանէ: Սթեր հրամայեց իր հօրեղբօր որդուն ասել, որ բոլոր տէրութեան մէջ յայտնի է այն օրէնքն, որ հրամայում է ամենուն, ով որ առանց կանչելու կ'համարձակվի թագաւորի մօտ մտնել, սպանել, ով էլ լինի, թէ մարդ և թէ կին: «Ես չեմ համարձակվում», ասաց Սթեր, «գնալ թագաւորի մօտ. ահա արդէն երեսուն օր է, նա ինձ չէ հարցրել: Մուրթքէոս հրամայեց ասել նրան. «մի կարծիր, որ քեզ կ'խնայեն Հրէաների ընդհանուր կոտորածի ժամանակ, այն պատճառով միայն, որ դու թագաւորի տանն ես. չէ, չեն խնայիլ. դու էլ կ'կորչես քո հայրենակիցներիդ հետ, քո ազգիդ հետ միասին: Ի՞նչ կարծենք, արդեօք Աստուած քեզ այդ բարձրը աստիճանը չբարձրացրեց, որ դու լինես գործիք Հրէից ազգի փրկութեան»:

Սթերի սիրտը շարժեցաւ Մուրթքէոսի խօսքերից, հրամայեց նրան ասել. «գնա, ժողովիր քեզ մօտ Սիսես քաղաքում գտնուող բոլոր Հրէաներուն, պահք պահեցէք երեք օր և երեք գիշեր և ամենքդ միասին աղօթք արէք ինձ համար: Նես իմ աղախիններովս նմանապէս երեք օր կ'անցկացնեմ պահով և աղօթքով. յետոյ, ընդունելով արքունի արգելման, կ'երթամ նորա մօտ անկոչ, եթէ մինչև մահ անգամ ստանալու լինիմ այս գործի համար»:

ԳԼՈՒԽ Ձ։

Նաթերը յայտնվում է Թագաւորի առաջը։

Ոչ մի բանի չպէտք է ձեռք խփել առանց Աստուծմէ օգնութիւն խնդրելու։ Նաթեր դիտէր այս և աղօթք էր անում ասելով. «Աստուած, Տէր տիեզերաց, ես ամենից թողած եմ, չունեմ ոչ պաշտպան և ոչ հովանաւոր, օգնիր ինձ. օգնիր Քո ազգիդ, նորա թշուառութեան օրն, ողորմիր մեզ։ տուր ինձ համարձակութիւն և դիր բերնումս այնպիսի խօսքեր, որոնք կարողանան ազգիս Թագաւորի սրտին վերայ։ Ո՛հ Ամենագէտ Տէր, Դու կարդում ես իմ սրտումս եղածը, Դու գիտես, որ ոչ Թագաւորական Թագն, ոչ էլ ինձ պատող մեծութեան փառքը չեն ուրախացնում իմ սիրտս, Դու գիտես, որ իմ բոլոր միխիթարութիւնս, իմ բոլոր ուրախութիւններս Դու միայն էիր։ Ո՛վ Տէր. Աստուած Աբրահամու, լսիր Քո ծառայներիդ աղօթքը, որոնք իրենց բոլոր յոյսը Քեզ վերայ են դրել, փրկիր նրանց սպանիչների ձեռքից և ազատիր ինձ իմ վտանգից»։

Երբ աղօթքի երեք օրերը վերջացան, Նաթեր հագաւ իր ճոխ Թագաւորական զարդը և գնաց Թագաւորի մօտ, երկու աղախինների հետ միասին։ Նա թեք ընկած էր մէկի վերայ. իսկ միւսը բարձրացրած ունէր նորա երկար ծիրանեայ քղանցը։ Շատ սենեակներ անցնելից յետո, մտաւ նա վերջապէս այն սենեակն, ուր էր Թագաւորը։ Նա նստած էր գահի վերայ, նորա շորը փայլում էր ոսկով և Թանգագին քարերով։ Արտաշէս նայեցաւ Նաթերին—և բարկութիւնը փայլեցաւ նորա երեսին։ Թագուհին գեղնեցաւ և անզգայ ընկաւ մի աղախնի ձեռքի վերայ։ Բայց Աստուած դարձեց Թագաւորի բարկութիւնը. նա գահից իջաւ. ինքը բռնած ունէր անզգայ Նաթերին, մինչև որ սա խելքի եկաւ և վերջապէս քաղցրութեամբ ասաց նրան. «Նաթեր, դու չես մեռնիլ. դու բացառութիւն կ՚լինես հա-

մարակաց օրէնքից, որ գտատպարտում է մեռնել ամենին, ով որ առանց իմ հրամանին կ՚համարձակվի իմ առջևս յայտնվելը։ Տեսնելով, որ նա բոլորովին կաղդուրեցաւ։ Արտաշէս շարունակեց. «Թագուհի, ինչ ես կամենում դու։ Խնդրիր համարձակ. ես պատրաստ եմ քեզ տալ մինչև Թագաւորութեանս կէսն անգամ։ Նաթեր խնդրեց, որ Թագաւորը Համանի հետ միասին գայ իր մօտ ճաշին։ «Այն ժամանակ», ասաց նա, «ես կ՚յայտնեմ քեզ, Թագաւոր, իմ խնդիրքս»։ Թագաւորը հրամայեց առել Համանին, որ Թագուհիի կամքը անպատճառ կատարվի։

ԳԼՈՒԽ ՁԱ.

Մուրթքէոսի յայտնութիւնը։

Թագաւորը Համանի հետ միասին ճաշ կերաւ Նաթերի մօտ, միւս օր էլի խնդրից նա Թագաւորին իր մօտ ճաշի գալ Համանի հետ և խոստացաւ երրորդ օրը յայտնել իր խնդիրքը։ Համան տուն գնալիս, գոհ լինելով այն պատուով, որ իրեն տուին, շատ ուրախ էր։ Բայց չար մարդու սրտի ուրախութիւնն երկարատև չէ լինում։ Նա տեսաւ Մուրթքէոսին, որ նստած էր Թագաւորի պալատի դրան մօտ, Մուրթքէոսը նորա առաջին վեր չկացաւ։ Այս միայն բաւական էր, Համանի բոլոր ուրախութիւնը թունաւորելու, նորա ուրախութիւնն այն րոպէին կորաւ։ Նա, շատ նեղացաց, եկաւ տուն և իր բարեկամաց ու կնոջ առաջին համարում էր ամեն ընորհքները, որ ինքը ստացել էր։ «Ես, ասում էր նա, բարձրացայ Թագաւորի ձեռքով նորա Թագաւորութեան ամեն իշխաններից և նախարարներից վեր. ունիմ անթիւ հարստութիւն. Թագուհին բացի ինձնից ոչ ոքին չկանչեց ճաշի իր մօտ Թագաւորի հետ միասին. նա եղուդյան ճաշին էլ կանչեց ինձ։ Բայց շա-

բունակեց նա, այս ամենը չէ ուրախացնում ինձ. երբ տեսնում եմ Մուրթքէոսին թագաւորի պալատում։

Ահին և բարեկամներն ասում էին նրան. «Հրամայիր կանգնել կախաղան և եղուց իսկ խնդրիր թագաւորից Հրաման Մուրթքէոսին կախելու։ Այն ժամանակ քո ուրախութիւնդ թագաւորի ճաշի ժամին ոչինչ բանով չի խանգարվիլ»։ Այս խորհուրդը շատ հաճելի թուեցաւ Համանին. նա այն րոպէին հրամայեց կանգնել իր բակում բարձր կախաղան։

Երաքինի Մուրթքէոսը ամենևին չէր կասկածում, որ իրեն սպասում է այնպիսի մերձակայ մահ. բայց Աստուած պաշտպանեց Մուրթքէոսին։ Գիշերը թագաւորը չկարողացաւ քնել և որ ցրուէ իր անքնութիւնից պատճառված ձանձրութիւնը, հրամայեց իր թագաւորութեան ժամանակագիրքը կարդալ։ Էր Աստուած, ով չէ հաւատում յարգութեամբ Ք՝ն նախախնամութեանդ։—Պատահեցաւ, որ թագաւորի առաջին կարդացին երկու նախարարների դաւաճանութեան վերայ նորա կեանքի դէմ, որ բաց արաւ Մուրթքէոս։ «Ինչով է վարձատրված Մուրթքէոսի հաւատարմութիւնը». Հարցրեց թագաւորը։ «Ոչընչով, թագաւոր», պատասխանեց կարդացողը։ Թագաւորը ամաչեցաւ այս պատասխանից և միտը դրեց միւս օրն իսկ վարձատրել Մուրթքէոսին։

«Տէս, ասաց թագաւորը կարդացողին, չկայ արդեօք մի մարդ միւս սենեակում։—«Կայ նեղ կանգնած է Համանը», պատասխանեց կարդացողը։ «Կանչի՛ր նրան այստեղ», ասաց թագաւորը։ Համան մտաւ թագաւորի մօտ։ Նա եկել էր առաւօտը վաղ, որ խնդրէ Հրաման թագաւորից Մուրթքէոսին կախելու համար։ Թագաւորը հարցրեց Համանին. «Ի՞նչ պէտք է անեմ այն մարդուն, որին կամենում եմ տալ ամենամեծ պատիւը։ Փառասէր և մեծամիտ Համանը կարծեց, թէ թագաւորը կամենում է իրեն տալ այս պատիւն և այն պատճա-

ռով պատասխանեց. նա, ում թագաւորը կամենում է տալ ամենամեծ պատիւը, պէտք է հագնէ այն շորն, որ գործածում է թագաւորը, նստէ այն ձիու վերայ, որի վերայ հեծնում է ինքը թագաւորը, թագաւորի նախարարներից առաջինը թող բռնէ ձին և այսպէս անցնելով բոլոր քաղաքի միջով թող գոչէ, այսպէս յորգվում է, ով որ հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»։ «Բարի է», ասաց թագաւորը. «գնա ուրեմն, պատրաստիր ամենը, ինչպէս դու ասացիր։ Դու ինքդ իրրև առաջին նախարարս մանկածես բոլոր քաղաքի միջով Մուրթքէոսին, այն Հրէային, որ միշտ նստում է իմ արքունիքիս դրան մօտ, բայց միայն տես, ոչինչ չմոռանաս»։ Համան գնաց. Նա, պէտք է, հագցներ Մուրթքէոսին թագաւորի շորերը, նստեցներ նրան ձոխ զարդարած արքունի ձիու, վերայ, պատեցներ այս ձին Սիսիս քաղաքի ամեն փողոցներում և աղաղակէր. «ահա այսպէս յարգվում է նա, ով որ հաւատարմութեամբ ծառայում է թագաւորին»։ Պալատի դրան մօտ Մուրթքէոս իջաւ ձիից, հանեց իր զարդերն և նստաւ իր սովորական տեղում։ Իսկ Համան, գլուխը կորացրած, նեղութեամբ և ամօթով դարձաւ տուն։

Գլուխ ՃՒ.

Համանի մահը։

Ջաղիւ կարողացաւ Համան պատմել իր կնոջ և բարեկամ ներին ամեն պատահածները, երկան թագաւորից մարդիկ, որ կանչեցին նրան ճաշի թագուհիի մօտ։ Նա գնաց նորա մօտ թագաւորի հետ միասին։ Թագաւորը ճաշի ժամանակ ուրախ էր շատ և ասաց. «Եսթե՛ր, այժմ ասա՛ ինձ քո խնդիրդ։ Ես կ՚կատարեմ այն, եթէ մինչև իմ թագաւորութեանս կէսն էլ անգամ խնդրես»։ Եսթեր պատասխանեց, «թագաւոր, եթէ

գոայ չնարհք քո առաջիդ, խնդրեմ եմ քեզ, ընծայիր կեանք ինձ և իմ ազգիս. որովհետև մենք ամենքս դատապարտված ենք ի մահ, մեզ ամենուս կամենում են ոչընչացնել, ջնջել: Գոնե, եթէ մեզ իբրև ստրուկներու ծախէին, մեր թշուառութիւնն էլի տանելի կ'լինի, այն ժամանակ ես լռութեամբ կը-թափէի արտասուք. բայց մեր թշնամին խստասիրտ է և անողոքելի, նա վճռեց մեզ ամենուս զրկել կեանքից, ով Թագաւոր. նա արժանի չէ քո պալատիդ»: Ո՞վ է դա, այդ մարդը, աղաղակեց Արտաշէս: «Ա՛յդ չար թշնամին է»:

Այժմ յայտնվեցաւ, որ Եսթերը պատկանում էր այն ազգին որին Համան դատապարտեց ջնջել: Համան կանգնած էր, սարսափած, չհամարձակելով բարձրացնել աչք ոչ Թագաւորին և ոչ Թագուհիի վերայ: Արտաշէս զայրացած դուրս գնաց պարտէզ. Համան ընկաւ Եսթերի ոտները, խնդրում էր, որ խնայէր իր կեանքը և վախից այնքան մոռացաւ Թագուհիին պատշաճաւոր պատիւն, որ մինչև համարձակվեցաւ փաթաթվել նորա ծնկներին: Այս րոպէին Թագաւորը դարձաւ պարտեզից, տեսնելով Համանին Եսթերի ծնկները բռնած, առաւել բարկացաւ: Թագաւորի տուած նշանով կապեցին Համանի աչքերը, դատապարտեալ յանցաւորի պէս և դուրս հանեցին Թագուհիի սենեակներից: Արտաշէսի ծառաներից մէկը ասաց. «Համան իր բակում կանգնել տուեց կախաղան յիսուն կանգուն բարձրութեամբ այն Հրէային համար, որ փրկեց Թագաւորի կեանքը»: Թող նոյն կախաղանի վերայ կախեն իրեն Համանին». ասաց Թագաւորը:

Համան կախվեցաւ այն կախաղանի վերայ, որ պատրաստել էր Մուրթքէոսի համար. իսկ Մուրթքէոսը Արտաշէսի պալատումն բռնեց Համանի տեղը: Թագաւորը նրան կարգեց պահապան իր կնքի և յետ առաւ իր տարբղի հրամանը, Հրէից

ազգը ջնջելու մասին: Հրէաները այս դիպուածին համար կարգեցին ասել, որ մինչև այժմ էլ կատարում են ամեն տարի:

ԳԼՈՒԽ ՃԳ.

Պարթը դերութիւնից:

Տաճարի նորոգումն:

Ասուած դեռ շատ ժամանակ առաջ յայտնել էր մարգարէների բերանով իր ընտրեալ ազգին ոչ միայն բաբելոնական գերութիւնն, այլ և նորա վերջանալու ժամանակն էլ: Հրէաները եօթանասուն տարի չարչարվեցան գերութեան մէջ:

Կիւրոս, Պարսից Թագաւորը, նուաճեց Բաբելոնի և Ասորեստանի Թագաւորութիւններին, ու գերի էին Խորայէլացւոց բոլոր ցեղերը: Իմանալով, որ Եբրայեցւոց սուրբ գրքերում շատ ժամանակ առաջ արդէն իր անունն էլ յիշած է, և նշանակած է ինքը Հրէաների ազատիչ գերութիւնից, Երուսաղէմի և Ասորեստանի տաճարի նորոգիչ լինել, Կիւրոս, առաջին տարի իր Թագաւորութեան Բաբելոնի վերայ, հրամայեց հրատարակել յետագայ հրամանը: «Այսպէս է ասում Կիւրոսը, Պարսից Թագաւորը. «Ամենազօրութեամբ Աստուածն երկնքի և երկրի տէրը, որ իմ ձեռս տուեց երկրիս ամեն Թագաւորութիւնները, հրամայեց ինձ Իրեն տաճար կանգնել Երուսաղէմում Ով որ իմ հպատակներիցս պատկանում է Խորայէլացւոց ազգին, թող երթայ Երուսաղէմ և կանգնէ Խորայէլի Աստծուն տաճար և Աստուած ինքն ուղեկից կ'լինի նրան»:

Ազգի առաջնորդները, քահանաները, ղեւտացիներն և ժողովրդեան մեծ բազմութիւն հաւաքվեցան ձանապարհ ընկնելու. ճանապարհ ընկնողների գլխաւոր առաջնորդն էր Սուրբ Դաւթի ցեղից Զորաբաբէլ: Բացի կամաւոր նուէրներից տաճարի շինութեան համար, նրանց տուին շատ արծաթ և ոսկի,

նայնպէս ամեն պիտոյք ճանապարհի համար։ Կիւբոս հրամայեց յետ տալ ամեն ոսկի և արծաթի սկիհներն, որ Նաբուգոդոնոսոր առել էր Երուսաղէմի տաճարից։ Այսպէս Հրէաները դարձան կրկին Իսրայէլացւոց երկիր, առաջվան իրենց հայրերի թողած բնակութիւններն և հաւաքվեցան Երուսաղէմում։ Սկսան տաճարը կանգնել. ամենից առաջ շինեցին սեղան և զոհ բերին Աստուծոյ. Քահանաները փող էին ածում և աղաղակում էին. «Գովեցէք Աստծուն, նա բարի է և նորա ողորմութիւնը միանգենաւոր»։ Բոլոր ազգը աղաղակում էր մի և նոյն ուրախութեան ձայներն և զղջման արտասուքները խառնվում էին միասին։

Սամարիայի և մերձակայ քաղաքների բնակիչները, կռապաշտ ազգեր, որոնք բնակել էին աքսորված Իսրայէլացիների տներում և ունէին մի քանի թերի հասկացողութիւն ճշմարիտ Աստուծոյ վերայ, լսելով Երուսաղէմի տաճարի նորոգվելն, եկան Իսրայէլացւոց առաջնորդների մօտ և ասացին. «Մենք էլ կամենում ենք օգնել ձեզ տաճարի շինութեան մէջ, որովհետև մենք պաշտում ենք ձեր Աստծուն և նրան զոհ ենք բերում։ Բայց նրանք պատասխանեցին. «Մեզ պատճառ չէ այլազգիներին թողնել տաճար շինելու. մենք մենակ կ'կանգնենք Աստուծոյ տունը»։ Սամարացիք, զայրացած այսպիսի բացասացութեան վերայ, ամեն կերպով աշխատում էին արգելք լինել տաճարի շինութեանը, բայց ամենը ի զուր եղաւ, տաճարը շինվեցաւ։ Յետոյ Սամարացիք շինեցին իրենց համար Սիւքեմի մօտ Գարիզին լերան վերայ տաճար, բայց Հրէաները քանդեցին այն։ Այս պատճառով ծագեցաւ այս երկու ազգերի մէջ միանգենաւոր պատերազմ։

ԳԼՈՒԽ ՃԴ.

Երուսաղէմի նորոգվիլը։

Տաճարի շինութիւնից յետոյ էլ Երուսաղէմ քաղաքն էր

դեռ քարերի շեղջ։ Պատերը քանդած էին, քաղաքի դռներն այրած։ Հրէաները (անուն Հասարակ Իսրայէլէ ամեն ցեղերի համար) բնակում էին աղքատութեան մէջ և արհամարհած էին ամեն դրացի ազգերից։

Այս ժամանակ ներս Շօշ քաղաքում, պարսից Արտաշէս երկայնաբազուկ թագաւորի դրանը, էր մի առաքինի Իսրայէլացի, Նէեմի անունով։ Սա էր թագաւորի տակառապետը։ Սորա բարեկամներից մէկը, Անանիա անունով, եկաւ Շօշ իր հայրենիքից, և Նէեմիին տեսութիւն գնալով պատմեց նրան, որ թէև տաճարը կանգնած է, բայց Երուսաղէմ քաղաքը էլի դեռ ողբալի դրութեան մէջ է, նորա պատերը քանդած են, դռները այրած, մարդիկն անտուն, ժողովուրդը աղքատ, արհամարհած ամեն դրացիներից, Նէեմին չէր համարձակվում թագաւորին խնդրել որ օգնութիւն տայ իր թշուառ եղբայրներին, այլ լաց էր լինում և աղօթքով դարձաւ դէպի Աստուած և Աստուած լսեց նորա աղօթքը։

Միանգամ ձաշի ժամանակ նա սովորութեամբ տալիս էր բաժակը խմիչքով թագաւորին, որ նայելով նորա երեսին, հարցրեց. «Ինչ ի պատահել, Նէեմի, գու շատ տխուր ես»։ Ո՞վ թագաւոր, պատասխանեց Նէեմին, «կարելի՞ է արդեօք, որ ես տխուր չլինեմ, երբ քաղաքն, ուր իմ հայրերս բնակում էին, ամայացած է, նորա պատերը քանդած են և նորա դռները մոխիր դարձած»։—«Ի՞նչ ես ուրեմն խնդրում դու ինձնից»։ հարցրեց թագաւորը։ Նէեմին մեծ երկմեռանդութեամբ աղօթք արաւ Աստուծոյ և պատասխանեց. «Թագաւոր, եթէ քո առաջևդ գտայ շնորհք, խրկի՛ր ինձ երուսաղէմ և հրաման տուր ինձ այն նորոգելու»։—Թագաւորն և նորա մօտ նստած թագուհին հարցրեցին երկուսն էլ. «Երկար արդեօք կ'տևէ քո ճանապարհորդութիւնդ։ Երբ դու էլի յետ կ'դառնաս մեզ մօտ»։ Նէեմին նշանակեց իր բացակայութեան

և դարձի ժամանակ. Թագաւորը համաձայնեցաւ այս ժամադրեալ ժամանակին, քաղցրութեամբ թողից նրան և ճանապարհորդութեան ժամանակ նրան պաշտպանելու համար, խրկեց նորա հետ մի գունդ ձիաւորներ էլ:

Երուսաղէմ հասնելից յետոյ, Նէեմին գնաց քաղաքն և առաջն այնտեղ եղած Հրէաներուն հաւաքելով սկսաւ շինել քաղաքն աշխատութեամբ: Նա աշխատում էր ազգի հետ, հատապարապէս քաղաքի շինութեան և աղքատներուն կերակրելու համար, ծախեց բոլոր իր անասուածքը և ամենին վերայ նայում էր արթնութեամբ: Սամարացւոց առաջնորդները ծիծաղում էին այս աշխատութեանց վերայ, բայց Հրէաները նայա ծաղրը բանի տեղ չէին դնում և շարունակում էին անխոնջ աշխատել: Շուտ պատերը բարձրացան մինչև կէսը. այն ժամանակ գրացի ազգերը մոքերը դրին յանկարծ Հրեաների վերայ յարձակել և քանդել նոցա աշխատութիւնները: Բայց մի քանի բարեպաշտ Հրէաներ, որոնք բնակում էին այս ազգերի մէջ, յայտնեցին իրենց հայրենակիցներին նոցա միտքը: Հրէաները պինաւորվեցան և շարունակում էին աշխատել զինքը ձեռներին: Թշնամիները այս իմանալով չհամարձակվեցան յարձակելու նոցա վերայ. բայց իմանալով, որ Նէեմին է Հրեից ազգի հոգին, նոքա վճռեցին խորամանկութեամբ բերել նրան իրենց մօտ և սպանել: Սամարացւոց պլխաւոր իշխանը կանչեց նրան իր մօտ խորհուրդի համար, բայց Նէեմին չգնաց և այսպէս պնչացան նոցա ամեն չար խորհուրդները: Հրէաները յաջողութեամբ վերջացրին Երուսաղէմի շինութիւնն և նորա պատերն, օրհնեցին նորոգած քաղաքը սաղմոսերգութեամբ, թմբուկի և փողի ձայներով, շնորհակալութեան աղօթքներով, զոհեր բերելով և ուրախութեան ազազակներ արձակելով:

ԳԼՈՒԽ ԱԸ.

Եղիազար:

Հրէաները մի քանի ժամանակ բնակում էին իրենց երկրում հանդստութեամբ և երկրպագում էին ճշմարիտ Աստուծոյ, բայց կամաց կամաց սկսան անցնել նորա պատուիրանքներից և ընկղմել մեղքերի և անօրէնութիւնների մէջ: Աստուած էլի մատնեց նրանց թշնամիների ձեռքը: Ամենից խստասիրտը սոցանից, Ասորոց թագաւորը, Անտիոք (Սելիփան) էր: Նա առաւ Երուսաղէմ, յափշտակեց տաճարի առուրբ սկիհներն, յատուածապաշտութեան համար հարկաւոր ուրիշ բաները, սպանում էր այր մարդոց. կանանց և երեխանց ծախում էր իբրև ստրկներուս, սափսում էր ազգին կոքերին երկրպագութիւն տալ և ամենքին հրամայում էր ուտել կոքերին զոհ բերած խոզի միս — կերակուրը, որ Մովսէսի օրէնքով արգելված էր Հրէաներին ուտել:

Եղիազար, ուսեալ Հրէաներից մէկը, էր պատուական ծերուն, սպիտակ մազերով և բարի դէմքով: Նրան բռնութեամբ սափսում էին ուտել կոքին զոհած խոզի միսը. բայց նա չէր ընդունում և նախապատրաստվում էր ուտել մեռնել փառքով, քան թէ վարել անկարգ կեանք: Նրանք պարի փոքրագի բարեկամներից ոմանք ասում էին նրան, «մենք կ'բերենք քեզ զոհած մսից, միայն դու ձեւացիր, իբրև թէ ուտում ես այն թագաւորի կամքը կատարելու համար, դու կ'փրկես այսպէս քո կեանքդ»: «Չէ», պատասխանեց Եղիազար, «ես չեմ ուզում այսպիսի դարշելի կեղծաւորութեամբ գնել կեանքիս քանի մի օրերն, որ մնում են ինձ այս երկրում, այդ անվայել է իմ ալեքներիս» Այսպիսի երեսպաշտութիւնը կ'գայթակղէ մատաղ մարդոց, երբ նոքա կ'իմանան, որ ինքնասէր տարեկան եղիազարն անցել է կատարելութեան կողմը, այդ կ'անպատուէ իմ ծե-

թութիւնս։ Եւ իսկ ինձ էլ ի՞նչ օգուտ դրանից։ Եթէ ես ազատվեմ էլ մարդոց տանջանքից, Ամենաբարձրեալի ձեռից չեմ կարող փախչել, թէ կենդանի լինեմ և թէ մեռած։ Ես արիութեամբ կ'երթամ մահի դէմ, կ'վարվիմ, ինչպէս վայել է իմ ազիքներիս և օրինակ կ'դառնամ երիտասարդներին, թէ ինչպէս պէտք է յօժարութեամբ և քաջութեամբ մեռնել Աստուծոյ սուրբ օրէնքի համար»։

Ա՛յս ասելով, արդար Ծերունին քաջութեամբ գնաց տանջանքը ընդունելու։ Նրան ճանապարհ գցողները դադարեցին նորա վերայ ցաւիլ, կարծելով, որ միայն հպարտութիւնը սոփպեց նրան այսպէս խօսիլ։ Մինչև՛ի մահ չարչարեցին նրան։ Իր հոգին աւանդելից առաջ Եղիազարն ասաց. «ամենագէտ Աստուծոյ յայտնի է, որ ես, ունենալով միջոց փրկութեան, տանում եմ մարմնով չարաչար տանջանքների. բայց հոգով ուրախանում եմ, որ այս ամենը նորա համար եմ քաշում»։

Ա՛յս նորա վերջին խօսքերն էին. նա վախճանեցաւ, թողնելով մեզ օրինակ, թէ ինչպէս հաստատութեամբ պէտք է կատարենք մեր պարտաւորութիւնները, որ մեզ վերայ դնում է Հաւատը։

ԳԼՈՒԽ ՃԺ.

Ա՛օթին եղբարք և նորա մայրը Հ՛ամունէ։

Ընտիրքոսի առջև տարան նմանապէս մի Շամունէ անուն կնոջ, իր եօթն որդոց հետ միասին, որոնց հրամայեց ծեծել խարազանով և եղան ջնջերով, որ կարողանայ սոփպել օրէնքով արդելած կերակուրն ուտելու։

Մեծ որդին ասաց. «ինչո՞ւ էք այդքան երկար մեզ հարցնում և յորդորում։ Մենք կամենում ենք աւելի շուտով մեռնել, քան թէ անցնել օրէնքից, որ մեր հայրերին տուած է։ Անտիոք զայրացաւ շատ, հրամայեց կորել այս թշուառականին լեզուն, կաշին հանել, կարել ոտներն և ձեռքերը, յետոյ դեռ կենդանի դնել ջեռուցած տապակի վերայ ու խորովել։ Մայրն և միւս եղբայրները, պէտք է, նայէին այս նահատակի տանջանաց վերայ. բայց նորա, մինչև որ նրան տանջում էին, աշխատում էին մեկ մեկու քաջալերել և իրենք էլ պատրաստվում էին նոյնպէս չարաչար մահուան համար։

Յետոյ տարան տանջելու երկրորդ եղբօրը։ Կաշին հանելից յետո, հարցրին նորա. «համաձայնո՞ւմ է արդեօք խոզի միս ուտել, աւելցնելով, որ եթէ չէ, ելի կ'տանջեն նրան»—«Վերջին շնչառութեան ժամանակ ասաց նա Անտիոքոսին. «դու խստասիրտ, դու խլում ես մեր ժամանակաւոր կեանքը, բայց երկնաւոր Թագաւորը, յարութիւն կ'տայ մեզ յաւիտենական կեանքի համար»։

Երրորդը յօժարութեամբ գնաց տանջվելու, և երբ տանջողները հարցրին. արդեօք կամենո՞ւմ է կատարել Թագաւորի հրամանը, նա պատասխանեց. «Աստուածմէ ստացայ կեանքս։ Նորա օրէնքը կատարելու համար զոհում եմ նրան և յոյս ունեմ որ Նրանից էլի կ'ստանամ նրանս։ Նա այնպիսի քաջութեամբ հարեերից ամեն սարսափելի տանջանքներին և մահուան, որ զարմացրեց Թագաւորին և սրան պատողներուն։

Չորրորդը տանջվեցաւ իր եղբայրների պէս, մահուան բռնկում ասաց Թագաւորին. «լաւ չէ մարդոց ձեռքով սպանվել. բայց յոյսով, որ Աստուած կ'տայ յարութիւն յաւիտենական կեանքի համար. իսկ դու այդ յոյսից զուրկ ես»։

Հինգերորդը, տանջանքի ժամանակ Թագաւորին վերայ նայելով, ասաց. «այժմ կարող ես անել, ինչ որ ուզում ես, բայց դու էլ այնպիսի մարդ ես, որպիսի մենք ենք. մի կարծիր, որ Աստուած թողել է մեր ազգին։ Սպասիր և կ'տեսնես, ինչպէս ամենակարող է Աստուած, երբ քեզ և քո զաւակներուդ կը-մատնէ Նա տանջանաց։

Ա՛ն եղբորդը մեռնելիս ասաց Թագաւորին. «Մենք ամչցումն ենք ոչ թէ այն պատճառով, որ դու ուղում ես, այլ որովհետև Աստուած կամենում է մեզ պատժել մեր մեղքերի համար: Բայց չկարծես, որ դու կազատվիս պատժից. Աստուած կը-հասուցանէ քեզ փոխարէնն, որ դու զինաւորվեցար նորա դէմ:

Մնում էր Եղիներորդ եղբայրը ամենից կրտսերը, դեռ ևրեխայական հասակում: Թագաւորը կանչեց նրան իր մօտ և քաղցրութեամբ յորդորում էր թողնել իր հայրերի օրէնքն, և երդումով խոստանում էր նրան ամեն կեղտի բարերարութիւններ: Բայց երեխան մնաց անշարժելի: Թագաւորը հրամայեց կանչել մօրն և հրամայեց նրան իր որդուն յորդորել, որ կապրողանայ գոնեա իր մի որդուն պահել կենդանի:

Մայրը, մօտենալով երեխային, ասաց, սիրելի որդեակ, դու, որին ես գրկումս անուցի, դու, որին ես մեծ աշխատութեամբ և կարիքով հասուցի մինչև այս օրս, խնդրում եմ քեզ, որդեակ իմ, նայիր երկնքին երկրիս, մարդիկ-թեանս ամդին, և ամեն գեղեցիկ արարածների վերայ, այս ամենը ամենազօր Աստուծոյ առեղծածներն են, որին մենք երկրպագու թիւն ենք տալիս: Մի ուրանար նրան, մի վախենար ոչ տանջանքից և ոչ տանջողներից, այլ մեռիր իբրև արժանի եղբայր, որ ես կարողանամ մի անգամ ձեզ ամենուն սիրով հանդիպիլ»:

Մայրը հազիւ կարողացաւ վերջացնել իր խօսքերը, երեխան արդէն, դառնալով դէպի տանջողները, ասաց. «ինչո՞ւ էք սպասում դուք, մինչ կարծում էք դուք, որ կ'ուրանամ իմ հաւատս: Ես երբէք չեմ անցնիլ այն պատուիրանքներից, որ Աստուած մեզ տուեց Մովսէս մարգարէի ձեռքով: Բայց դու, ով արքայ, որ այդքան չարիք հասուցիր մեր ազգին, չես ազատվիլ Աստուծոյ դատաստանից: Ա՛յժմ, կարձատև տանջանքից յետոյ, իմ եղբայրներս ստացան յաւիտենական կեանք իսկ քեզ Աստուած կ'պատժէ քո հպարտութեանդ, խստասրտութեանդ համար: Ես, իմ եղբայրների պէս, կամենում եմ դնել իմ մարմինս եւ հոգիս էլ հայրենի օրինացս վերայ և խնդրում եմ Աստծուն, որ նա ողորմի իր ազգին: Իսկ դու, ամենատատիկ տանջանաց մէջ, վերջապէս կհասուսես, որ նա միայն է Աստուած տիրելքի»:

Այս խօսքերը շատ զայրացրին Անտիոքոսին. նա մատնեց այս դեռահաս նահատակին ամենից շատ տանջանքների: Վերջապէս նահատակեցին նորա արդար մօրը, Շամունէին էլ:

ԴԱՒԻԹ ՁԷ

Մատաթիա և նորա որդիքը:

Այս հալածանաց ժամանակ, Մատաթիա քահանան իր որդոց հետ հեռացաւ մի փոքրիկ քաղաք, որ Մոդդիմ էր կոչվում: Անտիոք խրկեց նորա մօտ առաքմանաւորներ, որոնց հրամայած էր ասել նրան. «դու այս երկրումս ամենից երևելի մարդն ես, դու ունես շատ որդիք և ազգականներ, որոնք քեզ պատվում են: Երուսաղէմ և բոլոր Հրէաստան հպատակեցան Թագաւորին, հպատակիր նրան դու էլ այն ժամանակ Թագաւորը քեզ, քո որդոց և քո ազգականներուդ իր բարեկամաց թիւը կմացնէ և կ'տայ ձեզ պատիւներ և հարստութիւններ: Մատաթիան համարձակ պատասխանեց Անտիոքոսի պատգամաւորներին, «եթէ Անտիոքոս տիրեր բոլոր տիեզերքին, և երկրիս ամեն ազգերին տիրապէս ուրանալ իրենց հաւատն, այն ժամանակն էլ ոչ ես, ոչ իմ որդիքս և ոչ իմ ազգականներս չենք երկրպագութիւն տալ կռքերին»:

Յետոյ դուս գալով քաղաքի հրապարակ, Մատաթիան աղաղակեց բարձր ձայնով. «ով որ օրինաց վրէժը կամենում է հանել և հաւատարիմ մնալ ուխտին, որ Աստուած գրել է մեր

հայրերի հետ, նա թող գայ իմ եւթից»: Նա և նորա որդիք թողնելով բոլոր իրենց ստացուածքը գնացին լեռները: Շատ բարեպաշտ մարդիկ, որ հաւատարիմ մնացին Մովսէսի օրէնքին, հետևեցին նրանց իրենց կանանց, երեխաների հետ և անասուններովը: Նոքա կենում էին անապատ լեռներում և բարկրվում էին արօտով և արմատներով: Իսրայէլացիներից ամենից քաջերը, որոնք պատրաստ էին թափել իրենց արիւնը հաւատի համար, ժողովեցան Մատաթիին մօտ, այսպէս հաւաքվեցաւ զօրք, որ կարող էր ընդդէմ կենալ Անտիոքոսին:

Մատաթիին էր արդէն շատ ծեր և զգում էր իր մահուան ժամի մօտենալը: Նա կանչեց որդոց իր մահճին մօտ և ասաց նրանց. «Այժմ իշխում է անօրէնութիւնն. եկել է թշուառութեան, աւերածութեանց և սաստիկ հալածանաց ժամանակը: Ուրեմն որդիք, զինաւորվեցէք Աստուծոյ անունով մեր հաւատի համար- մեր հայրերի հաւատի համար: Յիշեցէք ձեր հայրերի գործքերը. հետևեցէք նրանց և ժառանգեցէք նոցա փառքը: Աբրահամն էլ փորձեցաւ. բայց մնաց հաւատարիմ Աստուծոյ և նորա հաւատը համարվեցաւ. Իրեն արդարութիւն. Յովսէփ թշուառութեանց մէջ էլ հաստատ մնաց իր հաւատին, և Աստուած կարգեց նրան առաջին իշխան Եգիպտոսումը: Ցեսու Նաւեան կատարում էր Աստուծոյ պատուիրանները—և դառաւ Իսրայէլացւոց ազգի առաջնորդ: Քաղէբ վկայեց ճշմարտութեան և մնաւ աւետեաց երկիր: Դաւիթ հեզ էր և ողորմած—և այսպէս ստացաւ թագաւորի գահը Եղիեան, նախանձայուզութեամբ Աստուծոյ համար, բարձրացաւ երկինք. Անանիան, Ազարիան և Միսայէլը մնացին հաւատարիմ Աստուծոյ, ընդդէմ թագաւորի սպառնալիքներին և մնացին անմնաս բոցի միջում: Դանիէլի բարեպաշտութիւնը պահեց նրան առիւծների կատաղութիւնից: Փրկեցէք մեր ազգի բոլոր պատմութիւնն և ամեն տեղ կգտնէք, որ Աստուած

պահպանում է չարից և թշուառութիւնից նրանց, ով որ նորա վերայ դնում է իր յոյսը: Մի վախենաք չարագործների սպառնալիքներից, որովհետև անօրինաց իշխանութիւնը կարճատև է, այսօր յաղթող են հանդիսանում, և եղուց հող են դառնում, նոցա հետ միասին կորչում են նոցա ամեն խորհուրդներն էլ: Զօրացէք, հաստատ պահեցէք մեր հաւատը: Ձեր եղբայր Շմաւոնը խնդասուն և խորհրդական մարդ է. լսեցէք նորա խորհուրդները, հպատակեցէք նրան, նա կլինի ձեզ հայր: Ձեր եղբայր՝ Յուդան, մանկութենով Մակաբէ, էր քաջ իր մանկութիւնից, ուստի և նա կառաջնորդէ ձեզ պատերազմում: Պաշտպանեցէք ձեր հաւատն. եղէք համաձայն միմեանց հետ, ընդդէմ կացէք նեղութեանց, որոնց մէջ գտում են ձեր հայրենակիցներուն, պահեցէք Մովսէսի օրինաց ամեն հրամանները»:

Այս ասելով Մատաթիին օրհնեց իր որդոց և վախճանեցաւ խաղաղութեամբ Որդիք թաղեցին նրան, կատարեցին ամեն նորա հրամայածներն և Իսրայէլացւոց բոլոր ազգը ողբաց նորա մահը:

ԳԼՈՒԽ ՃՐ.

Անտիոքոսի մահը:

Անտիոքոս գնաց Պարսկաստան այն դիտաւորութեամբ որ տիրէ այս թագաւորութեան Պերսեպոլիս մայրաքաղաքին և աւար առնէ նրան, իսկ Հրէաստանում թողեց իր երեսելի զօրավարներից մէկին: Բայց Պարսկաստանում Անտիոքոս ջարդվեցաւ և ստիպվեցաւ ամօթով յետ դառնալ: Նոյնպէս էլ Հրէաստանում, Յուդա Մակաբէն շատ պատերազմերում ջարդեց նորա զօրքերուն: Յուդան առաւ Երուսաղէմ, քանդեց կուռքերըն, որ Անտիոքոսի հրամանով դրել էին ճշմարիտ Աստուծոյ տաճարում: Տաճարը մաքրվեցաւ և սրբվեցաւ:

Ըյս համբաւը շատ զայրացրեց Անտիոքոսին։ Նա կամենում էր թագցնել իր ամօթալի փախուստը Պարսկաստանից և Հրեաստանից հանել վրէժ ամէն միտքերի համար, որ առացաւ այս անյաջող պատերազմում։ Իր ձեռնարկութիւնների անյաջողութիւնն այնպէս շատ արտմեցրին նրան, որ նա հիւանդացաւ և սոխակեցաւ մնալ անկողնի։ Երկարատև հիւանդութիւնն աւելի մեծացրեց նորա տրտմութիւնը։ Նա կանչեց իր մօտ իր բարեկամներին և ասում էր նրանց. «քունս փախչում է աչքերիցս, սրանից առաջ ինչպէս ուրախ էի ես և ամենին սիրելի. իսկ այժմ նեղութիւններ ամէն կողմից հաւաքւում են գլխիս, տխուր մտքերն ինձ չեն թողնում, թշուառութիւնները, որ ես հասցրի Երուսաղէմին, աչքիս առաջնէն չեն միշտ. ես յափշտակեցի Երուսաղէմի տաճարն և շատ անմեղ Հրէաների արիւն թափեցի։ Ես խոստովանում եմ, որ իմ խստութիւնն է թշուառութեանս պատճառը։ Ահա մեռնում եմ ես տրտմութիւնից և նեղութիւնից օտար երկրում»։

Նորա հիւանդութիւնն օրից օր սաստկանում էր. նա զգում էր սաստիկ ցաւ բոլոր մարմնում և դեռ կենդանի ուտում էին նրան որդերը, վէրքերի հոտը անտանելի էր և Անտիոքոս, որ դեռ փոքր ժամանակ առաջ իր հպարտութեամբ, իրեն Աստուծոյ հաւասար էր համարում, դառաւ որդերին կերակուր, և ամենքը թողին նրան։ Նա ինքը իրեն էլ անգամ ծանրութիւն էր։ Վերջապէս Անտիոքոս, գալով իր հպարտութիւնն, պէտք է, խոստովաներ իր ոչնչութիւնը, նա աղօթք եր անում Աստծուն, գանգատ ուխտեր էր դնում և խոստովանում էր ոչ միայն Երուսաղէմի տաճարից յափշտակածը յետ դարձնել այլ և զարդարել այն նոր ընծայներով, ընդունել Հրէից հաւատն և տարածել այն բոլոր իրեն հպատակ երկրներում։ Բայց ամենը ’ի գուր էր. Աստուած չընդունից նորա ուխտն, որովհետև նա էլ Նրան չընդունից իր բոլոր կեանքում։ Անտիոքոս,

որ շատ թշուառներու հեռացրեց իր տնից և հայրենիքից, քշեց նրան անապատներ և չարչարեց նրանց անդադար, այս Անտիոքը ստիպվեցաւ վերջացնել իր կեանքն օտար երկրում, անապատում, սարսափելի տանջանաց մէջ։

Գլուխ ձթ։

Քանի մի խօսք Սիրաքայ Յեսու որդոյ վերայ։

Յուդայի թագաւորութեան վերջին ողբալի ժամանակները կենում էր մի արժանապիշատակ մարդ, Սիրաքայ որդի Յեսու անունով։ Սա գրեց մի գիրք, որ տեղաւորած է Աստուածաշնչի մէջ մակագրութեամբ, «գիրք իմաստութեան Յեսուայ, որդւոյ Սիրաքայ կամ միայն գիրք Սիրաքայ»։ Այս գիրքը լեցն է գեղեցիկ կանոններով և մտքերով։ Այս արժանապիշատակ մարդու կեանքի մանրամասն հանգամանքներից միայն այն յայտնի է, որ նա իր բոլոր կեանքն անցուցել է սուրբ գիրքը սովորելով։

Գլուխ ձժ։

Փրկչին ակնկալութիւնը։

Մակաբեացոց յաջորդաբար կառավարում էին մի քանի ժամանակ Հրէից թագաւորութիւնը. յետոյ Հրէաները դառան Հռոմայ հարկատու և հպատակ Հերովդէսի (եղումէացի), որ ջնջեց Մակաբեացոց ցեղը։ Հռոմայեցիք, հզօր, պատերազմասէր ազգ, որ նուաճից գրեթէ բոլոր այն ժամանակուան ծանօթ երկիրները, նուաճեցին նմանապէս Հրէաներուն էլ։ Պաղեստինն բաժանած էր չորս մասն՝ Հրէաստան, Սամարիա, Գալիլեա և Պերէա կամ երկիր յայնկոյս Յորդանանու։ Հռովմայեցիք տիրում էին Պաղեստինեի այս ամեն մասերին էլ, բայց թոյլ էին տալիս Հերովդէսին Հրէից թագաւոր անուանվել։

Այս թշուառ ժամանակներն էլ չէին յայտնվում Իսրայէլացւոց մէջ մարգարէներ։ Նոքա չէին լսում ոչ մի մխիթարական խօսք. բայց գիտէին, որ մարգարէների խօսքերի կատարման ժամանակը մօտենում է, որովհետև իշխանութիւնը վերացել էր ցուդայի ցեղից։ Իսրայէլացւոց ցեղերը տանջվում էին կռապաշտների ծառայութեան լծի տակ։ Իսրայէլացիները թշուառ էին. բայց նոցա մէջն էր միայ ճշմարիտ աստուածգիտութիւնը. իսկ բոլոր երկիրս ընկղմած էր կռապաշտութեան խաւարի մէջ։ Միայն Իսրայէլացիներին չէր հարկաւոր փրկչի գալուստն, այլ ամեն մարդիկ զգում էին աշխարհիս փրկչի և լուսաւորչի կարօտութիւնը։

Մեր նախահայրերի մեղքի մէջ ընկնելից յետ, Աստուած ասաց օձին. «Կնոջ զաւակը կ'ջաղջախէ քո գլուխդ»։ Այն օձն, որ խաբեց Եւային, հասարակ օձ չէր, այլ սատանայ, այսինքն, չար ոգի, որ կամենում էր ծառայեցնել և ջնջել բոլոր մարդկութիւնը։ Աստուած այն ժամանակ արդէն խոստացաւ փրկել մարդոց սատանայի իշխանութիւնից փրկչի ձեռով, որ, պէտք է, ծնէր անապր կնոջից, այսինքն, Կոյսից։

Աստուած խոստացաւ Աբրահամին բազմացնել նորա ցեղն ինչպէս երկնքի աստղերն և նորա զաւակներից մէկի ձեռքով օրհնել երկրիս բոլոր ազգերըն։

Այս խոստումն ասելի բայց հաստատվեցաւ Յակովբին. նորա տասներկու որդիներից յայտնվեցաւ այն, որի զաւակից, պէտք է, ծնէր ՓՐԿԻՉԸ։ Յակովբ մեռնելիս, մարգարէական հոգւով լցված, իր մահուան րոպէին ասաց. «Յուդա, քեզ կ'գովին քո եղբայրներդ, չի առնվիլ Յուդայի գաւազանը և օրէնսդիր նորա զաւակից, մինչև կ'գայ Թագաւորն, ամեն ազգերի Յոյսը։

Աստուած կրկնեց իր խոստումն ամեն Իսրայէլացւոց առաջին Մովսէսի բերանով, որ իր մահից առաջ ասաց Ժողոված Իսրայէլացիներին. «Ձեր միջից, ձեր եղբայրների միջից, կ'կանգնէ Աստուած մի ուրիշ ինձ նման Մարգարէ, Նրան լսեցէք»։

Աբքայ—Մարգարէն Դաւիթ, գիտէր Սուրբ Հոգւոյ ազդեցութեամբ, որ իր զաւակից կ'ծնի Խոստացեալը՝ Յաւիտենական Թագաւորը, իր սուրբ ուրախութեան մէջ նա անուանում էր Նրան Տէր, Մեսիայ, Որդի Աստուծոյ։

Վերջապես ամեն մարգարէներն էլ բաց գուշակում էին այն Խոստացեալի, Դաւթի որդու Մեսիայի, Քրիստոսի, (այսինքն օծեալի), այն Մարդոյ Որդու վերայ, որին Դանիէլ մարգարէն տեսաւ ամպերի մէջ, այն փրկչի, այն ազատչի Աստուծոյ վերայ։ Ժամանակն եկաւ, որքան որ Թանձրանում էր երկրիս վերայ խաւարն, այնչափ աւելի մօտենում էր փրկութեան արշալոյսը։

Անտիա Հրէանները կարծում էին, որ Խոստացեալը կ'գայ երկրային մեծութեամբ ծածկած, կ'քանդէ Հռովմայեցւոց իշխանութիւնն և փառքով կ'նստի իր հօր՝ Դաւթի աթոռը. բայց Աստուած իր իմաստութեամբ այսպէս չէր կարգել։

Եկաւ այս փրկիչը, բայց ոչ երկրային մեծութեան փառքով։ Նա յայտնվեցաւ աշխարհիս վերայ հեզ և խոնարհ, սուրբ սիրով վառված մարդկութեան համար։ Այս հին կտակարանում խոստացեալ Մեսիան է մեր Տէրը Յիսուս Քրիստոս։

Վ Ե Ր Ջ։

ختم المحكمة

صورة طبق الأصل

الوقائع

بتاريخ ٤ من ٥٤٩ سنة ١٩٣٠ تظلم إلى محكمة مصر الابتدائية الأهلية بصفته وكيلا عن [illegible] من الحكم الصادر في القضية رقم [illegible] سنة ١٩٣٠ مدني مصر الابتدائية بين المتظلم والمتظلم ضده القاضي بإلزام المتظلم بأن يدفع للمتظلم ضده مبلغ ٢٥٠ جنيه مصري والفوائد بواقع ٩ في المائة سنويا من تاريخ المطالبة القضائية في ٢٣ من يونيه سنة ١٩٣٠ وبمصاريف الدعوى ومقابل أتعاب المحاماة المحكوم بها بالنسبة لكل منهما وبرفض الدعوى الفرعية المقامة من المتظلم ضده على المتظلم بطلب إلزامه بأن يدفع له مبلغ ٢٥٠ جنيه مصري والفوائد بواقع ٩ في المائة سنويا من تاريخ المطالبة القضائية في ٢٣ من يونيه سنة ١٩٣٠ وبمصاريف الدعوى الفرعية ومقابل أتعاب المحاماة المحكوم بها بالنسبة لكل منهما وبرفض الدعوى الفرعية ومقابل أتعاب المحاماة المحكوم بها بالنسبة لكل منهما وبرفض الدعوى الفرعية

وطلب المتظلم للأسباب المبينة بتظلمه الحكم بقبول تظلمه شكلا وفي الموضوع بإلغاء الحكم المتظلم منه فيما قضى به عليه من الطلبات وبرفض الدعوى الأصلية وبإلزام المتظلم ضده بالمصاريف ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

وقد أعلن المتظلم ضده بتظلم المتظلم في ٢٩ من يوليه سنة ١٩٣٠ وقدم مذكرة بدفاعه في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ طلب فيها الحكم برفض التظلم وتأييد الحكم المتظلم منه مع إلزام المتظلم بالمصاريف ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

وقد أعلن المتظلم بمذكرة المتظلم ضده في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ وقدم مذكرة بدفاعه في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ طلب فيها الحكم برفض التظلم وتأييد الحكم المتظلم منه مع إلزام المتظلم بالمصاريف ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

المحكمة

بعد الاطلاع على الأوراق وسماع المرافعة الشفوية والمداولة قانونا.

حيث إن التظلم قد استوفى الشكل المقرر في القانون.

وحيث إن الوقائع تتحصل على ما يبين من الحكم المتظلم منه وسائر أوراق الدعوى في أن المتظلم ضده أقام دعواه الابتدائية بطلب الحكم له على المتظلم بمبلغ ٢٥٠ جنيه مصري والفوائد بواقع ٩ في المائة سنويا من تاريخ المطالبة القضائية في ٢٣ من يونيه سنة ١٩٣٠ وبمصاريف الدعوى ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

وقد أعلن المتظلم بمذكرة المتظلم ضده في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ وقدم مذكرة بدفاعه في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ طلب فيها الحكم برفض التظلم وتأييد الحكم المتظلم منه مع إلزام المتظلم بالمصاريف ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

وقد أعلن المتظلم بمذكرة المتظلم ضده في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ وقدم مذكرة بدفاعه في ٢٣ من أغسطس سنة ١٩٣٠ طلب فيها الحكم برفض التظلم وتأييد الحكم المتظلم منه مع إلزام المتظلم بالمصاريف ومقابل أتعاب المحاماة عن الدرجتين.

1716

ՀՀ Ազգային գրադարան
NL0028745

1662